


ՀԱՅՈՒԹ





Պահօնական ԱՄՍԱԳԻՒ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈԼՈՅ
Ա. Է. ԶՈՒՐԿՈՒՄ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱԿՈԲ ԱՐԱՄՅԱՆ. — Էջմիածին	կ.
2. ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ. — Եկեղեցին Հայկական	5
3. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ի գահակալության երրորդ տարեղարձը	6
4. ԱՐԵԱԼՈՒՅՑ ՄԱՐԳԱՐՅԱՆ. — Մի բոլ ճող	7
5. ՀՀԳ-ի բըրակցի զրույցը Մայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կարպաղիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի հետ	11
6. Մայրագույն Պատրիարք և Կարպաղիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ-ի Կոնդակը	12
7. Մայր Արոն	15
8. Մամինանայ թեմի Առաջնորդական Փոխանորդ Տ. Վազգեն վարդապետ Պահեանի այցելությունը Մայր Արոն	16
9. Մոսկվայի և Համայն Ռուսին Մարգարագույն Պատրիարք Ալեքսիի պատվիրակությունը Մայր Արոռում	18
10. Ս. Էջմիածինի Հոգեն ճեմարանը ուսման երրորդ տարում	20
11. Կոմիտաս վարդապետի ստեղծագործություններին նվիրված երեկոյր Հոգեն ճեմարանում	22
12. Ռումինանայ «Հայաստանեան Ճակատ» կազմակերպության կենտրոնական Վարչուրյան ընդհանուր բարուուղար Հարություն Պապոյանը Երևանում	28
13. Հայաստանյայց Եկեղեցին Սփյուռքի մեջ	30
14. Հայրենի հարազատ ճողի վրա	32
15. Հայրենադարձության ուղիով	35
16. Խաշտուր Արովյանի մահվան 100-ամյակի առթիվ	40
17. ԵՐԿԱՆԻ ՇԱՀԱԶԻԶ. — Խաշտուր Արովյանին վերաբերող նորագյուտ մի վավերականի առթիվ	41
18. Թ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ. — Էջմիածին	43
19. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. — Կենսագրական նյութեր Միհայել Նալբանդյանի մասին	49
20. Ս. ՔՈՂԱՆՁՅԱՆ. — Ռումանանայց մտքի գանձարան «Հայ Մշկակույրի Տունը»	51
21. Օտարեներ հայերի և Հայաստանի մասին	62
22. Սովետական Հայաստանում	73
23. Գաղուրանայ կյանք	74
24. «Հայաստանիան Ճակատ» թերթը «Էջմիածին» ամսագրի մասին	89
	95

Խ Մ Բ Ա Գ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀՈԴՎԱԾՆԵՐ ԹԵ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ
ԵՎ ԹԵ ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ

Խ Մ Բ Ա Գ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Հ Ա Ս Տ Ե Ն

ՀԱՅԱՍՏԱՆ ՍՍՌ

Էջմիածին, „Էջմիածին“ ԱՐՄԱԿԱՆ ԽՄՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Բրմանա ՀՀ, Էջմիածին, Ռեդակցիա յարանալա ՝ Էջմիածին
Redaction of the magazine „Etchmiadzin“, Armenia, USSR

Պատվեր № 600

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ. և Հրատ. Վարչ. № 2 ապարան, Երևան

ՀՐԱՄԱՆԱԿ
Տ. Տ. ԳԵՂՐԳՈՅ Զ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԱԶՆԱԴՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



S. S. ԳԵՂՈՐԳ Զ

ՎԵՀԱՓՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Դարեր, զարե՞ր հայ հավատին սրբաց ու ձե,
Հո՞ս էիր դուն, և կրմնա՞ս, էջմիածի՞ն,
Թրխում զրվարք՝ հայ հոգիին լույս, լուսանձրե,
Հո՞ս էիր դուն, և կրմնա՞ս, էջմիածի՞ն...


Էջմիածի՞ն, մա՞յր սիրեցյալ, ահավասի՞կ...
Ահավասիկ որդիո պանդուխտ՝ հեռուներեն,
Հեռուներեն եկած քեզի, կընայի՛ քեզ,
Քեզ կընայի աղորալից, էջմիածի՞ն...

Հուզունեահար կընայի քեզ, էջմիածի՞ն,
Եվ առ խարխափ կմերձենա աճ՝ դեղեռն,
Դեպի դարպասդ, խորա՞նդ դեպի ծիրանեծին...
Զով արցունեներ կկայլակին բարիշներուն...

Բազմադարյան շեմեդ ներս է աճի հիմա՝
Հոգիին հետ իր պապերուն վաղճական,
Ու պակուցյալ, մեղմի՛վ, մեղմի՛վ ծունկի կուզա՝
Հայացքին տակ իր պապերուն վաղճական...

Համբու՞յր քարիդ, համբուրելի՛ էջմիածին...

ՀԱԿՈԲ ԱՐԱՄՅԱՆ



ՎԱՀԱՆ ԹԵՔԵՑԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Եկեղեցին Հայկական ծննդավայրն է հոգլույս՝
Ինչպես քարայր մ' ընդարձակ, պարզ ու խորունկ, մուր ու լույս...
Իր զավիրով հյուրընկալ, իր լայն բեմով ու հեռուն
Կանգնած իր լուս խորանով՝ որ կարծես նա՛կ մ' է ծրագրուն...

Եկեղեցին Հայկական ես աշքը գոց կը տեսնեմ
Ու կը շնչեմ, կը լսեմ՝ իր Հիսուսով մանկադեմ,
Իր սեղանեն մխացօղ զուլա-զուլա խունկերով
Եվ իր պատերը ցնցող տղորթներով ալեխոսով...

Եկեղեցին Հայկական բարձր բերդն է հավատքին
Իմ պապերուն՝ որ հողեն զայն Տար առ Տար-հանեցին
Եվ երկինքն իջուցին զայն ցող առ ցող, ամպ առ ամպ
Ու բաղրուցան անոր մեջ հանդարտուրյամբ, հեզուրյամբ...

Եկեղեցին Հայկական մեծ վարագույր մ' է բանուած՝
Ուրուն եսու, սրկիհին մեջ կիշենե ինքը Աստուած,
Ուրուն առջև՝ գլխահակ կուզա իմ ազգըս ամբողջ
Հաղորդվիլ Անցյալին հաց ու գիճվով կենսառող...

Եկեղեցին Հայկական՝ ծովուն դիմաց ալեկոն
Նավահանգիստ մ' է խաղաղ. ցուրտ գիշերին՝ հո՛ւր և բոց,
Ու տորակեզ ցերեկին անտա՛ռ մըն է ստուեռուն՝
Շաղանենե՛ր կը ծաղկին Շարականի գետին մոտ...

Եկեղեցին Հայկական մեն մի Տարին տակ գետնի
Դեպի երկինք բարձրացող զաղտնի նամբա մը ունի...
Եկեղեցին Հայկական Հայ Հոգիին և Մարմեռոյն
Ջրահանդերձն է փայլուն՝ մինչ իր խաչերն են դաշույն

Եվ զանգակներն են բոմբյուն, և երգն է մի՛շտ Հաղորդյուն...:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ



արձագան, ճիշտական Մասսի ստորառում, Արարատյան գեղադիր դաշտում խորխութ ու վեհապանն զեր է խոյանում հայ ծողովրդի հիմափուրց սրբավայր, հավատի փառս Ս. էջմիածնի Մայր Տաճարը:

Դարեւի ժարավանքը զողաճելով եկել, անցել է երա սրբատաշ պատերի տակից ու անհունության զիրկի սուզվել անդարձ, մինչդեռ նա, հպատոռուն կառծ տալով ամենակույ ժամանակի անողոք հարվածներին, անասան կերպով կանգուն է մեացել ու կմնա զեռ դարեւ շարունակ:

Մասսի հավերժական սառցե վիրխարի հայելու առաջ շորում, շողողում է հայ հավատի լուսապսակ այս մեծ փառոսը, իր հառապայրնեռով շերմացնելով հավատացյալների սրբեր:

Ալեհեւ Մասսի նման, էջմիածնի զիխին է դարեւի ընթացքում շատ փորորկաբեր ամպեր են կատակվել, շատ ամպրոպեր ենյրել ու նողմեր շաշել. շանքերը ծվատել են երա կողերը, սպառնացել երա գոյորդյանը, բայց դարեւի ընդերեցից խորխութ ու անվարան հավերժ ժայլել է նա բահտոննեական իր հորդարութ հավատի հորդալույս ուղիով: Էջմիածնի զարեւ շարունակ բարձր. է պանել ու պահում է հայ հավատի մշտավառ զահը. դարեւից ի վեր նա հանդիսացել ու հանդիսանում է Հայ եկեղեցու ամանդական սովորյունների ամենաչերմ, խիզախ ու անզիջող պաշտպանը, Հայ եկեղեցու ինքնուրույնության, հայ հավատի անապատուրյան մշտարուն պահապանը: Հայ եկեղեցուն սպառնացող վտանգի պահերին էջմիածնին, սրբալոյս հավատի զենքերով զինավառ, պայմանի է նետել իր բոլոր ուժերը և հավատի պահապանը հյուսել իր անուանը,

բարձր ծածանելով աշխարհում ամենահին երիտանեական եկեղեցու անկախության սրբազն դրոշը:

Դարեւ շարունակ էջմիածնինը եղել ու մընում է հայ հավատացյալ ծողովրդի անզուգան սրբավայրն ու ոխտանեղին: Երա ճիշտական, հյուսկապ Տաճարի սրբազն կամարների տակ բահի՝ բահի՝ միինը հայատացյալներ շերմեռակաղորդյամբ մուս են վառել, խոնկ ծխել ու մշտամրմունչ աղորքները շրբների ծունկի եկել. բահի՝ բահի՝ միինը շուրբեր շերմեռան համբույրներ են դրոշմել երա սրբատաշ վեմերին ու բահի՝ բահի՝ միինը շուրբեր ամենուրեմ երա սուրբ անունը շինացել իրենց երկեառամ աղօրքներում: Այստեղ, Տաճարի վեհ ու խորեղապոր կամարների տակ իրենց հոգեզմայլ աղորքներն են վերառակել մեր եղանկահիշատակ բազում հայրապետների ու հոգելոր հայրերը:

Այսօր էլ Միածնակ սրբազն Տաճարի հիմափուրց զանգակատների տակ զիլ ու անուշ ղողաճում են զանգերը, դարավոր կամարների տակ պայլում մուսերը, իսկ խոնկի բուժմունքը պարուրում է ողջ Տաճարը: Այսօր էլ հնադարյան Տաճարը լցվում է հոգեռու մեղեղիների, հայ եկեղեցական սպանչի երածատուրյան հոգեզմայլ հնչյուններով և հավատացյալների բազմուրյունը ծնրադիր իր շերմեռան սուրբքներն է վերառակում առնենարածրյան, իսկ աշխարհի բոլոր ծայրերում միինավոր շուրբեր երա սրբալոյս անունն են շշնջում իրենց աղօրքներում: Ամենայն Հայոց Ազգբնախ վեհափառ Հայրապետը և հոգեւոր հայրերը այսօր էլ հայ արվիստի այս վեհամանն ու վեհատեսիլ կարողի խելարուց կամարների տակ ծնրադիր ի խորց սրբի իրենց ամենօրյա աղօրքներն են վերառակում Ամենահարողին:

Բայց էջմիածնինը մեր սրբերին բանգ է ոչ

միայն երա համար, որ նա հայ հավատի հինավուց օրրան է, այլ և որ նա դարերից ի վեր Հայ եկեղեցու խարսխակայանը, երա աճփոխարհնելի կենարոնը, Հայրապետական արոռանձիստ վայրն է հանդիսանում: Հայ եկեղեցու դարավիր պատմությունը սերտ կերպով կապված է էջմիածնի՝ սուրբ աճվան հետ, այդ պատմության ամենափայլուն էջերը երան են նվիրված: Դարեր շարունակ եա ականատես է եղիլ Հայ եկեղեցու կյանքուն տեղի ունեցող հաշանակալից շատ իրադարձությունների:

Այդ հաշանակալից իրադարձությունների բվին է պատկանում 1945 թվին Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը լուսավորշահիմն էջմիածնում և Ամենայն Հայոց Կարողիկոսի բնարությունն ու օծումը երա խորախորհուրդ ու նվիրական կամարների տակ: Մեր եկեղեցական պատմության մեջ նախընթացը չունեցող այս եզակի ժողովը հանդիսացավ Հայ եկեղեցու միասնականությունը, համեմաշխուրյունն ու միաձուլությունը դրսվորդ խոշորագույն իրադարձություն: Ազգային-եկեղեցական այդ մեծ ժողովում հիմք դրված միասնականությունն ու համեմաշխուրյունը հետագա տարիներին էլ ավելի ծավալվեցին, խորացվեցին ու ամրապնդվեցին: Հայ եկեղեցու այս միասնականությունն ու համեմաշխուրյունը դարբնողը, կռողն ու կոփողը հանդիսանում է Տ. Տ. Գևորգ Զ. Ազգբետիր վեհափառ Հայրապետը:

Հունիսի 22-ին լրացավ Ամենայն Հայոց Ազգբնիր Հայրապետ, մեծ եկեղեցաներ ու տերմ հայրենասեր կարողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի բնարության ու գահակալության երրորդ տարին:

Լուսավորչի գանի արժանավոր գահակալ կորովի Հայրապետը թևակոխեց իր գահակալության շորորդ տարին, մի նշանակալից տարի, երե մենք բնդիկուա մոանենում ենք ալեզարդ կաթողիկոսի ծննդյան 80-ամյակի բոլորման: Սակայն, շնայած իր ուրբ տասնյակ տարիների պահանուի հասակին, հոգով արի Հայրապետը դեռ շատ ու շատ առույգ է և ի գործելու անսպաս եռանդով: Երե Վեհափառի գահակալության շորորդ տարվա շեմին մի հայացք նետելու լինենք նրա երրորդ տարվա գործունեության վրա, ապա կրտսենք, որ նախորդ տարիների նման, այդ գործունեության առանցքը դարձյալ կազմել են եկեղեցաշինարությունն ու հայրենասիրությունը: Ծերանագարդ Հայրապետի սրբատական կուռքանի կամարները կարույր են ամենագույն ամենահայտնի կամարները, գույրուններն ու նամակները այն մասին են վկայում, թե որքան մտահոգված է նա այդ երկու կարևորագույն խնդիրներով: Առաքինազարդ Հայրապետը հիմա-

փուց էջմիածնից իր ազգու կոչն է ուղղակ համայն հայության՝ հորդութելով հայրենի հարազատ եկեղեցու ու պետության շուրջ համախմբվել: Ազգբնատիր Հայրապետի եկեղեցափուրյունն ու հայրենասիրությունը ավելի խոացած ձեռվ իրենց արտահայտությունն են գտել 1948 թվականի «ԱՄԱՆՈՐՅԱ ԱԶԳԱԴՈՒՅՑՆ» եկ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԿ»-ում: Այս վեհափառ, բազմաբնակալ հոգագումար ու նրբակյուս կոնյակում Վեհափառը հետևյալ հացադրությունն է անում.

«Ուրո՞նք են ազգային-եկեղեցական այն մեծ խնդիրները, որոնց օրինապատշաճ կարգավորումը և արգարազան վեռահատումը հանապացոյա մտահոգությունն է լուսավորշանիմն Մայր Արքունիս և Ամենայն Հայոց Ազգբնատիր ալեզարդ Հայրապետիս...»:

Եվ ապա պատասխանում է, որ այդ մեծ խնդիրներն են— առաջինը՝ ՀԱՅԱՍՏԱՆԱՅՅՅՅ Ա.Ջ.Ա.Յ.Յ. Ա.Ա.Ք.Յ.Ա.Ա.Ա. ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒԹՅՈՒՆ, Ա.Վ.Ա.Դ.Ա.Կ.Ա.Ա. ՎԵՀԵՆԻՐԱՎԱԿՈՒԹՅՈՒՆ, ՆՎԻՐԱԿԱՆ ԳԵՐԻՇԵՆԱՆՈՒԹՅՈՒՆ, ԵՎ ՍՐԲՈՅ.Ջ.Ա.Յ.Յ.ՄԻՒՍ.Ս.Կ.Ա.ՆՈՒԹՅՈՒՆ, և Երկրորդը՝ ՀԱՅ ՀԱՅՐԵՆԵԼՎԻ ՏԵՆՉԱԼԻ Ա.Մ.Բ.Ջ.Ջ.Ա.Յ.Յ.Խ.Ը. ՀԱՅՐԵՆԵԼՎԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԻՏԵ-Ս.Կ.Ա.Ա. Ք.Ս.Դ.Ա.Ք.Ա.Կ.Ա.Ս. Մ.Վ.Ա.Կ.ՈՒ.Յ.Մ.Յ. ՄԻ ՀԱՅ ՄԱՐԴՈՒ: Այսպիսի տեսնում ենք, որ եկեղեցափուրյունն ու հայրենասիրությունը ուղենից աստղեր են հանդիսացած երա ողջ գործունեության ընթացքում:

Մեծ եկեղեցաներ Հայրապետը, հավատարիմ Հայ եկեղեցու հնագանդ սովորություններին, իր գահակարության երրորդ տարում շանք չի խնայել և աճխոնչ աշխատել է աւազների Ազգային-եկեղեցական ժողովում հիմք դրված միասնականությունը: Նա բարգել, խրանել, հորորդել է Հայ եկեղեցու ներում ամրապնդել համեմաշխուրյան, միաձուլության ողին, սրբությամբ պահպանել հայ հավատի անդարադարյունը, անհայտ պայման մղել մեր եկեղեցուն խորք հատվածական ծգումների, անշատողական փառձերի դեմ, մեկուսացնել երկպառակություն սերմանողներին: Այս առքիվ իր «ԱՄԱՆՈՐՅԱ Ա.Ջ.Ա.Յ.Յ.Յ. ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԿ»-ում նա գրում է,

«Հայ մա՛րդ, հավատարիմ մնա և երանի հախճյաց ավանդներին և բարձ ու անվար պահպանիր ազգանվեր եկեղեցու վեհափուրյունն ու գերիշխանությունը արտադիմին թե ներմին ամեն մի ուղենիցքյունից և զգուշ եղիր գառեազգեստ զայերից, որով փորձում են առեւելուր շահաստացության

սին խոստումներով գայթակղեցնել բո միտքը, խոռվել բո հոգին և ոստայնել բո խիդեմք»:

Ապա իշ վարը շարունակում է նույն ոգով, կոչ անելով պաշտպանել ազգային-եկեղեցական միասնուրյան հիմքերը. —

«Հայաստանյայց Առաքելական Ազգային եկեղեցու ազնիվ զավակներ, հավատարիմ ձեր առաջինաշատ նախնյաց սրբայուս հիշատակին՝ միասիրու ու միակամ ծառացել այն բոլոր անպատճախանառու կենտրոնախոյս ույժերի դեմ, որոնք հատուածական իշխանակայուրյան, անհատական փառատենչուրյան հոդի տրամադրություններից կուրացած մոլեգին փորձեր են անում հիմքերը փորելու ազգային եկեղեցու սրբազն միասնուրյան և բակել-ջլատելու ազգային-կրոնական դարավոր ուխտն ու հոգեր դաշինք»:

Սյնուհետև անդրագանականվ այն խնդրին, որ արտասահմանում որոշ խմբակների կողմից փորձեր են արված եկեղեցին ծառայեցրնել իրենց բաղական շահերին, առաջարկ է արհարար պայքարել նմանօրինակ փորձերի դեմ և կտրուկ կերպով կարգի հրավիրել «բոլոր երանց, որոնք իրենց անպատճախառու գործունեուրյամբ միլիոնավոր հայ համատակների նվիրական արյամբ սրբազնությամբ ազգային եկեղեցին փորձում են վերածել բաղական համարակարգան բմբշավայր-հանդիսարաւանի» :

Խորիմաստ Հայրապետը իր այս կոնդակում նորդորում է բարձր պահել ոչ միայն Մայր Արոռի պատիվը, այլ և Հայ եկեղեցու մյուս Արոռների ու թեմական իշխանուրյունների պատիվը: Այս առրիվ հա գրում է.

«Հայ Ազգային եկեղեցու միասնուրյան անհրաժեշտ նախապայմանն է, ոչ միայն անվերապահ հանաշումը Մայր Արոռի և Ամենայն Հայոց Կարողիկոսի նախամեծարուրյան և ընդհանրական իրավասուրյան, այլ և անվերապահ հանաշումը տեղական Արոռների և Թեմերի իրավասուրյանց»:

Անդրադառնալով երկրորդ խնդրին խանդակառ հայրենասեր Հայրապետը գրում է.

«Հայ ժողովրդի անձնվեր և բաշարի զալակները սեռունդներ շարունակ և առատորեն իրենց ազնիվ կյանքն են զոհաբերել Միացյալ Հայաստանի և Հայրենի Պետուրյան նվիրական զաղափարեների հալթանակի համար: Ով բանիվ թե գործով, ուղղակի թե անողղակի մեղանչում է Հայրենիքի ամբողջացման և Հայ Պետուրյան հզորացման դեմ, հա զինակից է հանդիսանում Հայ Ազգի ու Հայրենիքի դարավոր թշնամուն, որը դիվային ծրագրեներ է նյուրում, աշխարհակալ մեծերին թիկնած

անպատիծ բռնատիրել մեր սիրեցյալ Հայրենիքը և մնի բնդ միշտ բնաշնչել թնաշխարհի ողջ Հայուրյունը»:

Իր այս կոնդակում Վեհափառը Հայ Դատի նկատմամբ մնում է նոյն լավատեսը, նա խորը հավատն ունի, որ վաղ թե ուշ անթրավացիուեն բնագրավված հայկական հողերը պետք է կցվեն Սովետական Հայաստանին: Նա կշատմբում է հոնետեսներին և առաջարկում անվիճակ կերպով շարունակել պայքարը, մինչև հայ եղենը կմիացվեն Սովետական Հայաստանին. — «Հուսալիիշ տարակույսները վերացվելու են մեկ բնդ միշտ և ամենայն վեռականուրյամբ, — գրում է այս կոնդակում, — ...անհիմն են դառն հիասրափուրյան և բարոյակման մասնակի արտահայտուրյունները համազարյան տենչանքի հաղբանի անհուսալիուրյան շարագրակուրյան: Հայ ժողովուրդը համազարյունը և անվիճակ տոկոնուրյամբ շարունակելու է իր սրբազն պայքարը հանուն հայշենական արդար Դատի օրինական վեռակատման»:

Վեհափառը հայ բազմաշարշար ու տառապանքի բովից անցած ժողովրդի միակ փրկուրյունը տեսնում է սովետական կարգերում, Սովետական Միուրյան ժողովուրդների եղբայրակցարյան ընտանիքում: Նա կոչ է անում համայն հայուրյան և հորդորում անվերապահ կերպով ու առանց վարահման համախմբվել Սովետական հարազար Հայրենիքի շուրջը:

«Միւր և գորգուրանի, ակնածանի և հիազմունիքի սրբուրյան սրբոցն է հանդիսանալու մեր ազգային-հայրենական Պետուրյունը՝ Սովետական փառապահ Հայաստանի: ...Այս անկեղծուեն սիրութ է մեր Ազգը և պաշտում մեր Հայրենիքը, հա պարտավոր է զորավիճ հանդիսանալ հայրենիքի Պետուրյան՝ Սովետական Հայաստանին»:

Այնուհետև ցավագ ու գառնուրյամբ արձանագրում է այն փաստը, որ սովետական հայրենիքի հայանուն թշնամիները, գործակցելով Սովետական Միուրյան թշնամի ուժերի հետ, դավեր են լարում հայրենիքի Պետուրյան դեմ և պատրաստ են անգամ զինակցել թշնամական զաղափարեների հետ՝ վերականգնելու այն կարգերը, որոնք անխուսափելիունը պատուանելու են մեր ժողովրդին և ավերածելու մեր Հայրենիքը»:

«Յավ ի սիրա պետք է հիշատակենի, որ, թե սակավարիկ, բայց և այնպես, ի մեծ դժբախտուրյուն և անպատվուրյուն մեր ազգային նկարագրի, հայանուն մարդիկ կան տակալին, որոնք մոռացուրյան դալով պատմուրյան դառն, ողբերգական դասերը, դավեր են լարում հայրենիքի Պետուրյան դեմ և պատրաստ են անգամ զինակցել թշնամական զաղափարեների հետ՝ վերականգնելու այն կարգերը, որոնք անխուսափելիունը պատուանելու են մեր ժողովրդին և ավերածելու մեր Հայրենիքը»:

Վեհափառը ամեն ազնիվ հայի վրա սրբազն պարտականություն է դնում անդառ կերպով պայքարել հայ ժաղովրդի ու նրա սովետական հայրենիքի բոլոր քշնամիների դեմ, բողազերծ անն, մեկուսացնել ու խպառ չեղոքացնել երանց.

«Յուրաքանչյուր ազնիվ հայի առաջնակարգ և սրբազնագույն պարտականությունն է, — գրում է նա, — մերկացնել, խսպան չեղոքացնել Սովետական Հայրենիքի, Հայ ժողովրդի քշնամիներին, հայաղակ ույժերին ու գործիչներին»:

Իր այս Կոնդակում հայրենասեր Հայրապետը սրուառուց տողեր է նվիրում նամանավանդ հայրենաղարձին: Նա «հայրենաղարձը հայրենասիրության ոսլիկ և արդար նամրան» համարելով նորդորում է ամեն կերպ սատարել հայրենահավաքի մեծ ու վեհազույն դործին: Նա իրեն անհունապես երշանիկ է զզում, տեսնելով թե ինչպես հայրենաղարձները «հայրենի հողը ոսք դնելու առաջին խսկ ժամից կռում ու կոփում են իրենց երշանիկ ապագայի հիմքերը»: Նա իր կոնդակներով, գրություններով, նամակներով աշխատել ու աշխատում է վառ ու անշեշ պահել հայրենաղարձի վեճ զաղախար հայ ժողովրդի տակավին օտար հորդզոնների տակ դեգերող հատվածների մեջ, հորդորել ու հորդորում է բոլոր միջոցները ի սպաս դնել հայրենաղարձի սրբազն գործին: Նա իր օրենքարույր կոնդակներով ոգեսրել, բազալերել ու խրախուսել է հայրենաղարձին մեծապես օժանդակող կազմակերպություններին ու անհատներին:

«Հոգեզմայլ է Սփյուռքի պատմական Հայրենաղարձը, — գրում է Վեհափառը, — .. հայ մարդու սրբազն պարտականությունն է զորավիզ լինել Ազգակավախման հայրենասիրական մեծ գործին, զուրգուրել, պահել ու ծավալել համազգային խանդավառությունը և միաժամանակ ապահովել ու երաշխավորել Հայրենաղարձի ծավալման տեսեսական, բաղաժական և բարոյական բոլոր կովանեները»:

Այնուհետև նեռաւոս Հայրապետը մերկացնելով հայրենաղարձի ամեն գովածի ու տեսակի քշնամիների սուր դիտավորությունները, անարգանքի սյունին է գամուն այդ քշնամիներին, ծաղրելով հայրենաղարձը կասեցնելու նրանց նուսահատ փորձերը.

«Ով բացահայտ, թե զաղունի դպիեր է լարում Հայ Սփյուռքի Հայրենաղարձի դիմ, նա կամա թե ակամա դուրս է մնում Հայ ժողովրդի ազգային-հոգեուր միասնուրյունից: Ով թերեամոռումն թե շարակամոռն է հակառակում է Հայ Հայրենաղարձին, նա դառնում է զինակից Հայ ժողովրդի դամին Քյազիմ Կարաբեկիր-ների, Վատիկանի կամակատար Ազաշանյաների և աշխարհակալ դավադիրեների, որոնք փորձում են հայ տարագիրներից փարձկան զինախմբեր կազմակերպել և ստրկական աշխատանքի իրավագուրկ բանակներ նախապատրաստել: ... Անհանդուրժող և ուզմամտություն կատիկանի հայանուն գործակալներն անկարող են մարել կամ կորզել ազնիվ հայազունների հոգուց հայրենասիրության, ազգասիրության, եղբայրության նվիրական զզացմունքները»:

Այսպես է գործում ու մտածում մեր օրերի վեհարակիր ու առաքելատիպ մեծ Հայրապետը, նարազատ բարգմանը հանդիսանալով հայ բազմատանջ ժողովրդի դարավոր իղձերի, և նիշտ է նկատում «Երաբեր» թերը, որն իր խմբագրականում գրում է, թե «Միայն հայանուն դավանաններն են, որ Հայ ժողովրդեն և Մայր Արոնի ծերունակարդ ու պատկառազդու նահապետն տարբեր կմասնեն»:

Վեհափառ Հայրապետի համար սրբություն սրբոց են հանդիսանում Հայ նկեղեցու պայծառազարդությունն և սովետական Հայ Հայրենիքի բարգավանումն ու հզորացումը:

Մաղրենք Ամենակարողին, որ նա եկեղեցասեր ու հայրենասեր առաքինազարդ Հայրապետին երկար կյանք ու առողջություն պարգևի ի փառ Հայ նկեղեցու ու Հայրենիքի:



ԱՐԴԱՎՈՒՅՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԻ ԲՈՒՌ ՀՈԴ*)



ի բուր նո՞յ տարաք դուք հայրենիքից,
Ասե՞ս, թէ անուշ Արազը տարաք,
Ասե՞ս, թէ լազուր երկնի կապույտից,
Մեր բարդիների երազը տարաք:

Այո՞ , հո՞յ տարաք դուք հայրենիքից,
Ասե՞ս, թէ կապույտ Մասիսը տարաք,
Եվ հավերժուրյան կանաչ եզերից,
Մեր ճախճիների անյունը տարաք:

Այդ ասել է թէ դուք Օշականից
Մեսրոպի մարմար շիրիմը տարաք,
Հայոց նոր բախտի, նոր փառքի ճամբից
Մեր կարկաչ լեզուն, մեր ողին տարաք:

Մի ափ ջուր տարաք դուք կարճաղյուրից,
Մեր կարճաղյուրից մի ափ ջուր տարաք,
Ասե՞ս, թէ Հայկի անմար օջախից,
Դարերով պահված սուրբ կրակ տարաք:

Ո՞հ, կրակ տարաք հայրենի տնից,
Ու բնորս պահեմ հուրը անքեղած,
Ու անշեղ միա կարուր անքիծ,
Հայրենապապակ ձեր հոգում վառված:

(«Լեռածնունդ» 13 նոյեմբ. 1947 թ.)

*) 1945 թվի կաթողիկոսական ընտրության ամերիկահայ պատգամավորները վերագարձին իրենց հետ Հայունիքից բաակներով հող տարան: Այս մասին տես «Եղմիածին» 1946 թ. Հունվար, էջ 19:

ՀՀԳ-Ի ԹՂԹԱԿՑԻ ԶՐՈՒՅՑԸ ԾԱՅՐԱԳՈՒՅՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ՀԵՏ

ՀՀԳ-Ի թղթակցի հետ մայիսի 12-ին ունեցած զրոյցի ժամանակ Մայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ-ը, Հայ Եկեղեցու ներկա խնդիրների ու Հայրենադարձության շուրջն արտահայտվելով, հետեւալը հաղորդեց.—

— Աշխատանքի ազատագրության, ժողովրդների եղբայրության և միջազգային խաղաղության մեծագույն պաշտպան Սովետական անպարտելի հզոր Միության եղբայրական հովանու ներքո և անդավաճան պաշտպանությամբ ավերակներից ու գերեզմաններից գլուխ բարձրացնեց, վերածնվեց ու բարգավաճեց բազմադարյան ու բազմաշրջար Հայ Հայրենիքը, ծնունդ առավ, ամրապնդեց և հզորացավ Սովետական Հայ Պետությունը, համալգային անխոսափելի մահվան օրհասի մղձավանշից ազատվեց, փրկվեց ու երշանիկ կյանքի ուղին բոնեց պատմության երրեմնի խորթ ու հալածական զավակ Հայ Ժողովուրդը:

Հայ Ազգը իր բազմադարյան պատմության և գոյության բախտորոշիչ շրջանն է ապրում այսօր, իսկ Հայ ազգային Եկեղեցին Մայր Հայրենիքում իր հուսադրիչ զարթոնքն է երկնում, առավել քան երրեք Հայ ազգն աննախընթաց պայմաններ ունի այսօր իր առաջ դրված խնդիրները իրագործելու համար: Մեր Մայր Հայրենիքում ժողովուրդը վայելում է դավանության և Եկեղեցական ծիսակատարությունների լիակատար ազատություն: Մայր Աթոռը ստեղծելու է իր ուսումնական հաստատությունը՝ Հոգևոր ճեմարանը և ունի իր մամուց՝ ոչ շմիածին ամսագիրը: Մեր նպատակների իրագործման ու մեր գործունեության բոլոր հնարավորությունների առկայության պայմաններում, բնական է, մեղնից պահանջվում է առավել շերմեռանդություն և նվիրվածություն մեր մեծ ուխտի ու մեր սրբազան

պարտականությունների կատարման հանդեպ:

Հայաստանյաց աղքային Առաքելական Ս. Եկեղեցու ավանդական խորհուրդն ու սրբության սրբոցն է եղել միշտ Հայ Ժողովուրդի բարորությունը, Հայ Հայրենիքի տենչալի ամբողջացումը և Հայրենի պիտության տնտեսական-քաղաքական, մշակութային հզորացումը: Ինչպես միշտ, նմանապես և այսօր, աղքային Հայ Եկեղեցին, նրա ավանդապահ հոգևոր դասն ու առաջինազարդ ողջ պաշտոնեաւթյունը, իր Հայրապետի գլուխավորությամբ, ծառայում են այդ սրբազան ուխտին:

Հայ Ժողովուրդի անձնվեր ու քաջարի զավակները, սերունդներ շարունակ և առատորեն, իրենց սրբազան արյունն են թափել ու իրենց ազնիվ կյանքը զոհարերել Միացյալ Հայաստանի և Հայրենի պետության նվիրական գաղափարների հաղթանակի համար: Ով բանիվ թե գործով, ուղղակի թե անուղղակի մեղանչում է Հայրենիքի ամբողջացման և Հայ Պետության հզորացման հանդեպ, նա զինակից է հանդիսանում Հայ ազգի ու հայրենիքի դարավոր թշնամու, որը աշխարհակալական տենչով տառապող մեծերին թիկնած դիվային ծրագրեր և նյութում անպատճե բննագրավելու մեր սիրեցալ Հայրենիքը, վերացնելու Հայ Պետությունը և մեկ ընդմիշտ բնաջնջելու ողջ Հայությունը:

Ցավ ի սիրտ պետք է հիշատակենք, որ թեև սակավաթիվ, բայց և ամիսես ի մեծ դժբախտություն և անպատվություն մեր ազգային նկարագրի, արտասահմանյան Հայ գաղղութներում սակավին կամ հայանում մարդիկ, որոնք մոռացության տալով պատմության դասն, ողբերգական դասերը, դավեր են լարում Հայրենի Սովետական Պետության դեմ և անգամ պատրաստ են զի-

նակցել թշնամական ուժերի հետ՝ վերականգնելու համար այն կարգերը, որոնք նպատակ ունեն անխուսափելիորեն պատուհասել մեր ժողովրդին և ավերածել մեր Հայրենիքը:

Յուրաքանչյուր ազնիվ հայի առաջնակարգ ու սրբազնագույն պարտականությունն է — մերից անուշների չեղոքացնել և իսպառ հեռացնել հայկական շրջաններից հայտղավուժերին: Այդ ենք թելապրում մեր հավատացյալ հոտին Մենք մեր կոնդակների և ուղերձների միջոցով, այդ նույն ենք հանձնարարում անել մեր հոգեվոր դասին իր քարոզների ժամանակ:

Ամեն մի ազնիվ ու անվաճող հայի սիրո և գուրգուրանքի, ակնածանքի և հիացմունքի սրբության սրբոցն է հանդիսանալու մեր ազգային հայրենական պետությունը՝ Սովորական փառապանձ Հայաստանը: Սովորական Մեծ Միությանն ապավինած, ուսւա ազնիվ ու քաջարի ազգի ամենօրյա օգնությունը վայելելով, սովետական բոլոր ժողովուրդների եղբայրական անշահախնդիր աշակցությանը արժանացած, սովետական հիմքարանը մեծ ընտանիքի եղբայրակցության կենսատու ու փրկարար շունչը շնչելով, Բնաշխարհի հայությունը իր ազգային պետական հիմքերն է կերպում, ամրապնդում հրաշագործում ու պայծառազարդում հայրենական սուրբ օջախը, որի լուսի և շերտության ուշուվ այսօրվա սերունդը անօրինակ թափով ու ստեղծագործ հանձարով դարբնում է, ոչ միայն իր, այլ և գալոց սերնդների երշանկությունը: Մայր Հայրենիքի, հայրենական պետության և Բնաշխարհի հայության այսօրվա վիճակն արդարացումը ու կենսագործումն է Սովետական Միության մեծանուն Առաջնորդ, Գեներալիսիմուս Ստալինի մարգարելության: «Տանջված ու բազմաշարչար, Անտանտայի և դաշնակների ողորմածությամբ սովի, ավերի ու գաղթի մատնված Հայաստանը, այդ բոլոր քրարեկամներից» խարված Հայաստանը այժմ իր փրկությունը գտավ նրանում, որ հայտարարեց իրեն Սովետական Երկիր:

Մեր Հայրենիքը, հայրենի պետությունը և մայրենի ժողովուրդը իրենց ստեղծագործական աշխատանքով, մշակույթային վերելքով, կենցաղային բարգավաճմամբ, հերոսական նկարագրով հիացմունք են պատճառում և ակնածանք ներշնչում բոլոր նրանց, որոնք ականատես են դառնում մեր Հայրենիքի ու ժողովրդի աշխատանքի, պայքարի ու ստեղծագործության:

Ով անկեղծորեն սիրում է մեր ազգը և պաշտում մեր Հայրենիքը, նա պարտավոր է

զորավիզ հանդիսանալ հայրենի պետության՝ Սովետական Հայաստանին: Եգնել հայ ժողովրդին և զորավիզ մինել հայրենի պետության, սրբազան և հրամայական պարտականությունն է ամեն մի ազնիվ հայ մարդու, հայ հայրենասիրի: Այդ է հանդիսանում նաև մեր ամենօրյա մաղթանքը:

Անդրադառնալով հայրենադարձության հարցին, Ամենայն Հայոց Հայրապետն ասց.

— Մեր Հայրենիքը հարազատ իշխանությունը բացել է Սփյուռքի տարագիր հայության առաջ Հայրենիքի դմերը, որով ոչ միայն ազատում է հայ ժողովրդին անխոսափել ձուկման, ազգային դիմագրկման, օտարության մեջ հուծվելու և անէանալու մեծ վտանգից, այլև լիակատար հնարավորություն ընձեռում թվով աճելու, փիզիկապես զրանալու հայրենի հողի վրա, գոտեպնդված կուտուրական ու տնտեսական մեծ հաղթանակներ տարած և վերելքի համբան բռնած հարազատների մերձավորությամբ, նոր զարկ ու թափ տալու հայ մշակույթի աննախնական զարգացման, հայ ժողովրդի բարեկեցության և ազգային հզորության ամրապնդման: Հայ ժողովրդի պարտականությունն է ամեն ինչ ստորագանձ ազգական, հայրենադարձության նվիրական գաղափարի կենսագործմանը:

Հետպատերազմյան տնտեսական վերականգնման ու զարգացման մեծագույն զբժվարությունների և բնության կույր տարրերի՝ երաշտի պատճառած թերաբերության ծայրագույն պայմաններում լայն բացվեցին Սովետական Հայաստանի սրբազան դռները՝ սրտաբաց ընդունելու տարաբնակ, առժամապես հայրենազորկ հայ հարազատներին: Անձուկ սահմաններով և ազգաբնակչությամբ սակավաթիվ Սովետական Հայաստանը հաղթանարեց անհաղթահարելի թվացող արգելքները և հայրենի նոր օջախները վառեց բազմահազար աստանդականների: Բնաշխարհի հայությունը անձնվիրաբեր և հայրենաբնակ դարձնել հայրենասեր՝ բազմահազար բազմությունը հայրենադարձների: Անհավատալի հրաշագործություն էր ամենակարծ ժամանակամիջոցում հաղթահարել անհաղթահարելին և հայրենաբնակ դարձնել հայրենասեր՝ բազմահազար բազմությունը հայրենադարձների: Անհավատալի հրաշագործություն է թվում տեսնել ու համոզվել, թե ինչպես պես-պես երկրներից եկած, տարածերժ կարգերում սնված, շահատիրական մինուրուսում դաստիարակված հայրենադարձ ժողովրդը, առասպելորեն կարծ ժամանակամիջոցում, հաղթահարեց հասարակական կենցաղի փոխանցման դմիարու-

թյունները և հարազատացավ սովորական իրավակարգի, սոցիալսուսական հանրակենցաղի պայմաններին:

Մեր հոգին անհօնապես հրճում է, տեսնելով, թե ինչպես հայրենադարձ հարազատներս, որպես քրտնաջան մեղոներ, հայրենի հողը ուտք դնելու առաջին իսկ ժամից, կուռ ու կոփում են իրենց երջանիկ ապագայի հիմքերը: Պետական գործարաններում թե կոլխոզային դաշտերում, վարչական հիմնարկներում թի այլ հաստատություններում, գիտության կաճանաներում թի արվեստի տաճարներում հիացումն են առաջացնում հայագին նոր քաղաքացիների ազնիվ աշխատանքը, ստեղծագործ ողին, երանավետ ժամիւր, խինդն ու ծիծաղը: Մանկապարտեզի, ուսումնարնի, համալսարանի, Գիտությունների Ակադեմիայի, արվեստի, լուսավորության և այլ բազում հիմնարկությունների հյուրենկալ դռները լայնարձակ բացվել են հայրենադարձ մանուկների, ուսումնատենչ պատանեների ու գիտության ծարավի երիտասարդների առաջ: Այս ամենը, որ տասնյակ տարիների հերոսական պայքարի և արդար քրտինքի գնով է նվաճված, առատորեն ի սպաս է դրվում երրենի հայրենադուրկ, իսկ այժմ հայրենատեր լիիրավ քաղաքացիների:

Ով բացահայտ թե գաղտնի դավեր է լարում հայ Սիլուտքի: Հայրենադարձի զեմ, նա կամա թե ակամա, դուրս է մնում հայ ժողովրդի ազգային-հոգեկոր միասնությունից: Ով թեթևամտորեն թե շարակամորեն հակառակում է: Հայ հայրենադարձությանը, նա դառնում է զինակից հայ ժողովրդի դահիճ ազգուրաց դավադիրների, որոնք փորձում են հայ տարագիրներից վարձկան զինախմբեր կազմակերպել և ստրկական աշխատանքի իրավագույն բանակներ նախապատրաստել պատերազմ հրահրողների համար:


Հայ մարդու սրբազն պարտականությունն է—վառ, անշեշ պահել հայրենադարձի գերափառը հայ ժողովրդի մեջ, զորավիր լինել ազգահավաքման հայրենասիրական մեծ գործին, գորգուրել, պահել ու ծավալել համազգային խանդակառությունը և միաժամանակ ապահովել ու երաշխավո-

րել հայրենադարձի ծավալման տնտեսական, քաղաքական ու բարոյական բոլոր կովանները:

Միիթարական էր և ուրախավի Մեզ տեսնել, որ Հայաստանյայց ազգային եկեղեցվոր զավակներիս հետ միաշունչ ու միասիրա մեր նիմիրական ազգային դրամի և ներգաղթի հաղթանակի համար անկեղծորեն աշխատեցին ու պայքարեցին նաև այլադավան հայացունները: Առանձնապես հիշատակության և գովասանքի է արժանի, ավետարանական ազգայինների, կրոնապետների և Հոգևոր հոգիների աշխատանքներին: Սրտառուշ է նաև լատինալավան ազգայինների գործակցությունը համազգային խնդիրների արդարադատ լուծման համար, հակառակ նոյց կրոնական պետերի զավադիր հորդորների, պետերի, որոնք հայ դատի ու հայրենադարձի դեմ ծառանալով կամանում են նիրաշին կատիկանի ուսեզմատենչ մենավորին և հաճոյանալ աշխարհակալական ախտով տառապող քաղաքական այն գործիչներին, որոնք ծրագրեր են մշակում: Թնդանոթային մասի և աշխատանքի գաղութային ստրուկների վերածելու իրավագուրկ տարաբնակ հայացուններին: Ի տրիտոր իր ազգադավ և սկանդալի վատիկանի հայտնի կամակատար Աղաջանյանը կարդինալության աստիճանով վարձահատուցվեց: Սակայն մեծ է հայրենիքի սերը, ազգահավաքման ու ազգասիրության զգացմունքը նաև լատինալավան հառազատների հոգում: Անհանդուժելի և ուղամման կատիկանի հայանուն գործակալներն անկարող են մարել կամ կորզել ազնիվ հայացունների հոգուց հայրենասիրության, ազգասիրության նիմիրական զգացմունքները և նրանց զգալի մեծամասնությունը Մայր Հայրենիքի գրկումն է, որ պիտի գտնե իր հոգեկոր միսիթարությունը և երջանիկ կյանքը:

Թող տիեզերքի Արարիչը արդարախոհ ու արդարադատ իմաստություն պարգևե ժողովուրդներին ու կառավարություններին, և խաղաղություն ու եղբայրություն հաստատի ամբողջ աշխարհում:





ԾԱՅՐԱԳՈՒՅՑՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ ԶԻ ԿՈՆԴԱԿԸ

ՊԱՏՈՒԱՐՁԱՆ ՏԻՄՐ ՀԱՅԿԱՅ ԳԱՎՈՒՔԱԽԱՆ, ՀԱՐԱՋԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՄՐԲՈՅ ԷԶ-
ՄԻԱԾՆԻ ԵՒ ՍԻՐԵԼԻՈՅ ՄԵՐՈՒՄ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՎ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Թրիստոնեական կրոնի արժեքը նորա վեհ գաղափարների մեջ է, քրիստոնյա մարդու արժանիքը այդ գաղափարների կենսագործման մեջ է: Դուք վաղուց բռնել եք քրիստոնյա մարդուն վայել ընթացք:

Մենք անձամբ ճանաշելով Զեզ, գիտենք Զեր հոգու առաքինությունները, որոնք արտահայտվել են Զեր բազմապիսի բարի գործերով: Նոցանից մեկի մասին է, որ պիտի խոսենք այժմ: Դուք պահում եք Ս. էջմիածնի Հոգեոր ճեմարանում երեք սան, այս մի անհատական բարերարություն է, քրիստոնեական մի գովելի գործ, որով Դուք մի քանի կարիքավոր երիտասարդների կրթական և դաստիարակչական հոգան ու խնամքը Զեզ վերա առնելով, ասկանովում եք նոցա անձնական ապագան:

Սակայն, այս նաև հասարակական բընությունում եք Զայ Եկեղեցու համար հոգեար սպասավորներ, քահանաներ և կուսակրոններ, որոնք պիտի ծառայեն Եկեղեցուն և ծողովորդին, դաստիարակելով նոցա կրոնական և ազգային ոգով և կատարելով եկեղեցու ծեսերն, արարողություններն ու խորհուրդները, պիտի միսիթարեն նոցա

հոգեապես: Այլ և իրենց եկեղեցագիտական ու հայագիտական ուսումնասիրություններով պիտի ճոխացնեն մեր հոգեոր անդաստանը:

Զեր այս գործով Դուք, իբրև Հայ մարդ և Հայ հավատացյալ, կատարում եք նաև Զեր բարոյական պարտքը հանդեպ Ս. էջմիածնի, մասամբ թեթևացնելով նորա տնտեսական հոգաբ: Մենք վստահ ենք, որ Զեղ նման ժարդիկ, Աղքին Հարազատ և էջմիածնին հավատարիմ, կընդլայնեն իրենց գործունեությունը Հայրենիքի և Ս. էջմիածնի նկատմամբ, հնարավորություն տալով Հայրենիքին և առավել կուլտուրապես զարգանաւ, գիտության, գեղարվեստի և տեխնիկայի ասպարեզներում հառաջադիմել, իսկ Եկեղեցուն տնտեսապես ու հոգեսրապես զորանալ ու զարգանալ, հոգախություն և ի միսիթարություն Հայ ժողովրդի:

Աստուածային Օրհնությունը իշնի և հանգչի Զեր և Զեր ընտանիքի վերա: Փրկչի զորավոր Աշը հովանավոր լինի Զեր ձեռնարկներին և հաջողություն պարզեցն Զեր գործերին: Ամենաբարձրալին լսելի լինի Մեր բարեխսությունն ու աղոթքը և պարզեն Զեզ ու Զեր ընտանիքին արեշատություն, բարօրություն և երշանկություն:

Ողջ լեռոք, զորացյալ շնորհոք Ս. Հոգվուն և Հավետ օրհնյալ ի Տյառնե և ի Մենց. ամեն:

ԾԱՅՐԱԳՈՒՅՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

84-03 25

Տուաւ Կոնդակս ի 10-ն մարտի

1948 ամի Փրկչական և

ի Տոմարիս ՌԵՋԻ

ի Ս. էջմիածնի



ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

ՄԱՅՐ ԱԹՈՒ

Մայիսի 9-ին, Հայրթանակի տոնի օրը, Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցվեց հոծ բազմության ներկայությամբ: Պատառագին էր Տ. Սահակ ծայրագույն վարդապետը, որը և Հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Տ. Տ. Գևորգ Զեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագից հետո նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ. Սրբազնագույն Հայրապետի մասնակցությամբ մայթանք կատարվեց:

Հունիսի 20-ին, Ս. Աստուածածնի տփոյ գտմանն տոնին, նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ. Ամենայն Հայոց Աղքանտիր Պատրիարք-Կաթողիկոսի Օծման և գահակալության երրորդ տարելիցից առթիվ Մայր Տաճարում ժողովրդի խուռն բազմության ներկայությամբ Ս. Պատարագ մատուցվեց:

Պատարագում էր Տ. Ս. Սահակ ծայրագույն վարդապետը:

Հայրապետական մայթանքից առաջ քարոզ խոսեց պատարագիլ Տ. Սահակ ծայրագույն վարդապետը, որը Հակիմ կերպով բնութագրեց Վեհափառ Հայրապետի եկեղեցաշինարարական ու Հայրենասիրական եռամյա բեղուն գործունեությունը, արեշատություն մաղթելով ալեզարդ Հայրապետին:

Այնուհետև կատարվեց Հայրապետական մաղթանք, որի Հանդիսադիրն էր Վեհափառ Հայրապետը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը մայիսի 12-ին հեռագրով իր խնդակցությունը հայտնեց Տանն Կիլիկիո Շնորհազարդ Կաթողիկոս Տ. Տ. Դարեգին Ա.-ին՝ Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարի մեջ մայիսի 16-ին, Հոգեգալստյան տոնին, կատարվելիք Մյուռոնօրհնության նմիրական արարողության առթիվի

Մայիսի 6-ին, Համբարձման տոնի օրը, Մայր Տաճարում հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց: Պատարագին էր Տ. Կարապետ վարդապետ Ասլամազյանը:

Ս. Պատարագից հետո Տ. Ս. Սահակ ծայրագույն վարդապետ Տեր-Հովհաննիսյանը բանախոսեց Հայրապետական Աթոռը Սսից էջմիածնին փոխադրելու նշանակության մասին: Բանախոսություննից հետո Հայրապետական մաղթանք կատարվեց, որի Հանդիսադիրն էր Վեհափառ Հայրապետը:

Տաճարը լիքն էր աղոթավորների բազմությամբ:

Մայիսի 20-ին, թեմական գործերով, Մայր Աթոռ ժամանեց Ռումինացայ թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Վաղգեն վարդապետը:

Մայիսի 24-ին, Սրբոց Կուսանացն Հռիփսիմյանց տոնի օրը, Ս. Հռիփսիմեի վանքում Ս. Պատարագ մատուցվեց էջմիածնի Մայր Տաճարի Միաբանության բոլոր անդամների և ուխտավորների հոծ բազմության ներկայությամբ: Պատարագում էր Տ. Նիկողայոս ավագ քահանա Բավեյանը:

Տոնի առթիվ բանախոսեց Տ. Ս. Սահակ ծայրագույն վարդապետը:

Մայիսի 25-ին, Սրբոց Կուսանացն Գայիհանյանց տոնի օրը, Ս. Պատարագ մատուցվեց Ս. Գայիհանեի վանքում: Պատարագին էր Տ. Խորեն ավագ քահանա Շուշանյանը:

Մայիսի 27-ին Ս. Պատարագ մատուցվեց Ս. Շողակաթի վանքում: Պատարագում էր Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը:

Մայիսի 30-ին, Կաթողիկե Ս. էջմիածնի տոնի օրը, Մայր Տաճարում հանդիսավոր Ս. Պատարագ մատուցեց Ռումինացայ թե-

մի առաջնորդական տեղապահ Տ. Վաղգեն ծայրագույն վարդապետը, որը և ավով պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Տ. Տ. Գևորգ Զ Սրբազնագույն Հայրապետը:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հայրապետական մաղթանք, որին ներկա էր Հավատացյալների հոծ բազմություն:

Մայիսի 2-ին Հոգեոր ճեմարանի սաները, դասատոնների ուղեկցությամբ, էքսկուրսիայի մեկնեցին Զվարթնոց, ուր դիտեցին Հայկական ճարտարապետական մեծագույն կոթողի նվիրական մնացորդները:

Հոգեոր ճեմարանի սաները մայիսի 28-ին, ճեմարանի տեսչի և դասատոնների ուղեկցությամբ, էքսկուրսիայի մեկնեցին Երևան, ուր դիտեցին թանգարանները: Սաների էքսկուրսիան հատկապես երկար տևեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմական թանգարանում, որտեղ Հոգեոր ճեմարանի դասախոս դոցենտ Ա. Շահնաղարյանը մի քանի ժամվա ընթացքում սաներին ծանոթացրեց թանգարանի բոլոր բաժինների և հայ նյութական կուլտուրայի այդ բաժիններում պահվող էքսպոնատների հետ:

Հոգեոր ճեմարանում հունիսի 2-ին սկսվեցին տարեվերջի քննությունները, որոնք տևեցին մինչև հունիսի 26-ը:

Մի շարք քննությունների հաճեց ներկա լինել Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ը:

Ինչպես ուսումնական տարին, նույնպես և տարեվերջի քննությունները, փալուն հաջողությամբ ավարտելու համար 16 սաներ արժանացան պարգևատրումների:

Տարեվերջի քննություններից հետո սաներին ամառային արձակուրդ տրվեց և նրանք մեկնեցին իրենց հարազատների մոտ: Հայազատներ շունեցող մի քանի սաներ ուղղությունների Գեղարդի վանքը:

Հունիսի 17-ին, Սրբոց Թարգմանչացն Սահակա և Մեսրովբա տոնի օրը, Հոգեոր ճեմարանի սաները, աեսչի, դասախոսների ուղեկցությամբ և Միաբանության անդամների հետ միասին, մեկնեցին Օշական, ուր այցելեցին Մեսրովը Մաշտոցի շիրիմը և շրջակա հին ուսումնավայրերը: Մի շարք սաներ Օշականի եկեղեցքում մասնակցեցին արարողություններին:

Վեհափառ Հայրապետը մայիսի 30-ին № 271 թվակիր գրությամբ իր հայրական ողջունը և Հայրապետական օրհնությունը հըղուով Ռումինիայ թեմական կորհրդի փոխնախագահ՝ Մեծարքո պ. Արտաշես Պոյաճյանին՝ գոհունակություն հայտնեց նրա կողմից ուղարկված սրտարություն նվերների համար:

Վեհափառ Հայրապետը մայիսի 25-ին տրված Կոնդակով իր Հայրական ողջունը և Հայրապետական օրհնությունը հղելով Ռումանիո թեմի Կալաց քաղաքի համայնքին՝ գոհունակություն հայտնեց նրա կողմից ուղարկված պատվական նվերի համար:


Ն. Ս. Օծությունն իր այս Կոնդակովմ գրում է. «Զեր պատվական նվերը գոհունակությամբ ընդունեցինք և մխիթարվեցանք... մխիթարվեցանք նորա համար, որ այդ նընքերն արտահայտիչ է համայնքի առ Մայր Աթոռը տածած սիրուն, նա նշանակ է Զեր կապին Հայության մեծագույն Սրբավայրի՝ Ս. Էջմիածնի հետ, նա նշանակ է Զեր տածած սիրուն հանգիպ մեր Հայրենիք հորհուային Հայաստանը»:

Մենք շափազանց մխիթարված ենք հատկապես նորա համար, որ համոզված ենք թե այն համայնքը, որ կապված է Մայր Աթոռի և Մայր Հայրենիքի հետ, նա կտոկա և հավիտյան կապիրի, առանց դիմագրկման և օտարների հետ ձուլման: Խոկ Զեր նվերը մշտապես կմնա Մայր Աթոռում, իրըն հուշարար Զեր տածած հարպանքի և սիրո առ Մայր Աթոռու մեր Ս. Էջմիածնին»:

Ապա մաղթանքներ անելով, Վեհափառը ուրիշավորմ է, որպեսզի Տերը «հաջողենոր գալուատը իր տենչալի Հայրենիքը՝ հորհուային Հայաստան»:

Ռումինիայ թեմի Առաջնորդական Տեղապահ Տ. Վաղգեն ծայրագույն վարդապետ Պալճյանի միջոցով Ս. Էջմիածնուում շնորհակալությամբ ստացվել են ուռմինահայեր Պ. Պ. Վ. Բարակյանի, Ս. Սպանդարյանի, Ա. Ճապուրովի, Ա. Քելեբրյանի, Հ. Պապայիշեանի, Ս. Պոխմելյանի, Պ. Փափազյանի, Ս. Արարակյանի, Գ. Վարագյանի, Զ. Պատուկյանի, Ս. Գալուայանի, Օ. Օր. Լ. Լուպայայանի և Արազյանի կողմից Մայր Աթոռու ու Հոգեոր ճեմարանի անունով ուղարկված նվերները:

ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ
Տ. ՎԱԶԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱԼՃՅԱՆԻ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸՄԱՅՐ ԱԹՈՂ


ույն թվի մայիսի 20-ին Խոստի-
նահայ թեմի Առաջնորդական
Փոխանորդ Տ. Վազգեն վար-
դապետ Պալճյանը Ս. Էջմիա-
ծին ժամանեց և Մայր Աթողի ավագ լուսա-
րար Սահակ ծայրագույն վարդա-
պետի առաջնորդությամբ ներկա-
յացավ Ամենայն Հայոց Վեհա-
փառ Հայրապետին։ Ալեզարու
Հայրապետի Աջը Համբովելուց
ու նրա օրհնությունն առանալուց
հետո Տ. Վազգեն վարդապետը
զեկուցեց իր խնամքին հանձնված
թեմի թեմական գործերի մասին։

Մայիսի 21-ին Տ. Վազգեն
վարդապետը Տ. Սահակ ծայրա-
գույն վարդապետի առաջնորդու-
թյամբ այցելեց Հոգևոր ճեմարա-
նը, ուր ծանոթանալով վարչական
ու գասախոսական կազմի հետ,
երկար զրուց ունեցավ Հոգևոր
ճեմարանին վերաբերող խնդիր-
ների շուրջը։ Գերապատիվ Վազ-
գեն վարդապետը ներկա գտնվեց
նաև ճեմարանի երրորդ դասա-
րանի դասերին։

Մայիսի 23-ին, կիրակի օրը.
Վեհափառ Հայրապետի կարգա-
դրության համաձայն, Տ. Սահակ
ծայրագույն վարդապետը Մայր
Տաճար է առաջնորդում օրվա
պատարագի Տ. Վազգեն վարդա-
պետին, որտեղ վերջինն Ս. Պա-
տարագ է մատուցում և հոգիւ
քարող խսում հայրենաբաղծ ուռ-
մինահայ ժողովրդի սրտաբուլս
ողջույնը հաղորդելով մայր հայ-
թեմին իր երշանիկ կյանքը կերտող հայ
ժողովրդին, նա մեծ հիացմունքով է իս-
սում այն հսկայաթուի կուտուրական ու

տնտեսական վերելքի մասին, որին ինքը ա-
կանատեն եղավ Երևանում՝ իր Հայաստան
կատարած այցելությունից երեք տարի հետո։
Նույն օրը, Ս. Պատարագից ու քարոզից
հետո, Ազգընտիր Վեհափառ Հայրապետը,
բարձր գնահատելով Տ. Վազգեն վարդապե-



Տ. Վազգեն վարդապետը
պատարագում է Մայր Տաճարում

տի բազմաշխատ գործունեությունը, իր իսկ
օրհնությամբ (Եղակի դեպք Մայր Աթողում)
Ս. Էջման սեղանի առաջ շնորհում է Տ.

Վազգեն վարդապետին ծայրագունության տասը աօտիճանները:

Ծայրագունության տուշությանը ներկա էին Մայր Աթոռի ամբողջ Միաբանությունը, ժողովրդի հոծ բազմություն և Երևանից ժամանած շատ հյուրեր, որոնց թվում Ուստի միաժամանակ աշակաստանեան ճակատության կազմակերպության կամաց աշխատանքավայրը գտնված էր Քարտուղար և «Հայաստանեան ճակատ» թերթի Խմբագիր Հարություն Պապոյանը:

Ս. Վատարագից հետո Տ. Վազգեն ծայրա-

լիրի կառուցած բնակարանները թաղուամայան փոքոցի վրա, ինչպես նաև մայրագաղաքի նոր Արաբկիր, նոր Բութանիա ու Կիրզա արվարձանները: Նա շրջագայելով մոտիկից ծանոթացավ մեր մայրաքաղաքի Հակայածավալ շինարարությանը, դիտեց նորավառուցները եղավ Զանգվիթ գեղատեսիլ ձորում, ուր աշխատառում էր մանկական երկաթուղին:

Տ. Վազգեն ծայրագուն վարդապետը այցելեց նաև Մատենադարանն ու Պետական պատկերասրանը, Սունդովյանի անվան պետական դրամատիկ թատրոնում դիտեց «Խա-



Վեհափառ Հայրապետը ծայրագունության աստիճան է շնորհում

Տ. Վազգեն վարդապետին

գույն վարդապետը, առաջնորդությամբ Մայր Աթոռի ավագ լուսարար Տ. Մահմակ Հայրագուն վարդապետի, Վեհաբանում ներկայացակ Վեհափառ Հայրապետին:

Պ. Հափառը հաճեց Վեհաբանում ճաշկերությանը, որին հրամիրված էին օրվա հյուրերը և ներքանության մի քանի անդամներ՝ ճաշկերության հյուրերն այցելեցին Մայր Տաճարի թանգարանը, որտեղ թանգարանային իրերը դիտելուց հետո, այցելուների մատյանում գրեցին իրենց տպագրությունները:

Տ. Վազգեն ծայրագուն վարդապետը երեանում այցելեց Հայրենադարձ ուսմինահա-

թարալա», «Պեպո» և այլ ներկայացումներ, իսկ Ա. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի ու բալետի պետական թատրոնում դիտեց «Խանդութ» բալետը: Հայֆիլհարմոնիայի դահլիճում նա ներկա եղավ Հայկական երգի ու պարի անսամբլի, ինչպես նաև Պ. Էլսիցյանի համերգներին:

Տ. Վազգեն ծայրագուն վարդապետը եղավ նաև Գեղարդում, Զվարթնոցում ու Արզնի կուրորտում:

Հունիսի 6-ին Տ. Վազգեն ծայրագուն վարդապետը մեկնեց Ռումինիա, իր պաշտոնատեղին:

**ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՆ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻՆ ՊԱՏՎԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱՅՐ ԱԹՅՈՒԽԻՄ**



սյսի 28-ին Մայր Աթոռ ժամանեց Մոսկվայի և Համայնք Ռուսիոն Պատրիարք Նորին Ս. Օծություն Ալեքսիի պատվիրակությունը, որի կազմի մեջ մտնում էին Կաղանի թեմի Առաջնորդ Գերմոգեն Արքեպիսկոպոսը և Մոսկվայի Հոգևոր ճեմարանի ղաւախոս՝ դոցենտ ն. Դոկտորավոր:

Տ. Սահակ ծայրագույն վարդապետի գրլիսովորությամբ Մայր Աթոռի ամբողջ Միահանությունը շուրջառներով զգեստավորված հյուրերին դիմավորեց Տաճարի զանգակատան տակը. ապա հյուրերը հանդիսավորությամբ Տաճար առաջնորդվեցին, ուր Ս. Իշման սեղանի առաջ ռուսերեն լեզվով նրանց բարի գալուատ մաղթեց Տ. Սահակ ծայրագույն վարդապետը, Դիմելով հյուրերին Ս. Հայրն ասաց.—

Զերդ Բարձր Սրբազնություն և թանկադին հյուրեր, ինձ բախտ վիճակվեց Մայր Աթոռի Միահանության անունից ողջունել Զեղ այս նշանակալից օրը, հնագայուն մեր այս սրբազն Տաճարի կամարների տակ: Մայր Աթոռի Միահանությունը այսօր երշանիկ է զգում իրեն, որ այս սուրբ վայրում, ուր վեհորեն փայլում է Գրիգոր Լուսավորչի հնադարյան սրբավայրը, դիմավորում է Զեղ, Համայնքուսի Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիի պատվիրակների:

Աղոթում ենք Ամենաբարձրակային քրիստոնեական եկեղեցիների բարօրության և Սովորական Հայրենիքի բարգավաճման համար:

Մենք միշտ մեր սրտերում անմոռաց կրպահնենք Զեր Ս. Էջմիածին կատարած թանգարին այցելության հետ կապված հիշողությունները:

Բարի գալուատ, մեր թանկագին հյուրեր: Տ. Սահակ ծայրագույն վարդապետի ող-

ջունից հետո Նորին Սրբազնություն Գերմոգեն Արքեպիսկոպոսը Մոսկվայի և Համայնք Ռուսիոն Պատրիարք Ալեքսիի անունից ողջուններ և բարեմաղթություններ հաղորդեց Մայր Աթոռի Միահանությանը: Իր ողջունի խոսքն ուղղելով Միահանության անդամներին Սրբազնն ասաց.—

Զերդ Բարձրապատվություն, վարդապետ Հայրեր և դուք հոգեսր սպասավորներ Հայաստանի Լուավորիչ Ս. Գրիգորի նվիրական գանգի, թուզ տվեք Մոսկվայի և Համայնք Ռուսիոն Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիի անունից Զեղ ողջուններ ու բարեմաղթություններ հաղորդել Ռուս Ուղղափառ Եկեղեցու քույր Հայ Եկեղեցուն արժանավորությամբ սպասավորելու համար:

Դուք շնորհապարտ գործ եք կատարում, որ կապված է Միահանի Տաճարի, քրիստոնեական կուլտուրայի այս հնադարյան կոթողի, հավերժ պահպանության ու պաշտպանության հետ:

Աղոթում եմ Ամենաբարձրակային և մաղթում Զեղ, Սրբազնագույն Գևորգ Զ Կաթողիկոսի իմաստուն զեկավարությամբ, արժանավոր կերպով վարել Զեր հոգեսր գործերը ի բարօրություն Քրիստոնեական Եկեղեցու և մեր հանուլու Հայրենիքի:

Սրբազնն իր գոհունակությունը հայտնեց նաև իրենց ցուց արված սիրալիր բնունելության համար և վեղարազովկ մոտեցած ու համրուեց Ս. Իշման սեղանը:

Այնուհետև հյուրերը հանդիսավորությամբ Վեհարան առաջնորդվեցին, ուր վեհափառ Հայրապետին ներկայացան Տ. Սահակ ծայրագույն վարդապետի առաջնորդությամբ:

Վեհափառ Հայրապետը հյուրերին սիրավիր ընդունելություն ցուց տվեց: Նորին Ս. Օծությունը Սրբազն Գերմոգենի հետ ող-

շագուրվելոց հետո, ի պատիվ Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի, առաջարկեց բաղմել իր կողքը զրված հատուկ բազկաթուուի վրա:

Գերմոգեն Սրբազնը հուտնկալս հետաքրքրվեց Վեհափառ Հայրապետի առողջությամբ, և փառքանեց Աստծուն, որ Վեհափառն իրեն լիակատար առուցք ու առողջ է զգում: Ալեքսարք Հայրապետը, իր հերթին, Համեց իմանալ, թե ի՞նչպես է զգում իրեն Համայն Ռուսիո Սրբազնագույն Պատրիարքը: Գերմոգեն Սրբազնից գոհացուցիչ տեղեկություններ ստանալով, Վեհափառը երջանիկ կանք և արկշատություն մաղթեց Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիին:

Այսուհետև Գերմոգեն Սրբազնը հայտնից, որ ինքը երջանիկ է անձամբ Նորին Վեհափառությանը հաղորդելու Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի շերմագին ողջույններն ու սրտանց բարեմաղթությունները, և որ պատվիրակությունը եշմիածին է ժամանել Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիի անոնմից Նորին Ս. Օծությանը Մոսկվա հրավիրելու՝ Ռուսաց Եկեղեցու ինքնուրուցնության 500-ամյակի առթիվ սույն թվի հունիսի 8—20 Մոսկվայում կայանալիք հորելանական տոնախմբությանը ներկա գտնվելու համար Այս ասելով Սրբազնը Վեհափառին մատուցեց Ալեքսի Պատրիարքի հրավիրագիրը:

Վեհափառ Հայրապետը այս առթիվ իր գոհունակությունը հայտնից և ցանկացավ, որ պատվիրակության միջոցով նախ իր անկեղծ բարեմաղթություններն ու սրոտաբուխ ողջունները հաղորդվեն Համայն Ռուսիո Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիին, ինչպես և այն մասին, որ ինքը հաճությամբ ընդունում է Նորին Ս. Օծության հրավիրը Ռուսաց քույր Եկեղեցու ալիք մեծ ու նշանակալից տոնախմբությանը ներկա գտնվելու առթիվ:

Ապա Վեհափառը և Հյուրերը բազմում են իրենց տեղերում. Վեհափառը Ալեքսի Պատրիարքի հրավիրագիրը ընթեռնելուց հետո այսում է, որ այս հրավիրը դիտում է որպես մեծ պատիվ, արված ոչ թե իր անձի, այլ Հայության Եկեղեցու հանդեպ, և որ ինքը կը ըին անամ հավաստիացնում է պատվիրակությանը այն իր կողմից հաճուքքով ընդունելու մասին:

Սրբազնը խնդրում է Վեհափառին պատիվ անել իր հաճությունը գրավոր ևս հաղորդելու Համայն Ռուսիո Սրբազնագույն Պատրիարքին: Վեհափառը խստանում է հաջորդ օրը կատարել պատվիրակության խնդիրը, որ և կատարում է:

Այսուհետև Վեհափառի և Հյուրերի միջի տեղի է ունենում մտերմական խստակցություն Եկեղեցական խնդիրների շուրջը:

Այս պաշտոնական այցելությունից հետո Հյուրերը Սահակ ծայրագույն վարդապետի ուղեկցությամբ դիտում են Տաճարը և նրան կից Թանգարանը, ապա այցելում են Հովհոր Հեմարանը, ուր մանրամասն ծանոթանում են ճեմարանի ուսումնական ծրագրերի, ուսուցման դրվածքի, սաների կենցաղի և այլ խնդիրների հետ:

Ճաշին Հյուրերը հրավիրվում են Վեհարան, ուր ընդհանուր ճաշասեղանի շուրջը մտերմական խստակցությունները շարժակվում են Վեհափառի, Հյուրերի և ճաշին ներկա գտնվող միարանների միջև:


Երեկոյան Հյուրերը հաճոյալից արամադրության տակ Հրաժեշտ են առնում Վեհափառ Հայրապետից և մեկնում Երևան:

Հաջորդ օրը Հյուրերը ՀՍՍՌ Մինիստրների Մովեսին կից Հայ Եկեղեցու գործերի նորհրդի աջակցությամբ մեքենայով պտտում են Երևան քաղաքում և ծանոթանում մեր մայրաքաղաքի համարուն վերելքին ու շինարարությանը. այցելում են Մատենագարանը, որտեղ այցելուների մատյանում իրենց հիացմունքն են արձանագրում: Հյուրերը այցելում են նաև Արզնի կուրորտը, ուր աշխատակիցները նրանց սիրալիք ընդունելություն են ցուց տալիս. Հյուրերն այստեղ հանգային ջրի լողարան ընդունելուց և կուրորտը դիտելուց հետո, շափազանց բարձր գնահատելով բուժման գործի դրվածքը և բուժ-աշխատողների հոգատարությունը, քաղցր տապագորության տակ թողնում են Արզնին: Հյուրերի վրա մեծ տպագորություն են թողնում մասնավանդ Երևանի հոյակապ շինարարությունը, վարդագույն տներու եղերված, ծառազարդ պողոտաները, էլեկտրալուսներով ողողված հրապարակները, փողոցներն ու պուրակները:

Մայիսի 30-ին Հյուրերը Երևանից մեկնում են Մոսկվա:



Ա. ԷՉՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎԼՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ ՈՒՍՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒՄ



ուրբ էջմիածնի Հոգևոր ճեմա-
ռանը բոլորեց իր դոյլության
երրորդ տարին:

Պիտի ասել, որ ճեմարանի

ուսումնական տարին սկսվեց լավ պայման-
ներում: 1947 թվի ամառային արձակուրցնե-
րի ընթացքում նորոգվել ու կարգի էին բեր-
վել լսարաններն ու ննջասինլակները, գրա-
սեղաններն ու աթոռները, նախօրոք ձեռք
էին բերվել անհրաժեշտ քանակությամբ դա-
սագրքեր ու դրինական պիտոյքներ: Հատ-
կապես առանձին ուշադրություն էր դարձվել
սաների կենցաղային պայմանների բարե-
լավմանը. ննջասինլակների կահավորվել էին
նոր մահճակալներով, փոքրիկ պահարաննե-
րով, մաքուր անկողիններով և այլ անհրա-
ժեշտ պարագաններով, բավարար չափով լր-
րացվել էր խոհանոցի ու ճաշարանի սարքա-
վորումը ուսումնական տարվա սկզբից և եթ
սաներն ապահովվել էին հսկուառով, սպի-
տակեղենով, կոշիկներով, կրկնակոշիկնե-
րով, սրբիներով և այլն:

1947—48 ուսումնական տարում ճեմա-
ռանն ունեցել է առաջին, երկրորդ և երրորդ
դասարաններ, այսինքն ճեմարանի ծրագրով
նախատեսված լրիվ դասարանական բաժին:
Սույն ուսումնական տարվա սկզբին նոր դի-
մոնդերից կոնկուրսով ընդունվել են քան
հոգի, որոնցից մի քանիսը՝ երկրորդ և եր-
րորդ դասարաններում: Ընդունելության ժա-
մանակ Վեհափառի կարգադրությամբ առա-
վելովիում է տրվել հայրենադարձ այն երի-
տասարդներին, որոնք որբ, կիսաորբ կամ
շքավոր ընտանիքից են. այսպիսով նոր ըն-
դունվածների շարքում կարին տասը հայրե-
նադարձ երիտասարդներ, որոնք հայրենիք
էին դարձել լիբանանից, Սիրիայից և Եգիպ-
տոսից, Նախորդ տարիներում ճեմարան էին
ընդունվել ևս երկու հայրենադարձ երիտա-
սարդներ: մեկը Սիրիայից ներքաղթած,
իսկ մյուսը՝ Իրանից, ընդ որում Հոգևոր ճե-
մարանում սովորող հայրենադարձ սաների

թիվը բարձրացել էր տասներկուամ: Բացի
հայրենադարձներից ճեմարանում սովորում
են նաև եղբայրական ուսպուրլիկաներից,
ինչպես որինակ Վրաստանից, Աղբյուջանից
ու այլ վայրերից եկած սաներ:

Ճեմարանի երրորդ ուսումնական տարում
ավելացել էր նաև դասախոսների թի-
վը. հրավիրվել էին մի քանի որակյալ
նոր դասախոսներ: — Հայոց լեզվի և
գրականության դասախոս էր հրավիր-
վել երեսանի Մանկավարժական ինստի-
տուտի ասպիրանտուրան ավարտուած Ա.
Պողոսյանը, նոր շրջանի պատմության դասա-
խոս էր հրավիրվել վերոհիշյալ ինստիտուտի
ասպիրանտ Մ. Գամադելանը և Աշխարհա-
գրության դասախոս էր հրավիրվել նախկին
Գևորգյան ճեմարանն ու Թբիլիսի Գետական
համալսարանն ավարտած, երկարամյա ու
փորձառու ուսուցիչ Ռ. Ալիշանյանը, որը
միաժամանակ Հոգևոր ճեմարանում վարում
էր նաև դաստիարակ-վերակացուի պաշտոնը:

Ուսումնական տարվա ընթացքում երրորդ
դասարանում, բացի հանրակրթական առար-
կաներից, ավանդվեցին նաև հետևյալ առար-
կաները: — Ուսումն Ս. Գրոց, Կարգ Աստուա-
ծապաշտության և Քրիստոնեական վարդա-
պետություն:

Հոգևոր ճեմարանի վարչությունը ընթա-
ցիկ ուսումնական տարում մեծ ուշադրու-
թյուն է դարձել սաների ընդհանուր կրթ-
կան մակարդակի բարձրացման խնդիր-
ին: Հաշվի առնելով, որ սաների կրթական
մակարդակի բարձրացմանը, բացի դպրոցա-
կան նորմա պարապմունքներից, մեծ շա-
փով կարող են նպաստել նաև արտադպրո-
ցական պարապմունքները, սաների մեջ ինք-
նուրուն աշխատանքի հակումներ պատվա-
տելով, վարչությունը, ուսուցչական կազմի
գործոն մասնակցությամբ, տարվա ընթաց-
քում կազմակերպել է մի շարք դրական-գե-
ղարվեստական երեկությներ: այս երեկութ-

ները նվիրված են եղել մեծ մասամբ պետական, ազգային ու եկեղեցական տոներին, ինչպես նաև հայ գրական ու երաժշտական ականավոր դեմքերին, օրինակ հայ աշխարհիկ գրականության մեծ հիմնադիր, կրակոտ հայրենասեր ու լուսավորիչ Խաչատուր Արովյանին, հայ ժողովրդական երգի ու երաժշտության անզուգական վարպետ անմա՞ն Կոմիտասին և այլն։ Գրական-գեղարվեստական երեկովների նախօրյակներին եռանդուն աշխատանքի են լժկել սանհ-

երեկովներին սաները հանդես են եկել իրենց նախապատրաստած ինքնուրուց զեկուցումներով, շափածո ու արձակ սեփական ստեղծագործությունների արտասանությամբ, կամ ընթերցումով. սաներից ոմանք էլ այդ երեկովներին երգել, նվազել կամ արտասանել են։ Այսպես օրինակ սաներն իրենց ինքնուրուց զեկուցումներով, սեփական ըստեղծագործությունների արտասանությամբ ու ընթերցմամբ հանդես են եկել Մայր Աթոռը Կիլիկիայից էջմիածին փոխադրվելու



Հոգևոր նեմարանի սաները՝ նկարահան ված տարեվերջի բննուրյուններից նետու Կենտրոնում՝ Վեհափոխ Հայրապետը. նույն շարքում (ձախից աջ)՝ թ. Ա. Մուշելյան, դասախոսներ՝ Ռ. Ալիշանյան, Ա. Գիլոյան, Տ. Ավագ Թին, Բավեյան, Տ. Կարապետ Եղիսկոպոս, Տ. Սահակ Ճ. Վարդապետ, տեսուչ Մ. Միհեայան, վերակացու Տ. Կոստանդին արեղա, դասախոս Գ. Միհեայան։

Բ. Դանց տրվել են զեկուցման համար հատու թեմաներ, գրականություն և նրանք դրականության մեջ պրատումներ կատարելով ինքնուրուց կերպով մշակել են իրենց թեմաները. այս աշխատանքը մեծ հետաքրքրություն է առաջացրել սաների մեջ, ինթանելով նրանց ինքնազարգացմանը և գրականությունից օգտվելու ուսակություններ ձեռք բերելուն. Այս աշխատանքների ընթացքում վարչությունն աշխատել - է, որքան հնարավոր է, շատ սաների մասնակից դարձնել:

500-ամյակի հորելանական տոնակատարությանը, Վարդանանց տոնին, Արովյանին, Կոմիտասին նվիրված երեկովներին և այլն։ Պիտի ասել, որ այս երեկովների կազմակերպումը մեծ շափով օժանդակել է զպոցական պարապմունքներին. սաների ժողովը զգալիորեն աճել է պատասխանատվության զգացումը դասախոսների կողմից արվող հանձնարարությունները ժամանակին ու անթերի կատարելու տեսակետից։ Ճեմարանի վարչության այս նախաձեռ-

նությունը միշտ խրախուսվել ու քաջալերվել է վեհափառ Հայրապետի կողմից. նորին Ս. Օծությունը, չնայած իր բազմազբազվածության ու ալեհեր տարիքին, առենայն սիրով բարեհածել է ներկա գտնվել մի շարք գրական-գեղարվեստական երեկույթների, որոնց վերջում քանից քաջալերական ու խըրախուսիչ խոսք է ուղղել սաներին ու կազմակերպիչներին, օրհնել նրանց և գոյն սրտով մեկնել ճեմարանի դահլիճից:

Գրական-գեղարվեստական այս երեկույթներին փայլ տվողը հանդիսացել է ճեմարանի սաներից կազմված երգչախումբը, ղեկավարությամբ վաստակավոր ուսուցիչ կոմպոզիտոր Դանիել Ղազարյանի և հայ եկեղեցական երաժշտության վարպետ, Արժանապատիվ Տեր Նիկոլայոս ավագ քահանա Բավեյանի. Այս երիտասարդ երգչախումբը, շնորհիվ իր անխոնց ղեկավարներից կարճ ժամանակամիջոցում բազմաթիվ սովորական հայրենասիրական, հայ ժողովրդական երգեր ու հայ եկեղեցական մեղեդիներ է սովորել երգչախումբը իր բոլոր ելույթների ընթացքում մեծ ընդունելություն է գտել ունկընդիրների շրջանում. հատկապես նրա մասին շերմ գովեստով է արտահայտվել երաժշտական այեղարդ Հայրապետը. Երևանից ու Եջմիածնից երեկույթներին հրավիրված ունկընդիր հյուրերը և նշել են երգչախմբի կատարողական վարպետովթյունը: Երգչախմբի մեներդի ղերում հաճախ հանդես է եկել հարուստ, հնեղ ու թովիշ ձայնի տեր Արժանապատիվ Տեր Նիկողայոս ավագ քահանա Բավեյանը, արժանանաւուրվ միշտ ունկնդիրների շերմ ընդունելությանը:

Ճեմարանի երգեցիկ խոմբը, բացի գրական-գեղարվեստական երեկույթներին փայլ տալուց, առն և կիրակի օրերին Մայր Տաճարում մասնակցել է եկեղեցական արարողություններին:

Ճեմարանի վարչությունը հատուկ ուշադրություն է դարձել նաև սաների հայրենասիրական ու եկեղեցախմբի կատարողական վրա. այս նպատակով կազմակերպվել են էքսկուրսիաներ՝ սաներին թե՛ մեր հին հուշարձանների և թե՛ Երե արքի աննախընթաց վերելքի հետ ծանոթացնելու համար. — այսպես օրինակ սաները այցելել են Օշական գյուղը, ուր դիտել են հայ տառերի գյուտի մեծ ուահվիրա Մեսրոպ Մաշտոցի նվիրական դամբարանը, ինչպես և իշխան Ամատունու հուշարձանը, այցելել են Զվարթնոցը, ուր դիտել են 7-րդ դարու հայ ճարտարապետության անգույքական կոթող Զվարթնոցի տաճարի հոյակապ քանդակներն ու ավերակը, այցելել են Երևանի Պատմական թանգարանը,

ուր դիտել են հայ դարավոր կուլտուրայի խնամքով ի մի հավաքված նշխարները, երեվանում ծանոթացել են մեր հայրենիքի լուսադարձական կամաց վերելքին, դիտել են լայնարձակ հարապարակներն ու պողոտաները, գեղատեսիլ տուփակառուց շենքերը, ծխնելուզազարդ բազմաթիվ գործարաններն ու ֆաբրիկաները, հսկա նորակառուցները և ծավալուն շինարարությունը: Հայրենի հուշարձանների դիտումը և մանավանդ մեր հայրենիքի արդի ծաղկումն ու բարգավաճումը հայրենասիրական զգացմունքով էր պարուրի երիտասարդ սաների սրտերը. նրանք իրենց հպարտ էին զգում տաղանդավոր հայ ժողովրդի զավակները վնելու համար:

Վարչությունը անտես չի առել նաև սաների կուլտուրական սպասարկումը. տարվա ընթացքում կազմակերպված ձևով սաները հաճախել են կինո, թատրոն, օպերա:

Տարեկերջի քննությունները ցուց տվին, որ դասախոսների ջանքերը, սաների կատարած աշխատանքները և վարչության միջոցառումներն ու ձեռնարկումները ապարդյուն չեն անցել: Քննությունները ցուց տվին սաների կրթական մակարդակի անբաղդատելի բարձրացում. տարեկերջի քննություններին սաները ներկայացան լիովին նախապատրատված: Այդ էր պատճառը, որ մի շաբթ սաներ, թե՛ տարվա ընթացքում և թե՛ տարեկերջի քննությունների ժամանակ, իրենց ցուցաբերած լավագույն հառաջադիմության ցուցանիշների համար, Հոգևոր ճեմարանի մանկավարժական խորհրդի տրոշմամբ, արժանացան պարգևատրման: Այսպես օրինակ, պարգևատրվեցին առաջին կարգի նվերներով՝ Մարտիկյան Տիգրանը (Ա դասարանից). Աղամյան Աղամը և Հակոբյան Բարգենը (Բ դասարանից), Գևորգյան Քաջիկը, Մարտիրոսյան Խուբենը և Շահնիշյան Մկրտիչը (Գ դասարանից), Երկրորդ կարգի նվերներով՝ Քոչարյան Աթանասը և Քոչարյան Քոչարը (Բ դասարանից), Այնթափյան Փայլակը և Մարտիրյան Իգնատիոսը (Գ դասարանից). Երրորդ կարգի նվերներով՝ Եղիազարյան Հայկը (Ա դասարանից), Տերտերյան մրմենակը (Բ դասարանից), Ավագյան Նաշուտը և Հրանտը (Գ դասարանից):

Հոգևոր ճեմարանի կանքում սովորական տարին նշանակալից է հանդիսանում ոչ միայն նրա համար, որ ճեմարանը բոլորեց իր գոյության երրորդ տարին, այլև ու այս ուսումնական տարրում երրորդ դասարանի սաներն ավարտելով ճեմարանի դասարանական բաժնի դասընթացը, հաջորդ ուսումնական տարրով կիթակուսին ճեմարա-

նի լսարանական, ավելի բարձրագույն, բաժինը, ընդ որում ճեմարանի հառաջիկա ուսումնական տարրում բացվելիք լսարանական բաժինը կունենա մոտ քանի սան: Հավանական է, որ այս թիվը կամ նոր դիմողների հաշվին, քանի որ նախորդ տարիներին ճեմարանի վարչությունը շատ դիմումներ է ու ստանում միջնակարգ ու թերթի բարձրագույն կրթություն ունեցող անձերից, որոնց ըստիպված էր լինում մերժել լսարանական բաժին չունենալու հետևանքով:

ծրագրի, լսարանական բաժնի և լսարանում ավանդվելու են.

Ներածություն Հին Կտակարանի — Խորացվելի պատմության հետ միասին

Աստուածաբանություն Նոր Կտակարանի — Հիսուսի կյանքի պատմության հետ միասին

Կրոնների պատմություն

Մեկնություն Ս. Գրքի

Փիլիսոփայության պատմություն

Հայոց պատմության աղբյուրների ուսում-



Հոգևոր ճեմարանի Աղասարանի սաները մի խումբ դասախոսների հետ (ձախից աջ) առաջին շարքում՝ դասախոս Ռ. Ալիշանյան, անսուլ Մ. Մինասյան, վերակացու Կոստանդին արքուա. Երկրորդ շարքում՝ սաներ — Կարենիկյան Ռազմիկ, Ավետիսյան Սուրեն, աշատրյան Շավարշ, Գարեջան Տիգրան, Ավշարյան Մինաս, Խանջյան Հակոբ, Բուտիքյան Սարգիս. Երրորդ շարքում՝ սաներ Սղիազարյան Հայկազ, Քասիմյան Անդրանիկ, Մարտիկյան Տիգրան, Խահապետյան Կիմ:

Եթե ճեմարանի դասարանական բաժնի ուսումնական ծրագրերում, հաշվի առնելով սաների մտավոր ընդհանուր զարգացման անհրաժեշտությունը, ավելի շատ տեղ էր տրվում հանրակրթական առարկաներին, ապա այլ է լինելու պատկերը լսարանական բաժնի համար: Հստ նախատեսված ուսումնական

նասիրություն

Հայոց հին և միջնադարի գրականություն Գրաբար (մատենագրություն)

Ռուսաց յեզու և գրականություն

Անգլերեն

Ճեմարանի ծրագրով նախատեսվում է, որ նրա դասընթացն ավարտողները պետք է

զինված լինեն ոչ միայն աստուածաբանական-կրոնական ուսմունքով, այլ և հանրակըրթական գիտելիքներով:

Չորրորդ ուսումնական տարրում զգալիուրեն կաճեն ճեմարանի պահանջները: Ճեմարանի բարձրագույն լսարանական բաժնի բացման հետևանքով կաճի սաների քանակը, անհրաժեշտություն կզգացվի նոր մաս-

բարերարներ, որոնք հանձն էին առել մեկ երկու, անգամ երեք սաների ծախսերը հոգալ, սիրով կատարեցին իրենց ստանձնած պարտավորությունները, բայց ճեմարանը մնաց դարձյալ առանց նյութական կայուն բազայի: Հոգենոր ճեմարանի նման կրթական հաստատությունը պետք է ունենա իր հրադադրամը, անձեռնմխելի մի ֆոնդ, որով հը-



Հոգենոր նեմարանի Բ դասարանի սաները մի խումբ դասախոսների հետ (ձախից աջ՝ առաջին շարքում՝ երածշտագիտ Դ. Ղազարյան, տեսուչ Մ. Միհևայան, Տ. Սահակ ծ. վարդապետ, Ռ. Ալիշանյան, երկրորդ շարքում՝ սաներ՝ Գևոմաղելյան Գրիգոր, Հակոբյան Բարգեն, Սևոյան Լևոն, Գևորգյան Հարույրյան, Տերտերյան Արմենակ, Քոչարյան Արա և այլն. Երրորդ շարքում՝ սաներ՝ Շեկիլյան Գևորգ, Կարապիտյան Ռաֆիկ, Աղամյան Աղամ, Քոչարյան Քոչար:

Նագետ դասախոսներ հրավիրելու թացի այդ անհրաժեշտ կլինի կարգավորելու ու ճոխացնել գրադարան-ընթերցարանը, կազմակերպել աշխարհագրական ու պատմական կարինետներ, ֆիզիկական ու քիմիական լաբորատորիաներ: Այս և այլ բազմապիսի պահանջների բավարարման համար անհրաժեշտ է ճեմարանի համար ստեղծել կայուն նյութական բազա: Ճիշտ է, ճեմարանի գոյության երեք տարրվա ընթացքում մի շաբա-

նարավոր կլինի ապահովել նրա անխստանու հարատե գոյությունը և հնարավորությունը ընձեռնել Ս. էջմիածնի Գերագույն Հոգենոր հորիրդին ու ճեմարանի վարչությանը՝ ճեմարանը դնելու իր կոչման նախանձելի բարձրության վրա:

Հոգենոր ճեմարանի համար նյութական կայուն բազա ստեղծելու խնդիրը վաղուց ի վեր քննության առարկան է հանդիսանում մեր թեմերի հոգենոր իշխանության մարմին-

Ների: Հստա անդեկությունների այս ուղղությամբ կատարված որոշ աշխատանքներ դրական արդյունքներ են տվել. նոր բարերարներ են հանդես եկել, որոնք սիրահութարցանկություն են հայտնել սաներ որդեգրելու. Չորրորդ ուսումնական տարվա շնմֆին մենք մահճույս ենք, որ մեր ազնվասիրոտ ու ազնը-

Վեհափառ Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զին, որը երբեք չի խնայել ոչ իր թանկագին ժամանակը, ոչ իր բարոյական ու նյութական բազմապիսի օժանդակությունը, գորգուրալից ու հոգատար վերաբերմունք ցուց տալով ճեմարանի ուսումնական ու տնտեսական բոլոր հարցերի նկատմամբ:



Հոգեւոր ճեմարանի Գ դասարանի սաները՝ տեսուչ Մ. Միհեայանի և դասախոս Մ. Ավիշայանի նետ. (ձախից աջ) առաջին շարքում՝ սաներ Գայիմդարյան Անդրանիկ, Խաչատրյան Հարուրյան, Եղիազարյան Անուշա վան, Սարգսյան Գևորգ, Գևորգյան Քաջիկ. Գրիգորյան Արմենակ. Երկրորդ շարքում՝ Խաչատրյան Կարապետ, Կոստայիշյան Կամսար, Մուրադյան Գուրգին, Մարտիրոսյան Ռուբեն, Սարգսյան Սարգիս. Երրորդ շարքում՝ Այնքափյան Փայլակ, Շահինյան Մկրտիչ, Մարտիրյան Իգնատիոս, Վարույշյան Հրանտ, Գաղարյան Մովսես, Սարգսյան Գարուեն, Ավագյան Խաչիկ:

Վարչու բարերարները ջանք չեն խնայի ընդուրակությունը սպահովելու ճեմարանի հետագա գոյացությունը նրա համար կայուն նյութական բազա ստեղծելով:

Հաջողությամբ Փակելով Հոգեւոր ճեմարանի երրորդ ուսումնական տարին, ճեմարանի վարչության անունից պարտք ենք համարում մեր երախտագիտությունն ու շնորհակալությունը հայտնել Ամենայն Հայոց

Վարչության անունից խորին շնորհակալություն ենք հայտնում նաև հայ Սփյուռքի այն ազգասիր ու ազնվասիր անձանց, որոնք իրենց նյութական աջակցությամբ նպաստեցին Հոգեւոր ճեմարանի եռամյա գոյության ապահովման գործին: Հուառվ ենք, որ նրանք չթուլացնող եռանդով այսուհետև ևս կշարունակեն իրենց ուշադրության կենտրոնում պահել Հոգեւոր ճեմարանը:

ԿՈՄԻՏԱՍԱՎԱՐԴԱՊԵՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈՒՑԹ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ



ոգեսր ճեմարանի դահլիճում
մայիսի 24-ին կազմակերպվեց
երեկույթի նվիրված հայ մեծա-
նուն կոմպոզիտոր անմահ Կո-
միտաս վարդապետի երաժշտական հիաս-
քանչ ստեղծագործություններին: Երեկույթի
գեղարվեստական ղեկավարն էր Հոգեսր ճե-
մարանի երաժշտության դասախոս, կոմպո-
զիտոր Դանիել Ղազարյանը:

Երեկույթին ներկա էին Ամենայն Հայոց
Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի Միա-
բանության անդամները, ճեմարանի դասա-
խոսական կազմը, ճեմարանի սաները և էջ-
միածնից ու երեսնից հրավիրված բազմա-
թիվ հյուրեր:

Երեկույթին ներկա էին նաև թեմական
գործերով Մայր Աթոռ ժամանած Ռումինա-
հայ թեմի Առաջնորդական Փոխանորդ Տ.
Ղազին ծայրագույն վարդապետ Պալճյանը
և գործով Երևան ժամանած ոռմինահայ
«Հայաստանեան ճակատ» կազմակերպու-
թյան Կենտրոնական Վարչության ընդհանուր
քարտուղար ու «Հայաստանեան ճակատ»
Թերթի խմբադիր Հարություն Պապոյանը:

Երեկույթը բացվեց Հայկական ՍՍՌ-ի
շինուվ, որ մեծ հաջողությամբ կատարեց
ճեմարանի երգեցիկ խոմքը՝ կոմպոզիտոր
Դանիել Ղազարյանի ղեկավարությամբ:

Ճեմարանի տեսուչ Մ. Մինասյանը երե-
կույթի բացման իր խոսքում հակիրճ կերպով
նշեց այն խոշոր դերը, որ խաղացել է հայ
ժողովրդի ժողից ելած, հայ ժողովրդի երգն
ու երաժշտությունը անազարտությամբ հա-
վերժ անմահացնող մեծ կոմիտասը՝ հայ ժո-
ղովրդական երգերի հավաքման, գրառման,
մշակման ու տարածման գործում, ինչպես
նաև հայ երաժշտությունը երաժշտական աշ-
խարհին ծանոթացնելու, մատչելի դարձնելու
գործում: Բացման խոսքից հետո ճեմարանի
սաները հանդիս ելան ինքնուրույն պատ-
րաստած զեկուցումներով. լսվեցին երրորդ
դասարանի սաների հետեւալ զեկուցումները:

Կոմիտասի կյանքն ու գործներյունը
(Արմենակ Դրիգորյան).

Կոմիտասի դիրք ժողովրդական ստեղծա-
գործությունների հավաքման, գրառման ու

մշակման գործում (Ռուբեն Մարտիրոս յան).

«Կոմիտասի հասարակական գործունեու-
թյունը և նրա դերը Գևորգյան նեմարանում
(Մովսես Ղազարյան):

«Օտար երաժշտագետները և նայ հասա-
րակական-գրական գործիչները Կոմիտասի
մասին» (Քաջիկ Գևորգյան):

Կոմիտասին նվիրված ինքնուրույն բա-
նաստեղծության արտասանությամբ հանդիս
եկավ երրորդ դասարանի սան Մարտիրյան
իգնատիոսը:

Երեկույթի երկրորդ բաժինը նվիրված էր
Կոմիտասի ստեղծագործությունների և Յալ
երգերի կատարմանը: Այս բաժնում
հանդիս եկան ճեմարանի երգեցիկ
խոմքը, արևելյան երաժշտական գոր-
ծիքների վրա նվազող եռյակը և մե-
ներգեցիներն ու նվազողները: Երգեցիկ
խոմքը, կոմպոզիտոր Դանիել Ղազարյանի
ղեկավարությամբ, վարպետորեն կատարեց
«Սարերի վրավ զնաց», «Կուծն առա», «Ալա-
գազ», «Միփանա բաշեր» երգերը, ինչպես
նաև «Կալի երգը», որի կատարման ժամա-
նակ մեներգում էր ճեմարանի երգեցողու-
թյան դասախոս Տ. Նիկողայոս ալվագ քա-
հանա Բալեյյանը: Առաջին դասարանի սան,
մեներգիչ Հակոբ Խանջյանը երգեց «Միրանի
ծառ» և «Քելե, ելե» երգերը, իսկ մեներգունի
վ. Կոնատյանը «Երկինեն ամպել ա» և «Ես
ին տեսա» երգերը: Ճեմարանի երաժշտու-
թյան դասախոս կոմպոզիտոր Դանիել Ղա-
զարյանը երգեց «Բարձր սարեր» և «Մամով
աղջիկ» երգերը: Ճեմարանի երրորդ դասա-
րանի սան Շահինյան Մկրտիչը թափ վրա
նվազեց «Միծենեակ»-ը, իսկ Ա. Հովհան-
նիսյանը քամանչայի վրա նվազեց
«Կումեն»-ը: Արևելյան երաժշտական ըոր-
ծիքների վրա նվազող եռյակի (թառ, բար-
ձանշա, դասի) կատարմամբ լսվեցին «Եռ-
շիկի», «Վաղարշապահի» և «Մանգի» պարե-
զանակները: Համերգը շերմ ընդունելություն
գտավ ունկնդիմերի շրջանում:

Երեկույթի վերջում գոհումակովթյան խոսք
ասացին ոռմինահայ հյուրեր Տ. Ղազին
ժամանակույն վարդապետ Պալճյանը և «Հա-
յաստանեան ճակատ» թերթի խմբադիր Հա-
րություն Պապոյանը:

Տ. ՎԱԶԳԵՆ ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տե՛ր, թուլլ տվիք նախ Զերդ Ս. Օծովյան ներկայացնել իմ խորին շնորհակալությունն ու երախտագիտությունը, որ առիթն ընծայեցիք ինձ ներկա գտնվելու մեջն Կոմիտասի հրշատակին նվիրված սույն հանդիսության:

Տնորհակալություն և շնորհավորություն հարգելի Պ. Տեսչին, պարոնայք ուսուցիչներուն, ինչպես և սաներուն, իրենց կազմակերպած այս շատ հաջող երեկովիցին համար, որ մեզ, բոլոր ներկաներուա, տվալ և՛ հողեկան մխիթարությունն, և՛ գեղարվեստական ճշմարիտ վայելքի պահեր:

Սիրելի սաներ, իրոք իմ հայ մարդու, իմ պանդուստ հայ մարդու հոգին փոթորկեցիք դուք այսօր անուշ և ամենաշքրմ հուզումներով, ձեր խոսքով, և մանավանդ ձեր երգով: Իմ այս չերմ ապրումները ինձ հետ պիտի տանիմ, ձեր ուսմանահայ եղբայրներուն ու քույրերուն, որոնք այնքան ծարավի են մայր Հայրենիքին եկած ամեն մեկ խապրիկին ամեն մեկ ձայնին ու խոսքին:

Երեկ, Ս. Պատարագին ընթացքին, ես խոսեց այն մեծ հառաջդիմություններուն մասին, զոր տեսա մեր Հայրենիքին մեջ, և հատկապես Երևանի մեջ:

Հիրավի վերջին երեք տարիներու ընթացքին այնքան հսկայական քայլերով հառաջտարված են շինարարական աշխատանքները ամեն տեղ և ամեն մարզի մեջ, որ դրեթի անհավատավի կթվի:

Պ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՊՈՅՑԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տե՛ր, հարգելի Հյուրեր, և դուք սիրելի ոսանող եղբայրներ, որ այսօր ձեր հմտալից զեկույցներով, արտասանություններով ու երաժշտական ելույթներով պահծացուցիք հրշատավագր մեծ Կոմիտասին, շատ ձիշտ կերպով ընդգծելով այն հալածանքները, որոնց ենթարկված էր ան իր ժամանակի խալարամիտ հոգևորականներու ու ուսակցիոն իշխանություններու կողմե:

Որքան բարեբախտ եք դուք, որ այսօր կրայելեք ձեր լուսամիտ հոգերո պետի Վեհափառ Գևորգ Զ Կաթողիկոսի հայրական Հովական վորությունը և Սովետական Կառավարությունը և այնքան բարյացակամությունը: Նախկին Գևորգյան ճեմարանը, թեև հիմնը վագած որպես հոգևոր ուսումնարան, բայց, ինչպես հայտնի է ձեզ, մեր ժողովրդին տվալ

ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Բայց նույն հառաջդիմությունն ու շինարարությունը կտևսնեմ ես նաև ալստեղ՝ Ս. Էջմիածնա մեջ: Եվ ամեն բանն առաջ ալդ դուք եք, Հոգևոր ճեմարանը, որ զիս կոգելորե:

Մի մոռնաք և լավ գիտցեք թե արտասահմանի հայությունը իր ազգակցության և գգայնության բոլոր թեւերովը կապած է մեր մայր Հայրենիքին և մեր Հոգևոր կենտրոնին՝ Մայր Աթոռին հետ:

Մեր ժողովուրդը մխիթարված է այսօր և հոգեց երջանիկ, որ վերածնված ու վերաշինվող հայրենիքի մը կողքին ունինք նաև վերածնվող ու վերաշինվող եկեղեցի մը:

Այս բոլորի համար մենք անհունորեն երախտապարտ ենք մեր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի բարեխնամ կառավարության և մեր պաշտելի Վեհափառ Հայրապետին:

Ես կմաղթեմ Ձեզ, սիրելի սաներ, առողջություն, հոգվո արիություն, աշխատանքի անսպառ ուժ և աստուածային լիառատ շընորհ, որպեսզի մոտ ապագային մեջ մեր եկեղեցվո բարի մշակներն ու քաջ հովիվները դառնաք և ձեր ճիգերը խառնեք հայ ժողովրդի միասնակամ ճիգերուն, որպեսզի մեր Հայրենիքն ու Եկեղեցին աստիճան առ աստիճան բարձրանան միշտ գեպի վեր, աճեն, ծաղկեն և միշտ շեն ու պայծառ մնան:

Հաջողություն ձեզ, և ապրիք սիրելի ուսանողներ:

ՊԱՊՈՅՑԱՆԻ ԽՈՍՔԸ

Նաև բազմաթիվ աշխարհական կրթական մշակներ և մեծ բանաստեղծներ ու հեղափոխականներ:

Դուք ևս կպատրաստվիք նվիրվելու եկեղեցական ասպարեզին, բայց ինչպես անցյալին, կրնա ըլլալ, որ ձեզմեն ոմանց վիճակի դառնալ աշխարհական գործիչներ:

Դուք կգիտակցիք անշուշտ, թե մեկ կամ մյուս պարագային, ձեր ուսերում վրա կծանրանա Հայրենսասիրական պատասխանատու պարտականությունը՝ ձեր ստեղծագործական ուժերն ու երիտասարդական ամբողջ եռանդը ի սպաս դնելու մեր ժողովրդի միասնության իրականացմանը, որպեսզի համարմբվինք մեր մայրենի հողին վրա, դառնանք մեկ ժողովուրդ, մեկ ու բարգավաճ Հայրենիքով:

Առաջնորդական Փոխանորդ Տ. Վազգեն ծայրագույն վարդապետը իր հետ բերած նվերները բաշխեց ճեմարանի դասախոսներին ու սաներին:

Երեկույթից հետո հյուրերի համար համեստ թեյասեղան պատրաստվեց: Թեյասեղանին բարեհաճեց ներկա լինել Վեհափառ Հայրապետը:

Թեյասեղանից հետո նումինահայ թեմի



**ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՃԱԿԱԾ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՊՈՅԱՆԸ
ԵՐԵՎԱՆՈՒՄ**



այիսի ՀՕ-ին Թովարեստից
Երևան ժամանեց ոռմինահայ
«Հայաստանեան Ճակատ» հայ-
րենասիրական կազմակերպու-
թյան Կենտրոնական Վարչության ընդհանուր
քարտուղար և «Հայաստանեան Ճակատ»
թերթի խմբագիր Հարություն Պապոյանը:

Երևանում Հ. Պապոյանը այցելեց քաղա-
քի տեսարժան վայրերը, արդյունաբերական,
կուլտուր-լուսավորական ու գիտական հաս-
տատությունները՝ Ա. Մշանիկյանի անվան Պետական Հանրային դրադարանը, Մատե-
նադարանը, Կերպարվեստի և Պատմական
թանգարանները, Կրուպնկայացի անվան
դպրոցը, № 3 մանկապարտեզը, Պիոներների
պալատը, Վ. Մոլոտովի անվան Պետա-
կան համալսարանը, Բժշկական ինստիտու-
տը, Կոշիկի № 1 Փարբիկան, «Արարատ» գոր-
ծարանը, Ներկա եղավ Սունդուկյանի անվան
պետական դրամատիկ թատրոնի, Մատենդիար-
յանի անվան օպերայի և բալետի պետական
թատրոնի, Երաժշտական կոմեդիայի թատ-
րոնի ներկայացուամբներին և Հայֆիլհարմո-
նիայի համերգներին:

Հ. Պապոյանն այցելեց նաև ոռմինահայ
Հայրենադարձների բնակարանները, ծանո-
թացակ նրանց աշխատանքի ու կյանքի պայ-
մաններին, զրոյցներ ունեցավ բազմաթիվ
Հայրենադարձների հետ:

Հ. Պապոյանը եղավ նաև էջմիածնում, Զը-
փարթնոցում, Սկանում, Քանաքեռի հիդրո-
էլեկտրակայանով, Բերիայի ջրանի Շա-
ռոմյանի անվան կոլխոզում, Մետաքսա-

գործվածքային ու Տեքստիլ ֆաբրիկաներում,
Արգնի կուրորտում:

Հունիսի 6-ին Հ. Պապոյանը մեկնեց Ռու-
մինիա:

Մեկնելուց առաջ Հ. Պապոյանը թողեց հե-
տևյալ գրավոր տպավորությունները մա-
մուկում հրապարակելու համար:

— Ես հիացմունքով գիտեցի մեր հայ-
րենիք՝ Սովետական Հայաստանի գեղեցկու-
թյուններն ու հապարտությամբ, հոգեկան ան-
խառն հրճվանքով ծանոթացա անոր արտա-
կարգ նվաճումներուն՝ արգեստի, մշակույ-
թի, գյուղատնտեսության ու ճարտարարվես-
տի բոլոր մարզերուն մեջ:

Ես տեսա Երևանը, տեսա անոր ճարտա-
րապետական կոթողները, հայկական գեղե-
ցիկ տուփե կերտած բազմահարկ շենքերը,
օպերայի հոլակապ թատրոնը, պիոներներու-
պալատը, մանկական երկաթուղին, «Մուկ-
վա» կինո-թատրոնը:

«Եսկական եկրոպական քաղաք մը», —
պիտի ըսեին ուղիղները:

Ո՞ւ իսկական սովետական քաղաք մըն է
մեր մայրաքաղաքը: Մեծ իր ճարտարար-
վետական հսկաներով, մեծ իր գիտական-
ուսումնական բազում հիմնարկներով, ար-
դիական բուժաբաններով, հոլաշեն թատրոն-
ներով, հարուստ մատենադարանով ու թան-
գարաններով, հայկական ճարտարապետու-
թյան գլուխ-գործոց պալատներով, լայն աս-
ֆալտապատ պողոտաներով ու հրապարկնե-
րով, գեղատեսիլ այգիներով ու պարկերով:

Մեծ իր շունչով ու երկնասլաց թռիչքով:
Ես տեսա Քանաքեռի հոյաշեն հիդրոկա-
յանը, որ էւեկտրական էներգիա կմատակա-
րաբե հանրապետության արդյունաբերական
ու այլ կառուցումներում, եղա Արգնին հան-
քային շրերը: Բազմաթիվ արդիական լողա-
րաններով, բուժաբանով, բժիշկներով, մա-
քուր ննջաբաններով, կինո-թատրոններով,
ճաշարաններով օժտված արդիական բուժ-
հանդստյան կայան մրն է Արգնին, Զանգվի
մոգական գեղեցկությամբ ձորին մեջ:

Ես բազմաթիվ հանդիպումներ ունեցա ռու-
մինահայ ու նաև բուլղարահայ հայրենա-
դարձներու հետ: Այցելեցի նրանց նորակա-
ռուց բնակարանները: Տեսա նրանց իրենց
աշխատանքի վայրում: Նրանք հասեր են ի-
րենց մուրագին:

Սովետական հայրենիքի մեջ բոլոր հայ-

րենադարձները տեղավորվեր, բոլորը աշխա-
տանք ու պաշտոններ են ստացեր ու կաշխա-
տեն: Բոլոր հայրենադարձներու դպրոցահա-
սակ երեխանները կսորվին սովետական հիա-
նալի գաղոցներում, պատանիներեն շատերը
կուսանին բարձրագույն ուսումնական հաս-
տատություններում:

Հայրենադարձները, որոնցմի շատերը ուս-
ման գերազանցիկներ են արդեն, հիացմուն-
քով ու երախտագիտությամբ կդրվատեն կա-
ռավարության հոգատարությունը:

Սովետական իշխանությունը մի անգամ ևս
համոզեց ինձ, որ ինչպես երեկ, նույնպիս և
այսօր իզուր պիտի անցնին իմպերիալիստ-
ներու հետպատերազմյան բոլոր գալարում-
ներն ու դավադրական ծրագիրները: Վերջ-
նական հաղթանակը պիտի մնա սովետական
ու առաջադիմական ժողովուրդներու կողմը:

ՀԱՅ. ՊԱՊՈՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆՑՑՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՍՓՅՈՒՌԻ ՄԵԶ

ԿԻԼԻԿԻՈ ՎԵՀԱՓՍՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի ԾԱՆԴՅԱՆ ՅՈՒՄՑԱ ՀՈՐԵԼՅԱՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՄԵԶ

Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Հայրապետի՝ Գարեգին Ա-ի ծննդյան 80-ամյակի առթիվ, «Ճրանսայի Կիլիկեան Հայերու Միութիւն»-ը մտադիր է հանդիսավորապես տոնել այդ հոգնավաստակ հայ եկեղեցականին կրոնական, հայրենասիրական և մշշակութային բազմամյա մեծարժեք գործու-

նեության հոբելյանը: Ներկայիս կազմակերպում է կարգադիր մարմին մը, որը պիտի սարքե այդ հանդեսը:

Հոբելյանին տոնախմբումը տեղի պիտի ունենա Սորպոնի մեծ ամփիթատրոնին մեջ հունիս 5-ին:

(«Ժողովուրդ», 1 ապրիլ, 1948 թ.)

ԱՐՏԱՎԱԶԴ ՍՅՈՒՐԵՑՑԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՔԱՌԱՆԱՄՑԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՈՐԵԼՅԱՆԸ

Նախաձեռնությամբ նորին Սրբազնության նախկին աշակերտներեն ոմանցո վերջերս Փարիզի մեջ կազմվեցավ Կարգադիր Հանձնախոմը մը, տոնելու համար Կաթողիկոսական պատվիրակ Արտավազդ Սյուրմեյան Սրբեպիսկոպոսի ուսուցչական ու գրա-

կան գործունեության քառասնամյա և եկեղեցական գործունեության երեսնամյա հոբելյանը:

Կարգադիր Հանձնախոմը որոշած է հոբելյանի հանդեսը կատարել հոկտեմբերի 17-ին, Սորպոնի մեծ ամփիթատրոնին մեջ:

(«Ժողովուրդ» 1 ապրիլ 1948 թ.)

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՍԻՍԵՆ ԷՇՄԻԱՌԻՆ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ 500-ԱՍՅԱԿԻ ՀԱՆԴԵՍԸ ՆՅՈՒ-ՅՈՐԳՈՒՄ

Համաձայն Վեհափառ Տ. Տ. Գևորգ Զ Հայրապետի հրահանգին, նյու-Յորքի մեջ ևս տեղի ունեցավ Հայրապետական Աթոռի Սիսեն Էջմիածին, փոխադրության 500-ամյակի հանդես, դեկտեմբեր 14-ին: Այդ առթիվ Առաջնորդարանի Օժանդակ, Տիկնանց Միությունը վարձած էր Սընթրը Հայ Սքուլ ավ նիտըլ Թրեյտողի սրահը, ուր Առաջնորդ Շոր նախագահությամբ հանդեսը բացավ օրվան ատենապետ Տիկը Հ. Ավագյան: Գըրավոր ուսումնասիրությամբ մը Անդրանիկ Սրկ. Աշճյան ամփոփ վերաքաղը ըրավ Հայ Եկեղեցվո պատմության, Ս. Էջմիածնի շինութիւննեն մինչև 1441 թիականը, տալով Հայրապետական Աթոռի դանաղան տեղա-

փոխությանց պարագաները, ու պարզելով այն պատճառները, որոնք անհրաժեշտ դարձուցին Աթոռին Կիլիկիային ետ՝ իր պատմական կեղրոնը՝ Էջմիածին—բերվիլլ ասկե հինգ հայրուր տարի առաջ: Էջմիածնի պատմական դերն ու համազգային արժեքը վեր հանեց Մինաս Սրկ. Գասպարյան, ուղերձով մը:

Գեղարքվեստական բաժնին իրենց մասնակցությունը բերին նորթ Ֆիլատելիկո եկեղեցվուն Դպրաց Դասի երկան անդամները, որոնք այս առթիվ իրենց հովիլ Հոդ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկյանի առաջնորդությամբ խմբովն եկան նյու-Յորք ու հանդեսին փայլ դեկին մեկն ավելի խմբերդե-

րով, որոնց կարգին «Ով մեծասպանշ»-ը և «Եղ Միածին»-ը, խոսմբեն Օր. Ազնիվ Մեշշեցյան արտասանեց Հ. Թումանյանի «Հուսափորչի կանթեղը»։ Արտասահմանեն նոր ժամանած Օր. Ա. Պատիկյան ըրավ մեներգ-ներ՝ ինչպես «Տեր ողորմյա» և «Տեր կեցո»։

Առաջնորդ Տ. Տիրան Սրբազն Հայրը իր փակման խոսքին մեջ շեշտեց Աթոռի փոխադրության այս տարեղարձը տոնելու ուղղման նշանակալից ըլլալու հանգամանքը, Պարզապես օրացուցի մեջ պատահարար գտնված տարեղարձ մը չէ այս որ կը տոնվի։ Մեր օրերու Հայ իրականության մեջ պատահական նշանակություն ունեցող խոշոր եղելության մը— Հայրենադարձի— զուգահեռ զեպք մը՞ է հինգ հարյուր տարի առաջ Հայրապետական Աթոռին Սիսեն Էջմիածին վերադարձը։ Այդ օրերուն, Հայ եկեղեցվո հոգևոր պետին Աթոռը, զանազան թափառումների վերջ ապաստանած Կիլի-

կիա, հեռու Ս. Էջմիածնի պատմական ւրբավայրին, ինկած էր հետզհետե կաթոլիկ-ներու այլասերիչ ազգեցության տակ ու իր հարազատությունը կորսնցնելու վտանգին տակ էր։ Արևելյան Հայաստանի հարազատ հողին վրա գործող հայ վանականները տեսան այդ վտանգը ու 1441-ի պատմական որոշումով տուն կանչեցին Հայոց Հայրապետության տարագիր Աթոռը։ Այդ նշանավոր եղելությունը տարբեր երեսի վրա իր-կըրկնվի այժմ, այդ օրերին հինգ հայրյուր տարի վերջ, երբ մեր Հայրենիքն ու Ս. Էջմիածինը դեպի տուն վերադարձի հրավեր կուղին ի սիյուս աշխարհի ցրված հայության բեկորներուն։ Գեր. Տ. Տիրան եպիսկոպոս էջմիածնի ճեմարանին ի նպաստ ընտանեկան նվերներ գոյացնելու կոչ ըրավ ներկաներուն ու անոնց միջոցավ նյութորդի հայության և «Պահպանիշ»-ով փակեց հանգեստը։

(«Հայաստանեայց նկեղեցի» Համալար 1948 թ.)

ԳԵՐԱՊԱՏԻՎ ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ ՄԱՅԵՍԻՒ ՄԵԶ

Տ. Տիրան եպիսկոպոս Հետևանք տալով մայիմիցիցիներու խնդրանքին՝ գալ և Վարդանանց տոնին առթիվ Ս. Պատարագ մատուցանել, փետրվար 12-ին մինչև 19-ը եղավ մեզ հետ՝ ընկերակցությամբ Ֆիլատելիքի հովիկ Տ. Թորգոմ վարդապետի։

Ս. Պատարագը մատուցվեց, Պ. Հարություն Զաքարյանի շնորհիվ, սիրահոժար տրամադրված եպիսկոպոսական նկեղեցիին մեջ։ Արարողության ամբողջ տևողության նույն եկեղեցվո 30 հոգին բաղկացած կարող երկսեռ երգչախոմմբը ամենայն հարազատությամբ քառաձայն երգեց ներմայանի պատարագը՝ զեկավարությամբ Պ. Արամ Չարբգյանի և մասնակցությամբ քանի մը բալցրածայն հայ տիկիններու և այրերու Կարելի չէր ըսել օտար երգչախոմմբ մըն էր երգուր, այնքան ներդաշնակ էր և տպակարիչ։

Եպազանը զանազան երեկությներու մեջ երենք հայերեն, երեմն անգլերեն խոսեց գործութիւն և օր մըն ալ մասնավորապես երիտասարդ սերունդին, իրենց պատականություններու մասին իրեն հայ և հավատացյալ։

Մասնավոր հավաքույթի մը մեջ խոսեցավ կրոնական համայնքի կազմակերպության պետքին մասին և հրահանդից Մայիմի մեջ հառուցանել սեփական եկեղեցի։ Առաջարկին անմիջապես արձագանք տվակ գործը և բացիցցավ հանգանակությունը։ Մեկ ժամվան մեջ գոյացավ ոչ միայն մոտ 2000 տոլար, այլ և եղան հանձնառություններ, որոնք ապահովեցին կառուցվելիք եկեղեցիին գետինը, լավ երգեհոն մը, գծագրությունները ճարտարապետի կողմէ, խորանին, տանիքին, մկրտության ավազանին ամբողջական ծախքերը, ներսի և դուրսի պատերուն ներկը, էլեկտրական կազմածներն ու անոնց զետեղումը, պետք եղած պատկերները։ Գործը արդեն մեծ շափով իրականացած համարվեցավ և կազմիցցավ մասնավոր հանձնախումբ։

Սրբազնը կատարեց նաև մկրտություններ և մեկնեցավ իր հետ տանելով ամենքիս անվերապահ համակրությունն ու հարգանքը, վստահ թե հառաջիկա տարին պիտի գա եկեղեցվո շենքին հիմնարկեքը կատարելու։

Մ. Տ. Ս.

(«Հայաստանի կոշեակ» 20 մարտ 1948 թ.)

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՈՒԽՏԻ ՕՐԸ

Երջանկահիշատակ Սահակ և Թարգեն կաթողիկոսներու կոնդակով Ս. Գրիգոր Լուսավորչի Վիրապամուտի տոնը հոչակաված է Անթիլիասի Ուխտի օր 1931-ին ի վեր։

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս տեղի ունեցավ Անթիլիասի Ուխտի օրը 14 մարտ 1948։

Հանդիսությունները սկսան 12 մարտ երե-

կոյան։ Վեհափառ Հայրապետը նախագահ-
էց նախատոնակին, իր շուրջն ունենալով
եպիսկոպոս ու վարդապետ միաբանները։

Հաջորդ օր, շաբաթ, մատուցվեցավ Ս.
Պատարագ։ ՀոգԶ. Տ. Խորեն վարդապետ պա-
տարագեց, իսկ Դարեկվանքը փակ մնաց՝ ի
հարգանս Մեծ Խուրին։

Երեկոյան տեղի ունեցան Հսկում և Առա-
վայրան ժամերգություն մինչև Հաց։ Մաս
մը ուխտավորներ, որոնք վանք գիշերեցին,
ներկա էին Հսկում-ի արարողության։

Ուստի օրը պատարագելու և քարոզելու
համար հրավիրված էր Հալեպի Ս. Առաջ-
նորդը, Գերշ. Տ. Ջարեհ եպիսկոպոս Փա-
յասվան։

Գերաշնորհ Սրբազնը հանդիսավորապես
պատարագեց և քարոզեց ավովք պատշաճի։

Առավոտյան պաշտամունքը կատարվե-
ցավ Մայր Տաճարին մեջ, նախագահու-

թյամբ Ն. Ս. Օծություն Տ. Տ. Դարեկվին և
Կաթողիկոսի։

Հավարտ Ս. Պատարագի, տեղի ունեցավ
Հայրապետական Մադրանք և Աղոք Հայ
եկեղեցվո անսասանության և Նվիրապետա-
կան Աթուներու անշարժության և զույդ
Հայրապետներու արևշատության համար։

Ապա կազմվեցավ Աղերու ավանդական
թափորը հանդիսավետությամբ Վեհափառ
Կաթողիկոսին։

Երբ շարժեցավ թափորը, հուզիչ էր տես-
նել ուխտավորներու շերմեռանդությունը
հանդեպ պատմական սրբությանց։

Թափորը սկսավ Մայր Տաճարեն, անցավ
ընդարձակ բակին մեջեն և կրկին մտավ Տա-
ճար։

Վեհափառը լուսավորվ Ս. Աջով օրնեց
ուխտավորները և բարգավաճում մաղթեց
գեղեցիկ կիրանանին։

(«Հասկ» մարտ 1948 թ.)





ՀԱՅՐԵՆԻ ՀԱՐԱԶԱՏ ՀՈՂԻ ՎՐԱ

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԿԻՐԱՎԱԿԱՆ. — Բնակարանային շինարարության համար Քաղսովետի գործկոմը մոտ 250 հայրենադարձների ընտանիքների հատկացրել է հողամաս։ Շուտով շահագործման հիմնանվեն քաղաքի կենտրոնական փողոցի վրա կառուցված երկհարկանի շենքերը։

Միայն քաղաքի հարավարևելյան մա-

սում, Կիրովականից՝ Դիլիջան տանող խրճուղու աջ կողմում, գեղատեսիլ վայրում կառուցվում են հայրենադարձ հայերի համար մոտ 180 բնակարաններ։ Այդ տեղամասում 70 բնակարանների շինարարությունն արդեն ավարտված է։ Գրեթե բոլոր հորաշեն տներում վառվում են էլեկտրական լամպեր, դրվում են ռադիո-բարձրախոսներ։



ՀՈԿՏԵՄԲԵՐՑԱՆ — Հոկտեմբերյանի Քաղսովետի գործկոմի կոմունալ բաժինը հայրենադարձների համար կառուցում է երկհարկանի բնակելի շենք, որի առաջին

հարկի քարային աշխատանքներն արդեն ավարտվել են։ Շենքը ունենալու է 40 բնակարան իր բոլոր հարմարություններով։



Երևան քաղաքի Ստալինյան ռայոնում, Թումանյանի անվան դպրոցի մոտ, հայրենադարձ հայերի համար երկու բնակելի տուն է կառուցվում։ Տները ունենալու Լն

12-ական բնակարաններ և շահագործման են հանձնվելու սույն տարվա օգոստոսի 1-ին։

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԸ ԿՈՌԻՑՈՒՄ ԵՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ

Ստեփանավան քաղաքում ապրող հայրենադարձ հայերի անհատական բնակարանային շինարարության համար պետությունը բացել մեկ միլիոն 120 հազար

տուբլու վարկ։ 40 հայրենադարձ ընտանիքներ արդեն ստացել են վարկեր և ձեռնարկել սեփական բնակարանների շինարարությանը։



Դիլիջանի մոտակայքում, գեղադիր սոճի անտառում հայրենադարձ հայերի համար բնակելի տներ են կառուցվում։ Առաջին երեք տները արդեն բնակության են հանձնված։ Մնացած 11 երկհարկանի տների

կառուցումն ավարտելու համար կառուցողները պետությունից 30-հազարական ուուլի երկարատև վարկ են ստացել. այդ տների կառուցման աշխատանքները կավարտվեն մայիսի վերջին։ Շուտով կսկսվի 25 նոր տների շինարարությունը։



ԾԱՄԾԱԴԻՆ. — Արտասահմանից Հայրենիք վերադարձած հայերին բնակարանային

շինարարության գործում օգնելու նպատակով. Պետրանիկի շրջանային բաժանմունքը

18 Հայրենադարձների տվել է 227 համար ոռութիւն վարկ: Բերդ, Թովուու և Պառավաքար գյուղերի նորակառուց բնակարաններում արդեն ապրում են մի շարք ընտանիքներ: Ֆերմենտացիոն ֆաբրիկայում աշխատող

4 Հայրենադարձներ նախապատրաստական աշխատանք են կատարում բանվորական ավանում կառուցելու իրենց սեփական բնակարանները:

2818 ՍԵՆՅԱԿ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայրենադարձ Հայերի համար կառուցվող տների շինարարական աշխատանքների զգալի մասը կատարվում է ուսուպութիւնական մինիստրությունների և պետական այլ կազմակերպությունների կողմից, որոնք հայրենադարձության սկզբից մինչև 1948 թվի հունիսի 1-ը կառուցել ու շահագործման հն հանձնել 2818 սենյակ: Տեղա-

կան արդյունաբերության մինիստրությունը, երբազսովետը, Խճուղային վարչությունը և մի քանի այլ կազմակերպություններ, ինչպես անցյալ տարիներում, այնպես էլ այս տարի հատուկ ուշադրություն են դարձնում հայրենադարձների համար տներ կառուցելու աշխատանքներին:

ՆՈՐ ՇԵՆՔԵՐ

Ա.ԱՎԵՐԻԴԻ: — Համբուղի բանվորական ավանում այս տարի կառուցվում են բնակելի երկհարկանի երեք՝ շենք՝ յուրաքանչյուրը 4 ընտանիքի: Համար: Շենքերից մեջի կառուցումն ավարտվելու վրա է, մյուս-

ների կառուցումը նույնպես սկսված է և կավարտվի այս տարի:

Նոր շենքերը բաշխվելու են հայրենադարձների և բանվորների ընտանիքներին:

ՄԵԾ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԽՆԴԻՐ

Մայրաքաղաքի «Կոմունիստական» թերթի թրցակիցը դիմել է ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Վերաբնակեցման Վարչության պետ Գ. Գևորգյանին հետևյալ հարցով: — «Արտասահմանից հայրենիք վերադարձող հայերին տեղավորելու համար ընթացիկ տարում ուսուպութիւնակայում ի՞նչ ծագված ունի բնակարանային շինարարությունը»:

Են ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ճարտարապետության գործերի վարչության կողմից: Դրանք բարեկարգ, երեք և երկսենյակային տներ են՝ իրենց հարմարություններով: Յուրաքանչյուր տուն ունի իր տնամերձ հողամասը՝ եզմիածնի և Վեցու շրջանների ավաններում կազմակերպվել են կոլխոզներ: Այսուեղ կառուցվում են նաև դպրոցներ, բոժարաններ և այլ շենքեր:

Ենսպութիւնակայի քաղաքներում ընթացիկ տարում անհատական կարգով պետք է կառուցվեն 6914 տուն: Առ 15 մայիսի ավարտվել է 135 տան կառուցումը և շարունակվում է 4117 տան կառուցումը: Առ 30 մայիսի ավարտվել են 2054 տան կառուցման քարային աշխատանքները: 1947 թվին անհատական կարգով կառուցվել են 1168 տուն:

Ենսպութիւնակայի կոլխոզներում հայրենադարձության սկզբից սկսած կառուցվել են 1060 տուն, ներկայումս կառուցվում են 982 տուն:

Կառուցող կազմակերպությունները, — եղբայրակման ժամանակ ասաց Գ. Գևորգյանը, — ունեն բոլոր հնարավորությունները ամառային շինարարական ժամանակաշրջանը հաջողությամբ ավարտելու և ընթացիկ տարում հայրենադարձներին հազարավոր բարեկարգ նոր բնակարաններ տրամադրելու համար:

Եզմիածնի, Վեդու, ինչպես նաև Բերիայի անվան շրջաններում գտնվող ութը ավաններում անցած երկու տարում կառուցվել է 183 տուն: Հստ պլանի 1948 թվին պետք է կառուցվի 918 տուն, որոնցից 60-ը արդեն պատրաստ են, իսկ մնացած 736 տները շինարարության պրոցեսում են գտնվում: Հայրենադարձ հայերի համար կառուցվող տների օրինակելի նախադերը հաստատվել

է Հայրենադարձների նախապատրաստական աշխատանքներում գործարական կառուցվել է 183 տուն: Հստ պլանի 1948 թվին պետք է կառուցվի 918 տուն, որոնցից 60-ը արդեն պատրաստ են, իսկ մնացած 736 տները շինարարության պրոցեսում են գտնվում: Հայրենադարձ հայերի համար կառուցվող տների օրինակելի նախադերը հաստատվել

ՆՈՐ ԿՅԱՆՔ ԳՅՈՒՂՈՒՄ

Վեհի. — Անցյալ տարում արտասահմանից հայրենիք վերադարձած հարյուրափոր հայրենադարձ ընտանիքներ բնակություն են հաստատել նոր կյանք գյուղում։ Սովորական այս նոր քաղաքացիների համար

գյուղում կառուցվել է 100-ից ավելի տուն։

Վերջերս գյուղում հեռախոսագիծ անցկացեց, որով գյուղը կապվում է շրջկենտրոնի հետ։ Կոլխոզի նոր անդամների 120 բնակարաններում բարձրախոսներ են դրվում։

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐԸ

Հայրենադարձ Արքահամ Օհանյանը անցյալ տարի բարձր բերք աճեցրեց կոլխոզային դաշտերում և արժանացավ մեծ պարգմի։ ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահությունը ուստափակայի գյուղատքներում առաջավորների հետ նրան ևս պարգմատրեց «Աշխատանքային Կարմիր Դրոշի» շքանշանով։ Օրերս ճաթղուան

գյուղի կոլխոզնիկների ժողովով հանդեմ գալով, նա պարտավորություն ստանձնեց այս տարի ամենի բարձր բերքատվության հասնելու։ Այժմ նա հացահատիկային կուտարանների մշակությունը կազմակերպում է այնպես, որ անթերի կատարի իր պարտավորությունը։

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ԷՆՏՈՒԶԻԱՍՏՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔ

Հայրենադարձ Թավիթ Բալյանը Սիրիայից վերադառնալով հայրենի երկիր, Սովորական Հայաստան, աշխատանքի տեղափողեց ստալինյան հնգամյակի նորակառուցներից մեկում։ Վերցնելով քարտաշորմնադիրի մուրճն ու գործիքները, նա հենց առաջին օրերից եռանդով լծվեց արտադրական պլանների կատարմանը։

Հետևելով իր ստախանովական ընկերների հայրենասիրական օրինակին, նա 1947 թվին կատարեց 2 տարվա արտադրական նորմա։ Բայց դա չէր բավարարում էնտուզիաստ ստախանովականին։ Նա նոր ուղիներ և միջոցներ էր որոնում արտադրողականությունը բարձրացնելու, շինարարության տեմպերն աբագացնելու, նորակառուցը ժամկետից շուտ գործարկելու համար և 1948 թվի տարեսկզբից սկսեց աշխատել ամենի կազմակերպված ու բազմապատկված եռանդով։ Նրա մուրճի հարկածները գարձան ավելի հատու և արագ։ Միա-

ժամանակ Բալյանը քարտաշորմնադիրի արհեստը սովորեցրեց նաև իր որդի Սարգսին և հայր ու որդի, մրցելով միմյանց հետ, սկսեցին օրը-օրին բարձրացնել իրենց ցուցանիշները, նպաստել նորակառուցի արտադրական հացողություններին։ Այժմ նրանք օրական պլանները կատարում են ոչ պակաս քան 250-300 տոկոսով։

Ահա թե ինչու կառուցող հայր ու որդի Բալյանների նկարները երկար ժամանակ է ինչ փակցված է նորակառուցի բնակարանային շինարարության տեղամասի պատվո տախտակի վրա։ Նրանցից ետ չի մնում նաև կրտսեր որդի թորոս Բալյանը, որը աշխատում է նորակառուցի ավտոպարկում որպես մեխանիկ և իր նվիրված աշխատանքով նվաճել է կոլեկտիվի սերն ու համակրանքը։ Հայրենադարձ Բալյանները մտնելով ստալինյան նոր հնգամյակի անվան սոցիալիստական մրցության մեջ, պայքարում են իրենց հնգամյա պլանները 3-3,5 տարում կատարելու համար։

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐ

Քաջարանշինի կառուցողները արագ թափով առաջ են տանում ստալինյան նոր հնգամյակի նորակառուցներից մեկի շինարարությունը։ Այստեղ ժրաշան աշխատանք են կատարում տասնյակ սովետական նոր քաղաքացիներ։ Հայրենադարձներից շատերը կարճ ժամանակամիջոցում տիրապետեցին արտադրության տարրեր մասնադիտությունների։ Նրանք իրենց ազնիվ աշ-

խատանքով նվաճեցին շինարարության աշխատողների սերն ու հարգանքը։ Ժիրայր և Երվանդ Դերեցյան եղբայրները հայրենիք վերադարձան Սիրիայից և կարճ ժամանակամիջոցում տիրապետեցին փականագործի պրոֆեսիային։ Այժմ նրանք միշտ գերակատարում են առաջադրանքները։ Հայրենադարձներ Հայկազ Մուայելյանը, Մամիկոն Հակոբյանը, Ավետիք Մարգարյանը

աշխատում են որպես ավտոմեքենավարներ և անխափան կերպով շինանյութ են տեղափոխում նորակառուցի համար:

Հայրենադարձ բանվորները Հովակիմ Ռուխյանը, Հարովյուն Ղուկասյանը և Գաբրիել Կոնստանդյանը մրցելով միմեանց

հետ, պլանը կատարում են 250 տոկոսով: Բարձր արտադրողականության ուսանելի օրինակներ են տալիս շինարարության մեջ աշխատող հայրենադարձ որմնագիրները, հյուաները, ծեփադործները և այլ պրոֆեսիայի աշխատողները:

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ԳՈՐԳԱԳՈՐԾՆԵՐԸ

ԱՐՏԱՇԱՏ. — Դորգագործական արտելի նովրզլուի և Յուվայի բաժանմունքներում աշխատում են 36 հայրենադարձ կանայք: Նրանց համար ստեղծված են աշխատանքի լավագույն պայմաններ, շատերը պարբերաբար գերակատարում են իրենց օրվա ու ամսվա առաջարանքները:

Այս տարվա առաջին եռամսյակում նով-

րզլուի դորգագործները պետությանը հանձնել են 90 քառակուսի մետր բարձրորակ գորգ:

Աշխատանքը լավ է կազմակերպված նաև Յուվայում: Այստեղ Գ. Բախտավորյանը, Մ. Ավետիսյանը, Թ. Կարապետյանը, Գ. Ավետյանը օրական կատարում են մեկ ու կեսից մինչև երկու արտադրական նորմա:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՊԵՏԸ

Հազարավոր հայրենադարձների հետ իր Հայրենիքը՝ Սովետական Հայաստան վերադարձայ 67-ամյա Միսակ Աբելյանը: Սիրիայում, չնայած իր մեծ ձգտմանը արվեստով զբաղվելու, նա հարկադրված էր աշխատելու որպես օժանդակ բանվոր: Մեծ կարիքի մեջ էր ապրում նրա ընտանիքը, բայց չնայած դրան, արվեստի հանդեպ ունեցած սերը երբեք չի մարել նրա հոգում: Դեռ 1937 թվին, օտարության մեջ Մ. Աբելյանը, ի պատիվ Հոկտեմբերյան Մեծ Ռեպուլիցիայի 20-ամյակի, գործեց նրբաճյուղ մի գորգ, որի վրա պատկերված է մեծ Ստալինը՝ Սովետական Միության բոլոր ազգությունների բանվորներով շրջապատված: Այդ գորգը կախված էր աշբի ընկնող տեղում «Պորեդա» նավի տախտակամածի վրա, որով Հայրենիք էր վերադառնում Մ. Աբելյանը:

Սովետական Հայաստանում Մ. Աբելյանը լայնորեն ծավալեց իր ստեղծագործական գործունեությունը, այստեղ նա ափառեց դեռևս Սիրիայում սկսած իր մի գործը — պլաստմասսայի վրա փորագրված է Հայրենիք ուղևորվող մի խումբ հայերի պատկերը՝ թերութի նավահանգստի Փոնի վրա: Հայաստան վերադառնալուց հետո վարպետը պատկերել է վերածնված Հայաստանի կյանքից առանձին մոմենտներ: Պատրաստել է գորգի հայտագրի էսքիզ:

պլաստմասսայի վրա փորագրել է Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմային վերաբերող իլլուստրացիաներ: Այս փորագրությունը օժանդակ է նույր օրնամենտով և մանրանկարներով:

Իր հարազատ ժողովրդին չերժ սիրող հայ մեծանուն գրող Խաչատրու Արովյանի կերպարը Մ. Աբելյանը պատկերել է պըլաստմասսայի վրա արված փորագրությամբ: Այստեղ Արովյանը պատկերված է գյուղացիների միջավայրում՝ Քանաքեռի ֆոնի վրա:

Ժողովրդական վարպետի այս բոլոր աշխատանքները ցուցադրվել են կիրառական արվեստի և կերպարվեստի ինքնուա վարպետների Մոսկվայում մայիսի վերջին բացված համամիութենական ցուցահանդեսում: Մոսկվայի թերթերը մեծ գովեստով են արտահայտվում ժողովրդական ստեղծագործության վարպետի ցուցադրած աշխատանքների մասին: «Պրավդա»-ն գրում է: «Խակական վարպետության է համար պըլաստմասսայի վրա կատարված փորագրությունը, որը աշխատանքն է Մ. Աբելյանի, սովետական այս նոր քաղաքացու, որը վերջին է վերադարձել արտասահմանից հայրենի Հայաստան»:

Ներկայումս Մ. Աբելյանը աշխատում է Հայրենական Մեծ Պատերազմի թեմայով «Պարտիզանները հարձակվում են» փորագրության վրա:

ՎԵՐԱՄՆՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ

Ժողովրդական ստեղծագործության հայտնի վարպետ, արծաթագործ-փորագրիչ Գայրինադարձ Հրաչյա Ստեփանյանը ավարտել է ուշբաժնված Հայաստան» փորագրությունը։ Արծաթյա տախտակի վրա նա փորագրել է Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներն արտահայտող նկարներ՝ Հայաստանի արդյունաբերությունը, էլեկտրիֆիկացիան, կուտուրան, արվեստը և այլն։

Տախտակի վերևի մասում պատրաստված է ժողովուրդների առաջնորդ մեծ Ստալինի նկարը մարշալական զգեստով, աչ կողմը պատկերված է Լենինի հուշարձանը Երևանում։ Հետին պլանում երևում են Արարատների գագաթները և խաղողի փարթամ այգիներով ծածկված հովիտ։ Ներքեւում փորագրված են Հիդրոէլեկտրակայանի պատնեշը, կարբիդի գործարանի վառարանները, պղինձ ձուլող բանվորի կերպարը պղնձաձուլական գործարանի փոնի վրա, կոլխոզային դաշտը, մայրաքաղաքի բնակելի շենքերի վիթխարի կորպուսները։

Արծաթյա տախտակի շրջանակի վրա

փորագրված են Հայկական գեղեցիկ օրնամենտներ և յուրաքանչյուրի արանքում սոցիալիստական շինարարության լավագույն կառուցրամներից նմուշներ, ինչպես օրինակ Կառավարական Տունը, Գրքի պալատը, Հանրային գրադարանի շենքը, Պետական օպերայի շենքը, Ստ. Շահումյանի, Խ. Արովյանի, Դ. Ղուկասյանի հուշարձանները և այլն։

Սույն փորագրության վրա անվանի վարպետը գեղեցիկ տառերով փորագրել է մեծ Ստալինի հոչակավոր խոսքերը Հայաստանի մասին. «Միայն սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն»։

Հ. Ստեփանյանը այս գործը հանձնել է ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արվեստի գործերի վարչության ժողովրդական ստեղծագործության Տանը՝ Մոսկվայում կազմակերպվելիք կիրառական արվեստի և կերպարվեստի ինքնուս վարպետների համամիութենական ցուցահանդեսում ցուցադրելու համար։



ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՌԻԴԻՌՎ

ՀԱՅԵՐԻ ՄԻ ԽՄԲԻ ՄԵԿՆՈՒՄԸ ՌՈՒՍԻՆԻԱՅԻՑ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԲՈՒԽԱԲՐԵՍՏ, 20 հունիսի (ՏԱՍՍ).— Թերթիկ հաղորդագրությամբ երեկ Կոնստանցայից «Պոբեդա» շերմանավով Սովետական Հայաստան մեկնեց ոռոմինահայերի երկրորդ մեծ խոմքը. Զերմանավը մեկնելուց առաջ նավահանգստով տեղի ունեցավ մեկնող հայերի և Կոնստանցայի բնակչության բազմահազար միտինդ:

Ճառերով հանդես եկան «Հայաստանի ճակատ» գեմոկրատական հայկական կազմակերպության նախագահ Դանիելյանը, Կոնստանցա քաղաքի քաղաքավորսի Դումիտրու Բերսանեսկոն, Ռումինիայում հայկական թեմի ղեկավար Վազգեն վարդապետը:

Սովետական դեսպանության անոնից մեկնողներին, նրանց սովետական քաղաքացիություն ստանալու առթիվ, շնորհավորեց Ռումինիայում Սովետական Միության գլ-

խավոր հյուպատոսու էլեկտրովը: Միտինգում ընթերցվեց մեկնող հայերի դիմումը ոռոմինական ժողովրդին: Այդ դիմումի մեջ ի միջի ալլոց ասված է. «Մենք թուրքական գաղանային զարդերից հետո կենդանի մնացած և մեր թանկագին հայրենիքը վերադարձող հայերս երբեք չենք մոռանա եղբայրական այն ըմբռնումը, որ մեր նկատմամբ ցուցաբերեց ոռոմինական ժողովուրդը»:

Միտինգում ներկա եղողների բուռն օվացիայի ներքո ի պատիվ Գեներալիսսիմու ընկեր Ստալինի և սովետական ժողովրդի հոչակած կեցցեկի հնչունների տակ «Պոբեդա» շերմանավը Կոնստանցայից հեռացավ, ուղղություն վերցնելով դեպի Բաթումի:

Սովետական Հայաստան մեկնած հայերի երկրորդ խոմքը բազմացած է 1022 մարդուց:

ՀԱՅԵՐԻ ՆՈՐ ԽՄԲԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

ԲԱԹՈՒԼԻՄԻ, 24 հունիսի (ՀՀԳ-ի հատ. թղթ.).— Հունիսի 23-ին «Պոբեդա» շերմանավով Ռումինիայից Բաթումի ժամանեց Սովետական Հայաստան վերադարձող հայերի այս տարվա առաջին խոմքը: Ընդամենը ժամանել է 1022 մարդ: Հիմնականում դրանք բանվորներ են՝ կոշկակարներ, տեքստիլա-

գործներ, էլեկտրիկներ և ուրիշներ: Զգալի խոմք են կազմում ուսուցիչները, բժիշկները, դեղագործները: Ժամանածները իրենց հետ բերում են Հայաստանի Պետական Թանգարանին նվիրելու համար նկարների, արվեստի գործերի և հազվագյուտ գրքերի կոլեկցիա:





ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՆԿԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ա. Մշատնիկյանի անվան Երևանի Պետական Համբային գրադարանը հայ մեծ գրող Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակի առթիվ պատրաստում է Աբովյանի ստեղծագործությունների, ինչպես նաև նրան վերա-

բերող գրականության բիբլիոգրաֆիան, որը լինելու է 6 մամուկ ծավալով:

Այդ աշխատանքը կատարում է գրադարանի ավագ գիտական աշխատող Ա. Բաբայանը,

Հումանի սկզբներին, 2000 Գիտությունների Ակադեմիայի հրատարակությամբ, լուս կտեսնի և Աբովյանի երկերի լիակատար ժողովածուի երրորդ հատորը, որը պարունակում է «Վերը Հայաստանի» վեպի գիտականորեն ստուգված տեքստը, ինչպես և այդ վեպի հայապարակված տարբերակն ու հատվածները: Տեքստի խմբագրումը և ծանոթագրությունները կատարել է Ֆիլոլոգիական փառությունների թեկնածու Գ. Մուրադյանը:

Մինչ Հորելյանը լույս կտեսնեն և, Աբովյանի երկերի լիակատար ժողովածուի նաև առաջին և երկրորդ հատորները, որոնք ընդգրկում են նրա բանաստեղծությունները: Առաջին հատորի տեքստը տպագրության է պատրաստել և ծանոթագրությունները գրել ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ռ. Նանոյանը, երկրորդ հատորինը՝ Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածուներ Ա. Ասատրյանը և Ա. Մանուկյանը:

Տպագրվում է և շուտով լույս կտեսնի «Դիվան հաշատուր Աբովյան»-ի երկրորդ հատորը (առաջին հատորը լույս է տեսել 1940 թվական): Դիվանի նյութերը տպագրության է պատրաստել Ֆիլոլոգիական գիտությունների գոկտոր Երվանդ Շահազիզը:

Աբեղյանի անվան Դրականության ինստի-

տուտը պատրաստել է Վերը Հայաստանի վեպի ոռակրեն լրիվ թարգմանությունը: Վեպի տող առ տող թարգմանությունը կատարել է Մ. Գևորգյանը, իսկ գեղարվեստական մշակումը՝ Ս. Շերվինսկին:

Վեպի թարգմանությունը, նրան կցված մեկնաբանություններով և բառարանով հանդիրձ, գտնվում է տպագրման պրոցեսում և լույս կտեսնի Հորելյանական օրերին:

Հորելյանական Հանձնաժողովի որոշման համաձայն «Վերը Հայաստանի» վեպի ոռակրեն տեքստը ուղարկված է Եղբայրական ուսուլությաները՝ ՍՍՌՄ ժողովրդների լեզուներով թարգմանելու և հրատարակելու համար: Ուղարկված են նաև և Աբովյանի պատմվածքների («Առաջին մեր», «Թուղթի պղջիկը», «Բարեկամիս մոտ») և մի շարք բանաստեղծությունների տող առ տող թարգմանությունները:

Աբեղյանի անվան Դրականության ինստիտուտը պատրաստում է և Աբովյանին վիրաված «Դրական հատազոտություններ» պատմագրական ժողովածուի երրորդ հատորը: Այս հատորի մեջ կընդգրկվեն հայ մեծանուն գրողի կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող հոդվածներ, ակնարկներ և գիտական աշխատություններ:

25 տպագրական մամուկ ծավալով այս ժողովածուի մեջ մտել են գրականագետների,

պատմաբանների և լեզվաբանների 17 աշխատություն:

ԹՈՌԸ ՊԱՄԻ ՍԱՍԻՆ

Երևանի ոռուական մանկավարժական ինստիտուտի ուսանողները պարապմունքներից հետո հավաքվեցին գրականության կարինետում, որտեղ ինստիտուտի դասախոս Կոնստանդին Վարդանի Արովյանը, Խաչատրուր Արովյանի թոռը, զրուց ունեցավ նրանց հետիր նշանավոր պատի մասին: Ահա այդ զրուցի համառոտ բովանդակությունը.

— 1827 թվին ոռուական զորքերը Հայաստանից գուրս քշեցին պարսիկ զավթիչներին և այդ օրվանից հայ ժողովուրդը ընդմիշտ իր բախտը կապեց ոռու մեծ ժողովրդի բախտի հետ: Ծփումը պատասեր ոռու ժողովրդի և նրա առաջավոր մտավորականության հետ միանգամայն բարերար ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի համար: Այդ տարիներին իմ պատը, — այն ժամանակ դեռևս պատանի, — ուղևորվեց Դորպատ, ներկայիս Տարտու քաղաքը (Էստոնական ՍՍՌ), որտեղ և ստացավ իր բարձրագույն կրթությունը: Այդ ժամանակ նրա կրա մեծ տպագրություն էր թողել Պետերբուրգում:

1836 թիվին Արովյանը ուժ ու եռանդ ստացած վերապանում է Երևան: Նրա ցանկությունն էր այստեղ դպրոց բաց անել գյուղական ուսուցիչները պատրաստելու համար: Սակայն, նրա այս ցանկությունը մերժվում է: Իր այս առաջին անարդությունից հետո Արովյանը մեկնում է Թիֆլիս, ուր զբաղվում էր մանկավարժական գործունեությամբ: Այն 30 հայ, վրացի ու ադրբեջանցի պատանիները, որոնց հետ Արովյանը պարապում էր իր կողմից մշակված նոր մանկավարժական մեթոդը, շուտով, ինչպես լեզուների, այնպես էլ մյուս առարկաների ուսումնասիրման գործում, մեծ հառաջադիմություն են ցուցաբերում: Նրա աշակերտներից մեկը՝ Գաբրիել Սոմգովյանը հետագայում խոշոր դրամատուրգ դարձավ և առաջավոր դեր խաղաց հայ թատրոնի զարգացման գործում:

1840 թիվին Խաչատրուր Արովյանն ամուսնացավ: Երիտասարդ ամուսինները շուտով մի արու զավակ ունեցան, որին կոչեցին Վարդան, իսկ երկու տարի հետո էլ ծնվեց դուստրը, որին անվանեցին Զարմանդուկստ:

Մի քանի բոպե զրուցը ընդհատելով Կ. Արովյանը ներկաներին ցույց է տալիս մեծ գրողի կնոջ՝ Էմիլիլիայի, որդու, աղջկա, թոռների ու ծոռների լուսանկարները: Ու ապա շարունակում:

— Երեխանները շատ շուտ զրկեցին իրենց հորից, դրա համար էլ նրանց հիշողությունները հոր՝ և: Արովյանի մասին կցկուուր էին:

1843 թվին Արովյանը վերապանում է Երևան և աշխատանքի անցնում Երևանի գավառային ուսումնարանում՝ տեսչի պաշտոնով: Մակայն, այստեղ ևս, իր առաջադիմ հայացքների ու գործունեության համար, նա շուտով արժանանում է վարչության անբարյացակամ վերաբերմունքին:

Վարչությանը զայրուցի պատճառող, «արարքներից» մեկը հանդիսանում էր այն, որ իմ պատը համարձակություն էր ունեցել զավառային ուսումնարանի հաշվետվությունը կազմելու հայերեն լեզվով: Պատիս նկատմամբ ատելությունն այնքան ուժեղ էր, որ նրա մահվանից 40 տարի անց երբ հայրս զիմեց դիմնազիւյի դիրքեկտորին և խնդրեց իրեն դասաժամեր տրամադրել, մերժում ստացավ: Մի քանի տարի հետո Վ. Ռոմանովսկին իր «Երևանի գիմնազիայի պատմությունը» գրքում գրել էր: «Դիմում ներկայացնողը, Վարդան Արովյանը — դա այն մարդն է, որը մի քանի տարի առաջ անհայտացել էր ու նորից երևացելու հմ հորը սիսամամբ այսպիսով նա ընդունել էր Խաչատրուր Արովյանի տեղը:»

Հույս չունենալով որեւէ օժանդակություն ստանալու, Խաչատրուր Արովյանը իրեն հատուկ անսպառ հոանդով գործի է անցնում: 1843 թվին լույս է տեսնում նրա կենդանության օրոք հարատարակության արժանացած միակ գիրքը՝ «Նախաշակիդ»-ը: Թիֆլիսի Կարուագետ եպիսկոպոսի կարգադրությամբ այս գիրքը այրում են կրակի վրա:

Ուսանողները մեծ ուշադրությամբ ունկընդուռում են պատմության մայն մասը, որ վերաբերում էր Խաչատրուր Արովյանի բարեկամական սերտ կապերին, որոնցով նա կապված էր աղբքաշանցի գրող Մ. Ֆ. Ախունդովի ու պոնտ Միրզա-Շաֆիի և վրացական առաջավոր մշտավորականության ներկայացուցիչների հետ: Այնուհետև Կ. Արովյանը պատմում է այն մասին, թե ինչպես մեծ գրողը սիրում էր հայկական ու եղբայրական ժողովրդների ֆոլկլորը և թե ինչպես քրդերի ստոլծագործությանը վերաբերող նրա մի շարք հոգմածները տպագրել են Թիֆլիսում լույս տեսնող թերթերում:

Խաչատրուր Արովյանի չողաւորությունը իր հարազատ ժողովրդի կարիքների հանդիպ

ցայտոն կերպով դրսնորվում է պատմողի թերած օրինակներում.

— Եղել է մի այսպիսի դեպք. Արովյանը հանձն է առել իր հայրենի գյուղի՝ Քանաքեռ-ով բնակիչների շահերի պաշտպանությունը: Պարսից բեկերը, որոնք մնացել էին Երևանի շրջակալրում, ուսական զորքերի գալուց հետո, անօրինական կերպով գուղղացիներից խլել էին «Մուրատ-Թափալի» ամենաբերրի հողամասը: Խաշատուր Արովյանի հետապնդումներից շնորհիվ այդ հողամասը նորից վերադարձվում է գյուղացիներին: Այդ օրվանից անցել է ավելի քան 100 տարի: Ներկայումս «Մուրատ-Թափալի» հողամասը մշակվում է կոլխոզի տրակտորներով և առատ բերք է տալիս: Բայց դեռ այսօր էլ շատ ծերունի-կոլխոզներից պահպանում են Խաշատուր Արովյանի այդ պաշտպանությանը վերաբերող հուշերը:

1848 թվի ապրիլի 14-ին մեծ գրովը տնից դուրս եկավ ու ալլևս ետ չերադարձավ: Մի քանի օր տեղող որոնումները ու մի արդյունք շտվին: Հայտնի է, որ վերջին օրերին Խաշատուր Արովյանը եղել է մուալլված, մտախոռն, լուակյաց ու հրաժարվել է սնունդ ընդունելուց: Դժվար է ասել, թե ինչպես է նա մահ գտել, բայց և այնպես պարզ է, որ դրանում հանցավոր են մովի ուժերը, որոնք իշխում էին այն տարիներին: Ըստ Հարազատներիս պատմածների ինձ Հայտնի է, որ պապս հաճախ էր կրկնում այս խոսքերը. «Ամեն ժամ մտածել եմ, որ իմ վերջը — դա Սիրիրն է»:

Գրողի կինը՝ կմիլիա Արովյանը խնամքով պահպանել է նրա ձեռագիրներն ու գրքերը: Ամեն անգամ, երբ դուն բախող էր լսվում, նա վեր էր թոշում տեղից ու նրան թվում էր, թե այդ ամռախինն է վերադարձել: Դժբախտ

կինը մահացավ 1870 թվին: Խաշատուր Արովյանի դրական ժառանգությունը անցավ հորս ձեռքը, իսկ նրա մահվանից հետո էլ, 1896 թվին, անցավ մեր ձեռքը: Թշնամու արշավանքների օրերին, երբ հարկադրված էինք մեր ամբողջ ոնքեցվածքը լքելու և երբ ամենք քայլափոխին վտանգ էր սպառնում, մենք ամեն ծիկ գործադրեցինք փրկելու համար այն թանկարժեք ձեռագիրները, որոնց վիճակով չ'ետաքրքրվեցին ոչ ցարական աստիճանավորները: Ոչ էլ սրանց փոխարեն իշխանության գլուխ անցած զաշնակները:

1917 թվին Ալեքսանդրովուում իմ աշակերտներից մեկը մի նամակ բերեց մոտս, որ ինչպես պարզվեց, ստորագրված էր Խաշատուր Արովյանի ձեռքով: Երեխան պատմեց, որ մի խանությում խանութպանը այդպիսի թերթերում վաճառված մթերքներ էր փաթաթում: Ես վազեցի այդ խանութը, որպեսզի պահանջվող ամեն մի գնով ձեռք բերեի այդ փաստաթղթերը: Սակայն, ժամանակուր Արովյանի գործությունը, որ այլ թղթերի հետ միասին խանութպանը գնել էր Երևանի նահանգային արխիվի աստիճանավորներից, այլև ոչինչ չէր մնացել: Պատմական արժեք ներկայացնող փաստաթղթերը օգտագործվել էին մթերքներ փաթաթելու համար:

Սովետական իշխանության տարիներին մենք Պետական Գրական թանգարանին հանձնեցինք անհայտ նկարչի կողմից պատրաստված Արովյանի միակ յուղաներկ նկարը, «Վերը Հայաստանի» վեպի երկու ձեռագիր օրինակները, տասնյակ այլ ձեռագիրներ, նամակներ ու փաստաթղթեր, որոնց թվում նաև քրդական ֆոլկորի գրանցումների տետրը և 1917 թվին գտնված նամակը: Խաշատուր Արովյանի գրական ժառանգությունն այսօր գարձել է համաժողովրդական սեփականություն:

ԵՐԿԱՆԻ ՇԱՀԱԶԻՒ

ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՆՈՐԱԳՅՑՈՒՏ ՄԻ ՎԱԿԵՐԱԿԱՆԻ ԱՌԹԻՎ

«Մովետական Հայաստան» օրաթերթի 1948 թ. ապրիլի 7-ի համարում մի հոդված տպագրվեց Խաշատուր Արովյանին վերաբերող վերջերս Հայտնաբերված մի նոր վագերականի ու նրա համառոտ բովանդակության մասին*):

*). Ա. Ասատրյան և Գ. Ստեփանյան.— Նոր նյութեր Խաշատուր Արովյանի և նրա ժամանակակիցների մասին, «Վ. Հ. Հ. № 8231, էջ 3,

Մեր ուշադրությունից բնականաբար վրիպել չէր կարող խաշատուր Արովյանին վերաբերող նոր վալերականի հայտնաբերման հանգամանքը, քանի որ երկար ժամանակից ի վեր զբաղվում ենք հայ այդ նշանափոր գրողի ու մեծ մարդու կյանքի և գործունեության ուսումնասիրությամբ. ուստի և ուշադրությամբ այդ համառոտ ու հապճեա զրված հոդվածը կարդալուց հետո շտապեցինք տեսնել ու թերթել բուն իսկ

վավերականը, որ ձեռք էր բերել Հայկական ՍՍԻ Գիտությունների Ակադեմիայի Մ. Արեգականի անվան Գրականության ինստիտուտը:

Նախ քան այդ վավերականին անդրադառնալը, պետք է ասենք, որ Խ. Արովյանի կենսագրության մեջ մի քանի առեղծվածներ կան, որոնք, ստույգ վավերականների պակասության պատճառով, դեռ մնում են լուծված. միաժամանակ պիտի ավելացնենք, որ այս ուղղությամբ նոր վավերականներ որոնելու և գտնելու դժունը դեռ իսպառ չեն փակված մեր առջև։ Շատ հեռու չերթանք, հենց մեր Պետարիսիվի ֆոնդերը, այս տեսակետից, դեռ վիրշնականապես լրիվ չեն հետազոտված, էլ չենք խոսում Վրաստանի Պետական կենսարունական արխիվի մասին, որ, Արովյանին վերաբերող վավերականներ գտնելու տեսակետից, նույնպես հարկավոր շափով չի նայված։

Վերջին ժամանակներն այս երկու արխիվներում հայտնաբերված նոր վավերականների շնորհիվ պարզվեցին գոյություն ունեցող առեղծվածներից երկուար օվ ահա պատահաբար հայտնաբերված այս վավերականով էլ պարզվում է մի երրորդ առեղծված։

Ավելորդ շենք համարում այստեղ մեջ բերել այդ երեք պարզաբանված - առեղծվածները։ Առաջին առեղծվածն այն էր, որ Արովյանը Դորպատ գնալու ժամանակ, երբ 1830 թ. օգոստոսի 25-ին հասնում է Պետերբուրգ, այստեղ իսկույն սկսում է տրոնել իր մանկական ընկեր Ստեփանոսին, որին և գտնում է։

Արդ հարց է ծագում, ո՞վ է եղել այդ մանկական ընկեր Ստեփանոսը։ Եթե նա եղած լիներ Ստեփանոս Նազարյանցը, ապա ե՞րբ կարող էր եկած լինել Պետերբուրգ ու ծառայության մտած։ Այս առեղծվածը չկարողացել լուծել ոչ հանգույցյալ կեռն, Ս. Նազարյանցի մասին գրած իր ստվար կենսագրականի մեջ, և ոչ էլ մենք, Արովյանի մասին մեր գրած կենսագրականի մեջ։ Վերջին Գրիգոր Հարությունյանի կողմից ՀՍՍՌ Պետական կենսարունական արխիվում հայտնաբերված վավերականներից պարզվեց, որ Պետերբուրգում Արովյանի որոնած Ստեփանոսը եղել է ոչ թե Ստեփանոս Նազարյանցը, այլ Ստեփանոս Գասպարյանը, որը նույնապես Արովյանի մանկական դասընկերն է եղել Ներսիսյան դպրոցում*): Երկրորդ առեղծվածն այն է, որ մինչև

*.) Գ. Հարությունյան, Խ. Արովյան և Ս. Նազարյանի կենսագրության շուրջը ստեղծված մի առեղծվածի լուծումը. «Եղմիածին» ամսագիր 1947 թ. հուլիս-օգոստոս, լշ. 61.

վերջերս մեզ հայտնի չէր, թե Արովյանը, Ներսիս կաթողիկոսի 1846 թ. մայիսի 18-ին երեսն ժամանելու առթիվ, իր ո՞ր անվայի վարժունքի համար է ենթարկված եղել երեք օրվա տնալին կալանքի, փոխարքա Վորոնցովի հրամանով։ Վերջերս Վրաստանի Պետական կենտրոնական արխիվում մի վավերական հայտնաբերվեց, որից պարզվում է, որ Արովյանը կաթողիկոսին ընդառաջ և դուրս եկած եղել ոչ պաշտոնական համագետայի պահպանով։ այլ հասարակ ամառային սպիտակ զգեստով և այս մասին բողոք ներկայացնողը եղել է երևանի գավառապետ Նիկիֆոր Բավատսկին*).

Երրորդ առեղծվածն այն է, որ մեզ մինչև այսօր անհայտ էր փոխարքա Վորոնցովի տիկնոց կողմից Արովյանի հրավերված լինելը Թիֆլիսի Ս. Նունեի օրիորդաց դպրոցում պաշտոնավարելու համար և առաջին անգամ այս մասին տեղեկություն է հաջորդում հայտաբերված նոր վավերականից մեջ ենք բերում Արովյանին նվիրված ոտանավորի այն տողերը, որոնց մեջ հայտնվում է այդ նորությունը։

«Ըստ հաճութեան տիկնոց մեծի Փոխարքային Վօրոնցովի

Ի գպրոցի Նունեայ կուսի

Նշանակեալ պետ մեկուսի:

Մինչ պատրաստեալ ի շուր յայսկոյս

Առեալ գտում, զամենայն գոյս

Ի գիշերի ընդ արշալոյս

Յերրորդ առուր Ապրիլ ամսոյս

Յանկարծ կորեաւ իմ Ապովիան,

Թափուր թղղեալ զիւր ննջարան

Ի յոյզ մատեաւ քաղաքն համայն,

Ֆիշիսանաց իւր առեալ հրաման.

Ամենեցուն թագում մնայ:

Այս տողերից երևում է, որ Արովյանը պաշտոնի է հրավիրված եղել Թիֆլիսի Ս. Նունեի օրիորդաց գպրոցը և պատրաստվում է եղել տնով-տեղով փոխադրվել Թիֆլիս, երբ անհայտացել է։ Սրա հետ կապված պարզվում է և այն խնդիրը, որ Արովյանը իր անհայտանալուց առաջ իրը թի թուլի է ստացած եղել պատրիարքից, որը, Աքիմի ասելով և ուրիշների կարծիքով, պատճառ է հանդիսացել նրա անհայտացման։

Արդ հարց է ծագում, թե այդ ի՞նչ թուլի է եղել, ումի՞ց է ստացված եղել և ի՞նչ բովանդակություն է ունեցել։ Որ Արովյանն իր անհայտանալուց առաջ մի թուլթ ստացել էր, այդ գիշտ է, բայց, ինչպես ցույց է տալիս այս նոր վավերականը, այդ թուլթը

**) «Կոմունիստ» օրաթերթ № 76 1948 թ.

նա ստացել էր ոչ թե պատրիարքից, այլ փոխարքա Վորոնցովի տիկնոջից:

Արովյանի հրաժարականի պատմովյունից էլ երևում է, որ դպրոցական վարչությունը, ընդունելով նրա հրաժարականը, պատվիրել էր դպրոցը Տուրկեստանովին հանձնելուց հետո անմիջապես թիֆլիս գալ և ծառայության մտնել Նորին Վեհափառություն Ներսես կաթողիկոսի իրավասության տակ. այս առթիվ արդին Արովյանը հրավիրաբուղթ էր ստացել 1848 թվի փետրվարի 21-ին № 111 գրությամբ*):

Կա մի ուրիշ վավերական էլ, որ վերաբերում է Արովյանի հոգեկան վիճակին, նրա անհայտանալուց առաջ: Այդ էլ Արովյանի կնոջ Էմիլիայի այն պատասխանն է, որ նա տվել էր Երևանի տատիկանապետ Մորախավեցին, երբ վերջինս դաշտավայտ Նիկիֆոր Իլավատսկու հանձնարարությամբ, պաշտոնական թղթով ինդիք էր նրան տեղեկություններ հաղորդել իր ամուսնու բացակայելու մասին:

«Ընդհանրապես, պետք է ասեմ, — գրում է Էմիլիան՝ իր պատասխանում, — որ ես ոչինչ և ոչինչ չգիտեմ նրա բացակայելու մասին, բացի նրանից, որ ես նկատել եմ նրա մեջ մեծ փոփոխություն և մեծ հոգեկան տանջանք ու թափած, նամանավանդ այն ժամանակից ի վեր, երբ նա թուղթ էր ստացել իր թիֆլիս փոխադրության մասին և ինքն էլ ասում էր, թե ցավում է, որ որոշած է եղել փոխել իր ծառայության բնույթը»: Այս հարցմունքի և պատասխանի գրությունները մենք նույնական զետեղել ենք մեր «Դիվան Խաչատուր Արովյանի» գրքի երկրորդ հատորի մեջ:

Կարծում ենք, որ նորագույն այս վավերականը պարզում է նաև պատրիարքին վերագրված հերիաթական թղթի պատմությունը: Պետք է կարծել, որ ստացված թուղթը Վորոնցովի տիկնոջ պաշտոնական հրավերն է եղել, որով նա Արովյանին առաջարկել էր թիֆլիս փոխադրվել և Ս. Նունեի օրիորդաց դպրոցում ստանձնել իրեն հատկացված պաշտոնը**):

Այժմ անդրադառնանք նորահայտ վավերականին, որին ավելի մեծ արժեք է վերագրված վերը նշած հոդվածի մեջ, քան իրոք նա ներկայացնում է: Այս վավերակա-

*) Օ. Շահագիզ. — Դիվան Խաչատուր Արովյան, էջ 191 և 222:

**) Պաշտոնի մասին բնագիր—ստանավորի մեջ տակած է —

«Ի դպրոցի նունեայ կուսի

Նշանակեալ պետ մեկուսի»:

Կարծում ենք տեսչի պաշտոն է առաջարկվել նրան, իսկ մեկուսի բառը համգի համար է գրված:

Նը կրում է հետևյալ խորագիրը. — «Զափական և արձակ քերթուածք Առաքել վարժապետի Արարատեանց — հեղինակութիւնք, նմանողութիւնք և թարգմանութիւնք ընդ ժամանակու ժամանակակի անդատին յաշակերտութիւնէ իւրմէ, այժմ աստ ի մի վայր խմբագրաւալք ի պէտս բանասիրաց իւրով իսկ ենուամբ յամի 1855 ի Տփխիս»:

Այս խորագիրն ինքը ստինքյան արդեն բընորոշում է սույն վավերականի բովանդակությունն ու բնույթը: Սա գրվածքների մի ըսդարձակ հավաքածու է, ամփոփված կազմված երկու ստվար տետրակների մեջ*): գրվածքների մեծ մասը ոտանավորներ են, իսկ մնացորդը — արձակ: Ոտանավորները չոր ու ցամաք, անշունչ և անարդուն են և հանգապաշտություն — հանգերի ժողովածունեներկայացնում իրենցից, իսկ արձակներն էլ անիմաստ են. թե շափածու և թե արձակ գրվածքները միասին վերցրած ամբողջովին սբոլաստիկական են, և որ ամենագլխավորն է, զորկ կարևոր փաստերից: Ամբողջ հավաքածուի մեջ մենք միայն երկու կարեոր նյութ նկատեցինք, որոնցից մեկը Արովյանին նվիրված, 97 սոլդից բաղկացած, ոտանավորն է, իսկ մյուսը՝ կենսագրական նյութեր Ուկերչյան ավագ քահանայի մասին, որը զորապետ Ցիցիանովի արշավանքի ժամանակ առաջնորդել է Վաղարշապատից ու նրա շրջակայիքից թիֆլիս գաղթած ու այնտեղ Հավլաբար թաղամասը կազմած հայերին: Պետք է ասել, որ Արովյանին վերաբերող նյութն էլ շատ կցկտուր ու հակիրճ է: Առաքել Արարատյանը, որպես Արովյանի մոտ ընկերը, անկասկած, ավելին գիտեր Արովյանի մասին ու կարող էր ավելի լրիվ տեղեկություններ հաղորդել նրա մասին, քան հաղորդել է իր այդ ոտանավորի մեջ. ստորև բերում ենք նրա այդ ոտանավորն ամբողջովիւթյամբ. —

Խաչատուր Ա. Ետիքեան Ապովեանց

Հատեալ ի ստեանց ուսման գրոց նախածնող հօր որբոց,

ի Պաւլոսի**): մտի կրթոց.

Քերթողութեան դիել զծուծ,

Ուր հոգեստն համշիրակաց

Մի էր Խաչիկն իմ Ապովեանց,

Քանքարաճուս, ուշիմապանծ

Շողափայլէր ըստ անգին ականց:

Երկաթաբար ես ընդ նմա

Մրտէ ի սիրտ մագնիսացայ.

*) Այդ տետրակները. մենքն Դրականության ինստիտուտի կողմից ձեռք բերվելը, գտնվել են Ռիգայում՝ Առաքել Արարատյանի ժառանգների մոտ:

**) Պողոս վարդապետ Ղարաբաղցի, քաջ զաստուր բերթողության:

Թէ դէմ առ դէմ և թէ բացեայ
Յարգել զնա ոչ վերջացայ:
Ել ի Մասիս, և էջ անտի
Հնդ բանիբունն Պարոտի.
Ուման ծարաւ ըստ կարօտի,
Անց ի Դորպատն Լիֆլեանդի:
Ուստի դարձեալ յաշխարհ Տփխեաց
Յետ քառամեալ պանդխտութեանց,
Որպէս մեղու փեթակ ի մտաց
Գանձեալ խորիսի մեղու ումանց,
Եղև յագուրդ սովեալ մանկանց,
Հստ Եւրոպեան գիտնականաց,
Վարդապետեալ յոճ դիւրիմաց,
Բացեալ գոսկի հանքս համբակաց.
Եղև տեսուր քաշ և արի
Նահանգական վարժարանի:
Հնդ էմիլեայ օրիորդի
Զուգեալ ծնաւ Վարդան որդի:
ի Վրաց վազեաց նա յերևան,
Հանել և անդ զնորհսն յերևան.
Ուր զամս հինգ զգիւոյ, զաւան
Արար շանիւք իւր գոհ, հաւան
Գոդ քան զքառորդ միոյ դարու,
հնձ հոգեկից այրն մեծարու.
Թէ ի ժամու, տարաժամու
Եղէ նմա ձեռնկալու
Հստ հաճութեան տիկնոց մեծի
Փոխարքային Վօրօնցովի
ի դպրոցի նունեայ կուսի
Նշանակեալ պետ մեկուսի:
Մինչ պատրաստեալ ի շու յայսկոյս
Առեալ զոտոն, զամենայն գոյս
ի գիշերի ընդ արշալոյս
Յերրորդ աւուր Ապրիլ ամսոյս,*)
Յանկարծ կորեաւ իմ Ապովեան
Թափուր թողեալ զիւր ննջարան,
ի յուզ մատեաւ քաղաքն համայն
Յիշխանաց իւր առեալ հրաման:
Անմարդայայտ անհետանայ,
Ամենեցուն թագուն մնայ;
Զախորդութիւն, թէ իրը զնա
Անակնկալ խլեալ, բառնայ,
Ալօստ կարծիք եղև ոմանց,
Թէ սպանաւ նա յայլ ազգեաց.
Կորհեալ ի հոր ինչ արմտեաց
Կազանասիրտ յանօրինաց,
Այսպէս աշխարհ վարձատրեաց
Զարժանայարդն Ապովեանց.
Յամենայնէ հանեալ ի բաց
Միսասովոր մեծարանաց:
Քահանայից ի մաղթանաց,
ի փրկագործ պատարգաց,
Յերգոց նուագաց, ի սաղմուաց
Սարկաւագաց, կղերց ժամասաց:
Եւ յողունէ ընդ իւրոցն յիտնոյ,

ի պատանէ, ի բաւու գետնոյ,
Հստ չնաշխարհիկ ընտրեալ գիտնոյ
Սառեալ ինչ շուր ի ստորնոյ:
Գուցէ սուրբ մայրն էջմիածին
Խնդրեաց վրէժ ուխտաւորին,
Որ վասն ուսման շեկաց ի նմին,
Մտեալ վիճակ յաշխարհալիին:
Եւ կամ Մասիս ցասեալ պատժեաց,
Որ զինքն երկիցս ոտնակոխեաց.
Կամ Քանաքեռ անէծս կարդաց
Երեալ նորան ի շնորհաց:
Զայս լսելով մի դիւրակարծ,
Թէ զերթ հողմ զծուիս բաղդ զնա
ցնդեաց.

Սերմբն ուսման, զոր նա ցանեաց
Յանդս մտաց պատենակաց,
Բուսեալ, աճեալ պտղաբերեաց,
Ոչ սակաւոց քիմս անուշեաց.
Յաւէրժական յիշատակաց
Եղեալ կոթող անմահ փառաց:
Բաց յայսմանէ երկունք գրչին
Մինչ ընդ մամլով խոնարհեացին,
Անշինչ արձանք նմա լիցին
Յերախատպէտ սիրսու ազգին:
Թող սնաբանք կարկատեացին,
Զինչ և կամին բարբանչեացին
Գերմանացիք զնա գիտեն
Յիշեալ մատեան զնա գովեն:
Զի՞ մարգարիտ աքաղաղին,
Կուտ նորա է անարդ գարին.
Էշն ի՞նչ գիտէ զարմաւոյ գին,
Եւ կամ դատել զայն սոխակին:
Այսպէս իմա, զպարսաւադրաց
Անձնանուկը ազգասիրաց:

Ինչ վերաբերում է երկրորդ նյութին, ա-
պա Արարատյանն իր իմացածն այս մասին
արդեն հաղորդել է առանձին գրքույկով,
քանի որ Ոսկերշյանը նրա ազգականը, բա-
րբարը, ուսում տվողը և մարդ դարձնողն
է եղեւ:

Մրանց հեղինակի՝ Առաքել Արարատյա-
նի մասին մենք մի լիակատար ծանոթա-
գրություն ենք գրել ու զետեղել մեր «Դի-
վան հաշատուր Արովյանի» գրքի երկրորդ
հատորի մեջ. այստեղ կարող ենք միայն
ավելացնել այն, որ վերշին ժամանակա-
շրջանում թե Նազարյանցը և թե Արովյանը
իրենց համոզմունքներով պառակտվել էին
Արարատյանի հետ ու հենց այս հանգա-
մանքն էլ, կարծում ենք, ազդած պիտի լի-
նի Արովյանի «Նախաշակիղ»-ի բննադա-
տության գործիքի վրա կարուց առաջ

*) Ալդ տեղի է ունեցել ուշ թե 1848 թվ. ապրիլ
3-ին, այլ 2-ին

Մի անհրաժեշտ բացատրություն էլ ցանկանում ենք տալ Արովյանի հոր անվան մասին, որ նույնպես շփոթ առարկությամբ շոշափված է վերոհիշյալ հոդվածի մեջ և նրա հոր Ավետիք անունը, ըստ այս նորագյուտ վավերականի, հիմնավորված է համարվում. այս նշանակում է, որ մեր «Թիվան Խաչատուր Արովյան» գրքում մեջ բերված միշտ վավերականներով չեն հիմնավորվել նրա հոր անվան «Հարություն» լինելու Արդարացման մեջ բերել նոր վավերականներ ևս, որոնցից պարզ երևում է, որ Արովյանի հոր անունը «Հարություն» է եղել, և ոչ «Ավետիք»:

1. Հենց այս նույն Առաքել Արարատյանի 1831 թ. մարտի 12-ին գրած և Դորապատ՝ Արովյանին հասցեափած նամակում կարդում ենք հետևյալ տողերը.— «...Զազգականացդ լի՞ր անհոգ, զի որպէս գիր նոցա ցուցանէ, նմանապէս և ամենայն երթենկը զնոյն պատմեն լինել առողջ և յաջող յամենայնի, բաց ի կարօտութեն Զերմէ, շունելով ինչ կարիս, թաղում անգամ գրեցի առ Յովսէփ վարդապետն Բժշկեան գրել ինձ զինոտանեացդ և ծանօթացուցանել զիս ընդ նոսա գրով, բայց մինչև ցայժմ ոչինչ ստացայ ի նմանէ զդարձ, վասնորոյ ես ի նորումս ընդ թղթոյ ձերում առանձին թուղթ ուղղեալ առ մեծարու հայրդ և իմ Յարութին Արովյան, յորդոր եղեալ անընդհատ առնել զթուղթ իւր ծանօթարար ամենայն որպիսութեանց ձերայնոց, որով և ես զծել արարից աներկեան...»:

Այսպիսով տեսնում ենք, որ Առաքել Արարատյանը հետևողական չի եղել, մի տեղում Արովյանի հոր անունը Հարություն հիշելով, մի այլ տեղում Ավետիք:

2. Երկրորդ վավերականը ևս մի նամակ է, որ բերում ենք այստեղ.

Զերդ գերազանցութեանդ պարոն Սահման Վերիլովին և իմ սիրելի հարսին (Թիֆլիս)։

Նախապէս շատ սիրով ուղուցին մատուցանեմ ենք և մեր երիխանց, որ քանի ժամանակ է ձեր գնալն միամտութեան գիր շեմ ստացեալ, ըստ որում խնդրեմ իմ ձերութին շի մոռանաք, քանզի ես ձեղ միշտ աղօթարար իմ. դարձեալ աղա փողի մասին, որ խոստացար թէ հասերայ գնալուա, և ես թուղթ կող զրգիմ Թարխանովի վերայ, բայց այժմ հիմա որ Թարխանովն դուրս եկաւ և ունդինի նաշալնիկն ի մենչ սաստկապէս պահանջէ 15 մանեթ դրամ, վասնորոյ և մեր տասն աւուր ժամանակ առանք, որ ձեր

հրամանոց րասպիսկեն հասնի մեզ, ըստ որում խնդրում ենք, եթէ ճշմարտապէս հասեալ է զգիրս ստանալուր, մեկ բասպիսկա ուղարկես մեզ, որով մեք այնու ռասպիսկովն չի տանք, բայց եթէ ոչ կամենաս ուղարկելն, այնուհետև 15 մանեթ թող տան իմ որդքերանցն որով և ինձ չէ պարտ դորանց զրգել, այլ և լավ է ճշմարտապէսն լինելուն:

Մնամ ձեր աղօթարար հայր

Հարութիւն Արովյան

1 ապրիլի 1850 ամի
ի գիւղն Քանաքեռ

Այս նամակն ե՛ իր բովանդակությամբ և իր ստորագրությամբ կատարելապես հայրական է և ամենացայտուն վկայությունն է, որ Խաչատուր Արովյանի հոր անունը եղել է Հարություն, և ոչ Ավետիք: Այլ բան է, որ այս նամակն իր գրության ժամանակի թվականով չի համապատասխանում Խաչատուր Արովյանի ցուցմունքին՝ իր հոր մահվան թվականի վերաբերյալ: Արովյանն իր «Օրագրեր»-ի մեջ գրել է, թե մի շաբթիվ ընթացքում, 1834 թվի նոյեմբերի 21-ին, իր Դորապատ գտնված ժամանակը երեք իրեն մոտ մարդկանց մահվան բոթաբեր լուրն է ստացել— իր ուսուցիչ Հարութիւն վարդապետ Ալամդարյանի, ազնիվ բարեկամ Աղաջանի և քաղցր հոր՝ Հարություն Արովյանի: Եկ այս առթիվ նա գրել է իր «Ողբերգութիւն» խորագրով ոտանավորը: Այս ոտանավորի մեջ կարենը այն է մեզ համար, որ Խաչատուր Արովյանը ինքը իր հորը Հարություն է կոչում, և ոչ Ավետիք:

«Ողբերգութիւն» խորագրով ոտանավորից այստեղ բերում ենք երեք տուն, որոնց մեջ բացահայտվում է, որ Արովյանի ստացած բոթաբեր լուրն իր քաղցր հոր, արենակից ծնող Հարությունի մահվան է վերաբերում: Ոտանավորի լիակատար խորագիրն է «Ողբերգութիւն» ի վերայ մահուսն բազմերախտ ուսուցչին իմոյ Յարութիւն վարդապետի Ալամդարյանց, ազնիւ բարեկամին իմոյ Աղաջանայ Շիրմազանեանի, և քաղցր հօր իմոյ Յարութիւնի Արովյանց, զորոց զբօթալուրն ի միում շաբաթոց ստացայ ի լինելն իմ ի Դերաստ 1834 21-նոյեմբերից»: Ոտանավորը իրոք որ ողբերգական է և գրված է Արովյանի գրչին հատուկ սիրուն գրաբարով, ի խորոց սրտի, բուռն ու չերմ զգացմունքով:

Ո՞ր սահման, ո՞ր դարման ես եղից իմ վերայ,
Որք մաշեն աղետանց զիս անխիղն, անմխիքար,
Ո՞ն յումեն՝ ստացայ զձեր սէր երկնամբարձ,
Զօրս յիշեալ կոշկոնիմ և տանջիմ շարաշար.

Անօգնական զիս անտէրունչ
Անայցելու, անապաւն.

Դուք քողիք զիս միայնակ յայս աշխարհ դառնավայր:

Ելանէք, անցանիք շրջանէ ի շրջան,
Ուր խմբին պարառեալ երկնագունդիք երեղինաց,
Վերնեմիք լուսափայլ ի թես ամպոց յայն կայսան.
Ուր երեսին, զմայլին հոգիենյլք երեղտակաց.

Դուք բազմերախտ դաստիարակ
Քեմուզ իմ հայր, ժաղդր բարեկամ,
Դուք անուն տօնելիք յափառեան անմոռաց:

Իմ ոսկերք, իմ երակք, հոգի, սիրտ, զզայարան,
Ձեօք շարժին, ձեօք խորհիմ ի յիմում մարմենի աստ:
Մինն զռառումն, մինն զսէր, մինն զարին կենդանական,
Որովք շնչեմ, կամ զործեմ, ներզործեմ յերկրի աստ:

Դուք նեղիք ի յիս պատճառք իմ կենաց,
Դուք ետուք ինձ կեալ նոզոյս սիրեցեալք.
Եւ կրկին դուք տանիք զայսն ընդ ձեզ անանջատ:

3. Երրորդ վավերականները, դա Աբովյանի ձեռքով լրացված հարցաթերթիկներն են, որոնց մեջ Աբովյանը իր հոր անունը Հարություն է հիշում և ոչ Ավետիք: Այդ հարցաթերթիկները պահպատ են Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվում, ինչպես մեզ գրավոր հաղորդել է ավագ գիտակ. աշխատող և մեր ազնիվ բարեկամ Մորու Հասրաթյանը, Խաչատրու Աբովյանի ձեռքով լրացրած այդպիսի հարցաթերթիկների հանդիպել է նաև 1931 թվին նաև Լենինգրադի արխիվում. այդ հարցաթերթիկներում նույնպես Հարություն է հիշատակված: Եվ վերջապես օտարների կողմից Աբովյանին հասցեագրված բազմաթիվ նամակներում ու պաշտոնական գրություններում, որոնք զետեղված են մեր «Դիվան» Խաչատրու Աբովյանի» գրքի առաջին հատորում զետեղել ենք նաև այնպիսի վավերականներ, որոնց մեջ նրա հոր անունը Ավետիք է ուղարկում է այն խնդրին, որ մենք մեր «Դիվան» Խաչատրու Աբովյանի» գրքի առաջին հատորում զետեղել ենք նաև այնպիսի վավերականներ, որոնց մեջ նրա հոր անունը Ավետիք է հիշված, մի բան, որ հակասում է մեր կարծիքին նրա հոր անվան վերաբերմանք, ապա պիտի ասենք, որ ուրիշ կերպ վարվել էլ չէինք կարող, մենք պարտավոր էինք ամենայն անաշառությամբ գրքում զետեղել մեր կարծիքը թե հաստատող և թե բացասող բոլոր վավերականներն առանց խտրության:

Այս բոլորից հետո, կարծում ենք, տարա-

կույսի տեղիք չի մնում, որ Աբովյանի հոր անունը եղել է Հարություն: Այս բոլոր փաստերի կողքից անցնելով, և միայն վերջին նորագրուած վավերականի վրա հենվելով, մեր նշված հոգվածի հեղինակները շտապել են հապճեպ հզրակացություն հանել, թե Աբովյանի հոր անունը պետք է ընդունել, որ եղել է Ավետիք և ոչ Հարություն: Ինչ վերաբերում է այն խնդրին, որ մենք մեր «Դիվան» Խաչատրու Աբովյանի» գրքի առաջին հատորում զետեղել ենք նաև այնպիսի վավերականներ, որոնց մեջ նրա հոր անունը Ավետիք է հիշված, մի բան, որ հակասում է մեր կարծիքին նրա հոր անվան վերաբերմանք, ապա պիտի ասենք, որ ուրիշ կերպ վարվել էլ չէինք կարող, մենք պարտավոր էինք ամենայն անաշառությամբ գրքում զետեղել մեր կարծիքը թե հաստատող և թե բացասող բոլոր վավերականներն առանց խտրության:



Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Qրիստոնեական ծաղում ունեցող շնչքերից գրեթե ամենաձինն է էջմիածնի տաճարը, որը ըստ պատմական ավանդության հիմնարկված է 303 թվականին։ Սակայն մատենագրությանց մեջ գտնված հատուկտոր տեղեկություններից կիմանանք նաև, որ այս տաճարի սկզբնական շնչքը մեծ մասամբ փայտաշեն էր, որով հեշտությամբ հնիթարկվեց բնական և քաղաքական փոթորիկների պատճառած ավերումներին, որոնց հետևանքով եղավ հաճախակի նորոգություններ նաև կիմն հատակագծի վրա։

Այժմյան գոյություն ունեցող շենքի մանրամասն մասնագիտական բնությունից պարզ երևում է, որ նախկին, 303 թվականին, հիմնարկված շենքը միանգամայն գոյություն չունի. Հին շենքը ամբողջովին քանդելով, հիմնիքը մնարաշինել է Վահան Մամիկոնյանը 483 թվականին՝ Հայաստանի մարզպան նշանակվելուց հետո։

Հատակագծային բաղդատական ուսումնասիրությունից ապացուցվում է, որ Վահան Մամիկոնյանը նախկին եկեղեցական հատակագծային ձևերից տարբեր մի նոր ոճով կառուցել է այս շենքը, որ բացի մի քանի անշան արևմտյան ճաշակի մանրամասնություններից, ինչպես ֆրոնտոնները, պսակի ձևերը, տաճառի ընդհանուր երևույթը և շինարարական կերպերը զուտ արենելան հատկանիշ ունեն։

Սակայն որչափ որ Վահան Մամիկոնյանը ժամանակի պահանջած հատակագծով շինեց, այնուամենայնիվ թե՛ շինարարական արվեստի որոշ թերություններ կային այն ժամանակ և թե՛ շատ շուտ փոփոխության էին հնիթարկվում հատակագծային ձևերը. Կոմիտաս կաթողիկոսը (612—621) յոթերորդ դարուն, իր ժամանակին մաշված ու հնացած,

փայտյա գմբեթի տեղ շինել է քարե գմբեթ, անշուշտ նաև հարակից նորոգություններ և անելով. Իսկ ներսես Շինող կաթողիկոսը (642—662) նույն դարուն, թերևս տաճարը ընդարձակելու դիտավորությամբ, չորս կողմից քառակուսի պատերի մեջ ամփոփված աբսիդները (անտիկ) արտաքին պատերից դուրս հանեց, ինչպես որ այժմ կտեսնվի Ուրեմն հատակագծի վերջին ձևը տրվեցավ 7-րդ դարուն։

Թե ի՞նչ ճակատագիր ունեցավ այս շենքը 7-րդ դարուց մինչև 15-րդ դարը, այս մասին հաստատ մի բան չի կարելի ասել, որովհետեւ գրեթե պատմական տվյալներ չունեն. Արդեն 5-րդ դարուն կաթողիկոսական Աթոռը տեղափոխված էր Դուկին, հետո զանազան տեղեր՝ մինչև 1441 թվականը, երբ վերստին վաղարշապատում հաստատվեց կաթողիկոսական Աթոռը. Ուրեմն, մոտ տասը դար (իրաց առյալ Կոմիտասի և ներսես Գ-ի կատարած շինությունները 7-րդ դարում) այս շենքը միանդամայն անտեր ու անխնամ մընաց, մինչև կաթողիկոսական Աթոռին էջմիածնի փոխադրվելու 1441 թվականին։ Ու միայն այս երկար ժամանակամիջոցին մեջ պատմագրական մի հիշատակություն շենք գտներ էջմիածնի տաճարի նորոգության կամ շինության մասին, այլ և վերջին անգամ կաթողիկոսական Աթոռ հաստատելուց (1441) հետո իսկ, մինչև 1627 թվականը, դարձյալ շինարարական ոչ մի դույլն ձեռնարկ չէ եղած. 1627 թվականին է, որ Մովսես վարդապետը (որ հետո կաթողիկոս դարձավ 1629 թվին) ձեռնարկել է տաճառի վերանորոգության, որում մասին Առաքել Դավիթիթցի պատմագիրը հետեւյալ նկարագրը կուտա. — «Բայտ ամենայնի դատարկված էր տաճառը և կողոպտված յուր զարդերը, ոչ գիրք կար և ոչ գգեստներ, այդ պատճառով ոչ մի ժամանացություն չէր լինում. պատա-

հական անցվոր ճանապարհորդների համար մի մահմեղական ձեթի ճրագ վասելով բեմին վրա կդներ, որպեսզի իրեն ողորմություն տան. Հատակի սալերը ամբողջովին քանդված էին և մեծամեծ լուսամուտները բաց էին մնում առանց վանդակի և փեղկի, որով թոշումները մտնում էին ներս և աղտեղությունով լցնում: Խակ դրսի կողմից, կաթուղիկերն գլուխը, տանիքը և պատերուն երեսները ամբողջովին քարուքանդ եղած էին և քարերը թափված էին գետին, գետնի սալերը և շարդելով և փշացնելով: Մի ժամանակ տաճարին կից շինություններ էին շինված ու հետո քանդված, որով փլատակների կույտը մինչև յոթը կանգում բարձրացած էր տաճարի շուրջը:

Նախնական վիճակի նկարագրությունը մի քիչ մանրամասն գրեցի, որպեսզի այժմյան շենքի վրա եղող հետնագույն փոփոխությունները և ստացած վիճակը ավելի պարզ և հեշտությամբ համեմատելի լինի: Խնչակն տեսանք, Առաքել պատմագիրն ասում է, թե (նախքան Մովսեսի վերանորոգությունը) կաթուղիկեր գլուխը քանդված էր, տաճարկույն շկա, որ գմբեթի վերևի մասը այնքան քանդված էր, որ նույնիսկ ներքին կողմից գմբեթին վրա դեպի տաճարը նայող մի կլոր ծակ էր բացված: Այս պատմառով է, որ Պարսկաստանում գերմանական դժուանի ուղեկից Տեկտանդերը 1604 թվականին, առանց ուշադրություն դարձնելու կաթուղիկեր արտաքին վիճակին, ներքուստ գմբեթի մեջ բոլորշի պատուհան էր տեսնում կամ տեսնել կարծում: մինչդեռ այդպիսի բան շկա և չը էլ կարող լինել: Այժմ, արտաքուատ շատ պարզ երևում է, որ մինչև կաթուղիկեր շորոշ եղած որմասյունների հավասարությամբ քանդված էր գմբեթը և առաջին անգամ նորոգության ենթարկվեցավ Մովսես վարդապետի նախաձեռնությամբ, բայց հակառակ հայկական հին ոճին, որ թե թմբուկները և թե վերևի կոնաձև մասերը այնքան բարձր չին (հին օրինակ մնում է Հոփիսիմեի գմբեթը), ահագին բարձրություն և սրություն տըլած են արտաքուատ, որով աշուելի ծանրություն են պատմառած ներքեւի գմբեթակիր չորս մուլթերին: Ոչ միայն տաճարի արձանագրություններից երեսում է, որ ներքին գմբեթակիր մուլթերը վերևի ճնշող ծանրության տակ վնասվելով քանից նորոգվեր են և հաստացել, այլ և ներկայիս և հարավարևելակիր կամարները մաքաղական անդամակիր կամարները ճամագած ամբողջությունում առաջաւելու առաջնական պատճեն է:

Են վերևի թմբուկի ծանրության տակ, այնպէս որ հառաջիկային այդ ճեղքերը վտանգ են սպառնում շենքի ամբողջության: Ոչ նվազ վտանգ է սպառնում եղիազար կաթողիկոսի (1680—1691) շինած գմբեթներին մեկը յուսախալին կողմի արսիդին վրա, որուն ծանրության տակ ճաքել է արսիդի պատը մինչև պատուհան: Ահա այս անզգույզ ծանրաբենման պատմառով էր, որ մի քանի տարի առաջ հարավային կողմի փոքր զանգատունը ամբողջովին փլավ:

Եթե ուշի ուշով քննենք շենքի ճակատները, յուրաքանչյուր դարաշրջանի շինությանց և նորոգությանց հետքեր կատարենք: Հյուսախային ճակատի վրա տակավին մնացել են 5-րդ դարու մնացորդներ, — վերևի երեք ֆրոնտոնները, որոնք ճոխազարդված են պճղակներով (modillon), 5-րդ դարուց են մեղ հասնում: մնացյալ մասերուն վրա, վերեն վար, 7-րդ դարեն մինչև մեր օրերը եղած նորոգությունները և կարկատաններ շատ որոշ կերպն: Խնչակն կերպի, հաճախակի նորոգության ենթարկվեր են հարավային և արևմտյան ճակատները, որովհետև այս ճակատների վրա 5-րդ դարուց ոչ մի հետք չի մնացել, սակայն 7-րդ դարուց սկսած 11—13-րդ դարերի նորոգության նմուշներ գորություն ունենալուց հետո, խիստ ակնբախ են 17-րդ դարուց սկսած մինչև մեր օրերը եղած նորոգությունները ստորին մասերի վրա:

Այս ավելի քան տասներկու դար անտերւթյունից քանդման և ավերման ենթարկված շենքը, իբրև Մայր Աթոռ, այս հարգանքը չէր վայելում, ինչպես այժմ: ոչ միայն զանազան տեղափոխություններ կատարել կարելի էր, այլ և ըստ Զազար Փարպեցու, Վահան Մամիկոնյանը վերաշինում է իբրև «գործ նախնեաց իւրցց»), և ոչ իբրև Մայր Աթոռ, հետևաբար երբ 5-րդ դարուն վերջերը Աթոռը Դվինի փոխադրեցին, այլևս ուշադրություն շտարձորին Վաղարշապատի վրա: 7-րդ դարուն Կոմիտասը ընդունակում է Վահանի տաճարին ձեզ Հոփիսիմեի համար և նորոգություններ է կատարում, իսկ ներսես Շինողի կանգնած Զվարթնոցին մեջ մարմնացնում է Վահանի եկեղեցիկին ձեզ՝ այս մերժենս քիչ ավելի բնդարձակելով, որի մասին կիսունքը իու տեղում: Ներսես Գիգ հետո մինչև 17-րդ դար այլևս ուշադրություն շտարձման և Առաքել պատմագրի նկարագրած վիճակին հասավ:

*) Անշուշտ մոր կողմից ինքնինքը Պահապանի էր համարում:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ

 այ գրականության մեջ տակավին բացակայում են Միքայիլ Նալբանդյանի պատանեկան, հատկապես Նախիշեանյան, շրջանին վերաբերող մանրազնին ուսումնասիրություններ։ Նալբանդյանի կյանքին ու գործունեությանը նվիրված աշխատություններով ժնավ չեն պարզաբանված մի շարք ինդիրներ, ինչպես օրինակ, թէ ի՞նչից զրդված նա հոգեսոր կոչումն ընդունեց, մտավոր զարգացման ի՞նչ պաշար ուներ այդ ժամանակները, ի՞նչ հարցերի շուրջը պայքարի մտավ ներսես կաթողիկոսի, Նախիշեանի քաղաքավորի աղա Հարությունակի համար համախոսի ու սրա համախոռների հետ և վերջապես ի՞նչը ստիպեց նրան իր հայրենական տոմար թողնելու ու փախուստի դիմելու։

Հայկական ՍՍՌ Կենարոնական արխիվում վերջերս, մեր կողմից հայտաբերված նյութերը վերաբերում են հենց այդ, վերը նշված, ինդիրներին և նոր լուս են սփռում Նալբանդյանի պատանեկան։ շրջանի գործունեության վրա։

Ուստի, այս հանգամանքը նկատի առնելով, մենք ավելորդ չենք համարում հրապարակել Նալբանդյանի կյանքի ու գործունեության ուսումնասիրության համար կարեոր նշանակություն ունեցող այդ նորահայտ նյութերը։

Սակայն, այդ նյութերի շարադրման զուգընթաց, մենք անհրաժեշտ ենք համարում նաև որոշ կենսագրական տեղեկություններ հաղորդել պատանի Նալբանդյանի մասին։

1829 թվի հոկտեմբերի 26-ին, նոր Նախիշեանում, աղքատ Պաղարոսի ընտանիքում, վերջինիս շորորդ ամուսնությունից

հետո, ծնվում է մի վտիտ մանկիկ, որին կոչում են Միքայել։

Ենն տարեկան Միքայելին հայրը տեղավորում է տիրացու Օքսինու եղիշեի դպրոցում։ Ուշիմ Միքայելը շատ կարճ ժամանակամիջոցում յուրացնում է այն բոլոր գիտելիքները, ինչ որ ի վիճակի էր տալու նրան տիրացուն։ Ղազարոսը, նկատելով ուսման հանդեպ որդու ունեցած մեծ սերը և արտակարգ բնունակությունները, այս անգամ էլ նրան տեղավորում է իր ժամանակի հայտնի հայագետ Գաբրիել բահանա Պատկանյանի դպրոցում, որտեղ նա մոտ վեց տարի սովորում է։

Այդ տարիներին հայ հասարակական կյանքում մի շարք իրադարձություններ են տեղի ունենում, որոնք չեն կարող շանդադարձնալ նաև նոր Նախիշեանի հասարակական կյանքի վրա։ Հովհաննես Կարբեցու մահվանից հետո, էջմիածնի թափուր գանձի զահակալ է ընտրվում նոր Նախիշեանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցին։ Վերջինս ընտրվելուց հետո հրավիրվում է Պետերբուրգ, և դրա համար էլ փոխանակ անմիջապես էջմիածնի ուղևորվելու, նախ մեկնում է Պետերբուրգ, որտեղ ծանր հիվանդանում է։ Ապաքինվելուց հետո Ներսես Աշտարակեցին Պետերբուրգից վերադարձն այցելում է մի շարք հայաբնակ քաղաքներ, որոնց թվում և նոր Նախիշեանը, ու էջմիածնի հասնում։ 1846 թվի մայիս ամսին։ Նոր Նախիշեանում բավականին երկար ժամանակ մնալով կաթողիկոսը միշտ գործեր է տնօրինում, նախ քաղաքավորված Հարություն աղա Խալիպովին էջմիածնի գործակալ կամ վեհիկ կարգելով նրան է հանձնում եկեղեցիների բոլոր գումարներն ու եկամուտները՝ պատվիրելով հաշվետու լինել միայն իր առջև, այնուհետև փակում է

Գարբիել քահանա Պատկանյանի դպրոցը, իրեն քահանային էլ պաշտոնի նշանակում թիֆլիսում, իսկ նոր-Նախիջևանում էլ ուսուցիչ կարգելով կաթողիկադավան Մկրտիչ Եկեղեցյան վարժապետին, ամենախիստ կերպով պատվիրում է Հոգևորական Կոշման համար բոլոր պատրաստվողներին պարտադիր կերպով հաճախիել Եկեղեցյանի դպրոցը. միաժամանակ քաղաքագույն Խալիպովին հանձնարարում է խիստ հսկողություն ունենալ Հոգևոր կոչման համար պատրաստվողների վրա և որոնք չեն հաճախի Եկեղեցյան վարժապետի ընծայարանը, նրանց զրկել իրենց իրավունքներից:

Այս այս իրադրության հետևանքով, նաւաբանդյանն էլ ստիպված է լինում, որպես տիրացու, մյուսների հետ միասին հաճախիել Եկեղեցյանի ընծայարանը: Մեկ-երկու անգամ հաճախելուց հետո Նալբանդյանը շուտով նկատում է ուսուցչի տգիտությունն, ինչպես նաև դպրոցի սխուսատիկ ուղղությունը, և հրաժարվում է պարապմունքներին մասնակցելուց, ասելով թե՝ «Ես ձեր սովորեցուցածը արդեն վաղուց սովորել եմ, և առավել մանրամասնաբար քան թե դուք դաս եք տալիս,

ոմիք նոր բան սովորեցնելու, սովորեցուցեք, ես պատրաստ եմ ուղախությամբ սովորելու, բայց եթե չունիք, ապա ուրեմն խնդրեմ արձակեցեք ինձ»):

Կաթողիկոսը լսելով տիրացվի այս հանդիպնության մասին, հրամայում է մի գրաբար շարադրություն գրել տալ նրան: Նալբանդյանը գրում է այդ շարադրությունը և կաթողիկոսը միանգամայն գոհ մնալով պատրում է նրան Մկրտիչ վարժապետի մոտ սովորելուց:

Նալբանդյանի կենսագիրները, ձեռքի տակ համապատասխան տվյալներ չունենալով, կցկուուր և հակասական տեղեկություններ են հաղորդում ներսես կաթողիկոսի նոր-Նախիջևանում իջևանելու ու այստեղ որոշ կարգադրություններ անելու, ինչպես և Եշմածին ժամանելու ժամանակի վերաբերյալ: Մեր ձեռքի տակ է գտնվում ներսես կաթողիկոսի 1850 թվի օգոստոսի ՅՈՒ-ին գրած և նոր-Նախիջևանի ու Թեսարարիայի թիմի առաջնորդ Մատթևոս Եպիսկոպոսին հասցեագրված կոնդակը, որը ճշտում է այդ տեղեկությունները: Ստորև բերում ենք այդ կոնդակն ամբողջությամբ: —

ՆԵՐՍԻ ԽԱՆԱՅՅԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՎ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՅՈՔՆ ԱՍՏՈՒՇՈՅ ԵՓԻՍԿՈՊՈՂ-ՍՍՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՅԻ ՀԱՅՈՅ, ՇԱՅՐԱԳՈՅՅՆ ՊԱՏՐԻՒՇՐՔ ՀԱՄԱԶԴԴԱԿԱՆ Ի.Ս.Խ.Ա.ՄԵԾԱՐ Ա.ԹՈՒՇՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԵԿ ԷջՄԻԱԾՆԻ

Մերազան Մատթեոս Եպիսկոպոս վիճակաւոր ի նոր Նախիջևանայ և Թեսարարիոյ

Ողջումիւ Քրիստոնէական խնդրեմ առաքել մեզ զտոմարագրութիւն ամենայն Եկեղեցականաց հայոց ի ձերոց վիճակի ըստ անուանց իրաքանչիրոց Եկեղեցիաց քաղաքաց և գիւղօրէից և ի նոսին գտանեցեալ յիրաքանչիր քահանայից, աւագ սարկաւագ, ուրարակրաց, նշանակեցեալ դպրոց ամօք իրաքանչիրոցն հասակի և հանդերձ որքանութիւն և պահանջութիւն ուամանց նոցին:

Եւ ըսդ այնոցիկ գրել անուն անուն զանուանն ձեռնադրելոցն ձեր սրբազնութեանց յետ մտանելոյն ձեր ի կառավարութիւն այդմ վիճակի՝ քահանայ, կամ աւագ սարկաւագ, կամ ուղարակիր և կամ դպիր երկու կամ չորս աստիճանաւոր հանդերձ նշանակութեամբ եկեղեցեացն յորոյ նոքա գտանին:

Մեր ի լինելն Մեր ի Նախիջևան յանձնեցաք զուտուցչութիւն ամենայն հոգևորականացուաց պատուելի վարժապետ Մկրտիչին Եկեղեցան ոյր աղաքաւ հարցախնդիր եղեալ մինիստրն պրօվեշշենիք՝ գրեալ էր նա մինիստրին ներսնային գործոց և նա գրեալ առեղ, Մեր պատասխանեցաք նորուն բարձր

գերազանցութեան յայնժամ, այժմ պայծառափայլ Ղրաֆ կա Ալեքսէիչ Պերովսկույն յայտնեալ նորուն պայծառափայլութեան՝ թէ կարգեալ եմք Մեք վասն արժանաւոր գիտութեանցն նաև ուսուցչի Եկեղեցականաց մերոց, և նորին պայծառութիւն յայտնեալ զայնմանէ մինիստրին լուապտութեան, ըստ այնմ պայծառափայլութիւն զի Եկեղեցին-ուսուցիչ ըստ մերում կարգելույն:

Այսպիսի հոգունակութեամբ Մեր յաղագս սահմանաւորելոյ զընթասն Եկեղեցական կառավարութեանց հաւատացելոց Մերում համազգական հօտապետութեանց Մեր յամի 1845, ի լինելն Մեր այդր ի նոր Նախիջևան յանձնեցաք պայծառափայլութիւն մտանելու Մկրտիչ վարժապետին Եկեղեցան զամենայն զհոգմորականացուն՝ զի նա ուսուցչ զամենեսին ի հարկաւորսն ազգական քահանայացութեանց, և առանց ուսմանց Այնիցին նոցա ընդպարձակութիւն մտանելոյ ի կարգ Եկեղեցական կամ

*) Մ. Նալբանդյան. — Երկերի լիակատար ժողովածու, հատոր ասազին, 1945 թ. Երևան, էջ 491:

ընդունիլ որպէս եկեղեցական զարդինսն և կեղեցականութիւն վասն որպիսի և իցէ օրինակադրութիւննց:

Եւ վերատեսչութիւն յաղագս հնապանդութիւն այնոցիկ նշանակեալ եկեղեցականացուաց և հոգունակութիւննց վասն բարեջան աշխատութեանց պատուելի Եկեղեցանին յանձնեցաք նորին արժանանձնութեան քաղաքագլուխ աղայ Յարութիւն Պողոսեան Ղալուպովեանց ամու պատուիրանաւ զի ու ոք յայնցանէ շոմիցի աշակերտի ըստ արժանեաց՝ շոմիցի նա իրաւոնք լինիլ եկեղեցական: Այլ մինչև ցայսօր շնկալայ և ո՛չ զմի ծանօթութիւն վասն որպիսաբար հոգունակութիւն վարժապետ նկնեանին և քաղաքազուիս աղայ Յարութիւն Պողոսեան Ղալուպովեանց. և ես ընկզմեալ ի զբաղունս անվայնական կրութեանց եկեղեցական հոգևորական կառավարութեանց վրաստանայ Հայոց վիճակի մանաւանդ յամի 1845 դեկտեմբերի 17 ժամանեալ ի Թիֆլիս և յամի 1846 յամսեանն մայիսի ժամանեալ ի սուրբ Աթոռն. առ Հարկին պահանջելոյ ի նոյն ամք ի դեկտեմբերի 4 եկել յԱթոռոյն և ժամանեալ ի Թիֆլիս ի 17 դեկտեմբերի գտաք ի վերազնութիւն անարժանութեանց հոգևորական կառավարութեանց զամիս 18 և հունիկ զինի վերադարձեալ յԱթոռն յամի 1848 յամսեանն յուլիսի. Հարկադրեալ դարձեալ վերադարձաք ի Թիֆլիս յամի 1849 ապրիլի 8 յուսով վերադարձալ անդրէն յԱթոռն մինչ ցլրումն ապրիլի. այլ ապարախտութիւն բազմաւ գրեալ և ուրեմն կոնսիստորիական կառավարշական ի գրեր և կոնսիստորիական կառավարշական ի

ցաւալի դրութիւն. մնացաք ի հոգացողութիւն Մերում պարտաւորութիւնց զամիսս 15 և անագան վերադարձեալ անդուստ ժամանեցաք յԱթոռն ի յուլիսի 8 ամսեանն անցելոյ ուր տակաւին անծանօթ ամենայն Հարկաւորիալ սպասելոյ Աթոռայնոց՝ պայծառաւորիմք մտանել ի վերազնութիւն պատշաճելոց Մեզ, և Մերով աննկատողութեամբ հոգալ վասն կարկարացն Մեզ յաղագս համագական մերոց պաշտառութեանց:

Ընդ այս գրեցի և առ պատուելի Եկեղեցանն և աղայ Ղալուպովեանն վասն տալոյ Մեզ գտեղեկութիւն յաղագս որպիսաբար արդիմաւորելոյ նոցա զյանձնարարութիւն Մեր ի մասին եկեղեցականացուաց ուսումնականութեանց, և յաղագս լսելոյ նոցա մինչև ցայսօր ի մասին այնպիսի Հարկաւորագոյն ազգաօգուոտ յանձնարարութեանցն Մերոց չօգնեաց մինչև ցայսօր:

Խնդրեմ և ի ձեր սրբազնութեանց պարտաւորել զնոսա գրել ու անագան զծանօթութիւնն յաղագս այսմ յանձնարարութեանցն Մերում ինքեանց՝ ի մասին ուսուցանելոյ և պատրաստելոյ զեկեղեցականացուան ի նախիշեան քաղաքի: Մեք ըստ շնորհաց Աստուծոյ, ուրախ եմք զի ունիմք ընկալուլ ի սուրբ Աթոռոս ի 5 հոկտեմբերի գտառանգն Կայսերութեան Ուստաց զնորին Կայսերական Բարձրութիւն Աղեքսանդր նիկոլաևիչն որ ունի գիել ի գիրկս սրբութեան մօրն լուսուազանց Հայաստանեայց, զոր համարիմք Մեզ բարեբախտութիւն համազգական: Ողջ լեր:

Կաթողիկոս Ամենայն Հայոց՝ Ներսէս

№ 290

յամի 1850 և ազգական 1299
օգոստոսի 30 ի սուրբ Լշմիածին*)

Նալբանդյանի բարեխիղճ կենսագիր Երվանդ Շահազիզը, խոսելով Պատկանյանի դպրոցում պատասի Միքայելի ձեռք բերած գիտության ու մտավոր պաշարի մասին, հանգում է հետեւյալ եզրակացութեան. «Թէ որքան զարգացումն, որքան գիտութիւնն ձեռք բերեց Միքայելը Պատկանյանցի մոտ, մենք ձեռքներիս գրաւոր ապացոյց շնունենալու պատճառով, ճշտութեամբ շենք կարող ասել. բայց ի նկատի առնելով, որ նորա Տէր-Գարդիկից ստացած գիտութիւնը ծառայեց իբրև Հիմք նորա ապագայ գիտութեան և գրաւոր վաստակների, կարելի է ասել, որ նա գրաբար այնքան սովորեց, որ առանց զգալի

դժուարութեան կարգում ու հասկանում էր մեր մատենագրների գրուածները, գիտէր հայոց պատմութեան կմախքը, ծանօթ էր Հայոց եկեղեցու պատմութեան, և վերջապէս, բոլոր իւր աշակերտութեան ժամանակամիշցոցում տիրացութիւն արած լինելով, լաւ գիտէր եկեղեցու ժամասացութիւնը և արարողութիւնը նիկ ինչ որ վերաբերում է նորա այդ ժամանակայ զարգացման աստիճանին, թէն ալդ մասին գրաւոր ապացոյց նույնպէս շոնենք, բայց ի նկատի առնելով որ դպրոցից դուրս գալով, նա ուսման գործը վը թողեց, ինքնուսութեամբ շարունակեց իւր ուսման թերին լրացնել, միշտ ամեն բանի հետաքրքիր լինելով, միշտ կարդալով ու անցածը կրկնելով, կարելի է գալ այն եղբացութեան, որ նա Պատկանյանի դպրոցից ուս-

*) ՀՍՍԾ Պատկան կենտրոնական արխիվ, ֆոնդ № 54, գործ № 2894, էջ 1:

ման սիրոյ հետ միասին և բաւականին զարդացման պաշար տարավ^{*}):

Այս առթիվ կարեսը ենք համարում բերել մի գրաւոր վավերական, որը կազմել է Նորոնախիչւանի ու Թեսարաբիայի թեմի առաջնորդ Մատթևոս հպիսկոպոսը, կաթողիկոսի վերը բերած կոնդակի համաձայն: Թեմի տուժարագրության մեջ, դպիրների բաժնում, համառոտակի կերպով շարագրված են նալրանդյանի պաշտոնի, ուսման և սովորած առարկաների մասին հետեւյալ տեղեկությունները:—

«Միքայէլ դպիր Ղազարեան նալրանդյանց 21 ամաց, հաստատեալ է ի դպրութեան սուրբ Լուսաւորչի աւագ եկեղեցւոյ ի նորին Աստուածարնտիր Վեհափառութենէ յամի 1845, ապա յամի 1848 ընկայեալ է զշորս աստիճան ջահընկալութեան ի Մատթէոս վիճակաւոր Արքեպիսկոպոսէ. ուսեալ է առ Գաբրիէլ քահանայն Պատկանեանց գերականութիւն, զմարտասանութիւն և զհայկաբանութիւն. զԱստուածաշունչ դիրս հին և նոր կտակարանաց, զրբազան պատմութիւն, զԱզգային պատմութիւն, զմասնաւոր աշխարհագրութիւն և զմուաբանութիւն և զեզու Ռուսաց գրել և ընթեռնուզ և զայլ գիտելիս վերաբերեալս թէ առ եկեղեցական սպասահարկութեան և թէ առ արտաքին տեղեկութիւնս, և գտանեցեալ է և գտանի գրագրական պարտաւորութեան առընթեր վիճակաւոր Արքեպիսկոպոսի իրոյ ի 1848 ամաց հետէօ^{**}):

Այս վալերականի վրա մակագրված է՝ Միքայէլ դպիր Ղազարեան նալրանդյանց:

Ընդունակ ու խելացի Միքայէլը չէր կարող հանդորժել, որ իր սիրած ուսուցչին փոխարիներ մի սգետ ու սխոլաստիկ ուղղության տեր վարժապետ, այս առթիվ 16-ամյա պատանին իր խորը զայրուցին է արտահայտում 1846 թվի իներթարի 25-ին և մարտի 23-ին կրած իր նամակներում, որոնք հասցեագրված են այն ժամանակները էջմիածնում գտնվող նախիչւանցի տիրացու Սարգսին (վերջինս հայտնի էր Բարսեղ քահանա Պոպով ազգանվամբ): Նալրանդյանի այս երկու նամակները կրում էին դպիր Միքայէլ Ղազարյան Ռատայանց ստորագրությունը: Այս նամակներից հատկապես առաջինում նա հանդիպու-

ի նախիջ. Հայոց քաղաք. գլուխ Խալիպովէ
№ 206

ի 1 գեկտեմբերի 1849 ամի

*) Եր Շահազդը.— Միքայէլ Ղազարեան նալրանդյանց, 1897 թ. Մոսկուա, էջ 9—10:

**) ՀԱՄՏ. Գետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 54, գործ № 2894, էջ 7:

թյուն էր ունեցել խիստ քննադատության ենթարկելու նոր-նախիչւանի աղանձերին և դրանց հետ միասին նաև կաթողիկոսին:—

«Բովանդակեցնցուք արդ զդաշտու Ափրիկոյ ի քարտէզ նամակի և զլճակս Ասիրոյ ի նիւի սևակի, զանտառս Կովկասու ի գործ զիցուք փոխանակ գրչի, արդիօք կարեմք ի նմին բովանդակել զշափազանց լիմարութիւն մերոց քաղաքացեաց, որք գոլով ինքաննք յիմարք, զնոյն և զորքիս իրեանց տուեալ յաշակերտութիւն ումեմն Մկրտչի կարճահասակ լատինադաւանի, կոչեն զնա վարժապետ:

Ո՞վ յիմարութեան ազգիս Հայոց...

Կաթողիկոս Ամենայն Հայոց ներսէս կարգեալ զայս լատին ուսուցիչ ամենայն հոգեւորաց, հրամայիեաց աղա Յարութիւն Զալուպովի հարկադրել զեկեղեցականս՝ զնորընծայ քահանայս և տիրացուա, գալ և ուսանել զարհեաստ քերականութեանս: Գրէ առաքեալն. «Ամենայն ոք, որ ընդ իշխանութեամբ ի հնազանդութեան կայցէ»: Եւ զայս հպատակութիւն ցուցեալ մեր Հայրապետին, հաճեցաք առնել զայն, բայց ակամայ, քանզի ակների տեսանէտք, զի այս ծառ շար, չունէր տալ զպտու ինչ: Ինչ և իցէ, այժմ ամենայն հոգեւորականք երթան առ նառ այլ ևս շնանդուրժեաւ, ես գոլով աշակերտ Տէր Գարբէլի, զիս բոլով համբերեցից այսմա»^{*})

Տիրացու Սարգսը հետագայում նալրանդյանի սույն նամակները հանձնում է կաթողիկոսին. վերջինս էլ դրանց պատճենները հանել տալով 1849 թվի սեպտեմբերի 2-ին № 218 կոնդակի հետ միասին ուղարկում է Նոր-նախիչւանի քաղաքագլուխ Հարություն Խալիպովին՝ պատվիրելով նամակի հեղինակին պատասխանաւության կանչել և խիստ պատժել: Կաթողիկոսի կոնդակը ստանալով Խալիպովը 1849 թվի զեկտեմբերի 1-ին մի գրություն է գրու Նոր-նախիչւանի հոգեվոր կառավարությանը՝ պահանջելով քահանա ներկայացուցիչ նշանակել, որպեսզի նրա ներկայությամբ քննվի «Հանցապարտ» պահի Միքայէլ Ղազարյանի և սարկավագ Եղիա Շարշնիկյանի գործը և արդյունքի մասին զեկուցվի նորին Վեհափառությանը: Ստորև բերում ենք այդ գրությունը:—

ի նախիջւանու Հայոց Հոգեւոր կառավարութեան

Նորին Վեհափառության սրբազնասուրբ կաթողիկոսն ամենայն Հայոց ընդ կոնդակի

*) Եր Շահազդը.— Դիվան Միքայէլ նալրանդյանի, 1932 թ. Երևան, էջ 22—23:

իւրում յ 2-էն սեպտեմբերի ներկայ ամի, համար 218, առաքելով առ մեղ զօրինակս գրութեանց ատենադպրի կառավարութեանդ նղիայ սարկաւագ Շաբշնիքեանի և Միքայէլ դպրի Ղաղարեան Ռատայեանց, հրամայէ մեղ ընդ քաղաքական հոգարածուաց՝ պահանջեալ ի կառավարութենէդ զմի ոմն դէպուգաթ քահանայ և նորուն ներկայութեամբ առնել քննութիւն վասն գրելոցն ի նոցանէ, և զօրինակ քննութեանն ստորագրութեամբ մերով առաքել առ նորին Վեհափառութիւն:

Ի հետեւամ որոյ խոնարհաբար խնդրեմ ի կառավարութենէդ՝ նախ նշանակել զմի

Նոր-Նախիչևանի հոգեոր կառավարությունը, իր գեկտեմբերի 7-ի նիստում քննութիւն առնելով Խալիպովի գրությունը, որոշում է դիմել Նոր-Նախիչևանի ու Բեսարաբիայի թեմի վիճակային կոնսիստորիային և խնդրել նրա ցուցմունքներն այս առթիվ: Ահա այդ որոշումը. — «Որովհետեւ ըստ զօրութեան 80 յօդուածոյ բարձրագոյն կարգագրութեան, ուր հրամայեալ է թէ «Հոգեոր կառավարութիւնք լուսաւորչական Հայոց եկեղեցոյ ստորագրեալ են վիճակային հոգեոր Ատենից ալսր զաւանութեան և ո՞չ ինչ կատարել առանց յատուկ առ այն յանձնարարութեամբ վիճակային կոնսիստորիային Նախիչևանայ և Բեսարաբիոյ և խնդրել թէ զինչ պարտ իցէ առնել կառավարութիւնս որպէս վասն գեպուտատին, նոյնպէս և վասն Միքայէլ դպրին Ղաղարեան, որ ոչ գտանի այժմ աստ ի քաղաքու. զորմէ և ծանուցանել ինքեան Խալիպովին»:^{*)}

Այս որոշման համաձայն հոգեոր կառավարությունը գեկտեմբերի 16-ին № 753 գրությամբ դիմում է վիճակային կոնսիստորիային, իսկ վերջինս էլ, իր 1850 թվյ հունվարի 4-ի գրությամբ, կարգադրում է կատարել քաղաքագուստ Խալիպովի պահանջը՝ հիմնութիւն կաթողիկոսի կոնդակի վրա և գործի քննությունից հետո իրազեկ պահել կատարվածի մասին: Ինչ վերաբերում էր Միքայէլ Ղաղարյան Ռատայանցին, կոնսիստորիան հայտնում էր, թէ քանի որ նրա քաղաքու բացակայելու պատճառները և որանդ գտնը վել իրեն հայտնված չէ, ապա ինքը ի վիճակի չէ որևէ անօրինություն անել ապահովելու համար նրա ներկայությունը քննության

*) ՀՍՍՌ Պետական կնտրոնական արխիվ, ֆոնդ № 54, կենցաղային բաժին գործ № 681, էջ 7:

ոմն դէպուգաթ քահանայ, յաղագս ներկայ գտանելոյ ի ժամանակի քննութեան յանձն եղեալ մեղ գործոյ, որ վասն գրութեանց Եղիայ սարկաւագ Շաբշնիքեան և Միքայէլ դպրի Ռատայանի, և զանուանէ նշանակեալ քահանական ծանուցանել մեղ յանյապաղ ժամանակի. և երկրորդ՝ որպէս երկի զի Միքայէլ դպրի Ռատայանն լը գտանի յայժմս ի քաղաքիս ապա վասն ներկայ գրտանելոյ նորին քննութեան ժամանակին, առնել պատկանեալ դիւրն կարգադրութիւն:

Քաղաքական գլուխ Խալիպով^{*)}

Ժամանակ: Այդ գրության մեջ ասված է. —

«Հրամայեցին հրամանագրել Հոգեոր կառավարութեան նախիջևանայ կատարել զրպահանջ քաղաքական գլխոյ Ազնուական Աղայա Խալիպովի գհիմնեցեալն ի վերայ կոնդակի նորուն Վեհափառութեան սրբազնագոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց՝ նշանակելով զմի ոմն ի քահանայից գեպուտատ. յորում և պատիբել զի ընդ աւարտելն գդործն քննութեան զօրինակն այն գործոյ բուն նշանակութեամբ մատուցի Ատենիս ի ձեռն դոյն կառավարութեանդ վասն առնելոյ ի գործս սորին. իսկ յաղագս Միքայէլ դպրին Ղաղարեան Ռատայանց որովհետեւ Հոգեոր կառավարութիւնդ յուրումն յայտարարութեան չէ նշանակեալ թէ ու՞ր գտանի նոյն դպիրն և որո՞վ պաշտօնատարութեամբ հեռացեալ է ի քաղաքէ անտի, յայն սակա կոնսիստորիայս յաղագս ներկայ ածելոյ զնա ի ժամ քննութեան լը կարէ առնել զտնօրինութիւն ինչ, զայսպիսի անօրինութիւն Ատենիս ժանուցանել վասն տեղեկութիւն և նորին բարձու սրբազնութեան յայտարարութեամբ»:

Անդամ կոնսիստորիայի Աւետիս քնն. Տեր-Աւետիսիսեան
ի 4 յունվարի 1850 ամի, ի Քիշինէ^{**)}

Խալիպովի հետապնդումնեից խուլս տալու համար ավագ սարկավագ Եղիա Շաբշնիկյանը երկու բողոքագիր է ներկայացնում վիճակային կոնսիստորիային, Հիշատակելով այն ապօրինությունները, որ կատարում է Խալիպովը՝ անիրավացի կերպով հոգեոր գործին խառնվելով:

Այս առթիվ վիճակային կոնսիստորիան, 1850 թվի հունվարի 22-ի գրությամբ, Նա-

*) ՀՍՍՌ Պետական կնտրոնական արխիվ, ֆոնդ № 54, կենցաղային բաժին գործ № 681, էջ 6:

**) Նուզնը- էջ 8:

խիշևանի հոգեսոր կառավարության հրամայում է հիշեալ գործը քննելու համար դեպուտատ նշանակել ալվագ քահանա Տեր Խաչատուր Սեբյանին։ 1850 թվի մարտի 6-ին նախիշևանի հոգեսոր կառավարությունը նորից քննության առնելով այդ խնդիրը որոշում է քաղաքագլուխ Խալիպովից պահանջել

Նորին Ազնուականութեան Արքոյ բաղաքական զլուխ Յարութիւն Խալիպովի

Ըսկալաւ Հոգեմոր կառավարութիւնս գշրովարտակ վիճակային կոնսիստորիային Խախիշևանայ և Թեսարարիոյ ի 22-էն յունվարի սոյնոյ ամի համարաւ 54, որով հրամայէ քննել գործն վասն գրութեանց Եղիայ սարկաւագի, զորոյ զիուլթսն Անդամք կառավարութեանս Տէր Մարտիրոսն և Տէր Կարապետն հասուցեալ էին առ նորին Վեհափառութիւն սրբազնագոյն կաթողիկոսն ամենայն Հայոց ներսէս, նոյնպէս և հրամայէ կոնսիստորիայն պահանջել ի Զէնց զօրինակն կոնդակի նորին Վեհափառութեան որ առ Զեզ. զորմէ Զերդ Ազնուականութիւնն ի 1 դեկտ. 1849 ամի համարաւ 206 գրեալ ունիք Հոգեւոր կառավարութիւնս վասն զեպուտաթի, որպէս թէ նորին Վեհափառութիւնն յ 2-էն սեպտեմբերի յիշեալ 1849 ամի համարաւ 218 ընդ կոնդակի իւրում առաքեալ առ Զեզ

Սույն գրությունը կարդալուց Խալիպովը շատ դժգոհ է մնում և իր ժարութիւն-ի Ն 47 պատասխան-գրությամբ հայտնում է, թէ կաթողիկոսի կոնդակից չի երևում, որ վիճակային կոնսիստորիան իրավունք ունի իրենից պահանջելու նրա օրինակը, և որ ինքը մինչև որ շնուննա կոնսիստորիայի հրովարտակի ճիշտ օրինակը, չի կարող կատարել Հոգեմոր կառավարության պահանջոր. «...Այլ որովհետեւ ի կոնդակէ նորին Վեհափառութեան, — գրում է Խալիպովը՝ որով հրամանագրեալ է ինձ քննել զվերոհիշեալ գործն՝ ո՛չ երկի թէ վիճակային կոնսիստորիայն ունի պահանջել յիշեն զօրինակն այնորիկ որպէս այժմ երսի ի հաղորդագրութենէ կառավարութեանդ վասն այն, ես մինչ յունիլն իմ զիշտ օրինակն ի հրովարտակէ վիճակային կոնսիստորիային ոչ կարեմ կատարել զներկայ պահանջողութիւն կառավարութեանդ»; *)

Հոգեմոր կառավարությունը քաղաքագլուխ Խալիպովի պատասխանը անգոհացուցիչ համարելով, 1850 թվի մարտի 15-ի իր նիստում որոշում է աղա Հարություն Խալիպովի պա-

իրեն ներկայացնելու ներսէս կաթողիկոսի 1849 թվի սեպտեմբերի 2-ի կոնդակի վավերացված օրինակը:

Հոգեմոր կառավարությունը, իր 1850 թվի մարտի 19-ի Ն 170 գրությամբ, դիմում է Խալիպովին և իրազեկ դարձնում այս կայացված վճուի մասին.

զօրինակս գրութեանց Եղիայ սարկաւագի և Միքայէլ դպրի յանձնեալ իցէ Զեզ զբնութիւնն և այլն:

Այլ այժմ որովհետեւ Հոգեմոր կառավարութիւնս ըստ Հրովարտակի կոնսիստորիային պարու է հիմնի ի վերայ յիշեալ կոնդակի նորուն Վեհափառութեան որ առ Զեզ յ շ սեպտ. Ն 218: Վասնորոյ վերաբերեալ այժմ այսու միաւորականաւ առ Զերդ Ազնուականութիւն խնդրէ խոնարհաբար բարեհաճել որքան Հնար իցէ ի կարծ միջոցի ըլնիսացն երից աւուրց հասուցանել Ատենիս զվաւերացուցեալ Զերով ստորագրութեամբ զօրինակն կոնդակին ի հրամանգութիւն Ատենիս, և զոյնպիսի տնօրինութիւն ի: ամէ կառավարութիւնս ծանուց որպէս Խոհիայ սարկաւագին Շարշնիքեանց նոյնպէս և Միքայէլ դպրին Դաղարիան որ եկեալ է արդէն ատու, յաղագրս գիտութեան նոցին: *)

Հանջը անհետևանք թողնել այնքան ժամանակ, մինչև որ նա կներկայացնի Վեհափառի գրած կոնդակը. «Հրամայեցին. զներկայ պահանջողութիւն քաղաքական գլուխ Խալիպովին վասն տալոյ նմա զճիշտ օրինակ Հրովարտակի կոնսիստորիային և վասն տալոյ նմա զդեպուտատ յաղագ քննելոյ զօրինակս գրութեանց թողով անգործ առանց կատարման, մինչև ո՛չ յանդիման արասցի զիսկական կոնդակն նորին Վեհափառութեան. Հետեւցին վասն սոյն իսկ առարկայի ընդ նմին և յայտնել նորին Ազնուականութեան զի ամենայն ինչ կոնդակ և հրամանագրութիւնը նորին Վեհափառութեան ընդունելի և Ատենիս՝ միմիայն ող նորին Ազնուականութիւն այսուհետեւ միտ երբ և պատահեցի առաջի արասցի կառավարութեանս զիսկական կոնդակն յայտնելով զամսաթիւն և զհամարն իսկութեամբ վասն առանց տարակութեանց լցուցանելոյ, զի մի լիցի Ատենիս շվորութիւն ինչ, զորմէ տալ գիտել հրովարտակաւելիցունց Եղիայ սարկաւագին և Միքայէլ դպրին և առանձին յայտարարու-

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ Ն 54, գործ Ն 681, էջ 20:

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ Ն 54, գործ Ն 681, էջ 19:

թեամբ ծանուցանել նորին բարձր Արքակ-
նութեանս: *)

Հոգևոր կառավարությունն այս որոշման
պատճենները մարտի 17-ին ուղարկում է
№ 204 գրությամբ Խալիպովին, № 205 գրու-
թյամբ նորին բարձր սրբազնությանը, № 206
գրությամբ Եղիա սարկաւագին և № 207
գրությամբ դպիր Միքայել Ղազարյանին:

Այսուհետև քաղաքակուլս Խալիպովը
մարտի 25-ի № 67 գրությամբ իր դժողովու-
թյունն արտահայտելով Հոգևոր կառավա-
րությանը Վեհափառի հրամանի նկատմամբ
նրա բանած դիրքի
համար, վերջինիս ի-
րազեկ է դարձնում իր
մտագրության՝ Հիշյալ
խնդրի շուրջը երկուս-
տեք տեղի ունեցած
դրագրությունների բո-
վանդակությունը նորին
Վեհափառությանը հա-
ղորդելու մասին: Թե-
րում ենք նրա այս
գրության վերջին պար-
բերությունը. «Տեսեալ
իմ զայդակիսի ընթաց-
մուն Հոգևոր կառա-
վարութեան ոչ վերա-
բերեալ առ նպատակն.
այլ հետեւի նորա թո-
ղուկ զարբազան հրա-
ման նորին Վեհափա-
ռութեան անգործ և
անկատար, պարտա-
ւոր համարեցայ զա-
մենայն գրութիւնս ըստ
այս առարկայի, զօ-
րինակս միաւորակա-
նաց կառավարու-
թեանդ առ իս և իմոց
առ կառավարութիւնդ,
առաքել առ նորին Վե-
հափառութիւն ի բարեհաճութիւն կամաց
նորին»**):

Խնդիրը ավելի է բարդանում. Ներսես կա-
թողիկոսը, ծանոթանալով գրություններին,
խիստ կերպով հանդիմանում է վիճակային
առաջնորդին, որը խոշընդուռ է հանդիսացել
իր հրամանի կատարմանը՝ անբարյացակամ
վերաբերմունք ցուցաբերելով էջմիածնի
Մայր Աթոռի գործակալ աղա Հարություն
Խալիպովի նկատմամբ: Ի վերջո կաթողիկոսն
առաջարկում է անհապաղ էջմիածին ուղար-

կել հանդուգն Շաբրշնիկյանին և նալբանդյա-
նին: Սակայն, դրանով ևս հարցը չի լուծ-
վում, այլ ավելի սուր կերպարանք է ընդու-
նում: Խալիպովի հակառակորդները բողոքներ
են ուղարկում սենատ, ներքին գործերի մի-
նիստրություն և այլուր, հիշատակելով հո-
գեոր իշխանության գործերի մեջ խառնվե-
լու նրա ապօրինի քայլերը: Խալիպովի զե-
կուցագրում, գրված 1852 թ. նոյեմբերի

18-ին և հասցեագրված կաթողիկոսին, այդ
մասին կարդում ենք «...Այն է ի Յ ներկայ
ամսում ընկալայ ի Թականուկու քաղաքա-
պետէն գնիազ Լիլինէ
Հրամանագրութիւն գր-
ինալ ի Յ էն անցեալ
Հոկտ. համարաւ. Նո-
րին պայծառափալլու-
թիւնն ընդ այս Հրա-
մանագրութեանն ա-
ռաքեալ էր ևս մատու-
ցեալ Եղիայ քահանա-
յին Եաբշնիքեան խըն
դիր գանգատանաց ի
կառավարիչ սենաթն
առաջին տերարդա-
մենթ՝ զանօրինութե-
նէ Վեհափառութեան
Զերոյ, սինոթի սուրբ
Էջմիածնի, զբոքու-
րորէ նորուն, ապա ի
վերջու և դինէն, պա-
հանջողութեամբ յի-
նէն պատասխանուց ի
դէմ այսպիսի գան-
գատանաց քահանա-
յին. պարունակելոցն
յայն խնդիր, և մա-
սմամբ իփի վերաբե-
րելոց առ իս. ի նը-
մին հրամանագրու-
թեան ընթերցեալ տե-
սի, զի սենաթն ըն-



Միքայել Խալբանդյան

կալեալ զանգիսի խնդիր գանգատա-
նաց, կարգաւորեալ է առաքել զայն
առ պարոն մինիստրն ներսնային գործոց ի
տնօրինութիւն ըստ այնմ յիւրմէ կողմանէ.
յետ որոյ և պարոն օգնականն մինիստրին
հանդիմ առաջարկութեամբ իւրով հասու-
ցեալ առ քաղաքապետն Թականուկու հրա-
մայեալ է պահանջել յինէն գրաւոր պատաս-
խանի ըստ վերոգրելոյս. բայց նախքան
զպատասխանատութիւն իմ հարկ համարե-
ցայ և արժան վարկայ առաքել զպատճէնն
խնդրոյն այնորիկ ի հայեցողութիւն Վեհա-
փառութեան Զերոյ:

Այսու գրեցելովն ոչ բաւականացեալ քա-
հանայ Շաբրշնիքեանն գրգռեալ յանզուսպ

*) ՀՍՍԾ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ
№ 54, գործ № 618, էջ 22.

**) Նույնը, էջ 25:

կրիցն համարձակեալ է և շարունակել ըգդանգատանս իւր յանդուպն բանիւքն զարարեալ տնօրէնութեանց Վեհափառութեան Զերոյ և սինոթի սրբոյ Աթոռոյ էջմիածնի, այն է զի սինոթն ի հետևումն հրամանագրութեան Վեհափառ Տեառնդ պահանջէ զնա ինքն յատեանն իւր վասն պատասխանատութեան ըստ վերոգրեալ հանգամանացն. զորպիսի տնօրէնութիւն նոյնպէս ո՛չ համարէ նա վասրն ինքեան արարեալ համաձայն օրինաց, շի՛ք ասէ օրէնք կամ կանոն, որովք թոյլատրեալ լինի յայսպիսի հեռաւորութենէ պահանջել զորք ի պատասխանատութիւն:

Նմանօրինակ և հարակցաբար արձակ համարձակ գանգատէ ևս միշեալ քահանայն նոյն մատուցեալ խնդրով զինէն գրելով այսպէս. Նախիշեանայ քաղաքական գոլովս Խալիպովն ըստ ո՛չ թոյլատրելոյ օրինաց երբէք ումեք յայսպիսի իշխեցողութիւն. Ճեռնամուխ լինի միշտ ի գործս հոգեռորականաց քաղաքիս, որ այս օրինօք արգելեալ է ասէ, որովհետև և վերաբերէ թէ շի՛ք երբէք տեղի աշխարհական անձանց ի գործս հոգեռորականաց, յաելլով ընդ այնմ և զայն, իրը ևս գրեալ խնդրեալ եմ յատկապէս ի Վեհափառութենէ Զերմէ յանձնել ինձ զքննութիւն ծագեալ տարածայնութեանն ընդ մէջ նորա և տիրացու Բրոթորոբովի. այսպէս և ըստ գրութեան նորին երևելոյ յառարկայս գանգատանաց ի խնդրագործութեանն, լեալ եմ պատճառ անբաւականութեան, զիր իրը ի ժամուս Վեհափառութիւն Զեր երևեցուցանէ առ Մատթէոս վիճակաւոր առաջնորդն մեր...

Նոյնպէս և պատշաճ վարկայ ի հայեցողութիւն սրբազնասուրբ Տեառնդ առաքել զպատճէն հրովարտակի վիճակային կոնսիստորիայի յայն վախճանք որպէսզի տեսանիցէք զեղանակ համարձակախօս գրութեան և վերաւորի բանից յայնմ վերաբերելոց սեփականապէս առ իս. այն է՝ կոնսիստորիայն իրը յարդարութիւն իւր և յապացուցութիւն իւրոցն ընթացիցն վասն նշանակելոյ զիեպուտատ ի մասին ֆննութեան գործոյն Շաբաշնիքեանի արարեալ գոլով կարգադրութիւն յիրում ժամանակի ըստ զօրութեան կոնդակի Վեհափառութեան Զերոյ. այժմ անդէն յառաջ բերէ իրը զի ես սուտ եմ գրեալ առ Զերդ տէրութիւն վասն այնր ամի, որոյ վասն և խնդրեալ է ի սինոդէն էջմիածնի զհանգամանացս յայտնել Զերում Վեհափառութեան, որպէսզի այսու արարեալ իցեմ ինքեան շարայար զրաբարտութիւն»:^{*)}

Այժմ անդրադառնանք այն խնդրին, թէ ինչ

հանգամանքներ դրդեցին նալբանդյանին հոգեւոր կոչում ընդունելու:

Ուստա Ղազար նալբանդյանի բազմանդամ ընտանիքը պատկանել է Նոր-Նախիշեվանի շքավոր դասին, սակայն Միքայել Նալբանդյանի կենսագիրներից ոմանք, թերևս անպատվարեր համարելով այդ իրողությունը, ուստա Ղազարին դասել են միջակ ունեվորների շարքը: Այս սիսալ տեսակետը հետագայում ընդհանրացել ու տեղ է գրավել, դժբախտաբար, նաև «Հայ գրականության պատմության» մեջ, որտեղ ասված է. — «...Նրա հայրը, ուստա Ղազարը, կարողանում էր առանց նեղության պահել իր բազմամարդ ընտանիքը»:^{*)} Այլ բան են ասում մեր ձեռքի տակ եղած փաստաթղթերը: Նոր-Նախիշեանի հարկատու պարտապանների ցուցակի 25-րդ համարում գրանցված ենք տեսնում, ի շարու մյուսների, նաև նալբանդյանի հոր անունը: Քաղաքագուկով ժամկետ է սահմանում և խիստ հրամայում պարտապաններին այդ ժամկետում մարել իրենց պարտքերը. ահա այդ վավերականը. —

Ցուցակ

Ի հասարակութեան կարգաւորեալ վասն 1839 յամի քաղաքական խարճն իրաքանչկր խարճագիր անձանց սաստիկ կուպատութիւն որ պատկանեալ փողն բերէք ի դոմս և ստանալոցէք վասն վճարման դրամոց քիլթանցիայ.

Եղեւ յոնիսի աւուր 1839 յամի **)

Այնուհետև սրան հետևում է ցուցակը, որի 25-րդ համարում գրանցված է Ղազար Գրիգորով նալբանդին — 30 ոուրի:

Սրան առընթեր պետք է հիշատակել այն հանգամանքը, որ եկատերինա թ կայսրուհու կողմից Նոր-Նախիշեանի հայ գաղութին շնորհված արանությունները հետագայում վերացվեցին և պետական ծանր հարկերը վճարել դժվարանում էին ոչ միայն լքավորները, այլ և ունեռները: Այս առընչությամբ նոր-Նախիշեանցինները աղերսագիր են ուղարկում նովորոսիոն և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետ գրաֆ Վորոնցովին, գեներալ գրաֆ Բեկենդորֆին, լաղարյան եղբայրներին, որպեսզի վերջիններս միջնորդներ կայսեր առաջ՝ ծանր հարկերը թեթևացնելու համար: Ստորև բերում ենք Լաղարյաններին ուղարկած աղերսագիրը. —

*) Հայ գրականության պատմություն, II գ., Երևան 1941 թ., էջ 17:

**) ՀԱՍՏ Պետական կենտրոնական արխիվ, Գոնդ № 139, գործ № 48, էջ 6:

28 փետրվար ամիսն 1839 յամի

Գերազանցափայլ վեհազնեալ իշխան, պատուական աղայ Խաչատուր Աղայ Յօվակիմեան, Ազգային անմահ բարերար:

Նորին պայծառափայլութիւնն պարօն նու վոռոսիոյ Թիսսարաբեյոյ կեներալ կուպիունաթոր գրաֆ Վորոնցովն ի մայիսի ամսոյ անցեալ 1838 յամի ընդ միաւորական գրութեան իւրում առաքելով առ պայծառափայլ կեներալ գրաֆ Պէքինդորֆն զմատուցեալ յանուն նորին կայսերական մեծութեան ինքնակալին ամենայն Խուսաց Նիկոլայ Պավլովիշն զաղերսափիրն նախիջևանու հայոց հասարակութեանս յաղագս ազատս կացուցանելոյ գրնակիչս քաղաքիս ի նորու հրատարակեալ արքունի հարկապահանջողութեանց և թողլոյ զնոսայ յառաջին վիճակի նոցալ ըստ զօրութեան ամենաառողջամաքար պարգևալ 1779 ամի նոյեմբերի 14 մերում հասարակութեան, Պրիվլեկին բարեխօսեալ էր որպէսզի նա, մեծանուն կոմս Պէքինդորֆն առաջի առնէր զայն աղերսագիր մեր նորին կայսերական մեծութեան ի գործ զնելով լիւրում կողմանէ և զիւր բարեխօսութիւն ըստ սոյն առարկայի: Գերազանցափայլ իշխանապետ հասարակութիւն մեր յօրէ վերաբնակելոցն իւրոց ի թերակզոյն Դրիմու ի սոյն քաղաք քաղաքագիմի արգասիս բարերարութեան օրհնաբանեալ ազգատոնմիդ կազարեանց անշինչ գծագրեալ ունելով յերախտագէտ սրտի յիւրում և ի բարում փորձոց քաջ հաւատարմացեալ գոլով եթէ որչափ վերազանցափայլ վեհազնութիւն ձեր նախանձինդիր է մեծագործութեան անմահանունդ նախնեաց իւրոց և թէ որպէս փոյթ յանձին ունի հանապազ վաստակել վասն օգտի և բախտաւորութեան հայրենի ազգին:

Համահանոյական վճիռ

Մի տարի անց նոր-նախիջևանի հայ համայնքը երկու մարդու լիազորում է, որպեսզի ներկայանան կայսեր և խնդրեն հարկերը թեթևացնել. այս մասին կա հետեւյալ վավերականը.—

Եւոյ ի նոյն սակս և մեք այժմոս խոնարհագէմ համարձակութեամբ վատահանամբ առաքելով ընդ սմին դիսկական օրինակն գրութեան պայծառափայլ գրաֆ Կորոնցովին առ գրաֆ Պէքինդորֆն ըստ յիշեալ ի վերոյ առարկացի ի ծանօթութիւն գերազանցափայլ վեհազնութեան գերով խնդրեամբ երես անդասցի միջնորդել առ ողորմած կայսերն մեր յաղագըս ազատս կացուցանելոյ զհասարակութիւն մեր ի նոր եղեալ հարկաց և հաստատելոյ զպարգևեալ հասարակութեան մերում բարձրագոյն հրովարակսն ի կայսերացն Խուսաց տէրութեան որպիսի ազգասիրական միջնորդութեամբ ձերով վեհազնեայ իշխանապետ յափտեանս ժամանակաց ունիթ անմահացուցանել զանոն ձեր պատուական ազգի մերում և պարտաւոր համարէ ինքեան եթէ զերազանցափայլ վեհազնութիւն ձեր արժանի արասցէ զմեզ ախորժելի ծանուցմամբ իւրով զորպիսութիւնէ և զհանգամանաց յիշեալ մատուցեալ նորին մեծութեան աղերսագրոյ մերոյ յորոյ մասին նույնպէս խնդրել եմք առանձին և զպայծառափայլ գրաֆ Պէքինդորֆն վերազանցափայլ վեհազնեայ իշխանապետ ձերդ ազգասէր բարերարութեան ամենաողորմ Տեառն ամենախոնարհք և ամենաանուաստ ծառայք ստորագրեցեալ են նախ քաղաքական գլուխ Խաչատուր Խոմանցով ընդ նմին ստորագրեցեալ են հոգաբարձուր տասն. և ութ անձինք:*)

Խնդրել ազատութիւն առ այն որքան կարողէք ի հասարակութեանէ յօգուտն հետևել զի այս բրիկովորս ստորագրութեամբ մերոյ հաստատեմք. եղեկ փետրվարի 5 աւոր 1840 յամի:**)

Այնուհետև հետևում են 65 ստորագրություններ:

Պիտի ասել, որ բոլոր աղերսագրերն ու միջնորդությունները ապարդյուն են մնում, իսկ սակավազորների վիճակը ավելի քան վատթարանում է: Չունեորներից ումանք հարկերից ազատվելու և որոշ արտոնու-

*) ՀՍՍԾ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 139, գործ № 49, էջ 7:

**) ՀՍՍԾ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 139, գործ № 48, թերթ № 3.

թյուններ ձեռք բերելու միակ ելքը թերևս փնտռում են հոգևորական կոշում ընդունելու մեջ: Այդպիս է վարվում, հավանականութեն, և 19-ամյա պատանի Միքայելը: Պահպանվել է նոր Նախիչևանի հասարակության 1848 թ. մայիսի 10-ի ժողովի կողմից տրված արձակման գիրը Նալբանդյանի դիմումի առթիվ: Այդ գրության մեջ հայտնվում է Նալբանդյանի հոգևոր կոշում ընդունելու հետևանքով նրան աշխարհականների ցուցակից հանելու և մինչև նոր աշխարհագիր (մարդահամար) լինելը հարկերից ազատելու մասին: Թերում ենք այդ վավերականը.—

Արձակման գրի

10 մայիսի 1848 ամի... Թաղանրոցու քաղաքապետութիւն իշխանութեան Նախիչևան քաղաքի որ առ Դոն գետու, ներկայ հասարակութիւն հայոց քաղաքացեաց ի հաւաքման ընդ նախագահութեան պ. քաղաքական գլխոյ համաձայն խնդրոյ տեղույս մեջանին Միքայէլ Ղազարեանի Նալպանդեանց որ է այժմ ի ծննդէ 19 ամաց, յայտնելոյ նորա ցանկութիւն իւր մտանել ի հոգևորական կոշումն, որ կայր գրեալ ի 8-րդ աշխարհագրոյն ի թիւ քաղաքացեաց քաղաքին Նախիչևանայ ընդ համարաւ 26, ունելով ի նկատման զի նա Նալպանդովն յայսմ Նախիչևան քաղաքի շոնի ոչինչ յայնմ պատճառում, մեք բոլորեքեանքս յայտնեցաք զօժարութիւն մեր ի յայնպիսի ցանկութիւն Միքայէլին Ղազարեան որ կամի մտանել ի հոգևորական կոշումն և պարտաւոր լինեմք մինչև ցլինել նորոք աշխարհագրության վասն նորա ամենայն տեսակ արդունական հարկսն և այլ տուչութիւնն տալ, և ի հաստատութիւն այնմ տամք նմա Նալպանտովին այս արձակման գիրս յաղագս յանդիման կացուցանելոյ ուր հարկն է:

Այս արձակման գրի տակ կան 69 անձանց ստորագրությունները և քաղաքագլուխ Խալիպովի հետևյալ մակագրությունը.—

Որովհետև այս արձակման գիրս իսկապէս Նախիչևանայ հայոց հասարակութիւնն ի ներկայութեան իմոյ արար և նշանակեալ թիւք քաղաքացեաց 69 անձանց սեփական ձեռամք ստորագրեցին, բայտ մտաց գրոյն ստորագրութեամբ իմով և գրոշմամբ քաղաքական կնքոյ վկայեմ Նախիչևանի քաղաքական գլուխ Խալիպով:

Մայիսի 10 1848 ամի^{*)})

Սույն արձակման գրի կա նաև ոռուերեն բնագիրը:

Նալբանդյանը, նույն օրը և եթ Նախիչևանի հոգևոր կառավարությանը տեղեկացնելով այս արձակման գրի ստացվելու մասին, խնդրում է Ներկայացնել այն ուր հարկն է: Բերում ենք Նալբանդյանի այդ գրությունը.—

Խնդրէ, արձակեալ ի Նախիչևանայ Հայոց հասարակութիւնը յաղագս մտանելոյ ի հոգեւորական կոշումն, հայ Միքայէլ Ղազարեան Նալպանդովն, իսկ եթէ զի՞նչ է խնդիր իմ այնմ զի՞նու գայս յօդուածք:

Յանդիման կացուցեալ ընդ սմին զարձակման վկայագիրս, զոր տուեալ է ինձ նախիչևանայ Հայոց հասարակութիւն ի մասին մտանելոյ իմ ի հոգեւորական կոշումն վաւերացուցեալ ստորագրութեամբ Նախիչևանայ քաղաքական գլխոյ, ամենահպատակութեամբ ինդրեմ: Ի սմին խնդրոյ արձակեալ Նախիչևանայ Հայոց հասարակութիւնը:

Որպէսզի ընկալեալ զայս խնդիր իմ հրամայեալ լիցի յաղագս առաջի առնելոյ զվերոյիշեալ վկայագիրս ուր հարկն է ի մասին ի բաց հանելոյ զիս ի թուոյ ցեխավորյից Նախիչևանայ առնել զպատկանեալ կարգադրութիւն: Ի 10 մայիսի 1848 ամի, խնդիրս այս պատկանի մատուցանել ի Նախիչևանայ Հայոց Հոգևոր կառավարութեան, զիսնդիրս զայս շարագրեցի, պարզագրեցի և ստորագրեցի:

Միքայէլ Ղազարեան Նալպանդով:

Բնակութիւն ունիմ ի Նախիչևան քաղաքի ի հայունական տան:^{*)}

Սույն գրության վրա կա հետևյալ մակագրությունը.—

«Հն 63 ընկալաւ կառավարութիւնս ի 10 մայիսի 1848 ամի յերկուշաբթի»:

Քննության առնելով Նալբանդյանի սույն խնդրագիրը և այդ առնշությամբ Նախիչևանի հասարակութեան արձակման գիրը, հոգեվոր կառավարությունը 1848 թիվի հոմերս 2-ի նիստում որոշում է այս մասին իրավեկ դարձնել թեմի առաջնորդ Մատթեոս արքեպիսոպուսին՝ համապատասխան կարգադրություն անելու համար: Թերում ենք այդ որոշումը:—

^{*)} ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 54, գործ № 693, թերթ 21.

^{*)} ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 54, գործ № 693, թերթ 18:

Ն. Ն. Գ.

ի նախիջևանայ Հայոց
Հոգեոր կառավարութիւն
Հ յունիսի 1848 ամի

№ 1

նախիջևան

Յաղագս մտանելոյ ի Հոգեորական կոչումն արձակեալ ի հասարակութիւնէ Միքայէլ Ղազարեանի նալպանտով — Դարրինեանց:

Առաջարկութիւն առ նորին բարձու սրբազնութիւն հանդերձ արձակման թղթովն Հ յունիսի 1848 ամի

№ 218

Լուան զխնդիր արձակեալ ի նախիջևանայ հասարակութենէ յաղագս մտանելոյ ի հոգեորական կոչումն հայ Միքայէլ Ղազարեան նալպանտովի ի 10-էն մայիսի սույն ամի՝ ընդ որում յանդիման կացուցեալ զարձակման վելայագիրն զոր տուեալ է նախիջևանայ Հայոց հասարակութիւն ի մասին մտանելոյ ի հոգեոր կոչումն վաւերացուցեալ ստորագրութեամբ նախիջևանայ քաղաքական զինդիր՝ խնդրէ ընկալեալ զայն խնդիր առաջի առնել զվերո՞իշլալ վելայագիրն ուր հարկն է՝ վասն ի բաց հանելոյ զինքն ի թուոց ցեխավոյլից նախիջևանայ առնել զպատկանեն տնօրինութիւն:

Հրամայեցին. —

Համաձայն 103 յօդուածոյ բարձրագոյն կարգադրութիւն յաղագս կառավարութիւն գործոց Լուսաւորչական եկեղեցւոյ Հայոց ի Ռուսաստան՝ առաջի առնել ցայսմանէ նորին բարձու սրբազնութեան Տեսան Մատթէի թեմակալի Արքակիսկոպոսին նախիջևանայ և Թեսարապից մատուցանելով և զիսկական արձակման վելայագիրն թողով ասս ի գործումն զպատճէն այնորիկ, և խնդրիկ՝ զի զոր ինչ և արժանն է տնօրինսեցէ վասն նորա: Խակ յաղագս մին թերթ կերպովոյ թղթոյ որ ի գործածու ի ամին ատենիս փոխանակ նորին զհասարակ թուղթ, պահանջեալ ի խնդրագործէն զգինս այնը զտասնեհինդ կոպէկ արծաթոյ՝ առաքել ի Ռուսաստու արքունական գանձարանն ընդ առանձին հաղորդական թղթով*):

Չորրորդ աստիճանի Հոգեոր կոչումն ընդունելով դպիր Միքայէլը նախիջևանի Ս. Լուսավորի եկեղեցում պաշտոնավարում է մինչև 1848 թվի օգոստոս ամսվա վերջը, թեմի առաջնորդը նկատելով պատանի Միքայէլի ուշիմությունն ու խելացիությունը

մի գրությամբ տեղեկացնում է նախիջևանի Հոգեոր կառավարությանը որ ինքը մտադիր է նրան իր մոտ տանել գրագիր-քարտուղարի պաշտոնով: Թերում ենք առաջնորդի գրությունը. —

Ի թեմակալ Առաջնորդէ նոր-նախիջևան այ և Թեսարարիոյ ի Մատքս Արքեպիսկոպոս:

Հոգեոր կառավարութիւն Հայոց նոր նախիջևան բաղադրի Առաջարութիւն

Թեմակալ Առաջնորդ նոր նախիջևանայ և Թեսարարիոյ Հայոց ընդունելով մեր զբնդունակութիւն շորրորդ աստիճանաւորի դպիր Միքայէլ Ղազարեանի ստորին պաշտօնէի սովոր կուսաւորչչ եկեղեցւոյ յաղագս զրագրութիւն և սպասաւուրութեան մերոյ, ընկալաք առ մեզ ունի,

ընդ մեզ ի մերում վիճակի ի գործոն, զորմէ ի տեղեկութիւն ատենիդ սովաւ ծանուցանեմք ի 19 օգոստոսի 1848 ամի ի նոր նախիջևան:

Թեմակալ Առաջնորդ նոր նախիջևանայ և Թեսարարիոյ Հայոց

№ 129**)

Արքեպիսկոպոս Մատքս

Քարտուղարի պաշտոն ստանձնելով նալքանդյանը հարավալորություն է ստանում թե նախիջևանի ու Թեսարարիայի շրջագայելու նախիջևանի ու Թեսարարիայի

ընդարձակ թեմի բոլոր հայաբնակ վայրերը և թե մոտիկից ծանոթանալու ժամանակի հասարակական-քաղաքական խնդրիներին:

(Շարունակելի)


*.) ՀՍՍՌ Փետական կետրոնական արխիվ, ֆոնդ № 54, գործ № 693, թերթ 19:

**) Նույնը, թերթ 22:



ՌՈՒՄԱՆՍՀԱՅՈՑ ՄՏՔԻ ԳԱՆՁԱՐԱՆ

„ՀԱՅ ՄՇԱԿՈՒՑԹԻ ՏՈՒՆԸ“



ատմական դեպքերու բերումով Մայր Հայրենիքեն հեռու գըտնվող հայ գաղութներու դարավոր պատմութիւն ընթացքին անկասկած, մեծ դեր մը ստանձնած էին կատարելու նաև մեր եկեղեցիներու ու դպրոցներու կից ստեղծված գրադարաններն ու մատենադարանները: Անոնք է, որ այսօր այ տակավին պիտի փորձեն հայեցի մտավոր սնունդ տալ գաղութահայ դպրոցներն ավարտող աշակերտության: անոնք պետք է ջանան փրկել ձուլման ալիքների տարվելու վտանգին առաջ կանգնած գաղութահայ երիտասարդությունը, և ավելին, անոնք մեր Մայր Հայրենիքին լավագույն հայեցին պիտի հանդիսանան, իրենց ընթերցողներուն հաղորդելով քաղցրությունը Սովետական Հայաստանի թարմ և առաջարկող գրականության ու մշակութիւնի եվ վերջապես անոնց դեկավարները զանոնք հայ մտքի ճշմարիտ գանձարաններու վերածելով, պետք է առաջալի մը անխոնջ աշխատանքով ու զուռությամբ շրջին, որոնք ու գտնեն ու պահպանեն այն ամենը, ինչ որ կապ ունի հայ ժողովրդի անցյալի ու ներկայի պատմության, մշակույթի հետ: Ու երբ օր մը կարելի ըլլա զանոնք քուլորը կեղրոնացնել Սովետական Հայաստանի գիտական օճախներուն մեջ, ամեն մեկ հայ գաղութի գրադարան կամ մատենադարան իր հավաքած նշխարներով է, որ պիտի նպաստե հայ մշակույթի հարածում զարգացմանն ու հայ պատմագրության ամրացմանը:

Ծովանահայելուն և, վերոհիշյալ ըգագումներին տարված, Հովսեփ և Վիկորիա Տուտյան ընտանիքի նվիրատվության շնորհիվ, Պուրքիշի մեջ հիմք դրավ ու բացումը կատարեց հայ եկեղեցվոր ու դպրոցին կից կառուցված ժշայ Մշակույթի Տան» փառավոր շենքին, ուր և փոխադրությամբ Ազգային վարժարանի շենքին մեջ 1927-ին հիմնված «Ծովանահայ Կեդրոնական Մատենադարան»-ի ամբողջ գույքը: Ենքը կառուցվե-

ցավ «Միսաքյան» դպրոցի ավերակներուն վրա, որ նախապես շինված էր 1817-ին Մանուկ պետ Միրզոյանցի կտակով ու հետո ալ, 1847-ին, ակնեցի Վարդերես, ամիրա Միսաքյան վերստին զայն շինելով կոշած էր իր առունով «Միսաքյան» վարժարան:


Նախ քան «Հայ Մշակույթի Տան» մասին խոսիլը, անհրաժեշտ կհամարենք համառոտ ակնարկի մը տեսքով շարադրել ուսմանահայոց անցյալի գրասիրության և ստեղծված գրադարաններու պատմությունը:

Ծովանահայելու առաջ Բագրատունյաց մայրաքաղաք Անիին խումապահար փախչող հայելոր ապաստան գտան ոռոմեն ասպենցական հողին վրա, ուր ոչ միայն շուտով շենցուցին Մոլտավիտ? քաղաքները և շուրջ երկու դար իրենց ձեռքը պահելով երկրին ներքին ու արտաքին առևտուզը, ագոգեցին ոռոմեն արվեստին վրա իսկ, այլ և հայրենի երկրեն բերած նվիրական շունչով կորողներ— վանքեր, եկեղեցիներ, դպրոցներ, և այլն կանգնեցին ու դարձյալ այդ հայրենի շունչը պահելու համար էր, որ հիմք դրին հայքադարներու Սուշավա քաղաքի հայ գաղութը մանավանդ, ուր ատենով շինված են շուրջ տասը սրբավարեր, որոնցմե երկու վանք, երկու եկեղեցի ու երկու մատուռ մինչև այսօր տակամին կանգուն են, կարելի է իրավամբ անվանել ուսմանահայոց Անին:

Ծովանահայելու ընդհանրապես սիրած են հայ դպրոցը և ծիշտ այդ պատճառով անգրագիտներու թիվը անոնց մոտ շատ փոքր եղած է: Ծովանահայ դպրոցները հին ժամանակ գույություն ունեցած են եկեղեցիներու շուրջ շինված առանձնարաններու և կամ խոցերու մեջ, և այն շրջանեն, երբ ուսմանահայերը հիմնած են իրենց եկեղեցիները, անոնց շուրջը ծաղկած են նաև իրենց կրթարանները: Հին ժամանակ, օրինակ, Պոթոշանի թաղականությունը, պատասխանելով պետական դպրոցներու ուսմեն ընդհանուր քննիչը մեկ հարցումին, հայկական դպրոց-

ներու հիմնադրումը Պոթոշանի մեջ կվերագրե 14-րդ դարուն, այսինքն այն թվականին, երբ Պոթոշանի Ս. Աստուածածնի եկեղեցին կառուցված էր,^{*)} Գր. Գոլլավ, իր մեկ աշխատության մեջ, կըսե թե մինչև անցյալ դարու սկիզբը Պոթոշանի տղայոց վարժարանը միակ դպրոցն էր ամբողջ քաղաքին մեջ, իշխանության կողմէն վագերացված առանձնաշնորհումներով արտոնված, և որ բազմաթիվ այլազգիներ ալ կհաճախեին այս դպրոցը ու դեռ 19-րդ դարու կեսին հայ լեզուն կիսումին ուրիշ ժողովուրդներու կողմէ ալ^{**}): Գարձյալ 17-րդ դարու առաջին կեսին Պանտիքի անուն ճիզուիթ կրօնավորը

շուկաները ամենին^{***}): Այս առթիվ տեղն է մասնավանդ հիշել անցյալ դարու երկրորդ կեսին Յաշի մեջ հիմնած Խաչերես Գարագաշի բացառիկ վարժարանը, ուր իրենց նախնական կրթությունը ստացած են ամեն ազգերի կազմված Մոլոտավիո գրեթե ամբողջ ընտրանի դասի զավակները: Այդ վարժարանի աշակերտներն հիշենք Հանգուցյալ Գեորգի Պուլսուկանը, ուսմեն երթեմնի զանում ինամակալը, Հանգուցյալ Գեորգի Մորդեկանը, որ դատական նախարար եղած է, Տումիթոր Կաւացին, որ կրթական նախարար և Ռումենի Ակադեմիի նախագահ եղած է, Հայազգի Հանգուցյալ Գր. Լ. Բրանժու Յաշը



Հայ Մշակույթի Տաճական շենքը

Յաշեն անցնելով 20 դպրոցներ կհիշե, որոնց մեջ սովորող հայ աշակերտաներ ալ կարին:^{****}) Այս կրօնավորը Ռուման քաղաքն անցնելով այն տեղի հայերը ավելի վարթամ կանանե քան նույնիսկ տեղացիները, և կըսե, թե անոնք ամենալավ տուներն ու

որ հիմը դրած է ուսմեն աշխատանքի նախարարության և իր հուշերուն մեջ այս վարժարանի մասին դրած է. «Անկե ի վեր (խոսքը Գարագաշի դպրոցը հաճախելու մասին է) 50 տարի անցած է, այսինքն կես դար, և կկարծեմ թե մեր այսօրվա նախակրթարանները դեռ չեն կարողացած հասնիլ մանկավարժական այն կատարելագործված եղանակին, ինչ որ ի գործ դրած էր այդ ժամանակ Գարագաշը իր դպրոցին մեջ, ուր ես ես ա-

*) V. Ciomac.— Scoalele armenesti din Botosani. „Ararat” ամսագիր, 1937 № 147 Bucuresti:

**) Gr. Goilav.— Armenii ca intemeitorii de orase... 1939, p. 19; Bucuresti:

***) V. A. Urechea.— Codex Bandinus (Analele Academiei Romane, ș. r. II Tom XVI, 1894 Bucuresti, p. 85 & N. A. Bogdan.— Orasul Jasi 1913 Jasi, p. 252:

*) N. Jorga.— Ist. Romanilor prin calatori. Ed. II, Bucuresti 1928—29:

շակերտեցա...»*) Այստեղ պետք է հիշել նաև անոնք Գեորգի Ասաքիին, որոն ևս հայ ծագում կվերագրվի. ան ամբողջ Մոլտավիո մշակույթի առաջալը ու կրթական գործի կազմակերպիչը հանդիսացած է, հիմնելով առաջին սպարանը, թերթը: Ան հիմնած է նաև ոռոմեն Միհայլան Ակադեմիան, երաժշտանոցը, թատրոնը և այլն: Միհաֆամանակ ան չերմ պաշտպան հանդիսացած է Մոլտավահայ գաղութին, աշակելով հայ դպրոցներու պետականացման գործին և ոռմանահայ առաջին հայկական սպարանի հիմնադրության: **)

Մեր մի առանձին ընդարձակ ձեռագիր աշխատովիանը (***) թողնելով Մոլտավիո հայոց դպրոցներու պատմության շարադրումը, պետք է ըստնք, թե ոռմանահայերը միշտ աշքի ընկած են իրենց ուսումնատենչությամբ, միշտ սիրած են հայ գիրը, ու բացի անցյալի մեջ բազմաթիվ ձեռագիրներ գրելեն, 1847-ին Յաշի մեջ հիմնած են նաև իրենց առաջին սպարանը: Հին ժամանակներու ընթացքին այս գաղութի մեջ զարգացած քահանաներ ու երեխի դեմքեր ըլլալու մասին կլիայի միշտադարյան տաղասաց Մինաս սարկավագ Թոխաթեցին՝ իր «Ռոդ ի վերայ օլախաց Հայերուն» անուն շափածո գործին մեջ գրված 1551-ին:

«Երիցանիցն ուած էին
ժամատեղօք պայծառ էին,
իմստ փառաւոր Հայեր կային,
յանկարծ փորձանք եկաւ նոցին:»

* * * * *

Այն քաջ ուած երիցունին
քաղցրաբարբառ սարկաւագնին,
թագաւորքն և զալենունին
յանկարծակի խափանեցին»****):
Եվ այլն:

Զանազան շրջաններու մեջ, Ռումանիա գրված ձեռագիրներու հիշատակարաններ կվկայեն, թե որքան ուսումնատենչ ու զարգացած մարդիկ և գրասեր մեկենասներ կապրեին ատենոք ի մասնավորի Մոլտավիո մեջ

*) Gr. L. Trancu Jasi. — Amintiri Jeseșe p. 11—12:

**) U. Քոլանչյան. — Գեորգի Ասաքի (1788—1869) և լյանքն ու գործը և ծագումը (անտիպ):

***) U. Քոլանչյան. — Վերափոնմութի պահ մը Մոլտավահայ անցյալին մեջ (անտիպ):

****) Պուբրեշի «Հայ Մշակույթի Տաճա ձեռագիրներ թիվ 35—37, 66, 94, Պ. քն. Մամիկոնեան. — Ռումանահայոց ներկային և ապագայն, Կալաց 1895 և

Gr. M. Buiuciu. — Cant de jalișe..., București 1895

իբր նմուշ հիշենք միայն Մեսրոպ վարդապետ Կաֆացիի կողմէ 1607-ին ընթորինակված ու գծագրված և այժմ Վենետիկի Միհայլանց մոտ պահպող «Տոմարի մեկնութեան»-ի հիշատակարանն մաս մը, ուր գրիշը կըսե. «...Մնաց գիրքս կիսատ, անմխիթար ու տարակոյս էի, մինչև որ Ռ. Շ. Զ. (=1607) թվին եկի ի Եաշ քաղաքն, և օրինակ գտի Տէր Աստուածատուր քահանայէն, և բարեմիտ սարկաւագ մի Սունդիաննու անուն կատարեաց գգիրքս, և մխիթարեաց զանմխիթար անձս: Աղաշեմ զբաց պուհիտիկոսիդ եկեղեցոյ որ հանդիպիք այս տափս, յիշեցէք ի Քրիստոս զաշխատողքս... մանաւանդ յԵաշ քաղաքի արքեպիսկոպոս Տէր Հովհաննէս Միհովցուն, որ գտարտամ սիրոս միսիթարեաց...»*:*)

Մոլտավիո հայոց շինած եկեղեցիները 1551-ին այրուեցան, ու քանդվեցան Շենքան Ռարմանավ խոկ թանկարժեք հայկական ձեռագիրներ, նկարներ, զգեստներ և այլն կողոպտվեցան ու այրվեցան: Այսպիսով այն թանկարժեք իրերը, որ Ռումանիա ապաստանացած հայերը կարողացեր էին բերել Անիեն, ու հետագային ալ ուրիշ վալորեր, ինչպես նաև բոլոր այն ձեռագիրները, որ Ռումանիո մեջ գրված էին, գրեթե ամբողջությամբ հրո ճարակ եղան: Այս գեպիրու ականատես գրիշը՝ Մինաս Թոխաթեցին նկարագրելով, թե ինչպես կիրակի լուսանալուն պես Շենքան իշխանը մտավ Սուլավայի հայոց Ս. Աստուածածին եկեղեցին, կշարունակե: —

«Ըկ սուրբ միւռոնն էջմիածնին
զայն ալ վոթեց վերայ գետնին,
շունք և մարդիկ կոխան արին
և աղիք մեր խարշատէին:»

Եւ զին որ գիրք կար յեկեղեցին
և զմեծ պատկերքն խորանին,
խաչեր և սկի մաղրզմանին**))
ուսկեցրած և մեծագին:

«Պողովեցին ի միասին
տարին դրին ի վեստեռին***)
զվարդապետն և զարեղնին
ձեռքն կապած բանտ արգելին:»

* * * * *

Արծաթապատ աւետարան
շարակնոցներ և սաղմոսարան

*) Հ. Ղ. Ալիշան. — Կամենից, Տարեգիրը Հայոց Լեհաստանի և Ռումենիոյ, 1806 Վենետիկի, էլ 168:

**) Սկիհի բերնի սկավառակ:

***) Ռումաներն ինչանակի գանձատուն:

յայսմատուգք և տարեկիրք
դանձտետր, մաշտոց և այլ գրեան:

ԱԱ շար հրաման արար կրկին
զինչ որ գրեանք կայց ի վեստեռին,
զարծաթապատ աւետարնին
զանդին դրեանք հայոց աղդին,

Հանին ի գուրըն վեստեռին
և փայտի պէս կըտորեցին,
այն անօրէն պիղծ օլախնին
զամեն գրեանքըն այրեցին:*)
Եվ այն:

Ու ինչպես ականատես Մինաս Թոխաթե-
յին կգրե իր ռ՛ղբաշ-ին շարտանկության մեջ,
նույն բախտին արժանացան նաև Սիրիթի,
Յաշի, Վալուի, Պոթոշանի, Հոթինի և Ռո-
մանի հայկական եկեղեցիները. ասոնք բո-
լորն ալ կրակի մատնվեցան ու հիմելին
քակուեցան, եկեղեցական անոթները կո-
ղոպտվեցան և հայկական ձեռագիրներն ալ
այրվեցան:

1563-ին Մոլոտի թոմշա Վոտա և
1564-ին ալ Ալեքսանդր Լըբուշնեանու իշ-
խանները կրիկին հՀալածեն հայերը, որպես
պատիժ, Տեսփոթ Վոտայի հանդեպ տածած
իրենց համակրանքին համար Ավելի քան
դար մը հետո, 1671-ին ուրիշ իշխան մը,
դրամի ու արյան ծարակի Գեղրգի Տուքան,
նույնպես հՀալածեն հայերը, որ Հընկու Սեբ-
արի կողքին մասնակցեր էին իր ղեմ կազ-
մակերպմած հեղափոխական շարժման**:): Ու
մանականդ այս վերջին հալածանքը պատ-
ճառ կըլլա, որ շատ մը հայեր, Մինաս հ-
պիկոպուին առաջնորդությամբ, զաղմի վի-
մեն գեպի Թրանսիլվանիա, ուր և հետապա-
յին կաթողիկության կՀարին. Անոնք իրենց
հետ, անկասկած, տարին նաև արժեքավոր
ձեռագիրներ Կեռու հայքաքաղաքը, որ այս
պալթին շնորհիվ հիմնվեցավ, իր թանգարա-
նին մեջ, բացի այլուր գրմած ձեռագիրներ,
ունի նաև հայսմափուգք մը՝ դրված 1629-ին
Մոլոտի Սուլավա քաղաքին մեջ, ինչպես
նաև ամետարան մը, որուն երկրորդ մասու
1659—1664 Թվականներուն գրմած է դար-
ձյալ Մոլոտայի մեջ և 1659 թվականավ ու-

*) Պուրբեշ «Հայ Մշակութի Տան» ձևագիրներ
թիվ 35—37, 66, 94, Պ. թէն. Մամիկոննեան.— Ռու-
մանահայոց ներկան և ապահայն, Կալաց 1895 և
Gr. M. Băiucliu.— Cant de jalire . Bucuresti 1895:

Սույն «Ռումանի ձևագիր մըն ալ կոտնիվ Ռու-
ման Ակադեմիի ձևագրատանը, թիվ 936:»

**) B. P. Hasdeu.— Istoria Tolerantei Religioase
in Romania. „Romanul“ թերթի 17 փետր. 1868
թիվին մեջ և առանձին գրքույթով:

որիշ ավետարան մը, ընդորինակված Յաշի
մեջ, Պուրբեշի Ռուման Ակադեմիի ձեռագրա-
տունը վերջերս արտաքին գործերու նախա-
րարության կողմէն ստացավ, թեև պակասա-
վոր, բայց մհծածակալ ընտիր հայերն ճա-
շոց մը, որուն կողքին ներսի կողմը գրված
է, թի այդ ձեռագիրը կպատկանի Թրանսիլ-
վանիու ուրիշ մեկ հայաշատ կեղուններն
միուն՝ Ճործովու կամ Մեն Միքլու (Գեորգին)
Հայ եկեղեցիուն, սակայն ձեռագրին մեջ
գտնված փոքր հիշատակարանն մը կարելի
եղավ ստուգել, որ այդ ձեռագրի գրիշը Ար-
բահամ քէն. Սեղուցին է, զոր զայն գրած
պիտի ըլլա ժք դարու վերջը և կամ Ժէ դա-
րու սկիզբը*):

1769-ին թուրք արշավախոմբեր կթալա-
նեն Մումթենիու մայրաքաղաքը Պուրբեշի շատ
մը տուներ, ինչպես նաև Հայոց եկեղե-
ցին:

Ավելի ուշ, անցյալ դարու սկիզբը, Հ. Մ.
Բժշկան Ռումանիա ևս այցելելով, իր գրր-
քին մեջ տեղ-տեղ կիսուի հայաբնակ քաղաք-
ներու եկեղեցիներու ունեցած թանկարժեք
իրերու և ձեռագրաց մասին: Հ. Բժշկան այդ
շրջանին Պուրբեշի Հայոց եկեղեցին շատ
ճոխ կդանեն, արժեքավոր սպասներով հա-
րուսա. Ֆոքշանի եկեղեցիուն համար կըսի
թի հոն հին սրբապատկեր մը կար, որուն
համար հավատացյալներ ովատի կուպային.
1607 թվականավ ձեռագիր մը կհիշե Յաշի
մեջ, Ռումանի եկեղեցիին համար կըսի թի
600 տարվա հնությամբ ձեռագիր մը ունի,
Պոթոշանի մեջ այդ ժամանակ տակավին
Անին բերված անոթներ ու ձեռագիրներ
կդանեն, Քիլիայի եկեղեցիուն մեջ, որուն
հետք իսկ չկա ներկալիս, կդանեն 1702 թվա-
կանավ Պաղց Սերայ գրված հայմագուրը
մը, որն իր ժամբորության շրջանին կփո-
խագրվի Գրիգորիուպուլիս: Պապատաղի եկե-
ղեցիուն նվիրված 1675 թվականավ և Պոլիս
գրված ուրիշ հայմագուրը մը կդանեն, որ
դարձյալ Գրիգորիուպուլիս կփոխագրվի**):
Այս հիշատակիված իրերը ևս ժամանակի
ընթացքին մեծ մասամբ անհետացած են.
Ժամանակը ավաղ շատ ավերներ գործած է,
նույնիսկ խաղաղ ժամանակներու շրջանին
շատ բան անհետացած է տգիտության պատ-
ճառություն: Պետք էր գրադարաններ ստեղծվեին,
պետք էր փոշիներու մեջ համբերատար կփող

*) Ս. Ն. Քոլանչյան.— Մայր ցուցակ հայերն
ձեռագրաց Պուրբեշի Ռուման Ակադեմիի (անտիպ):

**) Հ. Մ. Բժշկան.— Ժամանակարհորդութիւնը ի
կեհաստան և ալլ կողմանս բնակեալս ի Հայկապանց
սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, 1830 Վենետիկ:

ժարդիկ գտնվեին, որպեսզի փրկեին գեթ վերջին մնացորդները և երկյուղածովլիյամբ զանոնք թանգարաններու մեջ զետեղվեին, գալոց սերում զններուն ցույց տարու համար փառքը հայ արվեստին ու հայ պատմովլյան:

Ընդհանուրապես եկեղեցիներու թաղականությունները, գպրոցները և մանավանդ զանազան միություններն էին, որ սկսան կազմակերպել իրենց գրադարանները:

Պուրեղ. — Ճիշտ է, թե Պուրբեշի հին հայերը մեծ մասամբ Պալսեն ու Պուկարիային գաղթած ըլլայով, անոնց լեզուն թրքերինը եղավ, ինչպես կերկի անոնցմենք մնացած ու մեր ձեռքը հասած նամակներեն, որոնք գրոված են հայատառ թրքերեն. բայց և այնպես Պուրբեշի հայերուն մեջ եղած են բազմաթիվ զարդացած ու ազգասեր մարդիկ, որոնք գաղութը կառավարողի ու առաջնորդողի դեր ստանձնած են: Պուրբեշի հայոց գպրոցը հինեն ի վեր ունեցած է իր գրադարանը. այս մասին, իրը ամենահին փաստ, «Հայ Մշակութի Տան» ձեռագրատան մեջ հաջողվեց գտնել մատալան մը 1870 թվականավ. Ան Ազգային վարժարանի գրադարանին գիրքերու ցուցակն է կազմված այդ շրջանի հոգաբարձու Աղա Մանուկ Ալթընովիշի հրամանավը. Բոլորն ալ կրոնական և գպրոցական գիրքերու անոններ են, կան նաև թարգմանություններ, որոնց թիվը շատ փոքր է տակավին, 178 հատոր միայն, և Պուրբեշի գպրոցին նվիրված է եղել ծրուաղեմի պատրիարք ծսալի արքապիսկոպոսի կողմեն: 13 տարի վերջ, 1883-ին Ազգային վարժարանի գիրքերու թիվը շուրջ 400-ի հասած կոտոնենք: Նոր օրերու մեջ ալ ան պահած է իր գոյությունը, ու ալ ավելի ճոխացած է. սակայն ինքննիւր մը շումենալու և անխնամ վիճակի մեջ մնացած ըլլալուն պատճառավ վերջին պատերազմի շրջանին անպատճիւնատու մարդոց միջոցավ մեծ մասսամբ պարպելի ետքը, տնօրենովթյան թուլալությամբ, մնացարդ ընտիր հատորներու փոքր մաս մը միայն կարելի եղավ փոխադրել «Հայ Մշակութի Տան» մատենադարանը:

Պուրբեշի հայերը հին ժամանակ բազմաթիվ միություններ կազմած են. անոնցմենք հիշենք «Սէր անուն Յիսուսին» (1833), «Աւրարատեան» ընկերութիւնն-ը (1838), «Աւրարատ» ուսումնասիրաց (1843), «Ուսումնասիրաց»-ը (1871), «Հայացատան» ընկերությունը (1879), «Աւրարատեան» ընկերութիւնն-ը (1886), «Հայրենասիրաց»-ը (1887), «Աւրարա»-ը (1901), «Ուսումնասիրաց»-ը (1905) և այլն: Անկարկած, ասոնք ևս պետք է ունեցած ըլլան իրենց առանձին գրադարանները:

1906-ին Պուրբեշն ուներ ժողովրդական գրադարան-ընթերցարան մը, ուր տեղի կունենան նաև դասախոսություններ^{*}): 1912-ին Պուրբեշն ուներ ուրիշ ընթերցարան մը, ավելի զորավոր, որուն վարչությունը երաժիշտ ուսուցիչ մրն ալ վարձած էր երգախումբ մը ստեղծելու համար^{**}):

1923-ին կոտրծե «Աւրարատ» ընթերցարան^{***}), որ ավելի ուշ, 1928—1944, «Բաֆֆի»-ի անվան կկոչվի: 1944-ին սույն գրադարանի շուրջ 700 հատոր գիրքերը և բազմաթիվ պարբերականներ փոխադացինք ու հայ Մշակութի Տան» մատենադարանը:

1927-ին մինչև 1934 «Երևան» Գեղ. միությունը կունենա իր ճոխ ընթերցարանը ու ֆանֆարի խոմբը:

1931-ին ունոր ուղիով Հայաստանյան միությունը կունենա իր բացոյաւ ամառային ընթերցարանը և ավելի ուշ վերոհիշյալ միության շարունակությունը կազմող Շ. Օ. Կ. ա-ը կհիմնե իր գրադարանը:

Հ. Մ. Ա.-ը, որ մինչև 1938-ը մարզական, սկասուտական և հայագիտական շուրջ 500 հատոր գիրքեր ուներ, այսօր հետքն իսկ չենացած իր գրադարանին:

Ուանողական երեխնի միությունը ևս ունեցած է իր գրադարանը. այսօր նախկին մատենադարանի սրահը դարակ մը թողած է, լրված ու անտեր գիրքերու:

Ազգային վարժարանի նախկին «Սանուց» միությունը ևս ունեցած է իր գրադարանը, ավելի քան 250 հատոր գիրքերով. սակայն վերջի պատերազմի շրջանին անբարեխիղ մարդոց շնորհիվ, բոլորովին պարպված է ու ներկայիս միայն փոշոտ ու պարապ դարակներ մնացած են:

1931-ին, ճիշտ այն շենքին մեջ, որուն հողամասին վրա բարձրացավ Հայ Մշակութի Տուն»-ը, փորձ մը եղավ եկեղեցին մրնացած հին սրբապատկերներու, ինչպես նաև քարեղին արձանագրություններու, հավաքումով թանգարան մը հիմնելու^{****}), սակայն, այդ իրերը մեկ քանի տարի վերջ, շարումակական ինմամբի պակասեն, փոշությամբ ծածկվեցն և թանգարանը բոլորովին լքվեցավ^{*****}), մինչև որ անոր իրերը ամբողջությամբ Հայ Մշակութի Տան» թանգարանի բաժնին մեջ ամփոփվեցն:

«Կոմիտաս» երգչախոմբը ևս ունեցած է ու ցարդ ալ, իրը «Հայաստանեան ծակատ»

^{*}) «Աւորա» ամսաթերթ № 6, 9, 1906, Պուրբեշ:

^{**) «Ենփոր» ամսաթերթ № 1, էջ 48 և № 2,}

էջ 100, 1912, Պուրբեշ:

^{***) «Դաղութի ծայն» թերթ № 4, 1923, Պուրբեշ:}

^{****) «Արարա» ամսաթերթ, 1931, № 71:}

^{*****) Նովեր, 1938, № 164:}

կազմակերպության երիտրաժնի ենթարաժին, ունի ձայնագրված երգերու իր հատուկ փոքր դարակ մը, և անհուն փափաքն ունի զայն ճոխացնելու Սովետական Հայաստանն ստացվելիք նոր երգերով:

Ներկայիս, բացի «Հայ Մշակույթի Տուն»-են, որ կեղրոնն է ոռմանահայ բոլոր գրադարաններուն, Սովետական Հայաստանն ստացված մեկ քանի հարյուր հատորներ ունի «Հայաստանեան ծակատ» հառաջդիմական կազմակերպության «Եահումյան» ակումբ:

Քննարանցա. — 1914-ին հու հիմնվեցալ «Արաքս» գրադարան-ընթերցարանը, որ ներկայիս «Հայաստանեան ծակատ»-ի հովանավորությամբ կողրծե: Այս գրադարանին ճոխացման մեծապես նպաստած է Պոթոշանենի փրոփ. Ա. Յագուեանուն, իր հոր, Պոթոշանի երրեմնի հայ վարժարանի տեսուչ հանգուցյալ Տ. Պողոս ավագ քահանայի, 300 գիրքներ բաղկացած գրադարանը ամբողջապես նվիրելով): Ասոնց մեջ, հիշյալ փրոփեսորին հայտարարությամբ, պետք է ըլլան նաև հայ մեծ պատմաբան Ստեփան Պալասանյանի (պոթոշանցի) աշակերտական շրջանի զանազան թուղթերը, 1934-ին այս գրադարանը 1830 հատոր գիրք ուներ, որոնց մեջ նաև փեղ ձեռագիրներ ներկայիս սույն գրադարանը ընտիր գիրքը ունի, որոնց թիվը մեկ քանի հազարի կհասնի, սակայն ցավալի է ըսելը, թե օգուզողներու թիվը շատ փոքր է:

1925-են «Երևան» Գեղ. միությունը և հու ունեցած է իր գրադարան-ընթերցարանը:

Կալաց. — 1926-ին «Հայ տիկնանց միություն»-ը գաղութին համար կսարք գրադարան մը^{**}), որ հետզհետե կծոխանա, իր գոյությունը հասցնելով մինչև այսօր: Տիկին Աճմօղու և Ապուրել մեկ քանի հարյուր ընտիր հատորներ նվիրած են այս գրադարանին, որոնց մեջ նաև զասական, գրաբար ընտիր գործեր: Հու պետք է ըլլան Կալացի մեջ ատենոր տըպարան ունեցած հանգուցյալ Ղեռնդ քահանա Փափազանի կողմէ տպագրված հազարայուտ գիրքերուն և օրացուցներուն մեծ մասը: Ներկայիս զաղութիր գրեթե մեծ մասամբ պարպված ըլլալով, Սովետական Հայաստան ներգաղթելու հետևանքով, այս գրադարանն ալ բոլորով մոռցված ու լրված է:

Կեռլա (Հայաքաղաք). — Թրանսիլվանիո մեջ գտնվող այս հայաքաղաքի թանգարանը, ան-

կասկած, Պուգրեշեն ետքը երկրորդ տեղը կգրավե, իր մեջ համախմբած արժեքավոր գրադարանով ու հնադարյան ձեռագիրներով: Առաջին անգամ թանգարան մը հիմնելու ժըրագիրը կհղանա Ժյուկ Մերզա: Հայ բանասերը, իսկ նախաձեռնող հանձնախումբի նախագահն էր ուրիշ հայ գիտնական մը՝ Քրիստոփ Զոնգոթ, որուն կանխահաս մահը արգելք հանդիսանա թանգարանի բացումը տեսնելու 1907-ին դոկտ. Հ. Անթալ-ի և դոկտ. Պ. Գուտապի խմբագրությամբ լուս կտեսնի թանգարանի կանոնադրությունը^{*}): 1909-ին է, որ տեղի կունենա բացումը այս գանձարանին, ուր կամփոփիլին հայ գաղթականներու կողմէ հու բերված նշխարները, թանգարանը նախապես զետեղված էր Ս. Գորդ հայ կաթողիկե մանչաց որբանոցը: Թանգարանը առաջին հերթին ունի արժեքավոր ձեռագիրներու թիվ մը, որոնցմե հիշենք 1. Հայսմավուրք մը, որ իր մեծությամբ, 27×40 սմ, ու տաս և կես կգ ծանրությամբ աշքի կարճներնշապես քիչ առաջ հիշեցի, ան դրված է Սուշալվա Ս. Հաճկատար վանքին մեջ 2. Թանկագին ավետարան մը — փառակազմ, կարմիր թափշյա, մանրանկարազարդրված, ուկեղող արծաթյա շղթաներով: սուրա գրված ժամանակն անհայտ է: 3. Ուրիշ ավետարան մը — նուրբ և աղնիվ մանրանկարներով, գրված 1346-ին Սուրբամբ (Ղրիմ), կիրակոս քահանայի կողմէ: 4. Գործք Առաքելոց մը, որ բոլորն կտարբերի իր ուկիի առատությամբ, սկզբնատառերու գեղեցկությամբ և ի մասնավորի լուսանցքներու վրայի զարգերու հարստությամբ, ասոր սիրունությունը, գույներու զանազանությունն ու կենդանությունը արտաք կարգի և աննման է: Սույն ձեռագիրը գրված է Կիպրոս, 1310-ին, Լամբրոնի տիրող Հեթումի դուստր Ալիծ տիկենոց համար: Կան նաև ուրիշ բազմաթիվ ձեռագիր մաշտոցներ, ավետարաններ, տաղարաններ և այլն, սակայն բոլորին լիսկատար ցուցակը ցարդ դժբախտաբար չէ կազմված: Ս. Երրորդություն եկեղեցվու մեջ կըպահվեր նաև Ռուպենսի եաշելության մեծ նկարը, շքեղ հանդերձներ ու թանկարժեք սպասներ: Այս տարի, իր Ռուպենի մեջ երբեմնի հայաշատ շատ մը կեղունները կտարած ճամբորդությանս ատենը այցելեցի նաև Կեռլա քաղաքը, տեղեկացա թե վերջի պատերազմի շրջանին բոլոր թանկարժեք իրերը, ձեռագիրները, Ռուպենսի նկարը փոխադրեր են Պուտարեցիթ ու ցարդ ետ չեն ստացեր: Ռուպենահայ կաթողիկե թեմի առաջնորդ:

^{*}) «Ararat», 1924, № 6:

^{**) Նույնը, 1926, № 6:}

) A Szamosújvári „Ormeny Muzeum „Torténete... Szamosújvári, 1907:

Գեր. 2. Լենկել ջութան ինձ հայտնեց, թե այս առթիվ դիմեր է Ռումին ֆողովրդական Հանրապետության վարչապետ դոկտ. Բեթրու Գրոզայի ու վտաճէ է թի շուտով գանոնք եւ այտի ստանա: Ներկայիս թանգարանը, որ փոխադրված է Հայ կաթողիկե աղջկանց որբանոցը, պատերազմի շրջանին թալանվելի վերջ երբ մանավանդ ոչնչացեր են Թրանսիլվանիո 50 ընտանիքներու կայսրեն ստացած ազնվականության տոհմանշանները ու բազմաթիվ գիրքեր և այլն, խառնակ վիճակ մը ունի, սակայն այս վիճակին մեջ իսկ գեռ կարող է անսպառ նյութ մատակարարել Թրանսիլվանիո և Հունգարիո հայոց պատմությամբ հետաքրքրվող բանասերին: Թանգարաննեն մաս մը ալ, մեծ մասամբ գիրքեր, ալպոմներ ու արձանիկներ, լավ դասակարգված վիճակի մը մեջ կապահվուն Ս. Երրորդություն հոյակապ մայր եկեղեցվոր վերնահարկը: Կեռլայի թանգարանին գիրքերուն թիվը 3.000-ը կանցնի:

1927-ին Կեռլա գաղթած թրքահայեր, նորեանդ մը ներմուծելու համար հյուծվող գաղութին մեջ, հիմը դրին «Թանիել Վարուժան» անոն երիտասարդական ընթերցարանին^{*)} և «Կեռլայի ձայն» խմորատիպ թերթին, որոնք կարճ կյանք մը ունեցան:

Եղիսաբերուպոլիս (Դումբրըվին).— Այս երկրորդ հայաբաղաքը ևս ատենու ունեցած է իր ճոխ մատենադարանը, սակայն ժամանակի ընթացքին ամայացած է ան: Ինչպես Քլուժի համալսարանի «Մուզեուկ արդեկեան» ձեռագրատան բաժնի մեջ գտնված շուրջ 62 հայկական ձեռագիրներին կարելի է ստուգել, անոնք ատենու պատկանած են եղեր Եղիսաբերուպուստ ժողովրդապետության և 1911-ին նվիրվել են վերոհիշլաւ թանգարանի մատենադարանին: Նվիրելու ատեն հիշլաւ քաղաքի ժողովրդապետության միտքեն դժբախտաբար իսկ չէ անցեր, այդ ձեռագիրները իր հարեւանքուր հայաբաղաքին՝ Կեռլայի թանգարանին նվիրելու, այսպիսով անոր ունեցած ձեռագիրներուն ճոխացման նպաստելու, փոխանքութիւն մեջ օտար մատենադարանի մը խորը այսպես մոոցված պահելու զանոնք: Վերջերս այցելելով Եղիսաբերուպոլիսին, անոր հոյակապ Ս. Եղիսաբեթ մայր եկեղեցվոր վերնահարկը առանձին սենյակի մը մեջ գտա որոշ թիվ մը հայերեն և օտար լեզուներով հատորներ: Փնտութենք կատարելով կրցանք գտնել շուրջ 9 հատոր ձեռագիրներ.— 1. Կանոնադրություն մը սույն քաղաքի սրբություն Գրիգորի անվամբ եղայրության՝ 1729-ին:

^{*)} «Արագած» ամսաթերթ 1927:

2. Տոնացուց մը 1785 թվականավ: Յ. Սուլրի խաչին ճամբան, մեծ բեմին դիմաց (աղոթք-ներ), գրված 1865-ին Կեռլա: 4. Երկհատոր բառգիրք Հայ-լատին (անավարտ): 5. Զորս հատոր «Փիլիփոսիայութիւն ըստ անաղարտիկաց և ապահովագունեղից ուսուցմանց ...շարադրեցեալ ի Հօրէ Ֆրայ Անտոնիոսէ Կովտինեան էկմովիչէնացոյ ի համալսարանի սրբոյն Թօմայի Ագուինացոյ և յամի 1724, թարգմանեցեալ ի լատինական լեզուէ ի Հայկ: Բարբառ, աշխատասիրութեամբ Հ. Թէոդորոս վարդապետէ Մէտիաշացցոյ, ի Վենետիկո: Վերջին հատորը թարգմանված է 1728-ին: Շատ անխնամ վիճակի մը մեջ ըլլալով սույն գրադարանը, արդեն իսկ ճամբորությանն ընթացքին ժողովրդապետ Հ. Շահին վարդապետ, ինմանվերկի հայ կաթողիկե առաջնորդ Թեոդորովիչ արքապիսկոպոսի մեկ ազգականութիւն հետ, սկսած էին դասակարգելու աշխատանքը:

Սուշավագ:— Այս քաղաքը, իրբև ամբողջ ուսմանահայության անցյալի Անին, դեռ անցյալ դարու վերջավորության ուներ իր ընթերցարանը՝ հիմնված Անիի ընկերության նախաձեռնությամբ, ու ինչպես Դան քահանան իր գորին մեջ կրսի, ազգային սեփական քաղնու մը եղած է ան, հիմնված ժողովրդապետական հկեղեցվորականած վարձու տան մեջ, ուր հայերեն, գերմաներեն, ուսմաներեն ու գաղղիկերեն լրագիրներ կային: Ուներ նաև իր սեփական սրբարանը: Տ. Դան կգրե, թե պահարակելի կնկատման կամ կատարած ճամբորության ընթացքին կարելի եղավ Պուբրեշի: «Հայ Մշակութիւնան զետեղել խորանազարդ ավետարան մը՝ գրված 1649-ին Սուշավագի մեջ, Հովհաննես երեցի և պակասավոր հայսմակուրք մը, ուրոնք մինչ այդ կորոված կնկատման կարելի եղավ Պուբրեշի բերել նաև այս քաղաքի հայոց երբեմնի փառահեղ պատմությանը վերաբերող աքթեր, նամակներ ու սրբապատկերներ Այսօր Սուշավան հայերեն գրեթե ամայացած է: Երբեմնի դպրոցին կից հաստատված թաղականության սրահին մեջ կան

^{*)} Տ. Դան.— Արևելյան Հայք ի Պուբրեշին (թարգմ. Հ. Գ. Վրու. Գալէմբերեանէ), Վիհննա 1891,

բավական թիվով փոշեթաթախ գիրքեր, աք-
թեր, սրբապատկերներ ու կնիքներ, որոնք
անթուլատրելի է, որ կորավիճ:

Յաշ.— Այս քաղաքի հայ գաղութը, որ
մոլոտավաճայոց մտավոր շարժման երեխնի
կեդրոնը և 1840-ին հոն ստեղծված վերա-
ծնունդին ալ զարկերակը հանդիսացած է,
ճանչյած ըլլալով հայոց և օտարաց կողմե
նիք «Եղագային կեդրոնական կառավարու-
թյուն», ժամանակին ունեցած է ձեռագիր-
ներով, վավերաթուլթերով ու գիրքերով ճոխ
գրադարան մը; Այսօր այն մեծ շենքը, զոր
շուրջ 15 տարի առաջ բարձրացուցած հն ե-
կեղեցվոր բակին մեջ իբր թատերաբառ և ըն-
թերցարան ու թանգարան, վարձու տրված է;
Մոլոտավիս ֆիլհարմոնիային և միայն տնտե-
սին պառկելու սննդակը փոշիի տակ դիզ մը
աքթեր կրցա գտնել հայոց անցյալին վերա-
բերյալ բարեբախտաբար ժամանակին կտ-
րելի եղավ կարելոր ձեռագիրները և փաստա-
թուլթերը մեծ մասամբ Պուքրեշի «Հայ Մշա-
կուլթի Տուն»-ը փոխադրել, իսկ մնացյալը...
արդեն ոչնչացեր են:

Պորոշան.— Այս քաղաքի թաղականու-
թյունը ևս ատենութ ունեցած է իր ճոխ գրա-
դարանն ու ձեռագրատունը, սակայն ժամա-
նակի ընթացքին անոր կյանքը ևս մարած է:
Վերջին պատերազմի շրջանին լսեցինք թե
անբարեխիղճ պատոնյա մը կիլոդրամով
ծախեր է քաղաքին հայկական եկեղեցիներու
ու դպրոցներու անցյալին վերաբերող շատ
մեծ թիվ կազմող փաստաթուլթերն ու մատ-
յանները, Պուքրեշի մեջ կարելի եղավ գտնել
ձեռագիր կանոնագիրք մը, զոր Պոթոշանեն
դողցվեր ու կարգ մը անձերու կողմե «Հայ
Մշակուլթի Տոն» մատենադարանը բերվեր էր
վաճառելու համար; Միայն երկաթյա դրա-
մարկդին մեջ պահպատ մեկ քանի հնամենի
ձեռագիրները փրկվեր էին, անոնք են՝ 1. Ս-
վետարան գրված 1354-ին Սուրբսաթ (Դրիմ),
Գրիգոր Սուրբայանցի կողմե; 2. Ավետա-
րան, անթվական; 3. Սաղմոս, անթվական;
4. Հարցմունք քաղվածո, գրված 1615-ին
Լեմպերի; 5. Պոթոշանու, Յաշու և Ռոմանի
կտրիճներու եղբայրության կանոնադրու-
թյուն, գրված 1690-ին Ճուրճով (Սեն Միք-
լոշ) և այլն; Բագմաթիկ անգամներ բոլորին
կողմե կորառած նկատված սույն ձեռագիր-
ներու հետք երբ այսօր հայոնի է, լավ կըլ-
լար, որ զանոնք շուտով, քանի ուզ է տակա-
վին, փոխադրվեին Պուքրեշ՝ «Հայ
Մշակուլթի Տոն»-ը, ապագային զանոնք կո-
րուտե փրկելու համար:

Ֆոքշան.— Մոլոտավիտ մեջ, իր հայ կյան-

քով, դպրոցով ու միություններով, ամեննեն
ավելի տոկուն հանդիսացավ Ֆոքշանը, մա-
նավանդ վերջի շրջանին, աղքամներ Ֆիրշատ
Ֆերհատյանի շանքերուն շնորհիվ Անոր
մահեն ետքը Ֆոքշանի մեջ ևս սկսավ մարիլ
հայ շունչը; Այսօր շատ փոքրի գաղութ մըն
է, բայց շնորհիվ երիտասարդ ու համառ հա-
յորդի մը՝ ուսուցիչ Աքսենթի Թրայանի ան-
խոնչ շանքերուն, հոն ևս ստեղծվեցավ հան-
գուցյալ Ֆերհատ Ֆերհատյանի անվան «Հայ
Մշակուլթի Տոն» մը 1948-ին Ֆոքշան այ-
ցելելով տեսա գրադարանը, որ կօգտագործ-
վի նաև իբր թաղականության և «Հայստա-
նեան Ժակատ» կազմակերպության գրասեն-
յակ: Արած գեղեցիկ նկարներով զարդա-
րուն, երկու զարակ, դպրոցին մնացած, մեկ
քանի մատյաններ, տպագրված գիրքերու
փոքր թիվ մը, ինչպես նաև Սովետական
Հայստաննեն ստացված թերթեր և գիրքերու
մեկ քանի հատորներ, ահա սա է գրադարան
կոչվածը, որ գրքախտաբար օգտվող շոմի:
Վերոհիշյալ երիտասարդը, որ ինչպես կերե-
վի հավաքին ու միակ ընթերցողն էր այս
գրադարանին, վշտացած ըլլալով, այլև ոչ
իսկ ուսք կոլան գրադարաննեն ներա, երկու օր
շարունակ իբր ևս հոն պրատումներով գրա-
դեցա, բացի Արժ. Տ. Ա. Վարժապետյան
քահանայի, որուն տունը հյուրափրկեցա, ոչ
մեկը դուռը լրացավ սա գրադարանին:

Ռոման.— Ռոմանիո հայոց ամենահին
կեդրոններնեն մին եղող սույն քաղաքին մեջ
ևս բավականին մեծ եղած է գիրքերու, փաս-
տաթուլթերու և և արծաթյա իրերու թիվը: Եր-
կար ժամանակ հոս պահված է ռումանահա-
յոց ամենահին ձեռագիրը, 1265-ին գրված
ավետարանը, որ երկու տարի առաջ փոխա-
դրվեցավ Պուքրեշի «Հայ Մշակուլթի Տոն»
ձեռագրատունը: Հին տպագիր գրքերն մաս
մը ալ Պուքրեշ փոխադրված է: Իր եկեղեցա-
կան թանկարժեք սպասներնեն պետք է հիշել
սեղանի հին ֆիլիկրան ընտիր խալ մը հա-
յերեն արձանագրությամբ, որ «Հայ Մշա-
կուլթի Տոն» թանգարանի բաժնին մեջ ցու-
ցադրության համար ի պահ դրված է. այս
թանգարանին մեջ կդանվին նույնպես ի պահ
դրված, ոսկեթել ասեղնագործված հին թագ
մը, գարիր շապիկ մը և այլն: Ցավալի է
ըսել» որ շատ մը փաստաթուլթեր և Ռոմանի
հայոց երեխների մեծաշուրջ դպրոցի զանազան
մատյանները անհետացեր են:

Պրըլիա:— 1937-ին էր, որ սույն քաղաքի
հայ երիտասարդները հիմնեցին «Կարապետ
հարացիկանու» երիտասարդական միությու-

նը ու թիշ ետքն ալ համանում գրադարան
մը*): Բայց կայծ մըն էր աս, որ պահ մը
բորբոքեցավ եռանդով, սակայն շուտով մա-
րելու համար:

Քրայովա.— 1936-ին այս փոքրիկ գաղու-
թը, որ ոչ եկեղեցի և ոչ ալ դպրոց ունի,

ստեղծեց իր «Խորիմեան Հայրիկ» անուն գրա-
դարանը, ուր զետեղված էին բավական թվով
հայերեն ուսումնական գրքերեն, գերմաներեն, ֆրան-
սերեն ու այլ լեզուներով գիրքեր*): Երկար
ժամանակ ի վեր որևէ լուր շումինք այս
գրադարանին մասին:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ-ԹԱՎԻԳԱՐԱՆԵՐ

Ցուց տված ըլլալու համար, որ ուսումնա-
հայոց մեջ ևս եղած են չափազանց գրասեր
ու ուսումնատեխնիկական մարդիկ, կրավականանք
միայն քանի մը անուներու հի-
շատակությամբ.— Գրիգոր Մ. Պըլըգիու (1840—1912)**), որ Պուգրեշի բարձրագույն
վճռաբեկ ատյանի Խորհրդական եղավ և հայ
բանասիրության հետ կապված մնաց, միև-
նույն ատեն նպաստելով հայ և ոռմեն եղ-
բարական դարավոր կապերու ամրապնդմա-
նը, ընդարձակ գրադարան մը ուներ: Անոր
մահեն հտըը այս գրադարաննեն ընտիր մաս
մը նրա շառավիղներու կողմեն նվիրվեցավ
Պուգրեշի համայնքին, որ և առաջին կորիգը
հանդիսացավ ապագային հիմնադրվելիք
ուսումնահայ կեդրոնական մատենադարա-
նին: Իր մատենադարաննեն հայագիտական
500 թանկագին հատորներ, զանազան լեզու-
ներով գրված, և մեկ միլիոն լեյ ալ կտակով
նվիրեց: Ռումեն Ակադեմիին, արևելյան
(հայերեն, արաբերեն, պարսկերեն, թրքե-
րեն) լեզուներու ուսումնասիրության հա-
մար***): Ֆոքանի հանգուցյալ քահանա
Տ. Պետրոս Մամիկոնյանը ևս ունեցած է
ճոխ գրադարան մը. ան 1895-ին հրատարա-
կեց «Ծովամանահայոց ներկայն և ապագայն»
հատորը: Հայտնի է նաև անոր զավիկին՝ հան-
գուցյալ Վահան Մամիկոնյանի գրադարանը.
սա Մամիկոնյանը ծանոթ է իր հեղինակ և
թութնա նահանգի ոստիկանապետ: Այս եր-
կու գրադարաններու գիրքերու մեծ մասը
կեդրոնացված է ուսումնահայոց կեդրոնա-
կան մատենադարանին մեջ: Հիշենք նաև
ֆոքանի Ֆերհատ Ֆերհատյանի գրադարա-
նը, որ նվիրվեցավ Պուգրեշի ուսումնահայոց
մատենադարանին երբեմնի տպարանաւոր

*) „Արարատ“ ամսաթերթ 1937 թիվ 148:

**) Մ. Յ. Պուգանչեան.— Գր. Մ. Պըլըգիու (Ճննդեան
Հայութամեակին առթիւ), «Հայութամահայ ծարեգիրը»
1941, էջ 152—158, Պուգրեշ:

***) Academia Romana.— Grigorie M. Buiuciu
(1841—1912) Bucuresti 1914:

Նույնպես Th. Cornel. Figuri Contemporane din
Romania, p. 488—492:

հանգուցյալ Ղևոնդ քնն. Փափազյանի գրա-
դարանը, որ ըստ անոր հրատարակած
ցանկին***), 533 հատոր գիրք ուներ. այս
գրադարանի գիրքերը ևս մասամբ կեդրո-
նացված են Ռումանահայ կեդրոնական Մա-
տենադարանին մեջ. պոթոշանցի Հակոբյան
քահանային գրադարանը, որ ինչպես ավելի
առաջ ըստ, իր զավիկին՝ փրոփ. Ա. Յակոբիա-
նուի կողմեն նվիրվեցավ Քոնսթանցայի Հայ-
կական գրադարանին, Կալացեն Աճեմօղլու-
ներուն գրադարանը, որ մասամբ նվիրվեցավ
նույն քաղաքին Հայկական գրադարանին:
Տիկ. Աճեմօղլուի մոտ կգտնվի 1688-ին Քղիի
մեջ Մեծատուրի կողմեն գրված ձեռագիր կա-
նոնագիրք մը, Վերջապես հիշենք Գևորգ
Զափրաստի աշակերտներեն Աճեմյան (Ա-
ճեմօղլու) Գարբիելը, Պուգրեշի հայասեր ու
հայագետ ազգայիններեն մին, որ ուներ ճոխ
գրադարան մը և զայն Պուգրեշի համայնքին
նվիրեց: Աճեմյանի գիրքերը ևս առաջին կո-
րիգը կազմեցին Ռումանահայ կեդրոնական
Մատենադարանին: 1875-ին Աճեմյան իր
բնակարանին մեջ սպանված գտնվեցավ***):

Մեր ժամանակակիցներեն հիշենք Գևորգ
Զամի Արթինյանին, որ իր բնակարանին մեջ
ճոխ գրադարան մը ունի և բացի ուսումնա-
հայ համայնքին նվիրած բազմաթիվ գիրքե-
րե, մեկ քանի տարիե ի վեր սկսած է ընտիր
հատորներու շարք մը առաջի Սովետական
Հայաստանի գիտական օճախներուն, ար-
վեստի Հայտնի քննադատ Գրիգոր Զամ-
պեճյանին, որ նկարներու իր ճոխ հավաքա-
ծոն, մեծ մասամբ ոռուն նկարիներու գոր-
ծեր, սեփական բնակարանին հետ միասին
նվիրեց ոռուն կառավարության, իսկ վեր-
շինս ալ զայն հասարակաց թանգարանի վե-

*) ՀՊՀ ապահովագործություն, Բ տարի, թիվ 62, 1936,
Պուգրեշ:

«Ararat» 1936, № 137, 139, 142, 152:

**) Ճանկ Մատենից սեպհականութիւն Տ. Ղևոնդ քա-
հանայի Փափազյան, Կալաց 1901, տպարան Տ. Ղևոնդ
քնն. Փափազյան: (Այս տպագիր տեսքը գտած եմ
«Հայ Մշակույթի Տան» ձեռագրատունը պահպող թանգա-
րաններու մեջեն):

***) Հ. Մ. Պուգրեշան.— Հայ Հանրագիտական
Պուգրեշ, էջ 112:

րածելով կոչեց «Զամպաքյան թանգարան» և անոր գտնված փողոցն ալ՝ Զամպաքյան թանգարանի փողոց։ Գր. Զամպաքյան երևանի Կերպարվեստի թանդարանին նվիրեց ֆրանսական նկարիչներու երեք արժեքավոր նկարներ, որոնք ժամանակ մը Մուկվա ալ ցուցադրվեցան։ Կհոսանք, որ հարգելի քննադարությունը ուրիշ արժեքավոր նը-

կարներ ալ պահած է երևանի թանգարանին նվիրելու համար։ Այստեղ կարժե հիշել նաև Վ. Բարակյանի Հավաքածոն, նկարներու, նուրբ անոթներու և հնագիտական իրերու, զոր վերջին ամբողջությամբ Սովետական Հայաստանի թանգարանին նվիրելու ազնվությունը ունեցավ ան։

«ՌՈՒՄԱՆԻԱՀԱՅ ԿԵՆՐՈՒԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»-Ի ՍՏԵՂԾՈՒՄՆ ՈՒ ՃՈՒԱՑՈՒՄՐ

Մումանահայ գրադարաններու և գրասեր անձերու մասին համառոտ գաղափար տալի վերջ միայն, իբր եղրակացություն, պիտի ըսենք, որ ինչ կվերաբերի այս գրադարաններու հիմնադրման, բոլորն ալ ընթերցափեռությունը ժողովուրդին մեջ արծարծելու փորձեր էին միայն, իսկ միություններու հիմնած ընթերցարանները կսահմանափակվեին զուտ իրենց անդամներուն ծառայելու համեստ գործով։ Ասոնց մեծ մասը ժամանակի ընթացքին կանհետանային, առանց իսկ հետք մը ձեկւու իրենց ետևեն, բացի պարզպած ու փոշեթաթախ դարակներու տխուր հիշատակելու մը։

Պետք էր ստեղծել հայ ժարի գանձարան մը, ուր կարելի ըլլար ի մի հավաքել ու ավելի խնամքով պահպանել ամեն կողմ ցրված և կորսայան դատապարտված արժեքավոր վերջին մնացորդ նշխարները այս գաղութին։

Մնայում կեդրոն մը պետք էր հիմնել, որ դառնար ամբողջ գաղութին պարծանքը, սիրացն ու հոգին։

Ու ատիկա եղավ «Մումանահայ Կեդրոնական Մատենադարան»-ը։

Ան մարմին առավ 1927-ին, քանի մը մտավորականներու նախաձեռնությամբ և այն ատենուան թաղականության նյութական աշակցությամբ։ Վարչության առաջին նախագահը եղավ Վ. Գ. Մեշտումյան (մահացած 1942-ին) լրագրողն ու գրագետը, որ 1914-ին փոխխմբագրապետությունը վարեց «Universal» ոռումն մեծ օրթերթին և ծանոթ էր իբր հեղինակ բազմաթիվ աշխատություններու և խմբագրապետ «Aurora» (1906) ու «Ararat» (1924—1942) հայագիտական ամսաթերթերուն։ 1935—1943 թվականներուն, մինչև «Հայ Մշակութի Տան» բացումը, վարչության նախագահի պաշտոնը վարեց Գևորգ Հաճի Արթինյան գրասերը։ «Մումանահայ Կեդրոնական Մատենադարան»-ը ծնունդ առավ ամբողջ երկիրին մեջ ցրված հայկական նշխարները ի մի հավաքելու, պահպանելու, ցուցադրելու, ոռումն մտավորականության հետ սերտ կապ պա-

հելու և հայ ընթերցողին ու գիտնականին ընթերցման, ուսումնասիրման նյութ մատակարաբելու, հայ մշակութին անոր հաղորդակից դարձնելու համար։

Մատենադարանի բացումը կատարվեց կիրակի, 9 Հոկտ. 1927 թ., Թարգմանչաց տոնի օրը. Խոսեցան Տ. Հուախիկ արքեպիսկոպոս Զոհրապյան (մահացած 1942-ին)՝ ուժանահայ թեմի հանգուցյալ առաջնորդը, Վ. Մեշտումյան՝ Մատենադարանի կողմեն, և Կ. Միհայլեսքու՝ թաղականության ատենապետը։

Մատենադարանի առաջին կորիգը կազմեցին այն գիրքերը, որոնք տարիներեա ի վեր նետված էին հայ եկեղեցկո վերնահարկը և փոշիներու տակ կորսված ըլլալու հետևանքով մարդիկ տարիներով նույնիսկ անոնց գոյության մասին լուր չէին ունեցեր։ Այդ գիրքերու մեջ կային անշուշտ կարգ մը արժեքավոր հատորներ, ինչպես Գր. Պըզզիկուի, Գարբիել Աճեմյանի, Հակոբ Մելքիքի Հովհաննես Պիպեռճյանի երեքմնի մատենադարաններին մնացածները։ Այսպիսով ինչ որ փրկված էր, «Մումանահայ Կեդրոնական Մատենադարան»-ի առաջին կորիգը կազմեց։ Սկզբնական շրջանին մատենադարանի ճոխացմանը մեծապես նպաստեցին Պուրքեշի եկեղեցպուլն վերնահարկը կատարված պրատումները, որոնց շնորհիկ լուս աշխարհ բերվեցան երեսունեա ավելի ձեռագիրներ, գեղեցիկ կոնդակներ ու հին տպագրություններ։ Անհրաժեշտ էր գավառներու մեջ մանրակըրկիտ որոնումներ կատարել զանազան անկյուններու մեջ կորսվելու կամ փշանալու դատապարտված գիրքերը փրկելու համար։ Ռուման, Պաքրու, Սուլավա, Յաշ, Ֆորշան, Սելիստրի ու Քոնսթանցա կատարված պրատումներու շնորհիկ էր, որ մատենադարանը հարստացավ բազմաթիվ արժեքավոր գիրքերով, լրագրական հավաքածոներով, վավերաթուղթերով և այլն։ Բացի այդ եղան նաև դրամական մեծ նվիրատվություններ։ Հ. Ֆրենկյանի աշակցությամբ Վենետիկի կենացքուցան Միհայլուաներու արժեքավոր հրատարակությունները, Գ. և Օ. Զամպաք-

յանը պահած է երևանի թանգարանին նվիրելու համար։ Այստեղ կարժե հիշել նաև Վ. Բարակյանի հավաքածոն, նկարներու, նուրբ անոթներու և հնագիտական իրերու, զոր վերջին ամբողջությամբ Վենետիկի կենացքուցան հայագություններ։ Հ. Ֆրենկյանի աշակցությամբ Վենետիկի կենացքուցան հայագությունները, Գ. և Օ. Զամպաք-

ճյան եղբարց նվիրով ձեռք բերուեցան օտար լեզուներով գրված հայագիտական երկեր, իսկ Գ. Համբի Արթինյանի շնորհիվ մատենադարանը հարստացավ հայ նոր գրականության հարցուրե ավելի հատորներով:

Մատենադարանի ճոխացման նպաստեցին մանավանդ զանազան անձերու և հաստատովյուններու կողմեւ տարբեր ժամանակաշրջաններում արված նվիրատվությունները, որոնցմե մեկ քանին հիշենք, տեղեկությունները քաղելով նվիրատվութերու մատյանեն. — Պուրեցի Ազգային վարժարանին նվիր ստացված է 720 հատոր (1927—1946), Ե. Միսիրյանի՝ շուրջ 400 հատոր, Տիկ. Ե. Շթեֆընսեբու (ծն. Մամիկոնյան)՝ 327 հատոր, Քասա Շքուլելորե՝ 278 հատոր, Տ. Ղևոնդ քահանայի գրադարանին մեծ մասը՝ 200 հատոր, Ֆերհատյան ընտանիքն՝ հանգուցյալ Ֆերհատի գրադարանը՝ 260 հատոր, Քիշինեսի հոգաբարձութենեն՝ 150 հատոր, Գրիգոր քն. Լազարովիչը՝ 145 հատոր, Քիշինյան ավագ քահանայի՝ 200 հատոր և արժեքավոր ձեռագիրներ Տ. Վազգեն ծ. Վարդապետե՝ շուրջ 100 և այլն:

Ասոնցմեն զատ, 1927—1947 տարիներուն եղան նաև ուրիշ նվիրատվութեր, որոնց թիվը հարցունեու կհասնի. կարևոր նվիրատվուներեն հիշենք փրոփ. Ն. Եորգան՝ մեծանուն ուսուցչապետը և հայագիտը (մահացած 1940-ին), Գր. Թրանքու Յաշ՝ հայազգի նախկին նախկին նախարարը (մահացած 1940-ին), Տիգրան Բրոնիգու մահացած 1942-ին), Ա. Մելիքոն, տոքտ. Մ. Պելկան, Ե. Թյուփենկյան, Տիկ. Զեննեյան, փաստ. Ա. Թոմասյան, դատական խորհրդական Բանկի, Հ. Պակլաճյան, Տիկ. Ա. Տատուրյան, Գնել քն. Մանդալյան, Հայացալյան, Հ. Մ. Պոտուրյան, Պ. Պալու, Հորիոն, Պ. Լուսյան (մահացած 1934-ին), Լ. Լանիս, Հովհ. քն. Արքահամյան, Ա. Շիշմանյան, Տիկ. է. Անդրեասյան, Ա. Գրիգորյան, Մ. Լուքա, Տիկ. Ա. Էքսերճյան, Ն. Իվանովիչ, Ա. Թիմուրյան, Շ. Վարդանյան, Շ. Մեծիկյան, Թ. Թաշճյան, Հ. Նեֆյան, Ա. Ջրուանդյան, Պ. Պեղիկյան, Տիկ. Ա. Թովմայան, Մ. Տեմիրճյան, Ե. Պեյլազճյան, Տիկ. Ալթոնյան, Ս. Գևորգյան, Տիկ. Օ. Արարատյան, տոքտ. Ա. Տիրացյան, Վ. Աճեն-

յան, Տիկ. Ի. Մանկսալյան և ուրիշ շատեր:

1928-ին Ֆրլթիշենեն հին ուսմանահայ մը՝ օր. Զինքա թաղոս (մահացած 1929-ին)*) մատենադարանին խիստ արժեքավոր նկար մը նվիրեց, որ կներկայացնե Հիսուսի ծնունդը՝ գործ նկարիչ թիթո Պասանոյի. նկարը քանդակված գեղեցիկ շրջանակ մըն ալ ունի և ներկայիս «Հայ Մշակութի Տան» թանգարանի գլխավոր գարդերեն մին է:

«Հայ Մշակութի Տան» Հիմնադրության շրջանին մատենադարանին տրամադրության տակ էին դրված նաև հանգուցյալ Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրապյանի ամբողջ գրադարանը՝ շուրջ 500 գիրքեր, մատենադարանի վարչության նախկին նախագահ Վ. Մեշտուցյանի գրադարանները շուրջ 500 հատոր, բոլոր այն գիրքերն ու գույքերը, որոնք հավաքված էին «Հայ Մշակութի Հիմնարկության» նախաձեռնությամբ, Այալյանի նվիրատվությամբ Վիեննային ստացված Միհթարյաններու շուրջ 200 հատոր ու «Հանդէս Ամսօրեայ»-ի լիակատար հավաքածոն, Ցաշի թաղականութենեն ստացված շուրջ 175 հատոր գիրք ու զանազան վագերաթուղթեր և ձեռագիրներ, Ռումանին ստացված 1265-ին գրված ձեռագիր ավետարան մը, Սուչավայի թաղականութենեն 1649-ին գրված ձեռագիր ավետարան մը, անթվական հայսմավորք մը ու բազմաթիվ վավերաթուղթեր, Գ. Գրիսթեայի ստացված պոթունցի Պոլիխոս ընտանիքի վերաբերյալ զանազան վավերաթուղթեր և վերջապես 1945-ին «Հայաստանեան Ճակատ»-ի վարչության թուլլությամբ՝ նախկին «Թափթի» գրադարանի և անոր վերնահարկը պահպատճեն գրեթերեն շուրջ 700 հատոր նույն շրջանին «Արտասահմանի հետ կուտուրական կապի Հայկական ընկերության» միջոցավ Սովետական Հայաստանեն ստացվեցան ավելի քան 100 հատորներ Այսպիսով մատենադարանը 1944—1947, երեք տարիներու ընթացքին, ճոխացավ ավելի քան 4.000 հատորով ու զանազան ձեռագիրներով գրադարանի գիրքերու թիվը բարձրացնելով 11000-ի առանց հաշվելու հատուկտոր պարերականները և զանազան վագերաթուղթերը:

(Ծարունակելի)

ՍՈՒՐԵՆ ՔՈՂԱՆՉՅԱՆ

Նախկին օգնական-գրադարանային Ռումանակայ Կեղոնական Մատենադարանի (1939—1944) և նախկին ընդհանուր վարչի «Հայ Մշակույթի Տան» (1944—1947)

*) „Արարակ“ ամսաթերթ, 1929, թիվ 55, Պուբլիք:



ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅՐԵՆԱԴՐՁԸ ԵՎ ԱՆԳԼՈՒՀԻՒ ՄԸ ՆԱՄԱԿԸ ԻՐ ՀԱՅ ԱՄՈՒՍԻՆԻՆ

Հրապարակագիր Պ. Ե. Ամառունի, որ վերշն ու Փարիզ հաստատված է, լոնտոնեն իր անգլուիթի կենցմեն ստացած է հետևյալ համակը, որու բարգմանուրյունը հրատարակված է Փարիզի «Ժողովուրդ» թերթին մեջ:

Սիրելիս,

Մեծ և անհուն ուրախությամբ տեղեկացա, որ մեր սիրելի Խաչիկը Ս. կարավանով (Պետքանթեն, հունիս 4, 1947—«Ժ.») Հայաստան հասած է և արդեն հայրենի հողը կհերկե թրափորով: Հուզումով քննեցի Սովետ Հայաստանի քարտեզը և կարծեցի տեսնել հրաշալիքի ծիրանի գոտի մը, որուն մեկ ծայրը հավլիտենական Արարատի վրա կանգնող նույն տապանին, իսկ մյուս ծայրը կիշներ մեր հաշիկի թրափորին վրա... ու Խաչիկը ուրախ և բարձրածայն կերպեր իր հզոր ձայնով:

Ու մենք հոս այս պառավացած երկրներու ամուլ կյանքին մեջ՝ կտապլտկինք, հեռու իրարմե հաճախ, որպեսզի կարենանք հարուտի ժեռքեն խլել մեր պատառը:

Հաճախ խորհած եմ առանձնության ժամերոն և բնականաբար, ես քեզմե ավելի ժամանակ ունեմ մտածելու մեր այսօրվա և ապագա կյանքի մասին: Դուն հաճախ կըսես, որ քիչ ժամանակեն կյանքի այս դժվարին խնդիրները լավ կերպով պիտի կարգադրվին, բայց ես կիասկածիմ գոնե հառաջիկա շատ մը տարիներու համար: Այս պատերազմեն երկու տարի առաջ հազիկ սկսած էինք 1914—1918-ի ավերները մոռնալ, երբ ահա եկավ այս, որ ավելի վատ հետևանք ունեցավ և շեմ

հուսար որ 25—50 տարիներ պիտի բավեն կանոնավրելու այս երկիրները:

Սիրելիս, չենք փափաքիր որ զավակներ մեծցնենք տառապանքի համար, ինչ որ մեր սերունդին բաժինը եղած է մինչև այսօր. եկու զիրենք տանինք մաքուր և բարի ճամբու մեջ և տանք իրենց ապագա կարիլիություններու իդեալը:

Ուստի կհավատամ և կթելադրեմ, որ ներգաղթը ամենին առողջ որոշումն է Մեր Հայրենիքը՝ Սովետ Հայաստան պիտի ողջո՞նե քեզի պես մեկու մը վերադարձը, ոչ թե քու ուզած աշխատանքդ միայն պիտի կատարես, հապա երևակայի, սիրելիս, որ մեր ամբողջ կորովը և ծիգը պիտի վայելեն հարաշդիմական վարձատրությունը: Ես ալ կփափաքիմ մի քիչ օգտակար գործ կատարեց և կարող եմ, բայց ոչ հոս: Այս երկիրը չէ կազմակերպված այնպիսի ծեռվ, որ մեզի նման հարաշդիմասեր անձինք կարենան օգտակար ըլլալ:

Ու տակապին կա ընտանեկան անուշ կյանքը, որուն կբաղձանք և միայն կրնանք ունենալ երկրի մը մեջ, ուր մարդկային կյանքը կազմակերպված է մտային և հոգեկան արժեքներու, բազուկի և զոհողության ոգիի գրնահատման շափանիշով:

(«Ժարեր» թիվ 42)





ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՊԵՐՃ ՊՈՌՇՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Մայիսի 16-ին Աշտարակում բացվեց Պերճ Պոռշյանի Տուն-թանգարանը: Թացմանը ներկա էին գործներ և պարտիական ու հասարակական աշխատողներ:

Պոռշյանի Տուն-թանգարանի բացման առթիվ հլույթ ունեցավ Աշտարակի շրջուղե-

տի գործկոմի նախագահ՝ Յահրաղյանը: Գրողների միության անունից ողջունի խոսք ասաց Հր. Քոչարը. ելութներ ունեցան գոր Ստ. Զորյանը, ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր Երվանդ Շահազիդը և ուրիշներ:

ԹՈՒՍԱՆՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Ամեն օր՝ բազմաթիվ այցելուներ են լինում թումանյան գյուղում, ուր գտնվում է մեծ բանաստեղծ Հ. Թումանյանի Տուն-թանգարանը: Վերջերս այցելել են այնտեղ Լենինականի № 1 դպրոցի, Կալմիկինոյի մանկավարժական ուսումնարանի, Կիրովականի ու Ալավերդու շրջանների շատ դպրոցների ուսուցիչներ, ուսանողներ ու աշակերտներ:

Թանգարանում մեծ հետաքրքրություն են առաջացնում բանաստեղծի՝ մանկության տարիների կաշկարասիները, տնային իրերը, ինչպես նաև բազմաթիվ նկարներ, որոնք պատկերում են Թումանյանին իր ընտանիքում, ընկերների մոտ և այլն:

Առանձին տեղ են գրավում «Մուրճ», «Հասկեր» և այլ ամսագրերը, որոնցում ժա-

մանակին տպագրվել են Թումանյանի գործերը:

Վերջերս թանգարանը ձեռք է բերել մի շարք էքսպոնատներ, դրանցից հետաքրքիր է Սևանի դպրոցի աշակերտների նվիրած նկարը և Թումանյանի տոհմացուցակը, որը կազմել է գյուղի դպրոցի դիրքադրությունը ու բանաստեղծի ազգակից Վ. Թումանյանը:

Թանգարանի վարիչ Թումանյանը նամակներ է ուղարկել Հ. Թումանյանի անվան բուհու դպրոցների դիրքեկտորներին՝ բանաստեղծի մահվան 25-ամյակի կապակցությամբ դպրոցներում եղած նյութերը թանգարանին ուղարկելու համար:

ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍ ՆՎԻՐՎԱԾ ՐԱՖՖՈՒ ՄԱՀՎԱՆ 60-ԱՄՅԱԿԻՆ

Ալ. Մյասնիկյանի անվան Պետական Հանրային գրադարանի սրահներից մեկում կազմակերպվել է ցուցահանդես՝ նվիրված հայ խոշորագույն վիպասան Ռաֆֆու մահվան 60-ամյակին:

Ցուցահանդեսում դրված են հեղինակի «Սամվել», «Իւլիթ թեկ», «Կայծեր», Պար-

կական պատկերներ», «Զահրումար», «Հարեմ» և մի շարք այլ ստեղծագործություններ: Ցուցադրված են նաև Ռաֆֆու երկերի ուսաերեն լեզվով հրատարակությունները, ինչպես նաև Ռաֆֆու մասին քննադատական մի քանի գործեր:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Հայկական ՍՍՌ Պետական Պատմական թանգարանում նախապատրաստական աշխատանքներ են տարվում հայ ժողովրդի XVII—XX դարերի պատմության բաժին բացելու համար: Այս բաժինն ունենալու է 12 ենթաբաժին—«XVII—XX դարերի հայ-ուու-

սական փոխհարաբերությունները», «Արևելահայաստանի Ռուսաստանին միանալը», «Հայ ժողովուրդը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում», «Հոկտեմբերյան Սոցիալիստական Մհծ Ռեսու-

ցիան — հայ ժողովրդի ազատագրության ուղին և այլն, նմանապես կազմակերպվելու հն բաժինները, որոնք արտահայտելու են հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական

Մեծ Պատերազմին և Սովետական Հայաստանը պատիհնյան նոր հնդամյակի առաջին տարին տարիներում:

ՍԼԵՐՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 20-ԱՄՅԱԿԸ

Երևանի հասարակայնությունը լայն կերպով նշեց հայ մեծ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի մահվան 20-ամյակը:

Մայիսի 10-ին Հայֆիլհարմոնիայի համբագային դահլիճում տեղի ունեցավ ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախոմբի համերգը նվիրված մհծանուն կոմպոզիտորի ստեղծագործություններին: Նվագախոմբը գեկավարում էր դիրիժոր Ս. Շաթիրյանը: Համերդից առաջ Ալ. Սպենդիարյանի կյանքի և ստեղծագործության մասին ներածական խոսք ասաց արվեստի վաստակավոր գործի Ս. Գասպարյանը:

Համերգի առաջին բաժնում նվագախոմբը կատարեց Սպենդիարյանի «Երեք արմավենի»-ն, «Անցերատային վալս»-ը, «Կոնցերտային նախերգանեց»-ը:

Երկրորդ բաժնում նվագախոմբը կատարեց «Ղրիմի էսքիզներ»-ի երկրորդ սերիան և սյուիտա «Ալմաստ» օպերայից:

Համերգին մասնակցում էր ժողովրդական արտիստուհի Տ. Սազանդարյանը, որը կատարեց Սպենդիարյանի «Ալչամաս» և «Ես մեզ կհամբուրեն» ոռմանսները:

Ունկնդիրների խնդրանքով արտիստուհին կատարեց սակ «Այ վարդ»-ը և «Ղարիբ բըլ-րուլ»-ը:

Համերգը անցավ մեծ հաջողությամբ:

Այդ նույն ծրագրով սիմֆոնիկ համերգը կրկնվեց մայրաքաղաքի Ստալինյան ուսունիթատրոնում՝ բազմաթիվ ունկնդիրների ներկայությամբ:

Սպենդիարյանի անվան լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական թատրոնում մայիսի 7-ին և 9-ին ցուցադրվեցին «Ալմաստ» օպերան և «Խաննդուա» բալետը, որոնք մեծ հաջողություն ունեցան:

Ալ. Մյասնիկյանի անվան Պետական Հանրային գրադարանի սրահներից մեկում կազմակերպվել է ցուցահանդես՝ նվիրված հայ մհծանուն կոմպոզիտոր Ալ. Սպենդիարյանի մահվան 20-րդ տարեդարձին:

Ալ. Սպենդիարյանի մահվան 20-ամյակին նվիրված այս ցուցահանդեսում բազմաթիվ զրբեր, բրոցյուրներ և իլլուստրացիոն նյու-

թեր կան ցուցադրված, որոնք արտացոլում են մեծատաղանդ կոմպոզիտորի կյանքն ու երաժշտական գործունեությունը:

Այստեղ ցուցադրված են նաև Սպենդիար-



Ալեքսանդր Սպենդիարյան

յանի հրապարակած մի շարք նշանավոր երաժշտական ստեղծագործությունները:

Վերջերս Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Արվեստի պատմության և տեսության սեկտորը Երևանի Զայկովսկու անվան երաժշտական 10-ամյա դպրոցի դասաւոր Ն. Քոչշնարովայից նվեր ստացավ նըշանավոր հայ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի շատ արժեքավոր ինքնագիր փաստաթղթերը, որոնք մինչև այժմ պահպանվում են Քոչշնարովայի ծնողների անձնական արխիվում: Ստացված փաստաթղթերի թվում

կան հինգ նամակ, հեղինակի ինքնակենսագրականների պատճեններ, 1916 թվի մարտի 27-ի հեղինակային համերգի ինքնագիր ծրագիրը, «Պայրարմա»-ի առաջին հրատարակության (1899 թ.) մեջ օրինակը՝ հեղինակի մակագրությամբ:

Այս փաստաթղթերը նոր լուս են սփռում մեծ կոմպոզիտորի ստեղծագործական դեմքի պարզաբանման վրա: Առանձնապես հետաքրքրական է Սպենդիարյանի կարծիքը ուսական երաժշտական դպրոցի մասին: Ահա թե ինչ է գրում այդ առթիվ նա իր ինքնակենսագրության մեջ. «Ես ինձ հաշվում եմ ուսական այն դպրոցից, որն ստեղծված է Գիլինկայի, Բալակիրևի, Բորոդինի, Ռիմսկի-Կորսակովի և ուրիշների կողմից: Այս կոմպոզիտորների, նաև Գևազովնովի և Լյատովի ստեղծագործություններն ամենից ավելի են համապատասխանում իմ ճաշակին, բայց և այսպես իդեալը ես տեսնում եմ այն կոմպոզիտորի մեջ, որն իր գործունեությունը շիսահմանափակում ստեղծագործության որևէ բնագավառով, այլ հավասարապես գեղեցիկ է ստեղծագործում սիմֆոնիկ, օպերային և կամերային երաժշտության բնագավառներում: Այս իմաստով, շխոսելով արդեն թեթևովնի և Մոցարտի մասին, իմ կարծիքով, իդեալին ավելի մոտիկ են կանգնած ուսակոմպոզիտորներից Զայկովսկին, արտասահմանյաններից — դուքս թե Սեն Սանսը»:

Հատկապես արժեքավոր է այն նամակը, որը 1919 թվի օգոստոսի 25-ին գրված է Թիրիսիի Հայկական երաժշտ-թեորիտիկների ընկերությանը: Այդ նամակում կարդում ենք հետևյալը. «Ես ապելորդ չեմ համարում

տեղեկացնել ընկերությանը, որ իմ ստեղծագործությունը ես վճռել իմ տանել հարազատ Հայաստանին իրոք ծառայելու ճանապարհով, այսինքն քաղել նրա համար նյութեր հայկական ժողովրդական եղանակներից, պոեզիայից, գրականությունից, պատմությունից և այլն, և արդեն կանգնած եմ այդ ճանապարհին. այժմ ես գրում եմ օպերա Հովհաննեսի «Թմբկաբերդի առումը» պոեմի սյուժեով, չորս (համեմատաբար ոչ մեծ) գործողությամբ: Չեմ կարող չհաղորդել նաև իմ մեծ ցանկության մասին, որի իրագործումը հնարավոր կլինի միայն իմ տնտեսական գործերը կարգավորելուց և անշարժ ունիցվածքի մեծ մասը լիկվիդացնելուց հետո — ապագայում տեղափոխվել Հայաստանի գլխավոր կուլտուրական կենտրոնը, մի բան, որն անհրաժեշտ է վերոհիշյալ ուղղությամբ իմ գործունեության հաջողության համար»:

Ինչպես հայտնի է Ալ. Սպենդիարյանը իրագործելով իր այդ վաղեմի ցանկությունը, 1924 թվին տեղափոխվեց Երևան և իր կյանքի վերջին տարիներին ինտենսիվ կերպով զբաղվեց ստեղծագործական աշխատանքով, հաջողությամբ գրելով «Ալմաստ» օպերայի երաժշտությունը, «Եւելանյան Էլյուդներ»-ը և այլ նշանավոր գործեր:

Ստացված փաստաթղթերի մեջ կան շատ արժեքավոր տեղեկություններ Սպենդիարյանի կենսագրության, ստեղծագործական ու դիրիժորական գործունեության վերաբերյալ: Այդ փաստաթղթերը կօգտագործվեն մեծանուն կոմպոզիտորի ճշգրտված և մանրամասն կենսագրությունը գրելիս:

ԱՍԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ՇՆՈՐՀՈՒՄ

Դիտության ասպարեզում 1947 թվին աշքի ընկնող աշխատությունների, այդ նույն թվին կատարված աշքի ընկնող գյուտերի և արտադրական աշխատանքի մեթոդների արմատական կատարելագործությունների համար ՍՍՀՄ Մինիստրների Սովետի որոշմամբ ստալինյան մրցանակներ են շնորհված մի շարք սովետական գիտնականների ու արտադրության նովատորների:

Ստալինյան մրցանակի արժանացածների թվում են գտնվում նաև հայ ժողովրդի զավակները:

Ֆիզիկո-մարեմատիկական գիտությունների ասպարեզում աշքի ընկնող աշխատությունների համար

Առաջին աստիճանի մրցանակ է շնորհված՝ 200 հազար ռուբլու չափով:

ԱՐՄԱՆԱԿԻ ԱԼԻԽԱՆՈՎԻՆ, — ակադեմիկոս և ԱՐՏԵՄԻ ԻՍԱՀԱԿԻ ԱԼԻԽԱՆՆՅԱՆԻ, — Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ֆիզիկական ինստիտուտի գիրեկտոր, — կումիկական ճառագայթիների ասպարեզում գիտական հետազոտությունների համար, որոնց արդյունքները շարադրված են 1945—1947 թվերին հայպարակված հետևյալ հոդվածներում. Շնունդիկական ճառագայթիների ասպարեզում գիտական հետազոտությունների համար, որոնց արդյունքները շարադրված են 1945—1947 թվերին հայպարակված հետևյալ հոդվածներում. Շնունդիկական ճառագայթիների գիտությունը ծովի մակերեսից 3250 մետր բարձրության վրա, «Մեզոտրոնի և պրոտոնի մասսայի միջև միջանկայալ մասսայով մասնիկների գործության մասին», «Վարիտունների մասսաների սպեկտրները»:

Տեխնիկական գիտուրյունների ասպարե-

գրամ պչի ընկնող աշխատությունների համար

Երկրորդ աստիճանի մրցանակ է շնորհված՝ 100 հազար ռուբլու շափով՝ ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՆԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻՆ,

Մոսկվայի Բառմանի անվան բարձրագույն տեխնիկական ուսումնարանի պրոֆեսոր, — ավտոմատ դադարների նախագծման տեսական հիմունքները մշակելու համար, որոնք շարադրված են 1946 թվի վերջում հրապարակմամբ «Ավտոմատ դադարների նախագրման տեսության հիմունքները» գիտական աշխատության մեջ:

Քիմիական գիտությունների ասպարեզում աչի ընկնող աշխատությունների համար
Երկրորդ աստիճանի մրցանակ է շնորհված՝ 100 հազար ռուբլու շափով՝

ԽՎԱՆ ԼՅՈՒԽՆԻԳԻ ԿԱՌՈՒՅՑԱՆՑԻՆ, — ՍՍՌՍ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ, Քիմիական պաշտպանության ուղմական ակադեմիայի պրոֆեսոր, — օրգանական քիմիայի ասպարեզում կատարած հետազոտությունների համար, որոնց արդյունքները հրապարակված են 1946—1947 թ. թ. «Օրգանական միացությունների մեջ ֆուրոր մտցնելու մեթոդները», «Ալիֆատիկ օքսիդների և ֆուրային ջրածնի փոխարժեության մասին», «Ֆուրային ջրածնի հետ օրգանական օքսիդների սեպացիաների մասին» հոդվածների սերիայում:

Աչի ընկնող զյուտերի և արտադրական աշխատանքի մերողների արմատական կատարելագործությունների համար

Առաջին աստիճանի մրցանակ է շնորհված՝ 150 հազար ռուբլու շափով՝

ԱՐՏՅՈՒՐ ԽՎԱՆԻ ՄԻԿՈՅԱՆԻՆ (մի ուրիշ ընկերող հետ), — ինքնաթիռաշինության գլխավոր կոնստրուկտոր, — մարտական ինքնաթիռի նոր տիպ ստեղծելու համար:

Երրորդ աստիճանի մրցանակներ են շնորհված՝ 50 հազար ռուբլու շափով՝

ՄԱՐԻԱ. Ա. Ա. ՔԵԼԻ ԲԱՐԱ. ԶԱՆՑԱՆԻՆ, — աշխատանքների ղեկավար, Երևանի ապակուգործարանի գլխավոր ինժեներ, ՎԱԼԵՆՏԻՆ ՎՊԻՐԻԴՈՒՆԻ ՄԻԱՅՑԱՆԻՆ, — Երևանի էլեկտրաժեքներնաշխական գործարանի ղեկավարի տեղակալ (մեկ երրորդ ընկերող հետ), — ապակու էլեկտրածովական հնոցների նոր կոնստրուկցիա և ձուլման նոր մեթոդ մշակելու համար:

ՎԱԼԵՆՏԻՆ ՍՄԻԳՈՎԻՉ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԻՆ (ուրիշ երեք ընկերների հետ), — ՍՍՌՍ Գիտությունների Ակադեմիայի դոկտորական, — նոր իներցիոն օսցիլոգրաֆների կոնստրուկցիաներ մշակելու և սերիական արտադրության մեջ արմատավորելու համար:

ԳՈՒՐԳԵՆ ԹԵՖՐՈՒԴԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ (ուրիշ չորս ընկերների հետ), — աշխատանքների ղեկավար, նավթահորատման սարքավորման կոնստրուկտորական բյուրոյի պետ, — նավթահորատման ծանր սարքերի կոնստրուկցիան կատարելագործելու և դրանց սերիական թողարկումը կազմակերպելու համար:

ՍՈՅԻԱ. ՔՐԻՍՏԱՅՈՐԻ ՇԽԵՅԱՆԻՆ (ուրիշ երեք ընկերների հետ), — Հարավային և Արևմտյան շրջանների նավթարդյունաբերության մինիստրության տեխնիկական վարչության ավագ ինժեներ, — նավթայուղերի որակի բարձրացման մեթոդ մշակելու համար:

ԳԵՈՐԳԻ ԳԵՂԻՐԴԵՎԻՉ ՄԱՐԳԱՐԵՅԱՆԻՆ (ուրիշ երեք ընկերների հետ), — «Աղնեֆիելպրուկտուկտու» տրեստի գլխավոր տեխնոլոգ, — նավթի վերամշակման արդյունաբերական մեթոդները արմատապես կատարելագործելու համար:

Ստալինյան մրցանակի արժանացած հայ գիտնականներին դրվագալից տողեր են նվիրում սովետական գիտության ականավոր ներկայացուցիչները:

Գիտության և գյուտարարության ասպարեզում Ստալինյան մրցանակների կոմիտեի նախագահ ակադեմիկոս Ա. Ն. Նեմիրյանովը հետևյալն է ասել Ալիխանյան եղբայրների, Գ. Շահումյանի և Ի. Կնոնյանցի մասին.

«Ֆիզիկայի ասպարեզում խոշորագույն իրադարձություն է Հանդիսանում ակադեմիկոս Ա. Ի. Ալիխանյանովի և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Ի. Ալիխանյանի հայտնագործությունը: Կոսմիկական ճառագայթների ասպարեզում նրանց կատարած հետազոտությունները հանգեցրին մի ամբողջ շարք էլեմենտար նոր մասնիկների հայտնագործմանը: Այդ իր նըշանակությամբ միանգամայն բացառիկ հալունագործությունը նոր լույս է սփռում նյութի կառուցվածքի վրա և նշում է միջուկական ուժերի պրոբլեմների լուծման ուղիները»:

«Արտադրական պրակտիկայում ավելի ու ավելի լայնորեն կիրառվում են բարձր արտադրողական ավտոմատ դադարների նորանոր կոնստրուկցիաներ: Դրանց հիմքում դրված է այդ դադարների արտադրողականության տեսությունը, որ փայլուն կերպով մշակել է պրոֆեսոր Գ. Հ. Շահումյանը նրա աշխատության մեջ արժանիքը դադարաշխատության այնպիսի կարևորագույն սկզբունքների խնամքով հիմնավորումն է, ինչպես դադարաշխատության մեջ արմատավորելու համար, բանդապահների աշխատանքի ուժիմը, բանդապահների աշխատանքի համար:

րական դիրքերի թիվը, գործիքների կռնա-
տրությանն:

...«ՍՈՒԻՏ-Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ ի. լ. Կնունյանցի հիտա-
դուտությունները զգալի շափով հարստացրին
միմիայի միանգամայն նոր բնագավառը՝
ֆոտո-օրգանական միացությունները։ Նա
մշակել է օրգանական միացությունների մեջ
ֆոտո մտցնելու պարզ և ինքնատիպ մեթոդ—
առաջ դա համարլում էր անիրավործելի»։

Ակադեմիկոս լ. Լանդաուն հետևյան է
գրում Ալիխանյան եղբայրների մասին։

«Արտեմի հսահակի Ալիխանյանը պատկա-
նում է մեր երկրի ամենաականավոր ֆիզի-
կուների թվին։ Լենինգրադի Պետական հա-
մալսարանի ուսանող եղած ժամանակ նա
աշխատում էր ֆիզիկո-տեխնիկական ինս-
տիտուտի լարորատորիաներում։

1931 թվին Ալիխանյանն ավարտում է հա-
մալսարանը և ամբողջովին նվիրվում հետա-
զոտական գործունեության, սկզբում Պ. ի.
Լուկիրսկու, իսկ այնուհետև իր պավագ եղբոր՝
Ա. ի. Ալիխանովի ղեկավարությամբ։ Այդ
տարիներին էլ դրվեցին երկու եղբայրների
գիտական համագործակցության հիմքերը։

1938 թվին Ալիխանյանը գերազանց
պաշտպանելով դիսերտացիան, ստանում է
ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների
դոկտորի դիտական աստիճան։ Այդ ժամա-
նակ նա ուներ ավելի քան երկու տասնյակ
տպագրված աշխատություն։ այդ աշխատու-
թյուններից մի քանիսը, մասնավորպես իր
եղբոր համագործակցությամբ կատարած բե-
տա ճառագայթների հետագոտությունը, հա-
մաշխարհացին գրականության մեջ համար-
վում են կլասիկ։ 1941 թվին երկու եղբայր-
ները արժանանում են Ստալինյան առաջին
աստիճանի մրցանակի։

1942 թվին Ալիխանյանի գործունեության
մեջ սկսվում է նոր ժամանակաշրջան։ Նա-
անցնում է այսպես կոչված կոսմիկական
ճառագայթների, այսինքն տիեզերական
տարածության բոլոր կողմերից երկրագնդի
վրա ընկնող վիթխարի էներգիայով օժտված
մասնիկների հոսանքի ուժությանը միացանը։
1942 թվին, պատերազմի ամենաթեժ պա-
հին, երբ գերմանացիները խցկվում էին,
դեպի Կովկաս, Ալիխանյան եղբայրներն
իրենց առաջին արշավախումբն են կազմա-
կերպում դեպի Արագած լեռը, կոսմիկական
ճառագայթները ուսումնասիրելու նպատա-
կում։

Շատ հարամատություն, հաստատակա-
մություն և կամք էր անհրաժեշտ այդ ար-
շավախումբը կազմակերպելու համար։

1942 թվին Ալիխանյան եղբայրները դե-

ռևս նոր մարդիկ էին կոսմիկական ճառա-
գայթների գիտա-հետազոտական ասպարե-
զում, բայց այնուամենայնիվ նրանց հա-
ջողվեց այնպիսի փոքրիկ ժամանակամիջո-
ւում, ինչպիսին չորս տարին է, հիանալի
արդյունքների հասնել այդ ասպարեզում։
Այդ գործում վիթխարի դեր խաղաց նրանց
սերը դեպի էքսպերիմենտը և դրա հետ
կապված էքսպերիմենտալ տեխնիկայի
բարձր կատարելությունը։

Գործն սկսվեց հասարակ բանից։ Երկու
լավ հայտնի ֆիզիկական գործիք, որոնք
օգտագործվում էին կոսմիկական ճառա-
գայթների ուսումնասիրման ժամանակ,
տալիս էին տարբեր արդյունքներ, այն ժա-
մանակ երբ դրանք ըստ որոշ հաշվարկում-
ների պետք է տային միանման արդյունք-
ներ։ Այդ հանգամանքը նկատել էին շատ
ֆիզիկոս-կոսմիկներ։ Սակայն նրանք մեծ
նշանակություն չեն տալիս դրան, այն վե-
րագրելով էքսպերիմենտի սխալներին։
Ալիխանյանները հավատում էին իրենց
էքսպերիմենտալ տեխնիկային և նրանց հա-
մար պարզ էր, որ այդպիսի տարբերությունը
պետք է ինչ որ խոր պատճառ ունենար։

Որոնումները շարունակվեցին չորս տարի
և վերջո ի վերջո հանգեցին յուրաքանչյուր
էքսպերիմենտատոր ֆիզիկոսի համար
թերևս ամենագայթակղիլ հայտնագործու-
թյան— նոր մասնիկների հայտնագործու-
թյան։

Ֆիզիկայի մեջ մասնիկներ շատ քիչ կան։
Դեռևս 15 տարի առաջ հայտնի էին ընդա-
մենը երկու հիմնական մասնիկ՝ էլեկտրոն
և պրոտոն։ 1938 թվին հայտնագործվեցին
ևս երկու մասնիկ։ Պրոտոնի նման, բայց
էլեկտրոնական լիցքից զուրկ նեյտրոն մասնի-
կը և պոզիտրոն, այսինքն հակադիր նշանի
լիցք ունեցող էլեկտրոն։ Մի քանի տարուց
հետո հայտնագործվեց մեզոտրոն, այսինքն
իր կշռով պրոտոնի և էլեկտրոնի միջև մի
միջանկալ մասնիկ։ Խօսապես ասած, զա-
երկու մասնիկ է, որովհետև մեզոտրոններն
ունենում են երկու նշանով լիցք։

Այսպիսով, մինչև 1946 թիվը հայտնա-
գործված էր վեց մասնիկ և այդ վեց մաս-
նիկներին Ալիխանյաններն ավելացրին ևս
երկու մասնիկ, մի նվաճում, որով իրավամբ
կարող է պարծենալ յուրաքանչյուր ֆիզի-
կուս։

Երկու եղբայրների աշխատանքի այդ
ընդհանուր գծի հետ միասին Ալիխանյանը
ունի նաև իր սեփական ուղղությունը, որ-
ուել նրան նույնպես հաշողվել է շատ բան
ձեռք բերել։

Ֆրանսիական ֆիզիկոս Օժեն միջնորդափ

մեջ հայտնագործեց կոսմիկական ճառագալիքների ազդեցության տակ ծագող մասնիկների հոսանքներ, այսպես կոչված հեղեղներ: Օժերի այդ հեղեղները ծածկում են մի քանի հարյուր մետր տրամագիծ ունեցող հրապարակ և պարունակում են մինչև միլիարդ մասնիկներ: Ալիքանյանը Օժերի հեղեղները ենթարկեց հետազոտման, ըստ որում նա ոչ միայն նոր, հետաքրքիր տըլյալներ ստացավ այդ հեղեղների մասին, այլ և դրա հետ միասին հայտնաբերեց նոր տիպի հեղեղներ (քանի որ այդ հեղեղների տրամագիծը հասնում է ընդամենը մի քանի մետրի): Այդ հետաքրքիր երևույթի հետազա ուսումնասիրությունը շատ նոր քանի խոստանում:

Այս աշխատությունները Ալիքանյանին առաջ են քաշում սովետական գիտիկունների առաջավոր շարքերը: Նա 1943 թվին ընտրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ:

1947 թվին հրապարակած «Կոսմիկական

ճառագալիքների փափուկ կոմպոնենտի բաղադրությունը ծովի մակերեսից 3250 մետր բարձրության վրա», «Մեզոտրոնի և պրոտոնի մասսայի միջև միջանկար մասսայով մասնիկների գոյության մասին» և «Վարիտոնների մասսաների սպեկտրները» գիտական աշխատությունների համար ակադեմիկոս Արքահամ Խաչակի Ալիքանյանը, ինչպես նաև նրա կրտսեր եղբայր Արտեմի Խաչակի Ալիքանյանը 1948 թվին կրկին անգամ արժանացած են Ստալինյան առաջին աստիճանի մրցանակի:

Ալիքանյանը շատ ուշագրություն է նվիրում ֆիզիկական գիտության զարգացմանը իր հայրենիքում՝ Հայաստանում: Նա հանդիսանում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ֆիզիկական ինստիտուտի գիրեկտոր: Այդ ինստիտուտում դաստիարակվում են նորանոր ֆիզիկուններ, որոնք այս կամ այն կերպ կապված են Արագածի արշավախմբի հետ և որոնք չեն կարող Ալիքանյանից շվարակվել ֆիզիկայի նկատմամբ տածվող կրքուտ սիրով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԵՎ ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՌ ՀԱՍՏԱՐԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԽԺԱՆՄՈՒՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՒԽԱՆ

Անցյալ տարվա գեկտեմբերի վերջերին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ղեկավացիայի թրիխսի այցելելու ժամանակ նշվեց, իսկ Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ղեկավացիայի նրան այցելելու ժամանակ, սույն տարվա հունվարին, վերջնականապես որոշվեց իրագործել երկու ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների համատեղ սեսիաներ անցկացնելու պրակտիկան, որը պետք է գիտական լիակատար և մշտական կոնտակտ սահմանելու միջոց ծառայի և այդպիսով ապահովի երկու ակադեմիաներին հետաքրքրող պրոբլեմների մշտակումը դրանց համատեղ քննարկման պրոցեսում:

Հայկական և Վրացական Գիտությունների Ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների առաջին համատեղ սեսիան տեղի ունեցավ մայիսի 22-ից մինչև 30-ը: Մայիսի 22—25-ը սեսիան անցկացվեց Թբիլիսիում, իսկ 27—30-ը երեանում: Սեսիայի ընթացքում լսվեցին Հայաստանի և Վրաստանի գիտնականների 24 գիտական զեկուցում պատմովյան, հընագիտության, լեզվի և գրականության վերաբերյալ: Ինչպես Թբիլիսիում, այնպես էլ երեանում սեսիան սկսվեց ու ավարտվեց

պլենար նիսիարով. սեսիայի ընթացքում տեղի ունեցան պատմագիտական և ֆիլոլոգիական սեկցիաների նիստեր:

Սեսիայի աշխատանքի պլանը կառուցված էր այնպես, որ հայ գիտնականների ղեկուցումների մեծ մասը լսվեց Թբիլիսիում, իսկ վրաց գիտնականների ղեկուցումների մեծ մասը լսվեց նրանում:

Սեսիային ընդունված էին նաև Ազգային ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի գիտնականները:

Մայիսի 22-ին երեկոյան, Թբիլիսիում՝ Մարտի-Էնգելսի-Լենինի ինստիտուտի Ֆիզիալի գանձիճում բացվեց Հայկական ՍՍՌ և Վրացական ՍՍՌ Գիտությունների Ասեպեմիանների հասարակական գիտությունների բաժանմունքների գիտական համատեղ սեսիան: Սեսիան ներածական ճառով բառ արեց Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի միունք-պրեզիդենտ Ա. Գ. Շանիձեն: Նա խոսում է այն պայմանների մասին, որոնք ստեղծված են սովետական երկրում գիտական բեղմնավոր աշխատանքի համար:

Սովետական գիտության զարգացման շահերը, — ասում է նա, — պահանջում են մեր երկրի գիտնականների սերտ համագոր-

ծակցություն։ Տվյալ սեսիան նպատակ ունի է լ ավելի ամրապնդելու Վրաստանի ու Հայաստանի գիտնականների հապն ու համագործակցությունը, որպես երկու եղբայրական ռեսպուբլիկաների ժողովրդների բարեկամության վառ արտահայտություններից մեկը։

Այսուհետև, «Անդրկովկասյան Ֆեդերացիայի դերը Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում» թեմայով զեկուցում կարդաց ավագ գիտ. աշխատող Ա. Յա. Կիկիձեն։ Հեծ հետաքրքրությամբ լսվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Գ. Ղափանցյանի զեկուցումը «Փոքր Ասիայի և Հարեւան երկրների տոպոնոմիկայի մասին, որոնք իրենց աշխարհագրական անունների մեջ պահպանել են քարթվելական ցեղերի լոգվական մրնացուկները»։ Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ի. Գրիշայիլին իր զեկուցումը նվիրեց «Փողովորունիքների բարեկամության գաղափարին վրացական և Հայկական գեղարվեստական վրականության մեջ»։



Մայիսի 23-ին Հայկական ՍՍՌ և Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների համատեղ սեսիայի մասնակիցները այցելեցին Գորի քաղաքու և դիտեսին այն տունը, ուր ծնվել ու իր մանկությունն է անցկացրել ի. Վ. Ստալինը։ Այսուհետև սեսիայի մասնակիցները և լան Մցիսեթում մարտաստանի հնագույն մայրաքաղաքի հնագիտական պեղումների վայրում։

Մայիսի 24-ին տեղի ունեցավ պատմության սեկցիայի նիստը։ Սուազինը լսվեց պատմական գիտությունների թեկնածու Ա. Երեմյանի զեկուցումը «Հայաստանի հասարակական կառուցվածքի հիմնական հատկանիշները հելինիստական էկոլոխայում» թեմայի մասին։ Հայ, հույն և վրացի պատմաբանների ընդարձակ, կոնկրետ նյութի, ինչպես և հնագիտական պեղումների ընթացքում հայաբերված նյութերի հիման վրա զեկուցող ամեց մեր էուայի առաջին դարերում հայկական պետության ներքին կառուցվածքի վերուժումը։ Զեկուցումը աշխատված միջարանություն առաջարկեց, որին մասնակցեցին Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիճական Ասրամիձեն Հայկական անդամ Գ. Բարամիձեն նշեցին, որ զեկուցումը մեծ հետաքրքրություն է նիկայացնում։

Հանը, Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ն. Բերձենիշվիլին և ուրիշները ելույթ ունեցողները նշեցին, որ զեկուցումը նոր և արժեքավոր շատ բան տվեց նշված էպոխայի հայաստանի և Վրաստանի պատմության ուսումնասիրման համար։

Այսուհետև առավոտյան նիստում լսվեց Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի ավագ գիտ. աշխատող Ն. Մախարաձեի զեկուցումը՝ «Դեկարբրիստները և վրացական հասարակայնությունը» Զեկուցումը պատմեց դեկարբրիստների ունեցած կապերի մասին Վրաստանի առաջավոր գործիչների հետ և վրացական հասարակակության տրամադրությունների մասին 1825 թվի դեկտեմբերյան ապստամբության նախօրյակին և նրանից հետո։

Մայիսի 24-ի երեկոյան տեղի ունեցավ լեզվաբանության սեկցիայի նիստը։ Սայթ նովայի լյանքի ու ստեղծագործության մասին հետաքրքիր զեկուցումով հանդս եկագ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի ավագ գիտ. աշխատող Մ. Մորուսը։ Իր, փաստերով հագեցված, զեկուցման մեջ նա նշանավոր պոետի կենսագրությանը վերաբերող նյութեր մատնացույց արեց և տվեց նրա ստեղծագործության առանձին շըրջաբանությունների Ակադեմիայի իսկական անդամ Կ. Կեկելիձեն։ Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Բարամիձեն նշեցին, որ զեկուցումը մեծ հետաքրքրություն է նիկայացնում։

Հայ լեզվի էվոլյուցիայի, հնչումային տեսակետից, մասին զեկուցում կարդաց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Հ. Անառակը։

Սեսիան մեծ հետաքրքրությամբ լսեց պատմական գիտությունների թեկնածու Ա. Հարությունյանի զեկուցումը սովետահայ գրականության մեջ գրական հերոսի կերպարի մասին, Զեկուցումը հանդիսացավ սովետահայ գրողների ստեղծագործական ուղղու և նրանց ստեղծած դրական հերոսների կերպառների խոր վերուժում։

Մայիսի 25-ին տեղի ունեցավ պատմության սեկցիայի նիստը։ Լսվեցին ավագ գիտ. աշխատող Մ. Բերձենիշվիլի «Ինը հելացիլու քաղաքական և հասարակական գաղափարները» և պատմական գիտությունների թեկնածու Կ. Ղաֆաղարյանի «Պեղումներ

Դմին քաղաքում» զեկուցումները:

Երեկոյան տեղի ունեցավ սեսիայի ամենալար նիստը, որտեղ լսվեցին Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Զիկորավայի «Պատմականության պրոբլեմը ժամանակակից արտասահմանյան լինգվիստիկայում» և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Չովհաննիսյանի «Հայ-ուստական Հարաբերությունները 18-րդ դարի 80-ական թվականներին» զեկուցումները; «Սկզբանացիները Անդրկովկասում» զեկուցումով Հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Թ. Պիտորովսին:

Մայիսի 26-ին սեսիայի մասնակիցները ճանապարհվեցին Երևան, այնտեղ շարունակելու համար իրենց աշխատանքը:



Համատեղ սեսիայի մասնակիցները Երևան ժամանելով, մայիսի 27-ին, գերեզր այցելեցին Կարմիր բլուրը, որտեղ դիտեցին Ալրարտական Հուշարձանի պեղումները:

Մայիսի 27-ի երեկոյան Հայֆիշարմոնիայի դահլիճում տեղի ունեցավ Համատեղ սեսիայի երրորդ պեղնար նիստը: Բացի սեսիայի մասնակիցներից ու ժամանած հյուրերից դահլիճում ներկա էին գիտության, արվեստի գործիչներ, գրականագետներ ու պատմական-սովորական աշխատողներ:

Պեղնար նիստը բացեց ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հասարակական դիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Գ. Ղափանցյանը:

— Այսօր մեր ուսապուրիկայի մայրաքաղաքում, — ասաց նա, — մենք շարունակում ենք եղացրական երկու ուսապուրիկանների Գիտությունների Ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների համատեղ սեսիան, որ հաջողությամբ ըսկըսվեց և փայլուն կերպով անցկացվեց թթիլիսիոմ: Սեսիայի աշխատանքը ցույց տրվեց, որ միայն ՍՍՌՄ ժողովուրդների եղացրական համագործակցության պայմաններում հնարավոր է դարձել այնպիսի շփոս Երկու ակադեմիաների միջև՝ Հայաստանի և Վրաստանի պատմության, ինչպես նաև Հայկական-վրացական ֆիլոլոգիայի հիմնական պրոբլեմների համատեղ մշակման գործում: Ակադեմիկոս Ն. Յա. Մառը իր ժամանակին ամել է կովստորայի և պատմության հարցերի համատեղ լուծման անհրաժեշտության մասին: Յայց հասարակական-քաղաքական պայմանները ուսուցուցիայից առաջ արդելա-

կում էին այդ իղձի իրականացմանը: Եվ միայն այժմ, սովորական իշխանության օրոք, լինինյան-ստալինյան ազգային քաղաքականության հաղթանակի ժամանակ ըստեղծվել են բարենպատ պայմաններ անդրկովկասյան եղացրական ուսապուրիկանների ժողովուրդների կովստորական և գիտական իսկական համար համար:

Այնուհետև «Միջօրեականի աստիճանացին շափումների մասին ըստ հին հայկական աղբյուրների» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ ակադեմիկոս Հ. Մանաղյանը: Զեկուցման շուրջը բացվեց մտքերի փոխանակությունը:

Նկատի ունենալով Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ և ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Գ. Վ. Մերեբելու հիվանդությունը, «Արմագի գրերը և վրաց այբովենի ծագման պրոբլեմը» թեմայով նրա զեկուցումը կարդաց ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Շ. Վ. Զիգուրին: Դրանով ավարտվեց երեկոյան նիստը, Վերջում մեծ համերգ տրվեց:



Մայիսի 28-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի կոնֆերենց-դահլիճում տևելի ունեցավ պատմության սեկցիայի նիստը: Լսեց պատմական գիտությունների թեկնածու Գ. Ֆ. Գորեցշչվիլը զեկուցումը՝ «Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմական ինստիտուտի հնագիտական պեղումները տասը տարվա ընթացքում» թեմայով: Զեկուցումը ուղեկցվում էր Վրաստանի տերիտորիայում պեղումների ժամանակ հայտաբերված հրնագիտական հիշատակարանների ցուցադրությունը:

Այնուհետև «Էրիսթավի Ասպուրիաղը» և Անդրկովկասի կովստորական կապերը հյուսիսի հետո զեկուցումով հանդես եկավ Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Լ. Ա. Մացուկիշվիլը: Զեկուցումների շուրջը տեղի ունեցան մտքերի փոխանակություններ: Դրանով առավոտյան նիստը ավարտվեց:



Մայիսի 28-ի երեկոյան տեղի ունեցավ ֆիլոլոգիական սեկցիայի նիստ: «Հաւ յեզի պատմության պիրիոդիկացիան» թեմայով զեկուցեցի Հայկական ՍՍՌ Գիտությունների

Ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Ղարիբյանը: Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Շոթա Ռուսթավելու անվան Գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից թ. Ժղնութիի զեկուցումը և փերված էր վրացական ստվետական գրականության պատմության պերիոդագիրային, Հայ-վրացական լեզվական նմանությունների մասին զեկուցեց Գիլուղոգիական գիտությունների թեկնածու Ա. Մուրգալյանը: Այս սեկուցումների շուրջը մտքերի փոխանակություն տեղի ունեցավ:

Մայիսի 29-ի առավոտյան շարունակվեց պատմության սեկցիայի նիստը: Լսվեց չորս զեկուցում: Պատմական գիտությունների թեկնածու Ա. Մնացականյանը զեկուցեց «Հայ ժողովրդի մասնակցությունը 1941—1945 թ. թ. Հայրենական Մեծ Պատերազմում» թեմայի մասին:

«10-րդ դարի վրացական մի քանի նկարագրված ձեռագրերի մասին» զեկուցեց արիստուակիտական գիտությունների թեկնածու Ռ. Շմերլինը:

«Զեան պաշտամունքի հարցի առթիվ ըստ Տիրակենի արշավախմբի նյութերի» թեմայով զեկուցեց պատմական գիտությունների թեկնածու Ա. Ի. Ռոբակիձեն:

Պատմական գիտությունների թեկնածու Դ. Ա. Մելիկիշվիլին հանդես եկավ «Սուասուրը և Ուշարտուն» զեկուցումով: Դրանով ավարտվեց առավոտյան նիստը:

Մայիսի 29-ի երեկոյան, Հայֆիլհարմոնիայի դահլիճում տեղի ունեցավ եղբայրական երկու ռեսպոնսիկանների Գիտությունների Ակադեմիաների հասարակական գիտությունների թեմայի մեջ՝ սեկուցում պատմական գիտությունների թեկնածու Ա. Ի. Ռոբակիձեն:

«Եարքերի տեսությունը և նրա կիուառումը դրաբար լեզվի խոնարհման մեջ» թեմայով զեկուցմամբ հանդիս եկավ Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հասարակական գիտությունների թաժանմունքի նախադադար Ա. Գ. Շանին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մոսկվայում տեղի ունեցավ Գիտությունների Ակադեմիայի համաձայնեցուցիչ խորհրդի սեսիան: Համաձայնեցուցիչ խորհրդի խորհրդն է՝ ապահովել ռեսպոնսիկական ակադեմիաների աշխատանքի փոխադարձ համաձայնեցումը, կատարված աշխատանքի մեջնեցին սեսիայի և պահանջանքի մեջ:

Այսուհետև սեսիայում հրապարակվեց որոշում, որտեղ ասված է, որ Հայկական ՍՍՌ և Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների համատեղ գիտական սեսիան հանդիսացավ լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հաղթանակի և Անդրկովկասի ռեսպոնսիկաների գիտության ու կուլտուրայի ծաղկման վառ ցուցադրում: Սեսիան հնարավորություն տվեց համատեղ կերպով ֆնարկել վրացագիտության ու հայագիտության մի շարք հանգուցային պրոբլեմներ և անձնական փոխադարձ կապ հաստատել երկու ակադեմիաների իսկական անդամների, թղթակից-անդամների ու գիտական առաջատար աշխատողների միջև: Այսուհետև որոշման մեջ նշանակած է, որ երեք ակադեմիաների հետագա համատեղ բեղմնավոր աշխատանքի համար եղութեաբ տարին մեկ անգամ անցկացնել Աղջրեհցանական ՍՍՌ, Վրացական ՍՍՌ և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների համատեղ սեսիաներ:

Դժանով Վրացական ՍՍՌ և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների համատեղ գիտական սեսիաների սեսիաների մեջ աշխատանքի մասնակիցների գիտական սեղմանը աշխատանքի մեջ աշխատանքի սեսիաները:

Համատեղ գիտական սեսիայի աշխատանքի ավարտումից հետո վրացական ու աղութեանական գիտնականները, Հայաստանի գիտական աշխատողների ուղեկցությամբ, այցելեցին Զգարթնոցը, Էջմիածինը, Աշտարակը, Դվինը և Նրանք Սպենդիարյանի անվան օպերայի ու բալետի թատրոնում դիտեցին «Խանդությ» բալետը:

Մայիսի 31-ին սեսիայի մասնակիցները եղան Սևանում, ուր գիտեցին կողու վրայի պատմական հուշարձանները: Սևանից Վրաստանի գիտնականները մեկնեցին Թբիլիսի, իսկ Աղրբեցանի գիտնականները՝ Բաքու:

Համաձայնեցուցիչ խորհրդի կազմի մեջ մտնում են բոլոր ռեսպոնսիկական ակադեմիաների պրեզիդենտները և վիցե-պրեզիդենտները: Վերջին սեսիան, որը տեղի

ապագայի պլանների փոխադարձ ինֆորմացիան:

Համաձայնեցուցիչ խորհրդի կազմի մեջ մտնում են բոլոր ռեսպոնսիկական ակադեմիաների պրեզիդենտները և վիցե-պրեզիդենտները: Վերջին սեսիան, որը տեղի

ոնեցավ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Ս. Ի. Վավիլովի նախականությամբ, նվիրված էր միութիւնական ռեսապուրլիկանների գիտությունների ակադեմիաների 1947 թվի գիտական գործունեության վերաբերյալ՝ հաշվառմանը:

Խորհրդի նիստերում, որոնք տեղի էին ունենում ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի նախագահության շնորհած խորհրդի անդամների հետ միասին ներկա էին նաև միութիւնական Ակադեմիայի բաժանմունքների և ինստիտուտների ղեկավար աշխատողները և Սոսկվայի գիտական հասարականության ներկայացուցիչները:

Ակադեմիկ Բրումիջ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի գործունեությանը վերաբերյալ ղեկավար անդամնեցին խորհրդին անցավ միութիւնական ռեսապուրլիկանների գիտությունների ակադեմիաների ղեկավարությանը՝ քննարկմանը: Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի գործունեությանը՝ վեհաբերյալ ղեկավարությունը հանդես եկավ նրա պրեզիդենտ Վ. Համբարձումյանը: Զեկուցողը նշեց, որ Հաշվետու տարին անդիսացավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի աշխատանքի զգալի խորացման ու ընդարձակման տարի: Առանձնապես պետք է նշել ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների ապարագում գիտնականների ձեռք բերած հաշողությունները: Մեր Ակադեմիայի իսկական անդամներ, Սաալինյան մրցանակի լաւութեաններ Ալիխանյան եղբայրների կողմից կոսմիկ ճառագայթներում մի շարք նոր մասնիկների՝ վարիտոնների հայտնագործումը հակալական նշանակություն ունի ամբողջ ժամանակակից ֆիզիկայի համար: Այդ գուտը արմատական հեղաշրջում է ըստեղծում տարրական մասնիկների մասին մեր ոնեցած պատկերացումների միջև ու պատկանում է վերջին տարնամյակում համաշխարհային ֆիզիկայի ձեռք բերած խոշորագույն նվաճաւմների թվին:

Այդ աշխատանքը մեր գիտնականներ կատարել են ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի աշխատակիցների սերտ համագործակիցների:

Յունկցիանների մուավոր պատկերացման պրոցեդուր վերաբերող մի շարք խնդիրների լուծման վրա հաջող աշխատանք է կատարել Ակադեմիայի մաթեմատիկական սեկտորը, նրա ղեկավար, Ակադեմիայի իսկական անդամ Ա. Շահինյանը:

Կուլսի ցրման թերիայի բնագավառում մի շարք աշխատանքներ է կատարել աստ-

րո-ֆիզիկական լաբորատորիան:

Գործնական մեծ նշանակություն ունեն երկրաբանական ինստիտուտի աշխատանքները, մասնավորապես երկրաբանական գիտությունների գոկտոր Մաղաքանի մինագրությունը Հայաստանի մետաղների մասին, որն ավարտվել է անցյալ տարի:

Շատ զգալի դեր է խաղացել նաև շինարական կառուցվածքների ինստիտուտը նոր կոնսուրուլցիաներ և տեղական նյութերից շինարական ղետալներ մշակելու ասպարեզում (Գրիգորյան, Սիմոնյան և ուրիշներ):

Քրա- էներգետիկ ինստիտուտում ավարակել է Սևանի և Ջանգովի ջրերի օգտագործման զինավոր պլանի մշակումը էլեկտրիֆիկացիայի և ոռոգման նպատակով:

Դրական աշխատանքական գիտությունների ասպարեզում պետք է նշել Հայկական ՍՍՌ ամպելոգրաֆիայի հրատարակումը:

Շարունակելով իր ելույթը, ակադեմիկոս Համբարձումյանն ասաց, որ հասարակական գիտությունների ասպարեզում անցյալ ժամանակաշրջանը հանդիսացավ վերակառուցման ժամանակաշրջան:

Մեծ նշանակություն ունեն պատմության ինստիտուտի կողմից Դվինում և Կարմիր բլուրում կատարված հնագիտական պեղումները, ինչպես նաև Հայրենական Մեծ Պատերազմի պատմությանը վերաբերյալ միշտ գրքների հրատարակում:

Բավականին ինտենսիվ աշխատանք է կատարվել Խաչատուր Աբովյանի երկերի ակադեմիկի հրատարակության ուղղությամբ, որի մահվան հարյուրամյակը տոնվելու է այս տարի աշնանը: Լեզվի ինստիտուտը հրատարակել է Հայո-ուսերեն համառուրառան, որը պարունակում է 30 հազար րաու: Ներկայումս պատրաստվում է ոռու-Հայերեն բառարանի հրատարակությունը ավելի քան հարյուր հազար բառով:

Վ. Համբարձումյանը իր ելույթում նշեց մի շարք օժանդակ հաստատությունների, մասնավորապես հիմնական գրադարանի, հրատարակչության, տեխնիկական գինվածության և այլ հաստատությունների գարգացման մասին:

1947 թվին տեղի է ոնեցել նաև ինստիտուտների և լաբորատորիաների կառուցմանը, որոնցից մի քանիսը հանձնվել են շահագրժման:

Վերջում ակադեմիկոս Համբարձումյանն ասաց:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի գործունեությունը զարգանաւ է ոռա և առշորագույն գիտնականների հետ ամենասերտ կապ պահպանելով: Պարտիան

և կառավարությունը ստեղծել են բոլոր պայմանները սովետական գիտության ժաղկման համար և մեր խնդիրն է դարձնել ռեսպուբլիկական գիտությունների ակադեմիաները գիտական առաջնակարգ կենտրոնները: Թիրուս ռեսպուբլիկական ակադեմիաներում այդ բանը մենք կարող ենք անել նեղ բնագավառներում, բայց այն, ինչ որ անում ենք, պետք է ունենա բարձր մակարդակ:

— Այդ, ինչ որ մենք տեղեկացնենք Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի գեկոցումից և մյուս ընկերների եղույթներից, — ասաց իր ելույթում ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Ս. Ի. Վալիովը, — պարզ ցույց է տալիս, որ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան հիմնականում գտնվում է միանգամայն ճիշտ, շատ լավ ուղղու վրա և, որպես անցյալ տարվա աշխատանքների արդյունք, կարող է ցույց տալ մի շարք աշխի ընկնող, երբեմն բացառիկ խոշոր հաջողություններ: Կարծում եմ, որ այդ բանը մենք պետք է նշենք: Ամեն ինչից պարզ է, որ Հայկական Ակադեմիան

ամբապնդում է և առաջիկա տարիներին կդառնա մեր սովետական հիմնական հաստատություններից մեկը:

Այսուհետեւ Ս. Ի. Վավիլովը պաշտպանեց Մատենադարանում պահպող ձեռագրերը հրատակելու հարցը, որն արծարծել էր ակադեմիկոս Ի. Ի. Մեշչանինովը:

— Քանի որ, — ասաց նա, — այդ հարցում մեծապես շահագրգուփած են ոչ միայն Հայ, այլև բոլոր պատմագետները, համապատասխան որոշում ընդունենք և դիմենք ՍՍՌ Գիտությունների Ակադեմիային՝ առաջարկելով հրատարակել այդ ձեռագրերը: Այդ հարցը պետք է լուծվի:

Այսպես, ամեն տարի Մոսկվայում ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի նախագահության շենքում հավաքվում են ռեսպուբլիկական գիտությունների ակադեմիաների ղեկավարները, ամփոփում են արդեն ձեռքբաժն աշողությունները, նշում թիրությունները և գծում այն ուղիները, որոնցով պետք է ընթանա մեր մեծ Սովետական պետության առաջավոր սոցիալիստական գիտության հետագա զարգացումը:

ԻՆՔՆՈՒՄ ԱՐՎԵՍՏԻ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍՍՌ Մինիստրների Սովետին կից արվեստի գործերի Կոմիտեն և ն. Կ. Կրուպսկայայի անվան Համամիութենական Ժողովրդական ստեղծագործության Տոնը Մոսկվայում կազմակերպել են կիրառական արվեստի և կերպարվեստի ինքնուա վարպետների համամիութենական ցուցահանդես, որի բացումը տեղի ունեցավ հունիսի 22-ին:

Այդ ցուցահանդեսին մասնակցում է նաև Հայկական ժողովրդական ստեղծագործության Տոնը, որը ցուցահանդես է ուղարկել ավելի քան 90 լավագույն էքսպոնատներու:

Հայաստանից ուղարկված էքսպոնատները ուղագրավ են իրենց բարձր արվեստով, գաղափարական բովանդակությամբ, թեմատիկայով, կոմպոզիցիայով: Ցուցահանդեսում դրսերված է հայ կիրառական ար-

վեստն ու կերպարվեստը իր ամբողջությամբ և այդ էքսպոնատների հիման վրա հանդիսատեսը լրիվ պատկերացում է ստանում հայ ժողովրդական ինքնագործ արվեստի մասին: Իրենց թեմատիկայով և կոմպոզիցիայով հատկապես ուշագրավ են հայկական գորգերը, առանձնապես ընկեր Ստալինի պորտրետ (գործ Ա. Մատինյանի), «Եղինաքայլը» (գործ Ե. Մկրտչյանի): Զարմանալի վարպետությամբ են պատրաստված Սովետական Միության հիմնը փոսկրյա փորագրությունը (գործ Ա. Պողոսյանի), ինչպես նաև Փ. Ավետիսյանի ձեռագրություն է պառաջրել արծաթագործ փորագրի Հրաչյա Ստեփանյանի գործը արծաթյա տախտակի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԶԱԶ ՆՎԱԳԱԽՄԲԻ 10-ԱՄՅԱԿԸ

Լրացավ Հայաստանի Պետական ջազնվագախմբի գոյության 10 տարին: Նրա կազմակերպի ու գեղարվեստական ղեկավար, արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Ա. Այվազյանը բնութագրելով ջազնվագախմբի գործություններու 10 տարվա ընթացքում, ասաց:

— Իր գոյության տասը տարվա ընթացքում ջազնվագախմբը մեծ աշխատանք է կատարել աշխատավորների գեղարվեստական սպա-

սարկման համար. նա 2030 համերգ է տվել, այդ թվում 512-ը շեֆական կարգով, որոնց ներկա են եղել մեկ ու կես միլիոնից ավելի հանդիսատեսներ: Ջազնվագախմբը եղույթներ է ունեցել Մոսկվայում, Լենինգրադում, Հեռավոր Արևելքում, եղբայրական ռեսպուբլիկաների — Վրաստանի, Ադրբեյչանի, Ուկրաինայի, Ուգրեկոստանի, Թուրքմենստանի, Տաջիկստանի, Ղազախստանի, Մոլդավիայի մայրաքաղաքներում ու քաղաքներում: Նա

ժամանակցել է 1939 թվին Մոսկվայում կազմակերպված Հայ արքանութ տասնորդակի եղբարփակիլ Համերգին և սիստեմատիկ կերպով կլույթինը է ունենում Հայաստանի բաղադրություն ու շրջաններում:

Հայրենական Մեծ Պատերազմի տարիներին Հայաստանի Պետական շազնվագախումբը հարցուրավոր համերգներ է տվել Սովետական Բանակի մարտիկների համար, որի համար պարզեւարքել է մի քանի պատվուրքերով, այդ թվում Մոսկվայի, Կիևի, Անդրկովկասի զինվորական շրջանների կողմից տրուված պատվորքով և արժանացել է բազմաթիվ շնորհակալությունների: Պատերազմի տարիներին շազնվագախումբը հիսունից ավելի պաշտպանական, հակաֆաշիստական և երգիծական երկեր է ստեղծել:

Զազնվագախմբի սեպերտուարի համար գրինը է 342 երաժշտական երկ, որոնցից շատերը ժողովրդականացել են, ինչպես օրինակ «Հայկական ռազմողիա»-ն, «Խորու է», «Եւարք-զյալին», «Հայկական սեղաներգ»-ը և ուրիշներ:

Ներկայումս շազնվագախումբը բաղկացած

է 30 նվազողներից, երգիչներից և պարողներից: Ավագագույն մինակատարներ, որոնք շազնվագախմբի կողեկտիվում աշխատում են նրա հիմնադրման օրից սկսած, հանդիսանում են գիրիժոր-չութականար Մ. Թաղեառյանը, Հարլածող Ռ. Յովանը, պարողներ Օրդուան եղբայրները, Վերջին տարում շազնվագախմբի մեջ են ընդգրկվել արտիստումբի Ա. Մալխասյանը և Հայրենադարձ երգիչ-երգչուհիներ Մ. Հովհաննիսյանը, թ. Քյոսեյանը ու Ա. Այգիշյանը:

Ներկայումս շազնվագախումբը ուժեղ կերպով նախապարաստվում է առաջիկա գաստրոլային ելույթների համար: Կոլեկտիվը, խորը գիտակցելով իր բարձր պատասխանատրվումը, ապրում է ստեղծագործական վերելք: Թեև կոլեկտիվը շազնվագախմբի գործունեության երկորդ տասնամյակը, նրա արտիստները, իրենց վրա ամենօրյա աշխատանք տանելով, կործադրեն բոլոր շանքերը, որպեսզի համերգային բեմից հնչեն գաղափարապես հապեցին, գեղեցիկ ու մելոդիկ երգեր:

ՀԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտը կենինգրադի Պետական էրմիտաժի հետ համատեղ այս տարի շարունակելու է կարմիր բլուրի ուրարտական ամբողջի պեղումները, որոնք անցյալ տարիներում հետաքրքիր արդյունքներ են տվել:

Անցյալ տարում հետազոտման են ենթարկվել ուրարտական փոխարքայի պալատի տնտեսական շենքերը և պահեստները. Հայտնաբերված են սենյակներ, որտեղ պատրաստվում էր քոնչութի ձեթ. գտնված են քարե կիսատակառ, մեծ սանդ, ահապին քանակությամբ քոնչութի քոնչ — որպես ափառադրության մեջ գույների Պահանձնուց մեկում Հայտնաբերվել է ուրարտական թագավոր Սարդուրի, Արգիշտիի որդու (VIII դարի կեսերը մեր էրաշից առաջ) սեպագիր արձանագրություն ունեցող բրոնզի սաղալարտ՝ զարդարված զանազան պատճեներով:

1948 թի պեղումների ժամանակ շարունակելու են պալատի պահեստների հետազոտությունները, որոնք խոստանում են տալ-

շատ հետաքրքիր նյութեր ուրարտական կուտուրայի ուսումնասիրման համար:

Բացի գրանից սկսվելու է ամբողջ արևմտյան կողմը ընկած հնագույն քաղաքի ուսումնասիրությունը, որի տերիտորիայի վրա պարզություն երևում են փողոցները, բնակելի տների թաղամասերը:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պետական պատմական թանգարանի արշավախումբը, պատմական գիտությունների թեկնածու կ. Զաֆադարյանի ընդհանուր գեկավարությամբ, շարունակելու է Հայկական հնագույն մայրաքաղաք Դվինի պեղումները: Գառնիում սկսվելու են Հայաստանի պատմության Արշակունյաց շրջանի (մեր էրայի առաջին դարեր) հուշարձանների հետազոտման հնագիտական աշխատանքները: Այդ պեղումները կնպաստեն Հայկական պետության պատմության համար հուշարձանների գործին:

Արզու և Արագածի շրջաններում քարի (պալեոլիտ) հուշարձանների հետազոտումներ են կատարվելու:

ՊԵՂՈՒՄՆԵՐ ԴՎԻՆՈՒՄ

Հունիսի վերջերին Հայկական ՍՍՌ Պետական թանգարանի հնագիտական արշավախմբը Դվինի մեկնեց Հայաստանի միջնա-

դարյան մայրաքաղաքի պեղումները շարունակելու համար: Արշավախմբի կազմում կան 16 գիտական և գիտա-տեխնիկական

աշխատողներ: Արշավախմբի աշխատանքները զեկավարում է պատմական գիտությունների թեկնածու Կ. Ղաֆարյանը:

Պեղուաները շարունակվելու են քաղաքի կենտրոնական մասում, Վ դարձ եռանեփային բազիլիկ եկեղեցու ու կաթողիկոսի պա-

լատի շուրջը և միջնաբերդում, որտեղ գտնվում է իշխանավորների պալատները:

Հետախուզական պեղուաներ են կատարվելու նաև քաղաքի զանազան մասերում՝ Դիլինի հարավային սահմանները որոշելու համար:

ՆՈՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ

ՄԻԿՈՒՅԱՆ. — Ծրջանի Արենի գյուղի մոտ սկսվել է նոր էլեկտրակայանի կառուցումը: Էլեկտրակայանը ունենալու է մեծ կարողություն, և բացի շրջանի գյուղերից, սպասարկելու է նաև Ղարաբաղլարի ու Աղիզբեկովի շրջաններին:

Մայիսի 22-ից սկսվել են շինարարության հողային աշխատանքները: Այդ օրը շրանցի և ջրամբարի փորման աշխատանքներին

մասնակցում էին 500 մարդ: Ջրատար առվի հողային աշխատանքը կատարում են մի շարք գյուղերի կոլխոզները: յուրաքանչյուր բրիդագա, մրցության մեջ մտնելով, ձգում է ամենից շուտ ավարտել իր տեղամասի աշխատանքները:

Նախատեսված է էլեկտրակայանի կառուցումն ավարտել ամենակարճ ժամկետում:

ԳՈՐԾԻ ԴՐՎԵՑ ՄԻԿՐՈԳԵՍ

Հունիսի 21-ին Բասարգեշարի շրջանի Մեծ Կարակոյում գյուղի կոլխոզները հանդիսավոր կերպով բաց արբն իրենց միկրոգեսը: Գյուղի փողոցներում և բնակարաններում վառվեցին հայրենի լամպերը:

Մեծ Կարակոյումի կոլխոզները անցրած տարի աշքի ընկնող նվաճումներ ձեռք

բերեցին կոլխոզի հանրային տնտեսությունը բնվայինելու և զարգացնելու ասպարեզում: Աւատեղ մեկ աշխօրին բաշխվեց 6,5 կիլոգրամ հացահատիկ, ինչպես և այլ մրեթերներ և դրամ: Ստանալով էլեկտրական լուսավորություն կոլխոզների կյանքը նոր աստիճանի բարձրացավ:

ԿՈՆՍԵՐՎԻ ԳՈՐԾԱՐԱԿ

Հափանում կառուցվում է կոնսերվի գործարան, որը տարեկան արտադրելու է մեկ միլիոն պայմանական տուփի պահածող Արդեն ավարտված հն գործարանի շենքի կառուցման աշխատանքները, իսկ օժանդակ ցեխերի և բնակելի շենքի կառուցման աշխատանքները կավարտվեն հունիսի վերջին:

Մինչև հիմա շինարարության վրա ծախսված է մոտ հինգհարյուր հազար ոուրիշ: ստացված է ամբողջ սարքավորումը: Գործարանը հունիսի 1-ից սկսած արտադրանք է տալու Մինչեւ տարվա վերջը նաև կարտադրի 20 հազար տուփի լավորակ պահածող և մուրաբա:

ՈՒԶԲԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԽՄԱԴԻՐ ԱԼԻՇԵՐ ՆԱՎՈՒԻ ՏՆՆԴՅԱՆ 500-ԱՄՅԱԿ

Մայիսի 15-ին Սովետական Միության ժողովուրդները նշեցին ուղբեկական գրականության հիմնադիր, մեծ բանաստեղծ Ալիշեր Նավուի ծննդյան 500-ամյա հոբելյանի:

Սուկվայում, Միությունների Տան Սյունազարդ գահին ունեցել հորելյանական հանդիսավոր երեկո, որը կազմակերպել էր ՍՍՌՄ Սովետական Գրողների միության վարչությունը: Երեկոն ներածական ճառով բացել էր ՍՍՌՄ Սովետական Գրողների միության գլխավոր քարտուղարի տեղակալ Ն. Տիխոնովը:

Ուղբեկական մեծ բանաստեղծի կյանքի և գրական գործունեության մասին հաղորդումներ են արել ՍՍՌՄ Գրողների միությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Ե. Բերտելսը:

Ա Ուզբեկական ՍՍՌ Գրողների միությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Վ. Զախիդովը:

Ալիշեր Նավուի ստեղծագործություններից կատարած իրենց թարգմանությունները կարգացել են բանաստեղծությունների կարգացել են բանաստեղծությունների Վ. Զվագինը, Լ. Պենկովսկին, ինչպես նաև արտիստներ Ն. Պերշինը և Օ. Ֆրելիխը:

Մեծ բանաստեղծի հոբելյանը առանձնակի շքեղությամբ է տոնվել Սովետական Ուղբեկական անդամակիցների կողման օպերայի և բալետի նորակառուց թատրոնում բացվել է բանաստեղծի ծննդյան 500-ամյակին նվիրված հոբելյանական հան-

դիսավոր նիստը, որին ներկա են եղել Մոսկվայից, Լենինգրադից, Կիևից, Մինսկից, Ռիգայից, Վիլնյուսից, Թբիլիսից, Բաքվից, Երևանից և Սովետական Միության մյուս եղբայրական ռեսպուբլիկաների քաղաքներից ժամանած դիտության, արվեստի ու գրականության ներկայացուցիչները:

Հորելլանի օրերին Տաշքենդում տեղի է ունեցել Ուզբեկական ՍՍՌ Սովետական Գրողների միության պլենումը, ինչպես նաև Ռուբեկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հատուկ սեսիան՝ նվիրված Ալիշեր Նավոիի կյանքին ու գործունեությանը, Սեսիայում զեկուցումներ են լսվել բանաստեղծի ստեղծագործությունների, աշխարհայցքի և արևելքի ժողովուրդների գրականության վրա նրա թողած ազդեցության մասին:

Ուզբեկական ՍՍՌ կառավարության որոշմամբ անմահ երդշի հիշատակը հավերժացնելու նպատակով Տաշքենդում կանգնեցվելու է մեծ բանաստեղծի մոնումենտալ արձանը: Նավոիի հորելլանը հավերժացնելու համար որոշված է նրա անվամբ կոչել նաև Տաշքենդի հանրային գրադարանը, որի կառուցումն ավարտվելու է մոտ ժամանակներս: Հորելլանական հանձնաժողովը հատուկ պատվիրակություն է ուղարկելու Հերաթ (Աֆղանստան), որտեղ հուշատախտակ է ամրացվելու Ալիշեր Նավոիի գիրեզմանի վրա:

Հորելլանի օրերին Տաշքենդում բացվել է բանաստեղծի կյանքն ու գործունեությունը արտացոլող ցուցահանդես:



Մոսկվայում Գեղարվեստական գրականության հրատարակչությունը ուստի է լեզվով լույս է ընծայել Ուզբեկական մեծ բանաստեղծի ստեղծագործությունների մեջ հատորյակը, որի մեջ ամփոփված են նրա հինգ պոեմները: Նույն հրատարակչությունը է ընծայել Ալիշեր Նավոիի լիրիկան վերնագրով գիրքը: «Սովետակի պիտակը» հրատարակչությունը լույս է ընծայել Ալիշեր Նավոիի լիրիկան և անդամակիցների մեջ բանաստեղծի ստեղծագործությունների մեջաւագրակը:

Ուզբեկական գրականության հիմնադիր

Ալիշեր Նավոիի հորելլանին լայնորեն նախապատճառավել են նաև Սովետական Միության եղբայրական ռեսպուբլիկաները:

Նավոիի ստեղծագործությունների մեջաւարյակները լույս են տեսել Ռուբայինայում, Էստոնիայում, Տաջիկստանում, Ղազախստանում, Թուրքմենստանում, Կիրգիզիայում և մյուս ռեսպուբլիկաներում:



Ալիշեր Նավոիի հորելլանը մեծ շուքով



Ալիշեր Նավոի

տոնվել է նաև Հայաստանում: Դպրոցներում կազմակերպվել են գրական երեկոներ, ակոմբներում կարդացվել են դասախոսություններ: Ա. Մասոնիկյանի անվան Հանրապետության գրադարանը կազմակերպվել է Նավոիին նվիրված ցուցահանդես: Հայաստանի Սովետական Գրողների միության Տան դահլիճում մայիսի 15-ին տեղի է ունեցել հանդիսավոր երեկո, նվիրված մեծ բանաստեղծի ծննդյան 500-ամյակին: Հանդիսավոր երեկոյին ներկա են եղել մայրաքաղաքի աշխատավորության, ինտելիգենցիայի ներկայա-

ցուցիչներ, գրողներ, գրականագետներ, արվեստի աշխատողներ: Նավոփի կյանքի և գրական գործունեության մասին զեկուցումով հանդիս է եկել ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր էդ. Աղայան:

Հորելլայնի օրերին Հայպետհրատի հրատարակությամբ առաջին անգամ հայերեն լեզվով լուսու է ընծայվել մեծ բանաստեղծի անմա՞ն Հնարեալ և Շիրին» պոեմը Մ. Կորյունի թարգմանությամբ, Դ. Դեմիրճյանի խմբադրությամբ և Ա. Կարինյանի հառաջարանով: Գիրքը գեղեցիկ կերպով ձևավորել է նկարի Ս. Խոեփանյանը:

Մեծ բանաստեղծի երկերը հագեցված են Հումանիզմով, նա իր պոեմներում երգել է

Մի՛ վշանար, ե՞ս ուռնած այն աշխարհը երաշագեղ,
Որի նման դու շես գտնի երեկցե մի այլ տեղ,

Տանը է ինձ այն աշխարհը, ինքս եղել եմ այնտեղ,
Ես չեմ տեսել ողջ սշխարհում նրա նման սիրուն տեղ:

Բնուրյանը անմահական, անշափ առատ վարդեր կան,
Եղեմային այն աշխարհին անվանում են Հայաստան:

Նավոփին իր բանաստեղծական անմահ փառքը նվաճել է Հինգ պոեմներով, որոնք ընդգրկված են «Ծամաս» (Հնգյակ) վերնակորով ժողովածուի մեջ: Այդ պոեմներն են — «Արդարների սբանշացումը», «Լեյլի ու Մեջնուն», «Ֆարեալ և Շիրին», «Յուն մոլորակ», «Ալեխսանդրյան պարիսպը»:

Նավոփի երկերի ձեռագրերի ամենամեծ հավաքածոն աշխարհում պատկանում է Ռուբեկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Արևելյան ձեռագրերի ուսումնասիրման ինստիտուտին: Այստեղ հաշվում է ունիկումային արժեք ունեցող 276 ձեռագրի: Արրանց թվում «Ծամաս»՝ արտագրված 1484 թվին Հերաթում, Արդուչքեմիլի կողմից: Այս ձեռագրին ունի 325 թերթ (650 էջ) և հավանական է համարվում, որ սա հանդիսանում է պոետի ձեռագրից արտագրված մաքրադիր օրինակը նույնակի ուշագրավ ձեռագրի է հանդիսանում Նավոփի բանաստեղծությունների ժողովածուն, որը հայտնի է «Մանկության ուսանակորների ժողովածուանվան տակ»: Սա արտագրված է պոետի կենդանության օրոք, 1492—93 թվականներին: «Ուսանակորների ժողովածուան» XV

ժողովուրդների բարեկամությունը, նրա ըստեղծագործություններում կարելի է հանդիպել շատ ժողովականների ներկայացուցիչների — և շնացու, և արարի, և հայի և հոռմեացու, և եգիպտացու, և հույնի, և սլավոնի...»:

Իր «Ֆարենակ և Շիրին» հիանալի պոեմում Նավոփին մեծ սիրով ու զգացմունքով է նկարագրում օտարերկրյա դաժան լծի տակ հեծող լքնաղ Հայաստանը: Պոեմի հերոս Ֆարենազը ոչ միայն սիրում է հայուհի Շիրինին, այլ և Հայաստանն ու հայ ժողովրդին. նա Հայաստանը դիտում է որպես իր հայրենիքը և պայքարի է ելուս նրա թշնամիների դեմ: Այս ինչպիսի հիասքանչ տողեր է նվիրել նավոփին Հայաստանին. —

Դարի Հերաթի արվեստի գլուխ գործոցն է Հանդիսանում: XV դարի վերջի և XVI դարի սկզբի ձեռագրերից հիշատակության արժանի է «Գորս դիվան»-ը այսինքն բանաստեղծությունների ժողովածուն:

Նավոփի երկերի ձեռագիր օրինավները պահվում են ոչ միայն Տաշքենդում, այլ և ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի կենհնագրդի արևելագիտության ինստիտուտում և Սալթիկով-Շչեդրինի անվան հանրային գրադարանում, ինչպես նաև Կազանի, Ստալինաբադի և Թրիլիսի գրադարաններում:

Հայկական ՍՍՌ Մատենադարանում պահվում է Ալիշեր Նավոփի պոեմների, գաղելների ու ոտանագորների ժողովածուի ունիկումային ձեռագիրը: Ժողովածուն արտագրված է 1499 թվին Սուհամեդ Քաթիպ Ալ-Գումիի կողմից: Ձեռագրի ծավալն է 217 թերթ (մոտ 11 հազար տող): Թերթի երկարությունն է 20 սմ, լայնությունը 14 սմ:

Դրանից բացի Նավոփի բանաստեղծությունները գտնվում են Մատենադարանում պահվող նաև արևելյան այլ ժողովածուների մեջ:





ԳԱՂՈՒԹ ԱՀԱՅ ԿՅԱՆՔ

„ՄԻ ԱՆՀԱՅՑ ԶԵՌԱԳԻՐ ՏԱՂՄԱՐԱՆ“*)

Կաստակավոր և հմուտ բանասեր Պ. Արամ Երեմյանը, թեհրանի հայոց ժամանական դպրոցի տեսուչը, գեռ երեկ էր, որ գրական հրապարակի վրա դրեց իրանահայ աշուղական՝ գրականության և հասարակության կյանքը պատկերող բանափրական մի արժեքավոր ուսումնասիրություն։ Դա «Աշուղ Յարքուն օղլի» խորագրով գիրքն է, որ պատկերում է 19-րդ դարում ապրող բեղմանավոր և անհայտ մի աշուղի դիմագիծը։ Այսօր էլ նա լույս է ընծայել նույնքան ուշագրավ մի նոր երկ։ Դա մՄի անյայտ ձեռագիր տաղարան» վերնագրով գրքույկն է, որ իր բովանդակությամբ ընդգրկում է 17-րդ դարի մի անհայտ ձեռագիր տաղարանում ամփոփված երգերը, որ հարգելի բանասերը հայտաբործել է նոր-ջուղայում։ Այդ տաղերն արժանի են ուշադրության նրանով, որ իրենց էությամբ և շոշափած հիմնական հարցերով ունեն հասարակական բնույթ։ Այդ արժեքավոր գրականության պատկերը, անկասկած, այսօր չէինք ունենար և նրանց հեղինակներն էլ կմնային մութի ու մոռացության մեջ, եթե Պ. Երեմյանը չմտածեր դրանց փոշիների տակից լուս հանել և հրատարակել։ Ծնորհիվ նրա բանափրական համառ որոնումների և հետագոտությունների այդ տաղերն ընդմիշտ փրկվել են կորստից։ Եվ այդ միայն մի նպատակով, որպեսզի հայ բանափրական գրականությունը հարստանա և հայ հասարակական կյանքի այս կամ այն մութ երևույթները լուսաբանվեն։ Հանուն այդ նպատակի էլ Պ. Երեմյանը և նրա նման անխոնջ, տոկուն, սրտացավ և զո՞ճաբերող գրական մշակները իրենց սիրար, հոգին և լավագույն ժամերը նվիրում են բանափրական աշխատանքի։ Աշխատում են նրանք խոր հավատով ու համոզումով, որ պեսզի մեր անցյալի մտավոր գրական բանասերն էր անցյալի մտավոր գանձերը իրկերն, որպեսզի հպարտանանք մեր նա-

խահայրերի գրական ժառանգությամբ, որը պատիվ է բերում հայ մշակութի պատմությանը։

Պ. Երեմյանի հայտաբերած ձեռագրի տաղերը բովանդակության կողմից բազմազան են և մեծ մասամբ անդրադառնում են կրոնա-բարոյական նյութերի շուրջ։ Հատուկ ուշագրության արժանի են նաև միջնադարյան բանաստեղծությունները հիշեցնող աշխարհիկ երգերը, որոնք անդրագանում են գիտուության, սիրո, գարնան, վարդի և բլրովի շուրջ։ Տաղարաններից հայտնի են Խղճուկ կամ Աղապատ, մանավանդ Երևանցի տաղասաց Սիմեոնը, 18-րդ դարի հայոց կաթողիկոսը, կուտուրական մի պալծառ գեմք, որ Հայուստանում հիմնել է առաջին տպարանը։ Նույնպես նա է, որ Էջմիածնում հիմք է գրել թղթի գործարանի, կառուցել է դպրոց և բազմաթիվ շինություններ, բարեկարգել է տոմարը և մեծ զարկ է տվել ժամանակի ուսման ու կրթական վեհ գործին։ Այս բոլորի վրա ափելացնենք նրա բանաստեղծական ձիրքը։ Գրականագիտ կաթողիկոսին խորապես վշտացրել են պանդուստ, տարագիր հայ ժողովրդի կրած այն տառապանքներն ու զրկանքները, որ պատճառել են նրան «յայլահաւատ» խշխողները։ Ժամանակի մոռալ ղեպքերին ականատես Սիմեոնը խոր հուզումով արձանագրել է ժողովրդի հալածանքները։ Այդ երեսությներն էլ արժեքավորում են նրա գրական դիմագիծը։

Գրքում ուրույն տեղ են գրավում մանավանդ գինու մասին շարահյուսված տաղերը։ Դրանք ժողովրդական պարզ լեզվով կառուցված երգեր են, որոնք կամ անուշ, զորեղ, վառ գինու, կարասի, փարշի, թասերի, ֆինճանների գովքն են արել և կամ ընդգծել են խմիչքի շատ գործածությունից առաջացած բացասական, վնասակար և քարայիշ հետևանքները։ Պ. Երեմյանի գրքույկն ուշագրավ է նրանով, որ նա վերլուծության է հնաբարկել հայ և օտար նշանագրու գիներգու-

*) Ա. Երեմեան.— Մի անյայտ ձեռագիր տաղարան, 1947 թ. Թեհրան։

ների երգերը: Այնտեղ հրապարակ հն դալիս Հովհաննես Թէկուրանցին, Սարկավագ Թէրդակցին, Աստվածատուրը, Մարտիրոս Խառսարցին, էրզրումցի Ժատուրը, Նահապետ Քուշակը, Մկրտիչ Նաղաշը, Գալուստ Կայծակը, Նաղաշ Հովնաթամը և ուրիշներ, որոնք կամ նկարագրել են գինովության տըխով հետևանքները, նշել են խմիչքի վնասակար և կործանիչ դերը, ընդգծելով, թե «գինին մայր է ամեն մեղաց», իսկ «արքեցությունը խիստ շար է» և կամ, ընդհակառակը, երգել են անուշ գինին և խնջուկքը, դրվատել են կարմիր ու սպիտակ վարդերով ու ծաղիկներով զարդարված լիքը կարասը: Դրում հանդիպամ ենք նաև երգիչների, որոնք կարծես, չեն հետաքրքրվել իրենց ժամանակի հասարակական կյանքով և հանդիսացել են միայն սիրո, ուրախության և աշխարհային վայելների երգիչ: Երգել են նըրանք գարնանային գեղածիծաղ բնությունը, սերն ու գինին, Սրանք են, ահա, Երեմյանի հայտաբերած ձեռագրի ուշագրավ տաղերը, որոնցից մի քանիսը, հարգելի բանասերի վկայությամբ, ենթարկվել են փոփոխության, կորցնելով իրենց պարզ ու հարազատ կառուցվածքից որոշ նրբություններ, մի հանդամանք, որ ընդգծում է անտիպ տաղերի տպագրության հրամայողական պահանջը և որի իրագործումն անհրաժեշտ է վարիանտների համեմատության համար:

Այստեղ նկատենք մի հանգամանք ևս: Ուսումնասիրված տաղերգուններն արժեքավոր են նրանով, որ մտավորապես ավելի բարձր կանգնած լինելով իրենց ժամանակի հասարակությունից և տոպորված լինելով առաջադիմական գաղափարներով, ձգտել են մի վեհ նպատակի— պայքարել ծողովրդի մեջ դարերի ընթացքում կոստակված արաւների և նրա կենցաղի բացասական գծերի դեմ, միաժամանակ աշխատել են կրթել, դաստիարակել մարդկանց, ազնվացնել նրանց

սրտերն ու հոգիները, առաջնորդելով բոլորին դեպի բարին, գեղեցիկն ու վսեմը: Ավելի բնորոշն այն է, որ նրանցից մի քանիսը ժողովրդի թերություններն ու պակասությունները քննադատելիս իրենց շեշտական գիններում և հանդեսներում խոր ցավով տեսել են հարբեցողների տիտոր ու մռայլ պատկերը, տեսել են, որ շատերը ոչ միայն մոլի են խմիչքի, այլ և խմելաբանության վնասակար հանապարհով քալում են դեպի դժբախտություն: Հասարակական այդ վնասակար արատները վերացնելու համար տաղարաններն իրենց երգերով հորդորել են, խրատել մարդկանց հեռու մնալ խմիչքի գործածությունից: Նույնիսկ դառն հեգության են ենթարկել գիններուներին ու հարբողներին, և վերջապես, քննադատել են բոլոր նրանց, որոնք ապրում են միայն իրենց գին կյանքով, որոնք չունեն հասարակական վեհ, բարձր իդեալներ և անտարբեր են դեպի ժողովուղը: Առհասարակ, տաղարանների կարծիքով, իսկական անհատները միայն նրանք են, որոնք ոչ միայն ունեն համեստ, առաքինի կենցաղ, այլև միշտ կանգնած իրենց կոչման բարձրության վրա, գտտեն նրամիրվել ժողովրդին և նրա երանկության համար զոհել իրենց լավագույնը: Այդ տեսակետների մեջ էլ կայանում է տաղասացների կոչման և կատարած դերի վեհ նշանակությունը: Այժմ մի հանգամանք պարզ է, որ «Մի աեճայտ ձեռագիր տաղարակ»-ը հայ բանասիրական գրականության լավագույն երկերից մեկն է, որի բովանդակությունն ու կառուցվածքը պատիվ են բերում վաստակամոր բանասեր և հմուտ քննադատ Պ. Արամ Երեմյանին:

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

(«Հայաստանի կոչնակ» 27 մարտ 1948 թ.)

ԿԱՐՏԻՆԱԼ ԱՂՍԶԱՆՑԱՆԻ ՀՈՎՈՒԱԿԱՆ Բ ԹՈՒՂԹԻՆ ԱՐԹԻՎ

Եգիպտոսի «Արև» լրագրին մեջ կարողիկ հայ մը կրողոք Կարտինալ Աղանձայանի հականերգաղը ընթացին դեմ.—

Այս օրերուն, երբ կգտնվինք Սփյուռքի հայության պատմության վճռական մեկ անկյունադրձին առջև, Աղանձայան Կարտինալ-Պատրիարքը անգամ մը ևս ապարդյուն կերպով կփորձել շլատել այն անզսպելի խանդավառությունը, որ կմղե հայրենասերներս դեպի հայրենիք:

Քաջալիրված այն գնահատություններեն, զորս ցուց տվին կաթողիկե մամուլն ու «Ճուռաբեր»-ամիտ թերթերը իր հովուական

հախորդ թուլթին նկատմամբ և անշուշտ պատշաճ նկատելով այն խառնաշփոթությունը, զոր կշանան ստեղծել ափ մը հականայանյան տարրեր՝ Կարտինալ Աղանձայան հրապարակ կուգա իր. Բ հովուական թուլթով:

Վ. Կարտինալ Աղանձայանի նոր հովուական թուլթին առաջին մտահոգությունն է դարձյալ Հայաստանի մեջ տիրող խղճի աղատության հարցը:

Ավելորդ է այս մասին խոսիլ, քանի որ այսօր ամեն մարդ գիտե թե մեր հայրենիքի կառավարությունը որևէ կերպով արգելք չի հանդիսանար հավատացյալներու կրոնական պարտականությունները կատարելու մասին։ Հոն միմիայն արգիլված է կրոնական գաղափարներու արածումին տակ թագնված ընկերային ու բաղաքական գեց հունտեր ցանելը։

Վ. Կարտինալ Աղաճանյան՝ իր հովուական թուղթի երկրորդ պարբերությաննեն իսկ կսկսի իր հարձակումները հայրենադարձի դեմ և կըսե. «Մենք վստահ ենք, որ ներգաղթող մեր հայրենակիցներուն ստվար մեծամասնությունը՝ իր իսկ դառն փորձառությամբ—ստուգած է իրականությունը մեր հավաստումներուն, համամիտ է մեր հովուական թուղթին այդ մասին արտահայտած իմաստներուն»...

Նման գաղափար մը արտահայտելու հանդքնությունը ունենալու համար, վստահուն կրնանք ըսել, որ Վ. Կարտինալ Աղաճանյան չէ կարդացած կամ ավելի ճիշտ է ըսել թե չէ ուզած կարդալ այն բազմաթիվ ոգերի և խանդակառող նամակները, որոնք ուղղված են արտասահմանի հայության հայ հայրենադարձ մեր եղբայրերուն և քույրերուն կողմէ։

Եվ իր վերոգրյալ խոսքերեն կրնանք հետևյան թե Կարտինալ Աղաճանյան հայության վեց հարյուր տարվա պանդիստությունը բար չի համարեք և տակավին չէ զգացած անոր դառնությունը։

Վ. Կարտինալ Աղաճանյան կշարունակե իր «Հովուական թուղթը» անտեսելով Սովետական Հայաստանի 27 տարվա ընթացքին ունեցած հիանալի վերելքը և կրազմա ավելի շատ օրերու, հիմնելով իր երազները «արտարիե ցեցումներու» վրա։

Հետո Վ. Կարտինալ-Պատրիարքը ակնարկելով Հայաստանի քաղաքացիներու իրավունքներուն, կըս թե «քոնական ոչ է տեսկան»։ Մենք կրնանք ամենայն ապահովությամբ հայտարարել թե Վ. Կարտինալը ամենաշնչին գաղափարն իսկ չունի մեր երկրի կացության մասին։

Զարմանալի զուգագիպությամբ մը Վ. Կարտինալ Աղաճանյան նույն ամբաստանությունները կընե ներդադիր երկու տարվա գործունեության դեմ, ինչ որ հաճախ մեզի կրամցնե քաղաքաբիս օրկաններեն մեկը։

Հետո Վ. Կարտինալ Աղաճանյան տարօրինակ եզրակացության մը կհասնի հայրենադարձի գաղափարը գիտակցորեն շփոթելով համայնավարության հետ։

Կուգենք բացահայտ կերպով հասկցնել Վ. Կարտինալ Աղաճանյանի, թե մենք կվերադառնանք հայրենիք՝ մղված միմիայն հայրենասիրական զգացումն։

Ցավ ի սիրու կհայտնեմ, թե դժբախտաբար կարգ մը հայեր չունին այս զգացումը և չեն հասկցած տակավին անոր վեհությունը։

ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՅ ՄԸ

(«Ժողովուրդ» 19 մարտ 1948 թ.)

ՀԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈՒՅԹ ՌԵԶԻՍՏԱՆԻ ՀԱՅ ԱՆՍԱՀ ԶՈՅԵՐՈՒ ՀԻՇԱՍԿԻՆ

Մանուշյան ակումբը, կոկիկ հասարակության մը ներկայությամբ մարտ 6, շաբաթ երեկո, Սալ տը լա Ֆոթոկրաֆիի մեջ, հանդիսավոր և վայելուշ կերպով տոնեց Մանուշյանի և իր 22 ընկերներուն գնդակահարության 4-րդ տարեդարձը, ինչպես նաև Ռեզիստանի մեր բոլոր անմոռանալի հայ զոհերուն հիշատակը, որոնք ինկան բարբարոս նացիզմի գնդակներուն տակ։

Հարգանքի հավաքությունը դրված էր 9-րդ թաղամասի փոխ-քաղաքապետ Պ. Թյուրքենի և ընկեր Մավլանի նախագահության տակ։ Պ. քաղաքապետը վեր առավակ ի միջի այլոց, հայերուն բերած աջակցությունը Ֆրանսացի ազատագրության պայքարին և հայտնելով ֆրանսացի ժողովուրդին խոր երախտագիտությունը, զորավոր շեշտերով այլանեց օտարատյաց շարժումը, որ նորեն սկսած է սրոշ համեմատություններ առնել։

Հատկապես հրավիրված էր փրոփ. Ատլեր.

որ 9-րդ թաղամասի մեջ կպաշտոնավարե Հարգելի փրոֆեսորը ըսավ, որ մեծ հաճույքով եկած է իր հարգանքի խոսքը բերելու համար, ոչ միայն որովհետև հայերը ճանշած է նեղսիստանսի շրջանին, այլ բազմաթիվ հայ փոքրիկներ իր ձեռքեն ելած են, որոնք իրենց բացառիկ ուշիմությամբ իրեն վրա խոր տպավորություն ձգած են։ Իր խոսքը վերջացուց մաղթելով որ անիրափուած ժողովուրդը օր մը նորեն վերատիրանա թըրքական լուծին տակ գտնվող մեր հողամասերուն և բոլոր հայերը կարենան ազատ շոնչ մը քաշել Մայր Հայրենիքին մեջ։

Դ. Դավիթյան խոսեցավ Հայ Ռեզիստանսի կողմեն։

Երեկությունը վերջացավ խորհրդային շատ ապահովիչ և գեղեցիկ ֆիլմով մը՝ «Նա մի փոքրիկ աղջիկ էր»։

Զ. Ռ.

(«Ժողովուրդ» 26 մարտ 1948 թ.)

ԿԱՐԵՎՈՐ ԿՏԱԿ ՄԸ

Սբրինկֆիլտի մեջ դեկտեմբերի վերջերը վախճանեցավ ողբացյալ Պետրոս Մարգարյան, որ կտակով իր ամբողջ հարստությունը ձգած է Հ. Բ. Ը. Միության: Հանգուցյալի թողոնին մաս կկազմեն հնագիտական արժեք ներկայացնող մեկ քանի հազվագյուտ հրատարակություններ, հայերեն և արաբերեն ձեռագիրներ և ուրիշ առարկաներ, որոնք կհատկացվին Սովետական Հայաստանի Համալսարանին և Թանգարանին: Կտակին արդյունքը, որ կանկալի կարևոր գումա-

րի մը հանգիլ, երբ օբինական գործողությունները ավարտին, ամբողջապես կդրվի Հ. Բ. Ը. Միության մատակարարության ներքու Կարգ մը միանվագ վճարումներեւ և հանգուցյալին քույրերուն կենսաթոշակներն զատ, եկամուտները գլխավորապես պիտի հանձնվին Սովետական Հայաստանի Համալսարանին, իբրև ուսանողական թոշակ: Ամերիկայի մեջ հօգուտ մեր Միության կատարված մեծագույն կտակն է ասիկա:

(«Միության» 15 հունվար 1948 թ.)

ԶԱՐԵԼ ՊԵՅ ՆՈՒԹԱՐԻ ԱՐԺԵՔՎՈՐ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԻՁԻ ՆՈՒԹԱՐՅԱՆ ՍԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ

Նուպարյան Մատենադարանի վարիչը, գրագետ Տ. Արամ Անտոնյան, Միությանս փոխ-նախագահ Տ. Անոն Կերտանի ուղած իր անձնական մեկ նամակին մեջ կարգ մը շահեկան լուրիք կհաջորդե: Անցողակի ըսենք թի Տ. Կերտան այս Մատենադարանին վերատեսուչն էր անոր հիմնարկութենեն ի վեր, երբ Փարիզ կրնակեր:

Կերչերս Զարեհ Պեյ նուպարյան Մատենադարանին հանձնած է իր մեծ հոր՝ նուպար Փաշայի պատկանող կարևոր գիրքերու հավաքածու մը, ինչպես նաև Ազգային Պատմիրակության վերաբերյալ կարգ մը թղթածրաներ, որոնք կապակներն Մատենադարանը գտնված նույն վավերաթուղթերուն շարքն: Տիար Անտոնյանի անվհատ պնդումներուն վրա Զարեհ Պեյ Մատենադարանին նվիրած է նաև իր մեծ հորը շատ մը թղթածրաներ, որոնց արժեքը անդնահատելի է:

Տ: Անտոնյան, որ իր հմտությամբ, իր արվեստագետի ճաշակով, մոլի գրասիրությամբ ու անխոնչ աշխատասիրությամբ կրնա հեղինակորեն վարել մեծ ազգի մը մեծագույն մեկ մատենադարանը, իրեն հանձնրված թուղթերու վեցերը գտելե, դասավորելե ու ցուցակագրելե վերջը, հետևյալ տեղեկությունները կուտա անոր մասին:

Նամակներու ու վավերաթուղթերու առաջին մասը կապ տանի Սուեզի ջրանցքին բացման հետ կրածանվի հետևյալ կերպով:

1. Նուպար Փաշայի թղթացկությունը Ն. Մեծություն հտիվին արքունիքին հետ (1863—1865), եկիպտական կառավարության, Բարձրագույն Դրան և Սուեզի ջրանցքի Ընկերության միջին հառաջ եկած տարակարծության առթիվ՝ նուպար Փաշայի թուղթի և Կ. Պոլսու մեջ կատարած բանակցության մասին (97 կտոր, քիչ բացառու-

թյամբ, ամենքն ալ նուպար Փաշայի ձեռք՝ գրված):

2. Սուեզի ջրանցքի Ընկերության կողմէ նուպար Փաշայի դեմ, և նուպար Փաշայի կողմէ նույն Ընկերության դեմ բացված դատերու վերաբերյալ թղթածրար մը (17 կտոր, ոմանք 100 կամ 200 թղթի ավելի):

3. Թղթակցություն նարուեն Գ կայսեր, Մորնիի գուբին, Խորի Խամայիլի և նուպար Փաշայի միջև (41 կտոր, որոնց մեջ Մորնիի գուբին ձեռքով գրված շատ մը նամակներ):

4. Նուպար Փաշայի և զանազան անձնավորությանց միջև փոխանակված թղթակցություն մը Սուեզի ջրանցքին գործերուն առընդությամբ (105 կտոր, որոնց մեջ ինքնագիր նամակներ Ժյուլ Ֆավրի, Սալիլոն-Պարոյի, Թուլինի և միլ Օլիվիեի ֆերտինանտ տը լըսեբսի, Մուսթիեի մարքիզին, Կ. Պոլսու քրանսական դեսպան և հետագային արտաքին գործոց նախարար, և այլն, և այլն):

5. Զանազան վավերաթուղթեր Սուեզի ջրանցքին գործերուն մասին (խորհրդակցություններ, ատենազրություններ, հուշագիրներ, նոթեր, համաձայնագրեր, նարուեն Գ կայսեր իրավարարությունը, և այլն, ընդունենք 49 կտոր):

6. Տպագրալ փաստաթուղթեր Սուեզի ջրանցքի մասին (25 կտոր):

7. Տեքնիկական փաստաթուղթեր (22 կտոր):

Երկրորդ մասը կրովանդակե զանազան շրջաններու, իր տարբեր տարբեր պաշտոններու ընթացքին, նուպար Փաշայի թղթակցությունները հետևյալ բաժանումներով:

1. Խորի Խամայիլի շրջան (52 կտոր):

2. Խորի Թեվիթի շրջան (14 կտոր):

3. Խորի Ապաս Հիլմիի շրջան (4 կտոր):

4. Դիվանագիտական թղթակցություն փոխանակված նուպար Փաշալի և խորհվական արքունիքին միջեւ, նուպար Փաշալի Ելբոպայի մեջ ունեցած զանազան առաքելությանց ընթացքին, 1864—1876 շրջանին (75 կտոր):

5. Փաստաթուղթեր և նամակներ, նառն Նախարարության շրջանին վերաբերյալ (13 կտոր):

6. Փաստաթուղթեր և նամակներ դատական բարեկարգության մեծ գործին վերաբերյալ (287 կտոր):

7. Վավերաթուղթեր և նամակներ զանազան շրջաններու վերաբերյալ (48 կտոր), և տակալին կան ուղիղներ:

Նուպար Փաշալի թուղթերուն մեջ ամենն ինանկագինն ու Հրապուրիչը, սակայն, այն նամակներն են, Հաճախ շատ երկար, զոր գրած է իր կնոջ, օրը օրին, իր բազմազան դիվանագիտական առաքելությանց ընթացքին, զարմանալի կանոնավորությամբ և հարատեսթյամբ մը, ամեն գիշեր անկողին մտնելե առաջ, նույնիսկ թատրոնն կամ խնձույքի մը վերադարձին: Այս նամակները կընդգրկեն իր դիվանագիտական երկար ասպարեզին գրեթե ամբողջ շրջանը, 1851—1896: Ուղացյալ Պոլոս Փաշալի ինամբով ընդօրինակված և զասավորված, այս նամակները երեք խոշոր թղթածրաբներ կկազմեն յուրաքանչյուրը ավելի քան

400 թերթ, ընդամենը 1421 թերթ: Պաշտոնական մտահոգությունները զերծ, և դրված շատ ազատորեն, երբեմն չարաճընի ավլունով մը, առանց այլևայլ նկատումներու, այս մտերիմ նամակները շատ թանկագին վավերագրեն են այդ երկար ժամանակաշրջանի մարդերուն և իրերուն մասին: Մեղք որ կարելի չէ զանոնք հրատարակել կարգ մը լուրջ պատճառներով: Այս նվիրատվության մեջ կա վեռ Պոլոս Փաշալի մեկ թանկագին աշխատանքը, իր հորը Կյանքին և բաղաքական ու դիվանագիտական ասպարեզին մեկ ժամանակագրությունը, ճոխացած նուպար Փաշալի համբավավոր հուշագիրներով, որոնք անստիպ կմնան դեռ: Դժբախտաբար այս գործին կրկրորդ հատորը կապասի: Առաջին հատորը կրովանդակն 1825—են 1877-ի շրջանը և ունի 404 թերթ, երկրորդ հատորը պետք է ընդգրկե 1878—են 1896 տարիները.

Սյու հատորը ևս ձեռք անցնելու իր հույսը Հայտնելի ետք, Տ. Անտոնյան իր նամակը կվերջացն հետեւյալ կերպով:

«Պետք է ըսկեմ թե ամիսներ հատկացուցի այս աշխատության համար, կարգալու, դասավորելու և ցուցակագրելու համար վավերագիրներու այս հակա դեղը, ամեն մեկ կտոր զատ զատ»:

(«Միուրին» 15 ապրիլի 1948 թ.)

Ի ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅՈՒՆ ՉՈԼԱՔՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ

ՆՅՈՒ-ՅՈՒՐՔ, 3 Հունիսի (ՏԱՍՍ).—Տասնը վեց հայտնի ամերիկացիներ ստեղծել են «Չոլաքյանի ընտանիքի իրավունքների պաշտպանության կոմիտե», որին նպատակն է վերացնել այն դատական վճիռը, որը Չոլաքյանի երեք զավակներին արգելում է գնալ Սովետական Հայաստանում գտնվող իրենց ծնողների մոտ: Չոլաքյանը 1942 թին, կնոջ Հիվանդության պատճառով, հարգադրված էր նյու-Յորքի բարեգործական օրգանիզացիայի կամաց վրայից համար կազմակերպությունը: Բարեգործական օրգանիզացիա երեխան ներին տեղավորեցին կաթոլիկական որբանոցներում: Անցյալ տարի, երբ Չոլաքյանն իրավունք ստացավ վերադառնալու Հայաստան, կաթոլիկական որբանոցները հրաժարվեցին տալու երեխաներին. այն հիման վրա, թե երեխաներն ամերիկյան քաղաքացիներ են և հետագայում կարող են ցանկանալ վերադառնալ Միացյալ Նահանգները, բայց նրանց կարող են մերժել: Նյու-Յորք նահանգի վերագույն դատարանի դատավորը վճիռ կայացրեց, թե որբանոցները կա-

րող են բաց չմողնել երեխաներին: Մի խումբ բողոքականներ և պրոգրեսիվ գործիչներ հունդուն բողոք հայտնեցին այդ վճիռի դեմ, որպես բնակության մշտական վայրի ընտրության ազատությունը սահմանագիրը կող և ընտանեկան իրավունքները խախտող վճիռ: Չոլաքյանի պաշտպան Պիլիսքընը բողոքակեց բարձրագույն ինստանցիաների դատարանին, սակայն մինչև այժմ բողոքը դեռևս չի քննված:

«Չոլաքյանի ընտանիքի իրավունքների պաշտպանության կոմիտե» կազմի մեջ մտնում են Հյուսիս—Ամերիկյան հայ եկեղեցու եպիսկոպոս Ներսոյանը, Նյու-Յորքի «Պոլաքյան իսորհողի» ներկայացուցիչ Սիրլը, «Փաղաքացիական ազատությունների պաշտպանության միության» ներկայացուցիչ Ուայզը, «Ամերիկյայի հայ ազգային խորհրդի» նախագահ Շահինյանը, «Դումակով բնակչության առաջադիմությանը նեպաստող ազգային ասոցիացիայի» քարտուղար Ովկիկինսը, «Եկեղեցիների ֆեղերալ խորհրդի» քարտուղար Բարնսը:

Մայիսի 2-ին ներսոյանը, Սիրլը, Ուայը
և Պլինֆընը ներկայացրին Հայաստանից՝
Չոլաքյանից ստացված նամակը, որով Չո-
լաքյանը բարեգործական օրգաններից
խնդրում է երեխաններին կաթողիկական որ-
բանոցներից փոխադրել բողոքականների որ-
բանոցները, որտեղ երեխանները կարող են
դաստիարակվել հայ եկեղեցու ներկայացու-
ցիչների կողմից: Թողոքականների որբանոց-
ները համաձայնվել են վերցնել երեխաննե-

բին և նրանց համապատասխան դաստիարակություն տալ:

Բարեգործական օրգանների ներկայացուցիչները, համաձայնվել են մոտիկ պապայում լուծել այդ հարցը։ Սակայն նույնիսկ այն դեպքում, եթե երեխաները փոխադրվեն կաթոլիկական որբանոցներից, նրանք շնորհարող հայրենիք վերադառնաւ, եթե բարձրագույն ինստանցիաների դատարանը շփոխի նյութուրը նահանգի գերագույն դատարանի վճիռը:

ԵՐԿՈՒ ՏՈՂՈՎ

Երեք հայ երաժշշկներ Ֆրանսական երաժշտական գրականության մեջ
Լ. Ն. Ղանդղովսկի, իր վերջին հրատարա- գիրը, ընդարձակ տեղ տված է Կոմիտասի,
կուբյան մեջ, որ կը ս, «Հիսուսար Ունիվեր- Սպենդիարյանի և Պերպահյանի գործերին։
սել դու լա Մյուոզիկ Կոնդամպորեն» վերնա-


Անուն հանած հեղիահայութի մը

Ամերիկացի թղթակից մը, որ Հնդկաստան այցելած է, կրթ թե՛ հոն սինեմայի ամենափայլուն աստղերն մեկը Սապիթիա Տկ անունով հայուճի մըն է, որ Հնդկաստան ծր-

նաժ է և Հնդկերենը կատարելապես կխոսի:

Այս հայուհին երբեմն ալ հսկերեն բա-
նաստեղծություններ կգրեա որոնք շատերու
հիացման արժանացած են եղեր:

«ԺՈՂՈՎՐԴԻ»



«ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՃԱԿԱԾ» ԹԵՐԹԸ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ»

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՍՍԱԳԻՐ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1944-ին հրապարակվել սկսած այս ամսագիրը կուպա լեցնելու մեծ պակաս մը, որ գոյացած էր էջմիածնի նախկին ամսագրին՝ «Արարատ»-ի դադարումով 1917-ին, համաշխարհային առաջին պատճերազմի միջոցին:

«Էջմիածն», որուն 1947 տարվա Մայիս-Հունիս միացյալ թիվը ունիմ նկատի, այս տողերու գրության առթիվ, կբացվի Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ-ի նկարով, որուն կհաջորդի անմիջապես Հայրենադրձ Արքին Տեր-Սարգսյանի «Էջմիածն» խորագրված մեկ քերթվածը, որուն մեջ շատ լավ պատկերացված է Հայության դարավոր Մայր Աթոռը, իբր «ոռահվիրա», երկնից կախած կանթեղ, ուստ ջահճ և այլն:

Շահեկան ու արժեքավոր այլ դրվածքներու կարդին, ամսագրին մեջ էջեր գրաված են Մտեփան Մալխասյանցի «Գրիգոր Նարեկացի»-ն և պրոֆեսոր Ա. Աբրահամյանի «Մադրասի Հայ գաղութի դերը Հայ ժողովրդի ազատագրական պայքարում» հոդվածները, որոնք ունին բանասիրական արժեք:

Մալխասյանց մեծ վարպետությամբ կըներկայացնե, նարեկացիի կյանքը, կրոնաբարոյական մթնոլորտը, լեզուն ու ոճը, խրթնությունները, գրառերի շափազանց կուտակում, կրկնություններ, շափազանցություններ», որոնց մասին գրած են Մալխասյանցեն առաջ Գյուտ Եպիսկոպոսի իր «Արևելիան անապատականը և Նարեկը»-ին մեջ և Մանուկ Աբեղյան «Հին Հայ գրականության պատմության» մեջ:

Պրոֆեսոր Ա. Աբրահամյանի վեր կհանի այն մեծ դերը, զոր ոմեցած է Մադրասի Հայ գաղութը, ուր հրատարակված է 1794-ին առաջին Հայ լրագիրը՝ «Ազգարար», որուն մեջ ընդարձակ տեղ է հատկացված Հայ ժողովրդի ազատագրական շարժման, գլխավորությամբ Հովսեփի Եպիսկոպոս Արղությանի:

ԶԱՎԵՆ ԱՐԵՎԱՆ

ՊՈՒՐԵԼ

(«Հայաստանեան նակատ» նոյեմբեր 30,
1947 թ.)

